195

Ֆ. ԷՆԳԵԼՍ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

3K13
9--68

12 MAY 2005

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՄԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՐՔՍԻ—ԷՆԳԵԼՍԻ—ԼԵՆԻՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

14 NOV 2009

Ֆ. ԷՆԳԵԼՍ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

17 APR 2013

195

Ֆ. Էնգելսի «Գյուղացիական պատերազմը Գերմանիայում» աշխատության ներկա հրատարակությունը նորից ստուգված և զգալի մշակման ենթարկված թարգմանություն է գերմաներենից: Ռուսերեն լեզվով նախորդ թարգմանությունները տառապում էին մեծ քանակությամբ անճշտություններով և սխալներով, որոնք հաճախ աղավաղում էին միտքը:

Թարգմանության ստուգումը կատարված է ըստ 1875 թ. գերմանական վերջին, հեղինակի կողմից նայված հրատարակության («Der Deutsche Bauernkrieg von Friedrich Engels» Leipzig 1875):

Ներկա հրատարակության համար թարգմանությունը պատրաստել է պրոֆ. Յե. Ա. Կոսմինսկին՝ Վ. Վ. Ադորատսկու խմբագրությամբ:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի Ինստիտուտ

3233
40

Ф. ЭНГЕЛЬС
КРЕСТЬЯНСКАЯ ВОЙНА В ГЕРМАНИИ
Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

ԱՌԱՋԱԲԱՆ [1]

Այս աշխատությունը գրվել է Լոնդոնում 1850 թվի ամառը, հենց նոր ավարտված հակահեղափոխության անմիջական տպավորության տակ և լույս է տեսել «Հռենոսյան Նոր Թերթ, Քաղաքա-տնտեսական հանդես, հրատարակվում է Կարլ Մարքսի խմբագրությամբ: Համբուրգ 1850 թ.» ամսագրի 5-րդ և 6-րդ պրակներում:—Գերմանիայում գտնվող իմ քաղաքական բարեկամները խնդրում են վերահրատարակել այս աշխատությունը, և ես ընդառաջում եմ նրանց ցանկությանը, քանի որ դեռ այսօր էլ այս գիրքը ցավոք սրտի պահպանել է իր այժմեյությունը:

Այս աշխատությունը բնավ հավակնություն չունի ընթերցողին նոր, ինքնուրույն հետազոտված նյութ տալ: Ընդհակառակը, գյուղացիական ապստամբությունների և Թոմաս Մյունցերին վերաբերող բոլոր փաստական տվյալներն առնված են Ցիմերմանից: Թեև նրա գիրքը որոշ բացեր ունի, բայց և այնպես տակավին փաստական նյութի լավագույն ամփոփումն է հանդիսանում: Ընդ որում ծերունի Ցիմերմանը մեծ սիրով վերաբերվեց դեպի իր առարկան: Այն նույն հեղափոխական բնազդը, որն ստիպել է նրան այս գրքի մեջ ամենուրեք հանդես գալ որպես ճնշված դասակարգերի կողմնակից, հետագայում Ցիմերմանին դարձնում է Ֆրանկֆուրտի ծայրահեղ ձախ թևի լավագույն ներկայացուցիչներից մեկը: Ճիշտ է, այն ժամանակվանից այդ բնազդը որոշ չափով խունացել է:

Իսկ եթե Ցիմերմանի տված նկարագրության մեջ ներքին կապակցությունը բացակայում է, եթե այդ ժամանակաշրջանի կրոնա-քաղաքական վեճերի հարցերը նրան չի հաջողվում ներ-

---

1 Էնգելսի՝ իր «Գյուղացիական պատերազմը Գերմանիայում» աշխատության այս առաջաբանը բաղկացած է երկու մասից: Առաջինը գրված է 1870 թ. նոր հրատարակության համար, երկրորդը՝ 1874 թ. հունիսին այն հրատարակության համար, որ լույս տեսավ 1875 թ.: Խմբ.:

հայացնել վորպես տվյալ ժամանակի դասակարգային պայքարի արտացոլում, յեթե դասակարգային այդ պայքարի մեջ նա միմիայն ճնշողներ և ճնշվողներ է նկատում, միմիայն չարեր ու բարիներ և չարերի վերջնական հաղթությունն է տեսնում, յեթե պայքարի թե՛ սկզբնավորությունը և թե՛ վախճանը պայմանավորող հասարակական հարաբերությունների նրա ըմբռնողությունը չափազանց պակասավոր է,—ապա այդ բոլորն էլ այն ժամանակաշրջանի, յերբ այդ գիրքը ծնունդ է առել, թերությունն ու սխալն է: Ընդհակառակը, իդեալիստական վոգով գրված գերմանական պատմական յերկերի մեջ նա մի փառավոր բացառություն է կազմում և գրված է խիստ ռեալիստորեն:

Ուրվագծելով պայքարի պատմական ընթացքը սոսկ ընդհանուր առմամբ, իմ շարադրության մեջ փորձել եմ բացատրել գյուղացիական պատերազմի սկզբնավորությունը, այդ պատերազմի մեջ հանդես յեկող տարբեր կուսակցությունների դիրքերը, քաղաքական և կրոնական այն թեորիաները, վորոնց ոգնությամբ այդ կուսակցությունները ջանում եյին պարզել իրենց սեփական դրությունը, և վերջապես հենց պատերազմի յելքը՝ իբրև մի անհրաժեշտ արդյունք այդ դասակարգերի այն ժամանակ գոյություն ունեցող պատմական պայմանների: Այլ խոսքերով, յես փորձել եմ ցույց տալ, թե Գերմանիայի քաղաքական կառուցվածքը, դրա դեմ յեղած ըմբոստացումները, ինչպես և այդ դարաշրջանի քաղաքական ու կրոնական թեորիաները, վոչ թե պատճառ, այլ հետևանք եյին զարգացման այն աստիճանի, վորի վրա այն ժամանակ գտնվում եյին գերմանական գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, ցամաքային և ջրային ճանապարհները, առևտուրը և դրամական շրջանառությունը: Պատմության այս՝ միակ մատերիալիստական՝ ըմբռնումը վոչ թե յես եմ հայտագործել, այլ Մարքսը, և այն անց է կացվում 1848—1849 թվերի ֆրանսական հեղափոխության մասին նրա գրած աշխատություններում, վոր տպված են նույն հանդեսում, և «Լուի Բոնապարտի բրյումերի 18-ը» գրվածքում:

1525 թվի գերմանական հեղափոխության և 1848—1849 թվերի հեղափոխության նմանությունն այնքան եր աչքի զարնում, վոր յես չեյի կարող այն ժամանակ միանգամայն հրաժարվել նրանից: Սակայն դեպքերի ընդհանուր նմանության կողքին, վոր արտահայտվում եր նրանով, վոր ինչպես այնտեղ, նույնպես և այստեղ միևնույն իշխանական զորքերն եյին մեկը մյուսի հետևից ճնշում զանազան տեղական ապստամբությունները, յերկու

դեպքում էլ քաղաքային բյուրգերության վարքագծի հաճախ ծիծաղաշարժության աստիճանի նմանության կողքին պարզ ու վորոշակի յերևան եյին գալիս նաև այդ յերկուսի միջև յեղած տարբերությունները:

«Ո՞վ շահեց 1525 թվի հեղափոխությունից:—Իշխանները: Ո՞վ ոգուտ քաղեց 1848 թվի հեղափոխությունից:—Խոշոր թագավորները, Ավստրիան և Պրուսիան: 1525 թվի մանր իշխանների հետևը կանգնած եր՝ հարկերի միջոցով նրանց իր հետ կապած մանր բյուրգերությունը, իսկ 1850 թվի խոշոր իշխանների հետևը, Ավստրիայի և Պրուսիայի թիկունքում, կանգնած է ժամանակակից խոշոր բուրժուազիան, վորը պետական պարտքի միջոցով իրեն է յենթարկում այդ թագավորներին: Իսկ խոշոր բուրժուազիայի հետևը պրոլետարիատն է կանգնած»:

Ցավոք սրտի պիտի ասեմ, վոր այս դրույթով չափազանց մեծ պատիվ արժանացրի գերմանական բուրժուազիային: Թե՛ Ավստրիայում և թե՛ Պրուսիայում իրոք նա հարմար առիթ է ունեցել «պետական պարտքի միջոցով արագորեն իրեն յենթարկել» միապետությունը, բայց յերբեք և վոչ մի տեղ նա չի ոգտագործել այդ առիթը:

1866 թվի պատերազմի հետևանքով բուրժուազիան նվեր ստացավ Ավստրիան: Սակայն նա չի կարողանում գերիշխել, նա անզոր է և վորևե բանի անընդունակ: Նա մի բան միայն կարող է անել,—կատաղի հարձակվել բանվորների վրա, հենց վոր սրանք սկսում են շարժվել: Ղեկը տակավին նրա ձեռքումն է գտնվում սոսկ այն պատճառով, վոր դա հարկավոր է հունգարներին:

Իսկ Պրո՞ւսիայում: Հիրավի, պետական պարտքը գլխապտույտ արագությամբ աճեց, դեֆիցիտը հարատև յերևույթ դարձավ, պետական ծախքերը տարեցտարի աճում են, պալատում բուրժուազիան մեծամասնություն է կազմում, առանց նրա հավանության վո՛չ հարկերը կարելի յե ավելացնել և վո՛չ էլ նոր փոխառություններ կնքել,—բայց վո՞րտեղ է արտահայտվում նրա գերիշխանությունը պետության նկատմամբ: Դեռ մի քանի ամիս առաջ, յերբ պետությունը կրկին դեֆիցիտի առաջ եր կանգնած, նրա դիրքն ամենաձեռնտուն եր: Յեթե մի փոքր էլ նա դիմացկունություն ցույց տար, կարող եր զգալի զիջումների հասնել: Իսկ նա ի՞նչ է անում: Նա բավարար զիջումն է համարում այն, վոր կառավարությունը նրան թույլատրում է՝ իր վոտքերի առաջ դնել մոտ 9 միլիոն, այն էլ վոչ թե մեկ տարի,

այլ վորպես ամենամյա մուծում՝ նաև անընդհատ ամբողջ ապագայում։

Պալատում բազմած խեղճ «նացիոնալ-լիբերալներին» յես ընավ չեմ ցանկանում ավելի կշտամբել, քան նրանք արժանի յեն։ Յես լավ գիտեմ, վոր նրանց լքել են նրանք, ովքեր կանգնած են նրանց թիկունքում,—բուրժուազիայի մասսան։ Այս մասսան չի ուզում իշխել։ Նա տակավին չի մոռացել 1848 թվի դասերը։

Թե ինչու գերմանական բուրժուազիան այսպիսի զարմանալի յերկչոտություն ե հանդես բերում, այդ մասին կխոսենք ստորև։

Մյուս դեպքերում վերևը բերված դրույթը լիովին հաստատվեց։ Մենք տեսնում ենք, վոր սկսած 1850 թ. մանր պետությունները հետզհետե հետին պլան են քաշվում՝ լծակներ միայն ծառայելով պրուսական ու ավստրիական ինտրիգների համար. գերիշխանության նպատակներով Ավստրիայի ու Պրուսիայի միջև ավելի ու ավելի կատաղի պայքար ե բորբոքվում և, վերջապես, 1866 թվին այս վեճը բռնի լուծումն ե ստանում, վորի հետևանքով Ավստրիան պահպանում ե իր սեփական յերկրամասերը, Պրուսիան ուղղակի թե անուղղակի ձևով իր իշխանությունը տարածում ե ամբողջ հյուսիսային մասի վրա, իսկ հարավ-արևմտյան յերեք պետություններն առժամանակ դուրս են մղվում հրապարակից։

Հարգամեծար հասարակության համար խաղացված այս ամբողջ ներկայացման մեջ գերմանական բանվոր դասակարգի համար նշանակություն ունի միմիայն հետևյալը.

Նախ այն, վոր ընդհանուր ընտրական իրավունքի շնորհիվ բանվորները հնարավորություն ձեռք բերին անմիջականորեն իրենց ներկայացուցիչներն ուղարկել որենսդիր ժողով։

Յերկրորդ, վոր Պրուսիան առաջինը լավ որինակ տվեց, վոր կլանեց՝ աստծու վողորմածությամբ շնորհված մյուս յերեք թագերը։ Այժմ անգամ նացիոնալ-լիբերալները չեն հավատում, վոր այդ գործողությունից հետո ել նա կրում ե միևնույն՝ աստծու վողորմածությամբ շնորհված անբասիր թագը, վորն իբր թե նա ուներ առաջ։

Յերրորդ, վոր հեղափոխության դեմ Գերմանիայում միմիայն մեկ լուրջ հակառակորդ գոյություն ունի—պրուսական կառավարությունը։

Յեվ չորրորդ, վոր ավստրիական գերմանացիները վերջա-

պես իրենց հարց պիտի տան և ընդմիշտ դեռ պիտի լուծեն, թե ի՞նչ են նրանք ցանկանում լինել,—արդյոք գերմանացիներ, թե՞ ավստրիացիներ. վո՞րն են նրանք գերադասում,—արդյոք Գերմանիան, թե՞ իրենց արտագերմանական տրանսլեյթանյան կցորդ յերկրները։ Վաղուց արդեն պարզ եր, վոր նրանք պիտի հրաժարվեյին կամ մեկից, կամ մյուսից, սակայն մանր-բուրժուական դեմոկրատիան միշտ ել սքողում եր այս հանգամանքը։

Ինչ վերաբերում ե 1866 թվի հետ կապված այլ վիճելի հարցերին, վորոնք այդ ժամանակից ի վեր ձանձրույթ պատճառող քննության նյութ եյին ծառայում մի կողմից «նացիոնալ-լիբերալների» և մյուս կողմից «ժողովրդական կուսակցության» համար, մոտակա տարիների պատմությունը բավականաչափ ապացուցեց, վոր այդ յերկու տեսակետների բախումները մոլեգնության եյին հասնում սոսկ այն պատճառով, վոր այդ յերկուսն ել միևնույն սահմանափակ մտքի հակադիր բևեռներն եյին ներկայացնում։

1866 թիվը Գերմանիայի հասարակական հարաբերություններում գրեթե վոչ մի փոփոխություն չմտցրեց։ Միքանի բուրժուական ռեֆորմները,—չափի ու կշռի միասնական սիստեմը, անարգել տեղաշարժումները, արդյունագործության ազատությունը և այլն, այն ել բյուրոկրատիայի կողմից վորոշված սահմաններում,—նույնիսկ չեն հասնում այն ռեֆորմներին, վոր Արևմտյան Յեվրոպայի մյուս յերկրների բուրժուազիան վաղուց արդեն ձեռք եր բերել, և չեն շոշափում գլխավոր չարիքը՝ բյուրոկրատիկ խնամակալության սիստեմը։ Իսկ ինչ վերաբերում ե պրոլետարիատին, ապա վոստիկանական սովորական պրակտիկան առանց այն ել ի չիք դարձրեց այն բոլոր որենքները, վորոնք վերաբերում եյին տեղաշարժումների ազատությանը, քաղաքացիականությանը, անցագրերի վերացմանը և նման այլ խնդիրներին։

1866 թվի բեմադրությունից շատ ավելի կարևոր նշանակություն ուներ արդյունաբերության և առևտրի բարգավաճումը, յերկաթուղիների, հեռագրի ու ովկիանոսային շոգենավագնացության զարգացումը, վոր Գերմանիայում սկսվեց 1848 թվից։ Վորքան ել այս առաջադիմությունը հետ մնար միևնույն ժամանակամիջոցում Անգլիայում և անգամ Ֆրանսիայում ձեռք բերված հաջողություններից, այնուամենայնիվ Գերմանիայի համար դա մի չլսված առաջադիմություն եր, և այդ քսան տարին ավելի մեծ արդյունքներ տվեց, քան առաջ տալիս եր ամ-

բողջ հարյուրամյակը: Միայն այժմ վճռականորեն և անվերադարձ կերպով Գերմանիան քաշվել է համաշխարհային առևտրի ասպարեզ: Արդյունաբերողների կապիտալներն արագորեն աճել են և ըստ այնմ էլ բարձրացել է բուրժուազիայի հասարակական նշանակությունը: Արդյունաբերական ծաղկման ամենաստույգ նշանը՝ չարաշահությունը փարթամորեն զարգացել է և շղթայել է իր հաղթական կառքի հետևից կոմսերին ու հերցոգներին: Մինչդեռ գերմանական յերկաթուղիները տասնհինգ տարի առաջ կապիտալ եյին մուրում անգլիական ձեռնարկատերերից, այժմ գերմանական կապիտալը,—թեթե՛վ լինի քեզ հողը,—յերկաթուղիներ է շինում Ռուսաստանում և Ռումինիայում: Հապա ի՞նչն է պատճառը, վոր բուրժուազիան չնվաճեց նաև քաղաքական իշխանությունը: Ի՞նչն է պատճառը, վոր նա այդքան յերկչոտ վերաբերմունք ունի դեպի կառավարությունը:

Գերմանական բուրժուազիայի դժբախտությունն այն է, վոր ըստ գերմանացիների սիրած յեղանակի նա ուշացել է: Նրա ծաղկման շրջանը զուգադիպում է այն ժամանակաշրջանին, յերբ Արևմտյան Յեվրոպայի մյուս յերկրների բուրժուազիան քաղաքականապես արդեն անկման վիճակումն եր գտնվում: Անգլիայում բուրժուազիան այլ ճանապարհով չեր կարող իր իսկական ներկայացուցչին, Բրայտին, կառավարության մեջ մտցնել, քան ընտրական իրավունքի լայնացման միջոցով, վորին իր հետևանքներով վերջ պիտի դնի բուրժուազիայի բովանդակ իշխանությանը: Ֆրանսիայում, վորտեղ բուրժուազիան իբրև այդպիսին, իբրև մի ամբողջական դասակարգ, հանրապետության օրով իշխեց միմիայն յերկու տարի,—1849 և 1850 թվերին,—կարողացավ իր սոցիալական գոյությունը քաշ տալ՝ իր քաղաքական իշխանությունը միայն Լուի Բոնապարտին և բանակին զիջելով: Իսկ այժմ, յեվրոպական ամենաառաջադեմ յերեք յերկրների անսահման զարգացած փոխազդեցության պայմաններում՝ այլևս բուրժուազիան հնարավորություն չի ունենալ՝ խաղաղ ու անվրդով իր քաղաքական տիրապետությունը հաստատել Գերմանիայում, յերբ այդ իշխանությունն Անգլիայում և Ֆրանսիայում արդեն ավարտել է իր կյանքի ընթացքը:

Բոլոր նախկին իշխող դասակարգերի համեմատությամբ բուրժուազիան ունի մի առանձնահատկություն. այդ առանձնահատկությունը կայանում է նրանում, վոր նրա զարգացման մեջ շրջադարձի մի կետ կա, վորից հետո նրա հզորության միջոցների հետագա ամեն մի հավելումը, հետևապես ամենից առաջ նրա

կապիտալների աճումը, նպաստում է լոկ այն ուղղությամբ, վոր բուրժուազիան ավելի ու ավելի անընդունակ է դառնում քաղաքական գերիշխանության համար: «Խոշոր բուրժուաների ետևը պրոլետարներն են կանգնած»: Ինչպիսի չափով բուրժուազիան զարգացնում է իր արդյունաբերությունը, առևտուրն ու հաղորդակցության միջոցները, նույնպիսի չափով էլ նա պրոլետարիատ է ստեղծում: Յեվ մի վորոշ մոմենտում, վորն ամեն տեղ անպայմանորեն միաժամանակ կամ զարգացման միևնույն աստիճանի վրա չի հասնում, բուրժուազիան սկսում է նկատել, վոր իր այդ անբաժան ուղեկիցը, պրոլետարիատը, արդեն գերաճում է իրենից: Այս ակնթարթից սկսած նա կորցնում է իր քաղաքական բացառիկ գերիշխանության կարողությունը, իր շուրջը նա դաշնակիցներ է վորոնում և, նայած հանգամանքներին, նրանց մասնակից է անում իր իշխանությանը կամ լրիվին զիջում է նրանց այդ իշխանությունը:

Շրջադարձի այդ կետը Գերմանիայում յերևան յեկավ արդեն 1848 թվին: Ճիշտ է, գերմանական բուրժուազիան այն ժամանակ յերկյուղ եր կրում՝ վոչ այնքան գերմանական պրոլետարիատից, վորքան ֆրանսիականից: Փարիզի 1848 թվի հունիսյան ճակատամարտերը նրան ցույց տվին, թե ինչ է նրան սպասում. գերմանական պրոլետարիատի ուժգին հուզմունքը բավականաչափ ապացույցներ եր տալիս, վոր այստեղ ևս այդ նույն հնձի համար արդեն սերմերը նպաստավոր հողի մեջ են ընկել. և ահա այդ օրից բուրժուազիայի քաղաքական գործողության սայրը փշրվել եր: Նա դաշնակիցներ եր փնտրում, նա իրեն վաճառում եր նրանց՝ ինչ գնով էլ վոր լինի,—և դեռ այսօր էլ նա մի քայլ անգամ առաջ չի շարժվել:

Այս բոլոր դաշնակիցներն ի բնե հետադիմական են: Դրանց շարքումն է ահավասիկ արքայական իշխանությունն իր զորքով և բյուրոկրատիայով, այդտեղ է ահա ֆեոդալական խոշոր ազնվականությունը, ահա նաև գյուղական մանր յունկերները, ինչպես և տերտերները: Այդ բոլորի հետ բուրժուազիան դաշնակցում է և համաձայնություններ կնքում, մինչև վոր այլևս վաճառքի բան չի մնում, միայն թե իր թանգագին կաշին պաշտպանի: Յեվ վորքան պրոլետարիատն ավելի յեր զարգանում, վորքան նա ավելի յեր զգում իրեն և գործում իբրև դասակարգ, նույնքան թուլասիրտ եր դառնում բուրժուազիան: Յերբ Սադովայի մոտ Պրուսիայի չափազանց վատ ստրատեգիան հաղթահարեց Ավստրիայի, ի զարմանս, առավել ևս վատթար ստրատե-

դիսային, դժվար է ասել, թե ով ավելի դոհ ու զվարթ շունչ քաշեց,—պրուսակա՞ն բուրժուա՞ն, վորը Սադովայի մոտ նույնպես միատեղ ջարդվել եր, թե՞ ավստրիական բուրժուան:

1870 թվին մեր խոշոր բուրժուաները ճիշտ այնպես են վարվում, ինչպես 1525 թվին վարվում եյին միջին բյուրգերները: Ինչ վերաբերում է մանր բուրժուաներին, արհեստավոր վարպետներին և խանութպաններին, դրանք միշտ ել միևնույնն են մնում: Նրանք հույս են տածում ուղիղ և վոչ-ուղիղ ճանապարհներով բարձրանալ և խոշոր բուրժուաների շարքն անցնել, նրանք վախենում են տապալվեն և պրոլետարիատի շարքերն ընկնեն: Երերալով վախի և հույսի միջև, պայքարի ընթացքում աշխատում են իրենց թանկագին կաշին փրկել, իսկ պայքարը վերջանալուց հետո նրանք միանում են հաղթանակողների խմբին: Սա յե արդեն նրանց բնույթը:

1848 թվից սկսած արդյունաբերական վերելքի հետ համընթաց զարգանում եր պրոլետարիատի սոցիալական և քաղաքական գործունեյությունը: Այն դերը, վոր այսօր կատարում են գերմանական բանվորներն իրենց պրոֆեսիոնալ միությունների մեջ, կոոպերատիվներում, քաղաքական կազմակերպություններում և ժողովների մեջ, ընտրությունների ընթացքում, ինչպես և այսպես կոչված ռայխստագում, հենց միայն այս դերը լավ ցույց է տալիս, թե աննկատելի կերպով ինչպիսի հեղաշրջում է կատարվել Գերմանիայում վերջին քսան տարիների ընթացքում: Գերմանական բանվորներին չափազանց մեծ պատիվ է բերում, վոր միմիայն նրանց է հաջողվել՝ բանվորներ և բանվորների ներկայացուցիչներ ուղարկել պառլամենտ, այնինչ թե՛ ֆրանսիացիները և թե՛ անգլիացիները մինչ այժմ չեն կարողացել դրան հասնել:

Սակայն պրոլետարիատն էլ տակավին չի դուրս յեկել այն վիճակից, վոր թույլ է տալիս համեմատել նրան 1525 թ. հետ: Բացառապես և մշտապես աշխատավարձով ապրող դասակարգը դեռևս շատ հեռու յե գերմանական ժողովրդի մեծամասնությունը կազմելուց: Հետևապես նա էլ է ստիպված դաշնակիցներ փնտրել, իսկ դրանց նա կարող է գտնել միմիայն մանր բուրժուաների, քաղաքների լումպեն-պրոլետարիատի, մանր գյուղացիների և գյուղատնտեսական բատրակների շրջանում:

Մանր բուրժուաների մասին մենք արդեն խոսել ենք: Նրանք վերին աստիճանի անվստահելի յեն և անհաստատ, յեթե նկատի չառնենք հաղթության դեպքերը, յերբ գարեջրատներ-

րում նրանք անսահման աղաղակ են բարձրացնում: Այնուամենայնիվ նրա մեջ ևս կան շատ լավ տարրեր, վորոնք իրենք հենց միանում են բանվորների հետ:

Լումպեն-պրոլետարիատը, բոլոր դասակարգերի բարոյալքված տարրերի այս թափթփուկը, վորի գլխավոր բնակավայրը խոշոր քաղաքներն են հանդիսանում, ամեն տեսակի դաշնակիցներից վատթարագույնն է: Այս խուժանը բացարձակապես ծախվող է և սարսափելի պնդերես: Յեթե բոլոր հեղափոխությունների դեպքերում ֆրանսական բանվորները տների պատերի վրա գրում եյին՝ Mort aux voleurs!, մա՛հ գողերին, և սրանցից շատերին էլ գնդակահարում, ապա դա վո՛չ թե սեփականության պաշտպանելու կատաղի կողմնակցության հետևանքն եր, այլ այն ճիշտ ըմբռնողության արդյունքը, վոր ամենից առաջ այդ բանդայից պիտի ազատվել: Ամեն մի բանվորական առաջնորդ, վորն օգտագործում է այս լումպեն-պրոլետարներին իբրև գվարդիա կամ հենվում է սրանց վրա, հենց դրանով արդեն նա ցույց է տալիս, թե ինքը շարժման դավաճանն է:

Մանր գյուղացիները,—խոշորներն արդեն բուրժուազիայի շարքերն են պատկանում,—տարբեր տեսակի յեն լինում:

Կա՛մ դրանք ֆեոդալական գյուղացիներ են, վոր պարտավոր են կոռային ծառայություններ մատուցել իրենց տիրոջը: Յեթե բուրժուազիան իր ժամանակին այդ գյուղացիներին չի ազատել ճորտական վիճակից, մի բան, վոր նա պարտավոր եր անել, դժվար չէ համոզել այդ մարդկանց, վոր նրանք իրենց փրկությունը միմիայն բանվոր դասակարգից կարող են սպասել:

Կա՛մ դրանք վարձկալներ են: Այս դեպքում ըստ մեծի մասին միևնույն հարաբերություններն են տիրում, ինչպիսի հարաբերություններ գոյություն ունեն Իռլանդիայում: Հողավարձն այնպիսի չափերի յե հասցված, վոր միջակ բերքի ժամանակ գյուղացին իր ընտանիքի հետ միասին հազիվ-հազ կարող է սընվել, իսկ վատ բերքի դեպքում համարյա քաղցի յե մատնված, ի վիճակի չէ հողավարձը վճարելու և այդ պատճառով էլ ամբողջովին կախված է հողատիրոջ վողորմածությունից: Այս մարդկանց համար բուրժուազիան վորևէ բան անում է միայն այն ժամանակ, յերբ նրան հարկադրում են: Էլ ումի՞ց կարող են նրանք փրկություն սպասել, յեթե վոչ բանվորներից:

Մնում են այն գյուղացիները, վորոնք տնտեսություն են վարում իրենց սեփական փոքրիկ հողամասերի վրա: Սրանք մեծ

մասամբ ծանրաբեռնված են այնպիսի հիպոթեկային պարտքե-
րով, վոր վաշխառուներից նույնպիսի կախման մեջ են գտնվում,
ինչպես վարձկալները հողատերերից: Սրանց ևս սոսկ մի խըղ-
ճուկ աշխատավարձ է մնում, այն էլ վերին աստիճանի անապա-
հով աշխատավարձ, քանի վոր բերքատվությունը փոփոխական
է լինում: Սրանք կարող են ամենից քիչ ակնկալություն ունե-
նալ բուրժուազիայից, վորովհետև հենց բուրժուաներն են, վաշ-
խառու կապիտալիստները, վոր սրանց շահագործում են: Սա-
կայն այս գյուղացիներն ըստ մեծի մասին խիստ կապված են
իրենց սեփականության հետ, թեև վերջինս իրականապես վոչ
թե նրանց է պատկանում, այլ վաշխառուին: Բայց և այնպես
սրանց կարելի յե համոզել, վոր վաշխառուից կարող են ազատվել
միմիայն այն դեպքում, յերբ ժողովրդից կախված կառավարու-
թյունը հիպոթեկային բոլոր պարտքերը պետական միասնական
պարտք դարձնի և այս ճանապարհով իջեցնի գյուղացիների կող-
մից վճարվող տոկոսի չափը: Իսկ այս միջոցառումը կարող է
իրագործել միմիայն բանվոր դասակարգը:

Ամենուրեք, վորտեղ միջակ ու խոշոր հողատիրություն է
տիրում, գյուղում գյուղատնտեսական բատրակներն ամենից
բազմաքանակ դասակարգն են կազմում: Այս դրության մեջ է
գտնվում ամբողջ հյուսիսային և արևելյան Գերմանիան և ահա
այստեղ են գտնում քաղաքային արդյունաբերական բանվորներն
իրենց բազմաթիվ և բնական դաշնակիցներին: Հողատիրոջ կամ
խոշոր վարձկալի և գյուղատնտեսական բատրակի միջև գոյու-
թյուն ունեն նույն հարաբերությունները, ինչ՝ կապիտալիստի և
արդյունաբերական բանվորի միջև: Այն միջոցառումները, վո-
րոնք օգնում են մեկին, մյուսին ևս պիտի օգնեն: Արդյունաբե-
րական բանվորները կարող են ազատագրել իրենց միայն այն
դեպքում, յերբ բուրժուազիայի կապիտալները,—այսինքն՝ ար-
տադրության համար անհրաժեշտ հում նյութերը, մեքենաները,
գործիքները և կենսամիջոցները,—հասարակության սեփականու-
թյուն, այսինքն իրենց կողմից կոլեկտիվ կերպով օգտագործվող
սեփականություն դարձնեն: Ճիշտ այդպես էլ գյուղական բան-
վորները կարող են փրկվել իրենց զարհուրելի թշվառությունից
միայն այն դեպքում, յերբ ամենից առաջ նրանց աշխատանքի
գլխավոր առարկան, հողը, խլվի խոշոր գյուղացիների և առա-
վել ևս խոշոր ֆեոդալների մասնավոր տիրապետությունից, վե-
րածվի հասարակական սեփականության և կոլեկտիվորեն մշակ-

վի գյուղատնտեսական բանվորների ընկերությունների միջոցով:
Այստեղ մենք հանդիպում ենք Բազելի միջազգային բանվորա-
կան կոնգրեսի հռչակավոր վորոշմանը, ըստ վորի հասարակու-
թյան շահերի նկատառումով անհրաժեշտ է հողի սեփականու-
թյունը փոխարկել ընդհանուր, ազգային սեփականության: Այս
վորոշումը նկատի յե ունեցել գլխավորապես այն յերկրները,
վորտեղ գոյություն ունի խոշոր հողային սեփականություն և
սրա հետ կապված խոշոր տնտեսություն խոշոր հողամասերի
վրա,—ըստվորում այս մեծ կալվածներում կա մեկ տեր և բազ-
մաթիվ վարձու բանվորներ: Սակայն այս դրությունն ընդհա-
նուր առմամբ տակավին գերակշռում է Գերմանիայում, ուստի
և Բազելի կոնգրեսի այդ վորոշումը վերին աստիճանի այժմե-
յական եր Անգլիայի կողքին հենց Գերմանիայի նկատմամբ:
Յերկրագործ պրոլետարիատը, գյուղական բատրակները ներկա-
յացնում են այն դասակարգը, վորը նորակոչիկների ամենամեծ
թիվն է տալիս թագավորների բանակներին: Սա այն դասակար-
գըն է, վորն ընդհանուր ընտրական իրավունքի հետևանքով
այժմ պառլամենտ է ուղարկում ֆեոդալների և յունկերների մեծ
մասին: Բայց միաժամանակ սա այն դասակարգն է, վորը քա-
ղաքների արդյունաբերական բանվորներին ամենից մոտ է կանգ-
նած, վորին նույնպիսի կենսական պայմաններ են վիճակված և
վորը նույնիսկ ավելի խորն է թաղված թշվառության մեջ, քան
արդյունաբերական բանվորությունը: Այս դասակարգն անզոր է,
վորովհետև նա մանրատված ու ցիրուցան է յեղած: Սակայն
կառավարությունն ու ազնվականությունը լավ գիտեն նրա
թաքնված ուժը և դիտավորյալ կերպով ջանում են անկման
հասցնել դպրոցները, վորպեսզի նրան տգետ թողնեն: Դրա հա-
մար էլ գերմանական բանվորական շարժման մերձագույն և
ամենահրամայողական խնդիրն է կազմում՝ աշխուժացնել այս
դասակարգը և ներգրավել նրան շարժման մեջ: Այն օրից, յերբ
գյուղական բանվորների մասսան ըմբռնի իր սեփական շահե-
րը, այն օրից արդեն Գերմանիայում անհնարին կլինի վորևե
ռեակցիոն կառավարություն, լինի դա ֆեոդալական, բյուրո-
կրատական կամ բուրժուական:

* *
*

Նախընթաց տողերը գրվել են ավելի քան չորս տարի առաջ:
Դեռ այսօր էլ դրանք պահպանում են իրենց նշանակությունը:
Այն, ինչ վոր ճիշտ եր Սադովայից և Գերմանիայի բաժանումից

հետո, նույնպես հաստատվում է Սեդանից և պրուսական ազգի՝ Գերմանական սրբազան կայսրությունը հիմնելուց հետո: Այսպես կոչված բարձր քաղաքականության «աշխարհապատմական» «դերակատարումներն» ահա այսքան չնչին փոփոխություններ կարող են մտցնել պատմական շարժման ուղղության մեջ:

Դրանք կարող են միայն արագացնել այդ շարժման ընթացքը: Եվ այս տեսակետից վերևը հիշված «աշխարհապատմական դեպքերի» հեղինակներն ակամա այնպիսի հաջողությունների հասան, որ հենց իրենց համար հիրավի դրանք ցանկալի չեն, բայց որոնց հետ նրանք կամա-ակամա պիտի հաշվի նստեն:

Դեռևս 1866 թվի պատերազմը ցնցեց հին Պրուսիայի հիմունքները: 1848 թվից հետո բավական ճիգ պահանջվեց վերստին հին դիսցիպլինային յենթարկելու արևմտյան նահանգների արդյունաբերական ըմբոստ տարրերը, ինչպես բուրժուական, նույնպես և պրոլետարական տարրերը: Բայց և այնպես դա հաջողվեց, և արևելյան նահանգների յունկերների շահերը բանակի շահերի կողքին նորից տիրապետող դարձան պետության մեջ: 1866 թվին դրեթե ամբողջ հյուսիս-արևմտյան Գերմանիան պրուսական դարձավ: Մի կողմը թողնելով այն անբուժելի բարոյական վնասը, որ պրուսական աստծու վողորմածությամբ թագն ինքն իրեն հասցրեց՝ կլանելով մյուս յերեք թագերն աստծու վողորմածությամբ,—միապետության ծանրության կենտրոնն զգալի չափով այժմ տեղափոխվեց դեպի արևմուտք: Հռենոսյան մարզի և Վեստֆալիայի հինգմիլիոնանոց բնակչությանն սկզբում ուղղակի անեքսիայի ճանապարհով ավելացավ 4 միլիոն գերմանական բնակչություն և ապա անուղղակի անեքսիայի ճանապարհով՝ Հյուսիս-գերմանական միության միջոցով կցվեցին 6 միլիոն գերմանացիներ: Իսկ 1870 թվին ևս ավելացան 8 միլիոն հարավ-արևմտյան գերմանացիներ, այնպես որ «նոր կայսրության» մեջ 14,5 միլիոն հին պրուսացիների հանդեպ (ոստ-ելբյան 6 նահանգներից, որոնց մեջ դեռ 2 միլիոն էլ լեհեր կային) 25 միլիոն ազգաբնակչություն կար, որը վաղուց արդեն գերաճել եր հին պրուսական յունկերական ֆեոդալիզմից: Այսպիսով ահա հենց պրուսական բանակի հաղթությունները վճռական տեղաշարժ առաջ բերին պրուսական պետական շենքի ամբողջ հիմքում. յունկերության դերիշխանությունը քանի գնում՝ ավելի ու ավելի անհանդուրժելի յեր դառնում հենց նույնիսկ կառավարության համար: Սակայն միաժամանակ արդյունաբերական

զարգացման արագընթաց թափը բանվորների և բուրժուաների միջև ծագած պայքարի հանդեպ հետին պլան մղեց յունկերների և բուրժուաների պայքարը, այնպես որ հին պետության հասարակական հիմքերում ներսից էլ վճռական հեղաշրջում առաջացավ: 1840 թվից դանդաղորեն կազմալուծվող միապետության հիմնական նախադրյալը բուրժուազիայի և ազնվականության միջև մղվող պայքարն եր, որի մեջ միապետությունը հավասարակշռություն եր պահպանում: Իսկ այն մոմենտից, յերբ արդեն հարցը վերաբերում եր վոչ թե բուրժուազիայի գրոհից ազնվականությունը պաշտպանելուն, այլ բոլոր ունևոր դասակարգերը՝ բանվոր դասակարգի գրոհից պաշտպանելուն, հին միահեծան միապետությունն ստիպված եր լրիվ կերպով անցնել՝ այլ, հատուկ այս նպատակի համար մշակած պետական ձևին,—բոնապարտական մոնարխիային: Մի այլ տեղ («Բնակարանային հարցի շուրջը», II մաս, եջ 26 և հաջորդ եջերը)[1] յես արդեն բացատրել եմ, թե ինչպես Պրուսիան բոնապարտիզմին անցավ:

[1] Էնգելսը նկատի ունի 1872 թ. իր գրած «Բնակարանային հարց» գրքի հետևյալ տեղը. «... Իսկ իրականության մեջ Գերմանիայում պետությունն այն ձևով, ինչպես այն այնտեղ գոյություն ունի, այն հասարակական հիմքի անհրաժեշտ պրոդուկտն է, վորից նա աճել է: Պրուսիայում,—իսկ Պրուսիան այժմ վճռական նշանակություն ունի,—դեռևս ուժեղ խոշոր բաժնեկալվածքային ազնվականության կողքին, գոյություն ունի համեմատաբար յերիտասարդ և ծայր աստիճան վախկոտ բուրժուազիա, վորը մինչև հիմա չի նվաճել վո՛չ անմիջական քաղաքական իշխանություն, ինչպես Ֆրանսիայումն է, վո՛չ էլ ավելի կամ պակաս չափով անուղղակի քաղաքական իշխանություն, ինչպես Անգլիայումն է: Բայց այդ յերկու դասակարգերի կողքին գոյություն ունի արագորեն ավելացող, մտավորապես շատ զարգացած և օրեցօր ավելի ու ավելի կազմակերպվող պրոլետարիատ: Այսպիսով, հին աբսոլյուտ միապետության հիմնական պայմանի՝ հողային ազնվականության և բուրժուազիայի միջև հավասարակշռության հետ միասին մենք այստեղ գտնում ենք ժամանակակից բոնապարտիզմի հիմնական պայմանը՝ հավասարակշռություն բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Բայց ինչպես հին աբսոլյուտ միապետության, այնպես էլ ժամանակակից բոնապարտիստականի մեջ իսկական կառավարական իշխանությունը գտնվում է սպայական և աստիճանավորների հատուկ կաստայի ձեռքում, վորը Պրուսիայում լրացվում է մասամբ իր սեփական միջավայրից, մասամբ մանր մայորատային ազնվականությունից, հազվադեպ՝ բարձր ազնվականությունից և աննշան մասով՝ բուրժուազիայից: Այդ կաստայի ինքնուրույնությունը, վորը թվում է թե հասարակությունից դուրս և այսպես ասած, վեր է կանգնած, պետությունն առերևույթ ինքնուրույնություն է տալիս հասարակության վերաբերմամբ»: (К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XV, стр. 52—53). Խմբ.:

3233
3240

ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Госпубличбиблиотека
ՀՍՍՀ-СОР

Բայց այնտեղ յես չեմ շեշտել մեկ փաստ, վոր այստեղ խիստ կարևոր նշանակություն ունի, դա այն է, վոր այս անցումը մեծագույն առաջադիմական քայլն եր, վոր Պրուսիան արել եր 1848 թվից հետո,—այնքան եր Պրուսիան հետ մնացել ժամանակակից զարգացումից: Նա դեռ շարունակում եր կիսաֆեոդալական պետություն մնալ, իսկ բոնապարտիզմը համենայն դեպս պետական ժամանակակից մի ձև է ներկայացնում, վորի նախապայմանը ֆեոդալիզմի վերացումն է: Ուստի Պրուսիան վճռականություն պիտի ունենա վերջ դնելու իր ֆեոդալական բազմաթիվ մնացորդներին և զոհաբերելու յունկերությունը, իբրև այդպիսին: Իհարկե, այս ամենը կատարվում է ամենամեղմ ձևով, փաղեմի սիրված մելոդիայով, «Կամաց գնա՝ շատ կերթաս»: Այդպես եր, որինակի համար, շրջաններ կազմակերպելու մեծադղորդ գործը: Նա վերացնում է առանձնակի յունկերի ֆեոդալական արտոնություններն իր սեփական կալվածքի շրջանակներում, բայց դա արվում է սոսկ այն նպատակով, վորպեսզի այդ արտոնությունները վերականգնվեն՝ իբրև խոշոր հողատերերի ամբողջականության արտոնություններ՝ վողջ շրջանի տերիտորիայում: Խնդրի եյությունը դարձյալ նույնն է մնում, միայն թե ֆեոդալական բարբառից փոխադրվում է բուրժուական բարբառին: Հին-պրուսական յունկերին բռնի կերպով փոխարկում են մի ինչ-վոր բանի, վորը նման է անգլիական սքվայրին, և նա բնավ կարիք չի զգում առանձնապես դրան հակառակելու, քանի վոր թե՛ մեկը և թե՛ մյուսը հավասարաչափ ապուշ են:

Այսպիսով, յուրորինակ ճակատագիր եր վիճակված Պրուսիային, վորպեսզի իր բուրժուական հեղափոխությունը, վորն սկսվել եր 1808—1813 թվերին և փոքր ինչ առաջ գնացել 1848 թվին, ավարտի այս դարի վերջը բոնապարտիզմի հաճելի ձևով: Յեվ յեթե ամեն բան հարթ ընթացք ունենա, յեթե աշխարհը հանգիստ սպասի և մենք բոլորս էլ բավականաչափ յերկար ապրենք, թերևս 1900 թվին հնարավորություն կունենանք տեսնելու, վոր պրուսական կառավարությունն իրոք վերացրել է բոլոր ֆեոդալական հաստատությունները և վոր Պրուսիան վերջապես հասել է այն դրության, վորի վրա 1792 թվին կանգնած եր Ֆրանսիան:

Ֆեոդալիզմի վոչնչացումը, դրական ձևով արտահայտված, բուրժուական կարգերի հաստատում է նշանակում: Ինչ չափով

ազնվականության արտոնությունները վերանում են, որենսդրությունը բուրժուական է դառնում: Յեվ ահա այստեղ մենք հանդիպում ենք գերմանական բուրժուազիայի և կառավարության նկատմամբ գերմանական բուրժուազիայի ունեցած հարաբերության հիմունքին: Մենք տեսանք, վոր կառավարությունը հարկադրված է մտցնել այդ դանդաղկոտ և մանր-մունր ռեֆորմները: Սակայն բուրժուազիային այս փոքրիկ զիջումներից ամեն մեկը կառավարությունը ներկայացնում է վորպես նրան մատուցված մի զոհաբերություն, արքայական իշխանությունից մեծամեծ դժվարություններով կորզված մի զիջողություն, վորի համար նրանք, բուրժուաները ևս պարտավոր են իրենց հերթին վորևէ զիջողություն անել կառավարությանը: Յեվ բուրժուաները ընդառաջում են այդ խաբեյությանը, թեև նրանք բավական պարզ պատկերացումն ունեն խնդրի եյության մասին: Դրանից էլ բխում է այն լռելյայն համաձայնությունը, վորը Բեռլինում վոչ-հայտնաբար կազմում է ռայխստագի և պրուսական պալատի բոլոր վիճաբանությունների հիմքը,—մի կողմից կառավարությունը կրիայի քայլերով բարեփոխում է որենքներն ի շահ բուրժուազիայի, վերացնում է ֆեոդալիզմի և մանր պետությունների պարտիկուլարիզմի կողմից արդյունաբերության զարգացման դեմ հարուցած խոչընդոտները, հաստատում է դրամի չափի և կշռի միասնականություն, մտցնում է արդյունագործության ազատություն և այլն, հաստատում է տեղաշարժումների ազատություն, դրանով կապիտալի անսահմանափակ տրամադրության տակ դնելով Գերմանիայի բանվորական ուժը, հովանավորում է առևտրին ու չարաշահությանը. մյուս կողմից բուրժուազիան կառավարությանն է թողնում քաղաքական ամբողջ իրական իշխանությունը, հավանություն է տալիս հարկերին, փոխառություններին ու զինակոչին և ոգնում է կառավարությանը, վորպեսզի բարեփոխության նորանոր որենքներն այնպես ձևակերպվեն, վոր անդուրեկան անձերի վերաբերմամբ պահպանվի հին վոստիկանական իշխանության լիակատար ուժը: Իր սեփական քաղաքական իշխանությունից անմիջապես հրաժարվելու գնով բուրժուազիան գնում է իր հասարակական աստիճանական ազատագրումը: Այն գլխավոր շարժառիթը, վորը նման դաշնագիրը բուրժուազիայի համար ընդունելի յե դարձնում, բնականաբար, վոչ թե կառավարության հանդեպ ունեցած յերկյուղն է, այլ այն յերկյուղը, վոր նրան ներշնչում է պրոլետարիատը:

Որքան էլ մեր բուրժուազիայի յելույթները քաղաքական ասպարեզում վողորմելի բնույթ ունեն, այնուամենայնիվ չի կարելի ժխտել, վոր արդյունաբերության և առևտրի նկատմամբ, վերջապես, նա սկսել է կատարել իր պարտքը: Արդյունաբերության և առևտրի բարգավաճումը, վորի վրա մենք մատնանշել ենք այս գրքի յերկրորդ հրատարակության ներածության մեջ, այդ ժամանակից ի վեր զարգացել է առավել ևս մեծ թափով: Այն, ինչ 1869 թվից հետո այս ուղղությամբ կատարվել է Հռենոսյան-վեստֆալյան արդյունաբերական շրջանում, Գերմանիայի համար ուղղակի մի չտեսնված յերևույթ է և հիշեցնում է այն վերելքը, վոր այս դարի սկզբում տեղի ունեցավ անգլիական գործարանային շրջաններում: Նույնը կկատարվի նաև Սաքսոնիայում ու Վերին-Սիլեզիայում, Բեռլինում, Հաննովերում և ծովափնյա քաղաքներում: Վերջապես մենք արդեն համաշխարհային առևտուր ունենք, իսկական խոշոր արդյունաբերություն, իսկական ժամանակակից բուրժուազիա, բայց դրա հետ միասին իսկական ճգնաժամ էլ ենք ունեցել, ինչպես և մի իսկական, հզոր պրոլետարիատ է կազմվել:

Ապագա պատմագրի համար Շպիխերնի, Մարս-լա-Տուրի և Սեդանի մարտերում թնդանոթների վորոտը և հարակից դեպքերը շատ ավելի նվազ նշանակություն կունենան Գերմանիայի պատմության 1869—1874 թ. թ. շրջանի համար, քան այն համեստ, խաղաղ, բայց շարունակ առաջ ընթացող զարգացումը, վոր ունեցել է գերմանական պրոլետարիատը: Արդեն 1870 թվին գերմանական բանվորները մատնվեցին այն ծանր փորձությանը, վոր ներկայացնում եր պատերազմի բոնապարտական պրովոկացիան և դրա բնական հետևանքը—Գերմանիայում առաջացած ընդհանուր ազգային վոգևորությունը: Գերմանական սոցիալիստական բանվորները մի վայրկյան անգամ սխալանքի մեջ չընկան: Ազգային շովինիզմի գեթ նշույլը յերևան չեկավ նրանց մեջ: Հաղթանակի ամենախենթ արբեցության շրջանում սառնասիրտ մնալով, նրանք պահանջում եյին՝ «արդարացի հաշտություն առանց անեքսիայի» Ֆրանսական հանրապետության հետ, ընդվորում նույնիսկ պաշարողական դրությունն ի վիճակի չեր նրանց լռեցնելու: Վո՛չ ռազմական փառքով հրապուրումը, վո՛չ «Գերմանական կայսրության վեհությունը» արձագանք չեյին գտնում այդ բանվորների մեջ. նրանց միակ նպատակը Յեվրոպայի վողջ պրոլետարիատի ազատագրումն եր: Լիակատար իրավամբ կարելի յե ասել, վոր ուրիշ վոչ մի յերկրի բանվոր-

ները մինչև այժմ յենթակա չեն յեղել մի այսպիսի դժվար փորձության, վորին նրանք դիմացան այնքան փայլուն կերպով:

Պատերազմական ժամանակի պաշարողական դրությանը հաջորդեցին դատական պրոցեսները պետական դավաճանության, նորին մեծության ու պաշտոնյաներին վիրավորանք հասցնելու մասին, վորպիսի պրոցեսները վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ՝ խաղաղ ժամանակաշրջանում ծայր առած վոստիկանական հարածուն բծախնդրություններ: «Volksstaat» թերթի խմբագիրներից միաժամանակ յերեք-չորս հոգի սովորաբար բանտ եյին նստած. համապատասխանորեն նույնն եր կատարվում մյուս թերթերի հետ: Շատ թե քիչ հռչակ վայելող ամեն մի կուսակցական հռետոր առնվազը տարին մեկ անգամ պատասխանատվության եր կանչվում և գրեթե միշտ էլ դատապարտվում: Արտաքսումները, գույքի գրավումները, ժողովների ցրումը տեղում եյին կարկտի նման, մեկը մյուսի հետևից: Այս բոլորն ապարդյուն եր անցնում: Յուրաքանչյուր բանտարկվածի կամ արտաքսվածի փոխարեն իսկույն մեկ ուրիշն եր հրապարակ գալիս, ամեն մի ցրված ժողովի փոխարեն յերկու նոր ժողով եր գումարվում: Տոկունությամբ և որենքները ճշտությամբ կատարելով հասան այն բանին, վոր վոստիկանության համար խիստ հոգնեցուցիչ դարձավ իր կամայականության իրագործումը: Բոլոր հալածանքները հակառակ արդյունք եյին տալիս. դրանք վո՛չ միայն չկարողացան կոտրել կամ թեկուզ ընկճել բանվորական կուսակցությունը, այլ միմիայն նոր կողմնակիցներ եյին տալիս կուսակցությանը և ամրապնդում նրա կազմակերպությունը: Կառավարական մարմինների, ինչպես և առանձին բուրժուաների դեմ վարած պայքարում բանվորներն ամենուրեք ցուցաբերում եյին իրենց մտավոր և բարոյական գերազանցությունը՝ «աշխատանք տվողների» հետ ունեցած բախումներում ապացուցելով, վոր իրենք բանվորներն այժմ կրթված մարդիկ են, իսկ կապիտալիստները համբակներ: Ընդվորում իրենց պայքարն ըստ մեծի մասին տանում եյին հումորով, մի հանգամանք, վորը լավագույն ապացույցն է ծառայում, թե վորքան նրանք վստահ եյին իրենց գործի հաջողության մեջ և թե վորքան խորն եյին գիտակցում իրենց սեփական գերազանցությունը: Պատմականորեն նախապատրաստված հողի վրա այս յեղանակով մղվող պայքարը խոշոր արդյունքներ պիտի տա: Հունվարյան ընտրությունների հաջողությունները մինչև այժմ յեզակի յերևույթ են ներկայացնում ժամանակակից բանվորական շարժման պատմության մեջ,

և միանգամայն հասկանալի չէր այն զարմանքը, որ այդ ընտրությունները հարուցել էին ողջ Եվրոպայում:

Եվրոպական մյուս երկրների բանվորների համեմատությամբ գերմանական բանվորները երկու էական առավելություն ունեն: Նախ, որ նրանք պատկանում են Եվրոպայի ամենից թեորետիկ մտածողություն ունեցող ժողովրդին և որ նրանք պահպանել են տեսական միտքը, որը միանգամայն կորցրել են Գերմանիայի այսպես անվանված «կրթված» դասակարգերը: Եթե նրան չնախորդեր գերմանական փիլիսոփայությունը, մանավանդ Հեգելի փիլիսոփայությունը, երբեք չէր կարող ծնունդ առնել գերմանական գիտական սոցիալիզմը, միակ գիտական սոցիալիզմը, որ երբևէ գոյություն է ունեցել: Եթե չլիներ բանվորների թեորետիկ մտածողության հակումը, այս գիտական սոցիալիզմը երբեք այսպիսի ուժգնությամբ չէր թափանցի բանվորների մսի և արյան մեջ, ինչպես դա տեսնում ենք այժմ: Իսկ թե որքան անընդգրկելի չափով մեծ է այս առավելությունը, այդ ցույց է տալիս մի կողմից այն անտարբեր վերաբերմունքը դեպի ամեն մի թեորիա, որը գլխավոր պատճառներից մեկն է, թե ինչո՛ւ անգլիական բանվորական շարժումը, չնայած առանձին արհեստների հիանալի կազմակերպությանը, այնքան դանդաղորեն է առաջ ընթանում, իսկ մյուս կողմից դա ցույց է տալիս այն շփոթությունը և տատանումները, որ իր սկզբնական ձևով պրուդոնիզմը սերմանեց ֆրանսիացիների և բելգիացիների մոտ, իսկ ծաղրանկարային՝ Բակունինի տված ձևով՝ սպանացիների և իտալացիների մոտ:

Երկրորդ առավելությունն այն է, որ գերմանացիները համարյա բոլորից ուշ են մասնակցել բանվորական շարժմանը: Ինչպես որ գերմանական տեսական սոցիալիզմը երբեք չի մոռանա, որ նա կանգնած է Սեն-Սիմոնի, Ֆուրյեյի և Օուենի ուսերի վրա, այն երեք մտածողների, որոնք, չնայած իրենց ուսմունքի բոլոր ցնորքներին և ուտոպիզմին, պատկանում են բոլոր ժամանակների ամենանշանավոր մտածողների շարքին և հանճարեղ կերպով կանխարկել են բազմաթիվ ճշմարտություններ, որոնց ճշտությունն այժմ մենք գիտականորեն ապացուցում ենք,—այնպես էլ գերմանական բանվորների գործնական շարժումը երբեք չպիտի մոռանա, որ նա զարգացել է անգլիական և ֆրանսիական շարժման ուսերի վրա, հնարավորություն է ունեցել պարզապես իր օգտին դարձնելու նրանց թանկ գնով ձեռք բերած փորձառությունը, այժմ խուսափելու նրանց

այն սխալներից, որոնք ըստ մեծի մասին այն ժամանակ անխուսափելի էին: Ո՞րտեղ կլինեինք մենք այժմ առանց անգլիական տրեդ-յունիոնների և ֆրանսիական բանվորների քաղաքական պայքարի օրինակի, առանց այն վիթխարի խթանի, որ տվեց հատկապես Փարիզյան կոմունան:

Գերմանական բանվորների նկատմամբ արդարությունը պահանջում է ասել, որ իրենց դրության այս առավելությունները նրանք օգտագործել են հազվադյուտ հմտությամբ: Բանվորական շարժման սկզբնավորությունից ի վեր առաջին անգամն է, որ պայքարը մղվում է պլանաչափ, բոլոր երեք, միմյանց հետ համաձայնեցված և կապված, ուղղություններով՝ թեորետիկ, քաղաքական և գործնական-տնտեսական (կապիտալիստներին դիմադրելու) ուղղություններով: Հենց այս, այսպես կոչված, կոնցենտրիկ հարձակման մեջն է գերմանական շարժման ուժը և նրա անպարտելիությունը:

Մի կողմից այդ իրենց նպաստավոր դրության, իսկ մյուս կողմից անգլիական շարժման կղզիական առանձնահատկությունների և ֆրանսիական շարժումը բռնի միջոցներով ճնշվելու հետևանքով, գերմանական բանվորները, տվյալ մոմենտում գրավում են պրոլետարական պայքարի առաջապահ դիրքերը: Թե որքան ժամանակ իրերի ընթացքը նրանց կթողնի այս պատվավոր դիրքում, նախորոք դժվար է ասել: Բայց քանի դեռ նրանք գրավում են այդ դիրքը, պետք է հուսալ, որ ըստ արժանույն նրանք կկատարեն իրենց դերը: Դրա համար կրկնակի ճիգ պետք է գործադրել պայքարի և ագիտացիայի բոլոր բնագավառներում: Մանավանդ առաջնորդները պարտավոր են ավելի ու ավելի լուսավորել իրենց բոլոր տեսական հարցերում, պարտավոր են ավելի ու ավելի ազատագրվել ավանդական, հին աշխարհայացքին պատկանող ֆրազների ազդեցությունից և միշտ էլ նկատի ունենալ, որ այն ժամանակից ի վեր, երբ սոցիալիզմը գիտություն է դարձել, նրա հետ պետք է վարվել այնպես, ինչպես վարվում են գիտության հետ, այսինքն պետք է ուսումնասիրել այն: Այս ճանապարհով ձեռք բերված և ավելի ևս պարզաբանված գիտակցությունն անհրաժեշտ է հարաճուն յեռանդով տարածել բանվորական մասսաների մեջ և առավել ևս ամրակուռ դարձնել թե՛ կուսակցության և թե՛ պրոֆեսիոնալ միությունների կազմակերպությունը: Թեև սոցիալիստների՝ հունվարին հավաքած քվեներն արդեն իսկ մի պատկառելի բանակ են ներկայացնում,

բայց և այնպես դրանք դեռ շատ հեռու չեն գերմանական բանվոր դասակարգի մեծամասնությունը կազմելուց. և վորքան էլ քաջալերիչ լինեն գյուղական ազգաբնակության մեջ տարվող պրոպագանդի հաջողությունները, այնուամենայնիվ հենց այս բնագավառում տակավին չափազանց շատ անելիքներ կան: Դրա համար էլ պայքարից չպետք հոգնել, այլ մեկը մյուսի հետևից պետք խլել թշնամու ձեռքից քաղաքներն ու ընտրական շրջանները: Սակայն ամենից առաջ պետք պահպանել իսկական ինտերնացիոնալ վոգին, վորը բացառում է ամեն մի հայրենասիրական շովինիզմի առաջացումը և վորը ցնծությամբ է վողջունում պրոլետարական շարժման մեջ յերևան յեկող ամեն մի նոր քայլը, անկախ այն հանգամանքից, թե դա վոր ազգից է ծագում: Յեթե գերմանական բանվորներն այսպես առաջ ընթանան, նրանք վոչ թե կանգնեն շարժման գլուխը,—այդ շարժման շահերը բնավ չեն էլ պահանջում, վոր վորևէ մեկ ազգի բանվորները գլխավորեն շարժումը,—այլ պատվավոր տեղ կգրավեն մարտիկների գծում. և յեթե հանկարծ ծանր փորձությունները կամ հուժկու դեպքերը նրանցից ավելի՛ մեծ քաջություն, ավելի՛ մեծ վճռականություն պահանջեն, նրանք միշտ էլ կազմ ու պատրաստ կլինեն։

Ֆրիդրիխ Ենգելս

Լոնդոն, 1 հուլիսի 1874 թ.

Ապստամբած գյուղացի պայքարի դրոշը ձեռքին։

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Գերմանական ժողովուրդն ել իր հեղափոխական ավանդությունն ունի։ Կար ժամանակ, յերբ Գերմանիան այնպիսի դեմքեր եր հանդես բերում, վորոնք կարող են դասվել մյուս յերկրների լավագույն հեղափոխականների շարքը, յերբ գերմանական ժողովուրդն այնպիսի տոկունություն և յեռանդ եր ծավալում, վորը համակենտրոնացած ազգի մեջ ամենահիանալի հետևանքներ կտար, յերբ գերմանական գյուղացիների ու պլեբեյների մեջ ծնվում եյին այնպիսի գաղափարներ և ծրագրեր, վորոնք շատ հաճախ սարսուռ ու սարսափ են ներշնչում հաջորդ սերունդներին։

Ի հակակշիռ այն ժամանակավոր դադարի, վորը հիմա, յերկամյա պայքարից հետո նկատվում է գրեթե ամենուրեք, ժամանակն է կրկին ցուցադրել գերմանական ժողովրդին գյուղացիական մեծ պատերազմի, թեև վոչ-բարեձև, բայց ամուր և ուժեղ դեմքերը։ Այդ ժամանակից արդեն յերեք դար է անցել-գնացել և շատ բան փոխվել. բայց և այնպես գյուղացիական պատերազմն այնքան ել շատ չի տարբերվում այսօրվա մեր պայքարից, և այն հակառակորդները, վորոնց հետ հարկ է լինում պայքարել, ըստ մեծի մասին հենց նույնն են մնացել։ Այն դասակարգերը և դասակարգերի մասերը, վորոնք 1848 և 1849 թվերին ամենուրեք դավաճանեցին հեղափոխության գործին, դեռևս իբրև դավաճաններ նշմարվում են 1525 թվին, թեև զարգացման ավելի ստորին աստիճանի վրա։ Յեվ յեթե գյուղացիական պատերազմի առողջ վանդալիզմը յերևան եր գալիս վերջին տարիների շարժման մեջ տեղ-տեղ միայն, Ոդենվալդում, Շվարցվալդում և Սիլեզիայում, ապա դա բնավ ժամանակակից ապստամբման առավելությունը չի հանդիսանում։

I

Նախ և առաջ համառոտ հայացք գցենք Գերմանիայի XVI դարի սկզբի դրության վրա։

XIV և XV դարերում գերմանական արդյունաբերությունը

զգալի վերելք էր ապրում: Ֆեոդալական, գյուղական, տեղական արդյունաբերության տեղը բռնեց քաղաքային համքարական արհեստը, որն արտադրում էր սպառողների ավելի լայն շրջանների և նույնիսկ հեռավոր շուկաների համար: Կոպիտ մահուդեղենի և կտավի արտադրությունն արդեն կազմում էր արդյունաբերության մշտական, լայն տարածված ճյուղը, իսկ Աուգսբուրգում պատրաստվում էին բրդի և վուշի, ինչպես նաև մետաքսի նույնիսկ ավելի նուրբ գործվածքներ: Զուլհակության կողքին առանձնապես զարգանում է արդյունաբերության՝ արվեստի հետ շոշափվող այն ճյուղը, որին սնում էր ուշ միջնադարի հոգևոր և աշխարհական շքայլության՝ ոսկու և արծաթե շինվածքների արտադրությունը, քանդակագործությունը և փայտեքանդակը, պղնձի և փայտի փորագրությունը, զինագործությունը, մետաղագործությունը, ճախարակագործությունը և այլն: Մի շարք առավել կամ նվազ նշանակություն ունեցող հայտնագործություններ, որոնցից ամենափայլունները վառոդի և տպագրության գյուտերն էին, զորավիգ հանդիսացան արհեստների բարգավաճման համար: Արդյունաբերության հետ համընթաց առևտուրն էլ էր զարգանում: Իր դարավոր ծովային մենաշնորհի շնորհիվ Հանզան ամբողջ հյուսիսային Գերմանիան հանեց միջնադարյան բարբարոսության վիճակից և չնայած XV դարի վերջից անգլիացիների և հոլլանդացիների մրցության հետևանքով Հանզան արագորեն անկման հասավ, բայց և այնպես, չնայած Վասկո-դե-Գամայի հայտնագործություններին, Հնդկաստանից դեպի հյուսիս տանող առևտրական մեծ ճանապարհը տակավին անցնում էր Գերմանիայի վրայով, և Աուգսբուրգը դեռ խոշոր պահեստատեղի էր ծառայում իտալական մետաքսե գործվածքների, հնդկական համեմունքի ու Լևանտի բոլոր արտադրանքների համար: Վերին-գերմանական քաղաքները, մանավանդ Աուգսբուրգը և Նյուրնբերգը, այդ ժամանակվա համար զգալի հարստության և շքայլության կենտրոններն էին հանդիսանում: Հում նյութերի արտադրությունը ևս զգալի չափով բարձրացավ: XV դարում գերմանական հանքագործներն աշխարհիս ամենահմուտներն էին: Քաղաքների բարգավաճման շնորհիվ երկրագործությունն էլ ազատագրվեց իր նախնական միջնադարյան պրիմիտիվ վիճակից: Լայնարձակ խոպան հողամասեր հերկվեցին, մշակվեցին ներկատու և ուրիշ երկրներից բերված այլ բույսեր, որոնց հողատար մշակույթն ընդհանրապես բարերար ազդեցություն ունեցավ նաև ամբողջ երկրագործության վրա:

Բայց և այնպես Գերմանիայի ազգային արտադրության վերելքը տակավին հետ էր մնում մյուս երկրների արտադրության զարգացումից: Գերմանական երկրագործությունը շատ հետ էր մնում անգլիականից և նիդերլանդականից: Գերմանական արդյունաբերությունը շատ ցածր էր իտալականից, ֆլամանդականից և անգլիականից, իսկ ծովային առևտրում անգլիացիները և մանավանդ հոլլանդացիներն արդեն ասպարեզից ավելի ու ավելի դուրս էին քշում գերմանացիներին: Ազգաբնակությունը դեռևս շատ նոսր էր: Քաղաքակրթությունը Գերմանիայում գոյություն ուներ միմիայն տեղ-տեղ՝ արդյունաբերական և առևտրական առանձին վայրերի շուրջը կենտրոնանալով: Մինչև իսկ այս առանձնակի կենտրոնների շահերը չէին զուգադիպում և շոշափման փոքրաթիվ կետեր միայն ունեին: Հարավը միանգամայն այլ առևտրական կապեր և վաճառահանման շուկաներ ուներ, քան հյուսիսը. արևելքի ու արևմուտքի միջև փոխանակություն համարյա բոլորովին չկար: Ոչ մի քաղաք ի վիճակի չէր երկրի արդյունաբերության և առևտրի կենտրոն դառնալու, ինչպես, օրինակ, Լոնդոնն էր Անգլիայի համար: Ամբողջ ներքին հաղորդակցությունը գրեթե բացառապես սահմանափակվում էր ծովեզրային ու գետային նավագնացությամբ և միքանի ցամաքային առևտրական մեծ ճանապարհներով, որոնք Աուգսբուրգից և Նյուրնբերգից Քյոլնի վրայով տանում էին դեպի Նիդերլանդներ և Էրֆուրտի վրայով դեպի հյուսիս: Բազմաթիվ մանր քաղաքներ հեռու էին ընկած գետերից ու առևտրական ճանապարհներից և փոխանակության մեջ մասնակցություն չունենալով՝ նրանք անփոփոխ շարունակում էին քարշ տալ իրենց գոյությունը ուշ միջնադարի պայմաններում, մեծ քանակությամբ դրսի ապրանքների կարիքը չէին զգում և արտահանության համար շատ քիչ ապրանքներ էին տալիս: Գյուղական ազգաբնակությունից միմիայն ազնվականությունն էր շփվում ավելի լայն շրջանների և նոր պահանջմունքների հետ: Իսկ գյուղացիների մասսան երբեք դուրս չէր գալիս մերձագույն տեղական հարաբերությունների սահմաններից, և դրա համար էլ նրա հետաքրքրությունը սահմանափակվում էր տեղական նեղ հորիզոնով:

Մինչդեռ Անգլիայում և Ֆրանսիայում առևտրի և արդյունաբերության վերելքը միահյուսում էր բովանդակ երկրի շահերը և դրանով իսկ առաջ էր բերում քաղաքական կենտրոնացում, այդ նույն պրոցեսը Գերմանիայում տարավ դեպի շահերի միավորում միայն ըստ նահանգների, զուտ տեղական կենտրոնների

չուրջը, և դրա համար էլ դեպի քաղաքական մանրատում, վորը շուտով հաստատապես ամրապնդվեց շնորհիվ այն բանի, վոր Գերմանիան դուրս մղվեց համաշխարհային առևտրից: Վորքան վոր քայքայվում եր զուտ ֆեոդալական կայսրությունը, նույնքան և խախտվում եյին այն կապերը, վորոնք միացնում եյին այդ կայսրության առանձին մասերը: Կայսերական խոշոր ավատատերերը գրեթե անկախ թագավորներ եյին փոխարկվում, իսկ կայսերական քաղաքները մի կողմից և կայսերահպատակ ասպետները մյուս կողմից համաձայնություններ եյին կնքում մերթ միմյանց դեմ, մերթ իշխանների կամ կայսեր դեմ: Ինքը կայսերական իշխանությունն առանց ըմբռնելու իր սեփական կացությունը, անորոշ տատանվում եր կայսրության տարբեր բաղկացուցիչ տարրերի միջև, ավելի ու ավելի կորցնելով իր հեղինակությունը: Այն փորձը, վոր նա արեց՝ պետությունը Լյուդովիկոս XI-ի յեղանակով կենտրոնացնելու նպատակով, չնայած բոլոր ինտրիգներին և բռնություններին, վոչ մի հետևանք չտվին, բացի այն, վոր ամուր կապեր հաստատեցին ավստրիական ժառանգական յերկրամասերի միջև: Յեթե այս խառնաշփոթության մեջ, միմյանց խաչաձևող այս անթիվ ու անհամար բաղխումների ընթացքում վորևե մեկը շահում եր և պիտի շահեր, դա բուն մանրատվածության մեջ կենտրոնացման կողմնակիցներն եյին, տեղական և գավառական կենտրոնացման կողմնակիցները, իշխանները, վորոնց կողքին հենց ինքը կայսրը հետզհետե նույնպիսի մի իշխան եր դառնում, ինչպես և բոլոր մյուսները:

Դեռևս միջին դարերից պահպանված դասակարգերի դրությունն այս պայմաններում եյապես փոխվեց, և հների կողքին նոր դասակարգեր կազմվեցին:

Բարձր ավագանուց զատվեցին իշխանները: Նրանք արդեն գրեթե բոլորովին անկախ եյին կայսրից և տիրացել եյին գերագույն իրավունքների մեծագույն մասին: Իրենց ուժով նրանք պատերազմներ եյին վարում և հաշտություն կնքում, մշտական զորք եյին պահում, լանդտագներ եյին գումարում, հարկեր նշանակում: Ստորին ազնվականության և քաղաքների խոշոր մասը նրանք արդեն յենթարկել եյին իրենց իշխանությանը և գործ եյին դնում բոլոր միջոցները, վորպեսզի միաձուլեն իրենց յերկրամասերի հետ այն քաղաքներն ու բարոնությունները, վորոնք տակավին անմիջականորեն յենթարկված եյին կայսրությանը: Վորքան վոր նրանք ապակենտրոնացման քաղաքականություն

եյին վարում կայսերական իշխանության նկատմամբ, նույնքան և կենտրոնացման ձգտումներ եյին հայտաբերում այդ քաղաքների և բարոնությունների հանդեպ: Ներքին գործերում նրանց կառավարությունն աչքի յեր ընկնում արդեն չափազանց կամայականությամբ: Ըստ մեծի մասին դասերի ժողով գումարում եյին լոկ այն դեպքերում, յերբ չեյին կարողանում այլ յելք գտնել: Յերբ ուզում եյին, նրանք հարկեր եյին նշանակում և դրամներ հավաքում. դասերի հարկեր նշանակելու իրավունքը հազվագյուտ դեպքերում եր ճանաչվում և առավել ևս հազվագյուտ դեպքերում կենսագործվում: Նույնիսկ այդ իրավունքը ճանաչելու դեպքում իշխանը սովորաբար ձայների մեծամասնություն եր ստանում շնորհիվ այն յերկու դասերի,—ասպետության և հոգևորականության,—վորոնք ազատ եյին հարկերից, բայց մասնակցություն ունեյին դրանք վայելելու մեջ: Իշխանների դրամական պահանջներն որըստորե աճում եյին պերճանքի, պալատական ծախսերի աճման, մշտական զորքը հանդես գալու և կառավարման հարաճուն ծախսերի հետ համընթաց: Հարկերը քանի գնում՝ դժնդակ եյին դառնում: Շնորհիվ արտոնությունների՝ քաղաքները մեծ մասամբ պաշտպանվում եյին հարկերի ծանրությունից. դա ամբողջապես ընկնում եր գյուղացիների վրա, ինչպես հենց իրենց իշխանների դոմենիալ գյուղացիների, այնպես և ճորտ ու կախյալ գյուղացիների և այն ասպետների չինշապարտ գյուղացիների վրա, վորոնք ավատային ծառայության պարտավորություն ունեյին: Վորտեղ ուղղակի հարկումը չեր բավարարում, հանդես եր գալիս անուղղակին. պետական գանձարանի բացերը ծածկելու համար գործադրվում եյին ֆինանսական հնարագիտության ամենանուրբ մանյովրներ: Յերբ այս ամենը չեր ոգնում, յերբ արդեն գրավ դնելու վոչինչ չեր մնում և վոչ մի ազատ կայսերական քաղաք այլևս չեր պարտք տալիս նրանց, իշխանները դիմում եյին ամենաանմաքուր փողային ոպերացիաների ոգնությանը՝ կտրում եյին վատթար տեսակի դրամ, սահմանում եյին մեկ բարձր, մեկ ցածր պարտադիր կուրսեր, նայած թե դրանցից վորն եր ավելի շահավետ գանձարանի համար: Քաղաքային և այլ ամեն տեսակի արտոնությունների վաճառքը, վորպիսի արտոնություններն այնուհետև բռնի միջոցներով կրկին խլվում եյին, վորպեսզի վերստին վաճառքի հանեն ավելի թանգ գնով, ընդդիմադրության ու ամեն մի փորձի ոգտագործումը տուգանքների յենթարկելու և ամեն տեսակի կո-

զօպուսների համար և այլն և այլն, այն ժամանակի իշխանների համար նույնպես յեկամուտի արդյունավետ և ամենօրյա աղբյուր եյին ծառայում: Նաև արդարադատությունն այդ իշխանների ձեռքին մի մշտական և շոշափելի առևտրի առարկա յեր ներկայացնում: Մի խոսքով, այն ժամանակվա հպատակները, վորոնք այդ բոլորից զատ նաև պիտի բավարարեյին իշխանական ֆոխտերի և պաշտոնյաների անձնական ընչաքաղցությունը, լիովին ճաշակում եյին կառավարման «հայրական» սիստեմի բոլոր օգանչելիքները:

Միջնադարյան ֆեոդալական հիերարխիայից գրեթե միանգամայն չքացել եր միջին ազնվականությունը. նրա մի մասը բարձրացել՝ մանր իշխանների անկախության եր հասել, իսկ մյուսը՝ նվաստացել՝ ստորին ազնվականության շարքն եր ընկել: Ստորին ազնվականությունը, ասպետությունը, արագ քայլերով կործանվում եր: Դրա մի խոշոր մասը միանգամայն քայքայվել եր և իշխանների մոտ ծառայելով եր ապրում, ստանձնելով զինվորական կամ քաղաքացիական պաշտոններ. մյուս մասն իշխանների հանդեպ ավատական կախման մեջ եր գտնվում և նրանց հպատակվում, իսկ մնացած ամենափոքր մասն անմիջականորեն յենթարկվում եր կայսրին: Պատերազմական գործի զարգացումը, հետևակի նշանակության բարձրացումը և հրազենի կատարելագործումը ասպետների ծանրաշարժ հեծելազորի նշանակությունը խախտեցին և միաժամանակ վերացրին նրանց ամրոցների անառիկ բնույթը: Ինչպես նյուրնբերգի արհեստավորները, ճիշտ այդպես էլ ասպետները միանգամայն ավելորդ դարձան արդյունաբերության առաջադիմության հետևանքով: Ասպետների քայքայմանը խիստ չափով նպաստեցին նրանց դրամական պահանջմունքները: Քաղաքակրթության առաջխաղացման հետ միասին ավելանում եր դղյակների փարթամությունը, տուրնիրների և տոնահանդեսների ժամանակ շքեղությամբ միմյանց հետ մրցելը, զենքերի և ձիերի գները, մինչդեռ ասպետների և բարոնների յեկամտի աղբյուրները բնավ չեյին ավելանում, կամ ավելանում եյին չնչին չափով: Ֆեոդալական գժտությունները, վորոնք անպայմանորեն կապված եյին ավարառությունների և պատերազմական տուգանքների հետ, ճանապարհորդներին կողոպտելը և այլ նման ազնիվ գործերը ժամանակի ընթացքում խիստ վտանգավոր զբաղմունքներ դարձան: Իրենց հպատակների վճարած տուրքը և մատուցած ծառայությունները հազիվ թե ավելի մեծ յեկամուտ եյին տալիս, քան առաջ: Իրենց հարաճուն պահանջ-

մունքները բավարարելու համար ազնիվ ասպետներն ստիպված եյին նույն միջոցներին դիմելու, ինչ և իշխանները: Գյուղացիությունը տարեցտարի ավելի ու ավելի յեր կեղեքվում ազնվականության կողմից: Ազնվականները ծծում եյին ճորտերի արյունը մինչև վերջին կաթիլը, իսկ հպատակ գյուղացիներին զանազան պատրվակների և անունների տակ ծանրաբեռնում եյին նորանոր տուրքերով ու ծառայություններով: Բոլոր նախկին համաձայնությունների հակառակ նրանք կամայականորեն ավելացնում եյին կոռ, չինշան, բահրան և ռենտան, մահացքի և ժառանգման դեպքում գանձվող տուրքերը, «հովանավորության» վճարը և այլն: Դատական մարմինները մերժում եյին գյուղացիների դիմումները կամ հրապուրվում կաշառքներով, իսկ յերբ ասպետը վոչ մի այլ ճանապարհով հնարավորություն չեր ունենում գյուղացուց դրամ կորզել, առանց այլևայլության վերջինիս բանտ եր նետում և ստիպում, վոր փրկագրամ վճարի:

Ստորին ազնվականությունը մյուս դասերի հետ բարեկամական հարաբերությունների մեջ չեր գտնվում: Ավատատու ազնվականությունը ձգտում եր կայսերական դառնալ, իսկ կայսերական ասպետությունն աշխատում եր իր անկախությունը պահպանել. այս պատճառով էլ անվերջ բախումներ եր տեղի ունենում իշխանների հետ: Ասպետները միանգամայն ավելորդ եյին համարում այն ժամանակվա հոգևորականության ամբարտավանացած դասը և նախանձով նայում հոգևորականների լայնատարած կալվածքների, ինչպես և կուսակրոնության և յեկեղեցական կազմակերպության շնորհիվ նրանց կուտակած հարստությունների վրա: Ազնվականությունը շարունակ գժտություններ եր ունենում քաղաքների հետ, վորոնց նկատմամբ նա պարտապանի դրության մեջ եր գտնվում. իր գոյությունը պահպանելու համար նա կողոպտում եր քաղաքապատկան յերկրամասերը, թալանում նրանց վաճառականներին և փրկագրամ վերցնում՝ կռիվների ժամանակ գերված քաղաքացիներից: Յեվ վորքան վոր դրամական հարցը նաև ասպետության համար կենսական խնդիր եր դառնում, նույնքան ևս ավելի կատաղի յեր դառնում այն պայքարը, վոր նա մղում եր այդ բոլոր դասերի դեմ:

Պատմական բեկման ազդեցությունը նվազ չափով չեր զգում հոգևորականությունը, միջնադարյան ֆեոդալիզմի իդեոլոգիայի այդ ներկայացուցիչը: Տպագրության գյուտի, ինչպես և ավելի ու ավելի ծավալվող առևտրի պահանջների հետևանքով նա զրկվեց վոչ միայն կարդալու և գրելու, այլև բարձրագույն կրթ-

տության մենաշնորհից: Աշխատանքի բաժանումը յերևան յեկավ նաև մտավոր ասպարեզում: Հենց նոր ծնունդ առնող իշխանների դասը դուրս մղեց հոգևորականությունը մի շարք ազդեցիկ պաշտոններից: Նա սկսեց նույնպես զգալի չափով ավելորդ դառնալ, վոր հաստատում եր նա իր չարունակ աճող ծուլությամբ և ագահությամբ: Բայց վորքան վոր հոգևորականությունն ավելորդ եր դառնում, նույնքան և թվական տեսակետից նա բազմանում եր շնորհիվ այն աճելի հարստությունների, վոր նա հնարավոր բոլոր միջոցներով անընդհատ բազմապատկում եր:

Հոգևորականությունը բաղկացած եր յերկու՝ միմյանցից միանգամայն տարբեր դասակարգերից: Հոգևորական ֆեոդալական հիերարխիան,—յեպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, աբբաները, պրիորները և մյուս պրելատները,—կազմում եր արիստոկրատիկ դասակարգը: Յեկեղեցական այս բարձրաստիճան պաշտոնյաները կամ իրենք կայսերական իշխաններ եյին, կամ թե վորպես այլ իշխանների վեհապետության ներքո գտնվող ֆեոդալներ իշխում եյին լայնատարած հողերի վրա՝ յենթարկելով իրենց իշխանությանը բազմաթիվ ճորտեր և կախյալ բնակչություն: Իրենց հպատակներին նրանք վոչ միայն ազնվականների և իշխանների նման անխնա շահագործում եյին, այլև ավելի անամոթաբար եյին վարվում: Կոպիտ բռնության հետ միասին նրանք գործադրում եյին կրոնական բոլոր հնարքները, տանջանքների սարսափների հետ միասին շարժման մեջ եյին դնում բանադրանքի յերկյուղը, մեղքերի թողության մերժումը և խոստովարանի բոլոր ինտրիգները, վորպեսզի իրենց հպատակներից կորզեն նրանց վերջին գրոշը և ավելացնեն յեկեղեցական կալվածքները: Վավերագրերի կեղծումն այս արժանապատիվ մարդկանց համար խաբեբայության մի սովորական և սիրած միջոց եր: Չնայած այն հանգամանքին, վոր բացի ֆեոդալական սովորական ծառայություններից և չինշերից նրանք նաև տասանորդ եյին վերցնում, այս բոլոր յեկամուտները նրանց չեյին բավարարում: Ժողովրդից ե՛լ ավելի մեծ գումարներ կորզելու համար նրանք չեյին վարանում այնպիսի միջոցների ոգնությանը դիմելու, ինչպիսին սրբերի հրաշագործ պատկերների և մասունքների արտադրությունն եր, յերանավետ ուխտագնացությունների կազմակերպումը և ինդուլգենցիաների վաճառքը, ընդվորում դա յերկար ժամանակ մեծ հաջողություն ուներ:

Վոչ միայն ժողովրդի, այլև ազնվականության կողմից դեպի հոգևորականությունը տածած ատելությունը կենտրոնանում եր պրելատների և աբեղաներից կազմված նրանց անհամար ժանդարմերիայի վրա, վորը քաղաքական և կրոնական հալածանքների հետևանքով անընդհատ աճում եր: Վորքան վոր պրելատներն անմիջականորեն յենթարկվում եյին կայսրին, նրանք խոչընդոտ եյին հանդիսանում իշխանների համար: Գերապայծառ յեպիսկոպոսների և աբբաների, ինչպես և նրանց աբեղաների բանակի շվայտ և զեղխ նիստուկացը հարուցում եր ազնվականության նախանձն ու ժողովրդի ցասումը, վորը պիտի կրեր այդ ծախքերը, և այդ ցասումը նույնքան մեծ չափեր եր ընդունում, վորքան հոգևորականների վարած կյանքը հակասում եր իրենց քարոզներին:

Կղերականության պլեբեյական մասը բաղկացած եր գյուղի և քաղաքի քահանաներից: Սրանք չեյին մտնում յեկեղեցու ֆեոդալական հիերարխիայի մեջ և այդ հիերարխիայի հարստություններից բաժին չունեյին: Նրանց աշխատանքն ավելի նվազ չափով եր ստուգվում, և չնայած վոր այդ աշխատանքը յեկեղեցու համար շատ կարևոր նշանակություն ուներ, բայց թե տվյալ դեպքում նա ավելի պակաս անհրաժեշտություն եր ներկայացնում, քան վանական հանրակացարաններում ապրող աբեղաների վոստիկանական ծառայությունը: Այդ իսկ պատճառով քահանաները շատ ավելի վատ եյին վարձատրվում, և նրանց բենեֆիցիաները չափազանց սուղ եյին: Իրենց բյուրգերական և պլեբեյական ծագման հետևանքով նրանք բավական մոտ եյին կանգնած ժողովրդական մասսաների կյանքի պայմաններին և այսպիսով, չնայած իրենց կղերական կոչմանը, նրանք ի վիճակի եյին պահպանելու բյուրգերների և պլեբեյների համակրանքը: Այդ ժամանակ տեղի ունեցող շարժումների մեջ մասնակցությունը նրանց համար սովորական եր, իսկ աբեղաների համար՝ բացառություն: Նրանց շարքերից դուրս եյին գալիս շարժման թեորետիկներ և իդեոլոգներ, և դրա համար ել նրանցից շատերը, վորպես պլեբեյների ու գյուղացիների ներկայացուցիչներ, կնքում եյին իրենց մահկանացուն կառափնատեղերում: Պրելատների դեմ ուղղված ժողովրդական ատելությունը քահանաների վրա սոսկ մասնակի դեպքերում եր անդրադառնում:

Ինչպես վոր իշխանների և ազնվականության գլխին կանգնած եր կայսրը, այնպես ել բարձր և ստորին հոգևորականության գլխին—պապը: Ինչպես վոր կայսրին վճարվում եր «ընդ-

«հանրական պֆեննիգը» (gemeiner Pfennig), կայսերական հարկե-րը, այնպես էլ պապին վճարվում եյին ընդհանուր յեկեղեցական տուրքերը, վորոնցով հոգացվում եյին հռոմեական կուրիայի շռայլ ծախքերը: Պրելատների ուժի և նրանց մեծաքանակ բազմության շնորհիվ վո՛չ մի յերկրում յեկեղեցական տուրքերն այնպիսի բարեխղճությամբ և խստությամբ չեյին ժողովվում, ինչպես Գերմանիայում: Մանավանդ յեպիսկոպոսական ամբիոնները թափուր մնալիս խստությամբ եյին գանձվում աննատները: Պահանջմունքների աճման հետ նորանոր միջոցներ եյին հնարվում դրամ հայթայթելու համար, ինչպես, որինակ, մասունքների առևտուրը, ինդուլգենցիաների վաճառքը, հոբելյանական տուրքերը և այլն: Այսպիսով ամեն տարի Գերմանիայից խոշոր գումարներ եյին հոսում դեպի Հռոմ, ընդվորում դրա շնորհիվ աճած ճնշումը վոչ միայն ուժեղացնում եր դեպի հոգևորականությունը տածած ատելությունը, այլև գրգռում եր ազգային զգացմունքը, մանավանդ ազնվականության շրջանում, վորն այդ ժամանակ ամենաազգայնական դասն եր:

Առևտրի և արհեստների ծաղկման հետ միասին միջնադարյան քաղաքների բյուրգերների սկզբնական մասսայից զարգացան յերեք միմյանցից խիստ առանձնացած խմբեր:

Քաղաքային հասարակության գլուխ եյին անցել պատրիկական տոհմերը, այսպես կոչված «Ehrbarkeit»: Դրանք ամենահարուստ ընտանիքներն եյին: Միայն նրանք եյին մասնակցում քաղաքային խորհրդի նիստերին և վարում բոլոր քաղաքային պաշտոնները: Ուստի նրանք վոչ միայն տնորինում եյին, այլև ծախսում քաղաքային յեկամուտները: Իրենց հարստությամբ ուժեղ, իրենց ավանդական, կայսեր և կայսրության կողմից ճանաչված արիստոկրատիկ դիրքի հետևանքով, նրանք ամեն յեղանակով շահագործում եյին ինչպես քաղաքային համայնքը, այնպես էլ քաղաքահպատակ գյուղացիներին: Նրանք զբաղվում եյին հացահատիկների և դրամի վաշխառությամբ, յուրացնում եյին ամեն տեսակի մենաշնորհներ, մեկը մյուսի հետևից խլում եյին համայնքի՝ քաղաքային անտառներից ու արոտներից ոգտվելու բոլոր իրավունքները, և դրանք ոգտագործում եյին իրենց անմիջական մասնավոր ոգտի համար, կամայականորեն նրանք ճանապարհների, կամուրջների և դարպասների մաքսեր և այլ տուրքեր եյին սահմանում և առևտրի առարկա դարձնում համքարական արտոնությունները, վարպետի և քաղաքացու կոչումն ստանալու իրավունքները և արդարադատությունը: Մերձքաղաքային

գյուղացիների հետ նրանք պակաս անխնա չեյին վարվում, քան ազնվականությունն ու հոգևորականությունը. ընդհակառակը,— գյուղերում գործող քաղաքային ֆոխտերն ու պաշտոնյաները, վորոնք բացառապես պատրիկներ եյին, հարկահանության ժամանակ իրենց արիստոկրատիկ անողոքությանն ու ընչաքաղցությանն ավելացնում եյին նաև մի վորոշ բյուրոկրատիկ ճշտապահություն: Այս ձևով գանձված քաղաքային յեկամուտները նրանք տնորինում եյին չափազանց կամայական ձևով. քաղաքային գրքերում գրանցումները, վորոնք զուտ ձևականություն եյին ներկայացնում, վերին աստիճանի անփույթ և խճճված յեղանակով եյին կատարվում. գեղծումներն ու դրամարկղային պակասորդներն առօրյա յերևույթներ եյին: Թե ինչպիսի դյուրությամբ այն ժամանակ կարող եր քաղաքային յեկամուտների հաշվին անչափ հարստություն դիզել մի սակավաթիվ կաստա, վորն ամեն կողմից ոժտված եր արտոնություններով և սերտորեն շաղկապված ազգակցությամբ ու ընդհանուր շահերով, այդ դժվար չե պատկերացնել, յեթե հիշենք այն բազմաթիվ խարդախությունները և վատնումները, վորոնք 1848 թվին յերևան յեկան բազմաթիվ քաղաքային վարչություններում:

Պատրիկներն ամեն կերպ աշխատում եյին, վոր քաղաքային համայնքների իրավունքները, մանավանդ ֆինանսական խնդիրներում, ամենուրեք մոռացության տրվեն: Հետագայում միայն, յերբ այս պարոնների խաբեբայությունները ամեն մի չափ ու սահման անցել եյին, համայնքները կրկին շարժվեցին, վոր գոնե քաղաքային վարչության վերահսկողությունն իրենց ձեռքն առնեն: Շատ քաղաքներում իրոք նրանց հաջողվեց կրկին վերականգնել իրենց իրավունքները: Սակայն համքարությունների միջև հարատև գոյություն ունեցող յերկպառակությունների հետևանքով, ինչպես և պատրիկների համառության և այն պաշտպանության շնորհիվ, վոր նրանք վայելում եյին կայսրության և իրենց հետ դաշնակցած քաղաքների կառավարությունների կողմից, խորհուրդների պատրիկ անդամները մասամբ խորամանկությամբ, մասամբ բռնությամբ շուտով վերականգնեցին իրենց հին իշխանությունը քաղաքային խորհուրդներում: XVI դարի սկզբին բոլոր քաղաքներում համայնքները վերստին ոպոզիցիայի մեջ եյին գտնվում:

Քաղաքներում պատրիկության դեմ ուղղված ոպոզիցիան յերկու խմբերի յեր բաժանվում, վորոնք գյուղացիական պատ-

բազմի ժամանակ հանդես են գալիս միանգամայն վորոշակի ձևով:

Բյուրգերական ոպոզիցիան, վորը մեր ժամանակակից լիբերալների նախորդն եր ներկայացնում, ընդգրկում եր հարուստ և միջակ քաղաքացիներին, ինչպես և մանր բուրժուազիայի ավելի կամ պակաս մասը, նայած տեղական հանգամանքներին: Այդ ոպոզիցիայի պահանջները զուտ սահմանադրական բնույթ ունեյին: Նա պահանջում եր քաղաքային վարչության վերահսկողությունը և մասնակցությունը՝ օրենսդիր իշխանության մեջ, լինի դա բուն համայնական ժողովի, թե համայնքի ներկայացուցչության միջոցով (մեծ խորհուրդ, համայնքի կոմիտե)․ այնուհետև նա պահանջում եր սահմանափակել միքանի պատրիկ ընտանիքների, այն ոլիգարխիայի անկոնտրոլ տնտեսավարությունը, վորը հենց պատրիկության շրջանում քանի գնում՝ աչքի յեր զարնում: Բացի այդ, հիշյալ ոպոզիցիան ամենաշատը պահանջում եր, վոր խորհրդի մեջ միքանի տեղեր հատկացվեն իր սեփական խմբին պատկանող քաղաքացիներին: Այս կուսակցությունը, վորին տեղ-տեղ հարում եր նաև պատրիկների դժգոհ և քայքայված մասը, համայնքի բոլոր կանոնավոր ժողովներում, ինչպես նաև համքարությունների մեջ, ձայների մեծամասնություն ուներ: Խորհրդի կողմնակիցները և ավելի արմատական ոպոզիցիան միասին առած՝ աննշան փոքրամասնություն եյին կազմում լիիրավ քաղաքացիների մեջ:

Ստորև մենք կտեսնենք, թե ինչպես այս «չափավոր», «լոյալ», «բարեկեցիկ» և «ինտելիգենտ» ոպոզիցիան XVI դարի շարժման ընթացքում ճիշտ նույն դերը կատարեց և միևնույն հաջողությամբ, ինչպիսի դեր կատարեց նրա հաջորդը, սահմանադրական կուսակցությունը, 1848 և 1849 թվերի շարժման ժամանակ:

Սակայն, բյուրգերական ոպոզիցիան վերին աստիճանի լուրջ պայքար եր մղում նաև հոգևորականների դեմ, վորոնց ծույլ ու հեշտալի կենցաղը և անառակ բարքերը ոպոզիցիայի շրջանում սարսափելի զայրույթ եյին հարուցում: Նա պահանջում եր վճռական միջոցներ ձեռք առնել այդ արժանապատիվ մարդկանց խայտառակ վարքուբարքի դեմ: Նա պահանջում եր վերացնել հոգևորականների հատուկ յուրիսդիկցիան և հարկերից ազատ լինելը, ինչպես և ընդհանրապես սահմանափակել աբեղաների թիվը:

Պլեբեյական ոպոզիցիան բաղկացած եր քայքայված քաղաքացիներից և քաղաքային բնակիչների այն մասսայից, վորը քաղաքացիության իրավունքներ չուներ, այն ե՝ յենթավարպետներից, օրամշակներից, օրավարձով աշխատողներից և լումպեն-պրոլետարիատի այն բազմաթիվ սաղմերից, վորոնք յերևան են գալիս դեռ քաղաքների զարգացման ստորին աստիճանների վրա: Լումպեն-պրոլետարիատն ընդհանրապես մի յերևույթ ե, վորը շատ թե քիչ ձևավորված կերպով հանդես ե գալիս մինչայժմյան հասարակական զարգացման համարյա բոլոր փուլերում: Հենց այդ ժամանակ, ֆեոդալիզմի քայքայման շնորհիվ, առաջացած հասարակության մեջ, վորում յուրաքանչյուր պրոֆեսիա դեռ պաշտպանված եր անհամար արտոնություններով,—հենց այդ ժամանակ բազմանում եր այն մարդկանց մասսան, վորոնք զուրկ եյին վորոշ պրոֆեսիայից կամ մշտական բնակավայրից: Բոլոր առաջադեմ յերկրներում թափառաշրջիկների թիվը յերբեք այնքան խոշոր չի յեղել, ինչպես XVI դարի առաջին կեսում: Այս թափառաշրջիկների մի մասը պատերազմի ժամանակաշրջանում բանակի մեջ եր մտնում, մյուս մասը գյուղերում թափառում եր ու մուրացկանություն անում, վերջապես, յերրորդ մասը փորձում եր իր աղքատիկ գոյությունը քարշ տալ քաղաքներում՝ իբրև օրամշակ կամ այլ աշխատանքների միջոցով, վորոնք վորևե համքարության պատկանելություն չեյին պահանջում: Այս յերեք տարրերն ել իրենց դերը խաղացին գյուղացիական պատերազմի մեջ. առաջինը դեր խաղաց այն իշխանական զորքերի մեջ, վորոնք հաղթահարեցին գյուղացիներին, յերկրորդը—գյուղացիական դավադրությունների և բանակների մեջ, վորտեղ ամեն մի վայրկյան յերևան եր գալիս դրանց բարոյալքիչ ազդեցությունը, յերրորդը—քաղաքների կուսակցությունների պայքարների մեջ: Իմիջի այլոց չպիտի մոռանալ, վոր այս դասակարգի, մանավանդ քաղաքներում ապրողների, մի խոշոր մասը դեռ այն ժամանակ օժտված եր առողջ գյուղացիական բնությամբ և նրա մեջ տակավին չեր զարգացել ժամանակակից քաղաքակրթված լումպեն-պրոլետարիատի վաճառվող և ապականված բնույթը:

Ինչպես տեսնում ենք, այն ժամանակի քաղաքային պլեբեյական ոպոզիցիան կազմված եր խառնիճաղանճ տարրերից: Հին, ֆեոդալական և համքարական հասարակության քայքայվող տարրերը նա միացնում եր՝ ծնունդ առնող ժամանակակից բուրժուական հասարակության տակավին անզարգացած, հազիվ նշմարվող պրոլետարական տարրերի հետ,—մի կողմից դա համքարությունների հքավորության գիրկն ընկած անդամներն եյին, վորոնք

իրենց արտոնություններով դեռ կապված եյին գոյություն ունեցող քաղաքային հասարակակարգի հետ, իսկ մյուս կողմից, իրենց մշտական բնակավայրերից դուրս շպրտված գյուղացիները և արձակված ծառաները, վորոնք տակավին չեյին կարող պրոլետարներ դառնալ: Այս յերկուսի միջև կանգնած եյին յենթավարպետները, վորոնք այդ ժամանակ հասարակությունից դուրս եյին գտնվում և վորոնք իրենց կյանքի պայմաններով այնքան մոտ եյին պրոլետարիատին, վորքան դա հնարավոր եր այն ժամանակի արդյունաբերության կարգերի և համքարական արտոնությունների տիրապետության պայմաններում, բայց և միաժամանակ հենց այս արտոնությունների շնորհիվ էլ համարյա նրանք բոլորը ապագա բյուրգեր-վարպետներ եյին: Այդքան բազմազան տարրերից բաղկացած այս խառնուրդի կուսակցական դիրքավորումը բնականաբար չափազանց անկայուն եր և ըստ տեղական պայմանների՝ տարբեր: Գյուղացիական պատերազմից առաջ պլեբեյական ոպոզիցիան քաղաքական պայքարներում հանդես չի գալիս իբրև կուսակցություն, այլ նա լոկ ընթանում է բյուրգերական ոպոզիցիայի հետևից, վորպես նրա՝ աղմկող, կողոպուտի տենչող, միքանի տակառ գինով վաճառվող պոչը: Միայն գյուղացիական ապստամբությունների շնորհիվ նա փոխարկվեց կուսակցության, բայց այդ դեպքում էլ իր պահանջներով և յելույթներով նա ամենուրեք կախված է գյուղացիներից, վորպիսի հանգամանքը մի զարմանալի ապացույց է, թե դեռ այդ ժամանակ քաղաքը վորպիսի կախման մեջ եր գտնվում գյուղից: Իսկ յեթե նա հանդես է գալիս անկախորեն, նա պահանջում է վերականգնել քաղաքի արդյունաբերական մենաշնորհը գյուղում, նա չի ցանկանում, վոր մերձքաղաքային շրջաններում ֆեոդալական պարտավորությունների վերացման հետևանքով պակասեն քաղաքի յեկամուտները և այլն: Մի խոսքով, քանի վոր հետադիմական է, նա յենթարկվում է սեփական մանր-բուրժուական տարրերին և դրանով իսկ ներկայացնում է այն տրագիկոմեդիայի բնորոշ նախերգանքը, վոր յերեք տարուց ի վեր ժամանակակից մանրբուրժուազիան ցուցաբերում է դեմոկրատիայի անվան տակ:

Միմիայն Թյուրինգիայում՝ Մյունցերի անմիջական ազդեցությամբ և միքանի այլ վայրերում՝ նրա աշակերտների շնորհիվ քաղաքների պլեբեյական մասն այնքան տարվեց ընդհանուր հեղափոխական փոթորկով, վոր այդ փոթորկի մեջ պրոլետարական սաղմային տարրը այդ ժամանակ առաջնություն ձեռք բերեց այդ

շարժման բոլոր մյուս գործոնների նկատմամբ: Այս միջադեպը, վորն ամբողջ գյուղացիական պատերազմի գագաթնակետն է կազմում և վորը տեղի յեր ունենում այդ շարժման ամենախառահեղ ներկայացուցչի՝ Թոմաս Մյունցերի շուրջը, միաժամանակ և ամենակարճատև միջադեպն է: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր պլեբեյական ոպոզիցիան ամենից ավելի շուտ պիտի տապալվեր, վոր դրա հետ միասին նա գերազանցապես ֆանտաստիկ կնիք պիտի կրեր և վոր նրա պահանջները չափազանց անորոշ արտահայտություն պիտի ունենային, քանի վոր այն ժամանակի պայմաններում նա ամենից քիչ ամուր հող ուներ իր վոտքերի տակ:

Այս բոլոր դասակարգերի ներքո, բացառությամբ վերջինիս, գտնվում եր ժողովրդի վիթխարի, շահագործվող մասսան—գյուղացիները: Գյուղացու վրա յեր ծանրանում հասարակության շենքի ամբողջ հիերարխիան՝ իշխանները, պաշտոնյաները, ազնվականությունը, հոգևորականները, պատրիկները և բյուրգերները: Արդյոք նա կպատկաներ վորևե իշխանի, թե կայսերական բարոնի, վորևե յեպիսկոպոսի, թե վանքի կամ վորևե քաղաքի, դա միևնույն է,—ամենուրեք նրա հետ վարվում եյին իբրև մի առարկայի հետ, իբրև մի բեռնատար կենդանու հետ և նույնիսկ ավելի վատթար ձևով: Յեթե նա ճորտ եր (Leibeigener), լիովին գտնվում եր իր տիրոջ իշխանության տակ: Յեթե նա սոսկ կախյալ գյուղացի յեր (Höriger), հապա նրան ճնշելու համար արդեն բավական եյին օրենքով և պայմանագրերով սահմանված պարտականությունները, վորոնք օրըստօրե ավելանում եյին: Իր ժամանակի մեծ մասը նա պիտի նվիրեր այն աշխատանքին, վոր նա պարտավոր եր կատարել իր տիրոջ կալվածքներում. իսկ միքանի ազատ ժամերում իր համար կատարած աշխատանքի արդյունքից նա պարտավոր եր վճարել տասանորդ, չինշ, բահրա և այլ վճարներ տիրոջը, հարկեր հողատեր իշխանի, ռազմական տուրքեր, տեղական և պետական հարկեր: Նա չեր կարող վոչ ամուսնանալ և վոչ էլ մեռնել առանց իր տիրոջը վճարելու: Բացի սովորական կոռային ծառայությունից, իր տիրոջ համար նա պիտի հավաքեր հավաքեր, յելակ, հապալասի և խխունջներ ժողովեր, փայտ պիտի կտրեր, վայրի կենդանիներին հետամուտ պիտի լիներ, վորպեսզի իր տերը հաջողությամբ վորսորդություն աներ և այլն: Ձկնորսության և վորսորդության իրավունքը ֆեոդալին եր պատկանում և գյուղացին պարտավոր

ծը անխտիր դիտել, թե ինչպես վորսի վայրի կենդանիները փչացնում են նրա ցանքսերի բերքը: Գրեթե ամեն տեղ տերերը բռնի միջոցներով խլել եյին գյուղացիներից համայնական արոտատեղիները և անտառները: Տիրոջ իշխանությունը կամայականորեն տարածվում եր ինչպես գյուղացու սեփականության, այնպես և նրա անձնավորության, նրա կնոջ և աղջիկների վրա: Տիրոջն եր պատկանում առաջին գիշերվա իրավունքը: Ըստ իր քմահաճույքի նա ցանկացած րոպեյին կարող եր գյուղացուն բանտ նետել, վորտեղ վերջինիս նույնպիսի անխուսափելիությամբ տանջանքներ եյին սպասում, ինչպես ներկայումս բանտարկյալին՝ դատաքննիչը: Տերը գյուղացուն ծեծում, մերձիմահ եր անում, և յեթե ցանկանար, կարող եր հրամայել գլխատել նրան: Կարլոս V-ի քրեական որենսգրքի այն ուսանելի գլուխներից, վորտեղ խոսվում ե «ականջները կտրելու», «քիթը կտրելու», «աչքերը հանելու», «մատներն ու ձեռքերը ծայրատելու», «գլխատելու», «անիվահար անելու», «այրելու», «շիկացած ունելիքով չարչարելու», «քառատելու» և այլ տանջանքների մասին, չկար և վոչ մեկը, վոր վողորմած տերը և հովանավորն ըստ իր քմահաճույքի չգործադրեր իր գյուղացիների վերաբերմամբ: Ո՞վ պիտի պաշտպաներ գյուղացուն: Դատարաններում բազմած եյին բարոնները, հոգևորականները, պատրիկները կամ իրավաբանները, վորոնք շատ լավ գիտեյին, թե ինչի համար են դրամ ստանում: Չե՞ վոր կայսրության բոլոր պաշտոնական դասերն ապրում եյին գյուղացիների շահագործման հաշվին:

Թեև գյուղացիները չարացած եյին այդ սարսափելի ճնշումից, այնուամենայնիվ դժվար եր նրանց դեպի ապստամբություն մղել: Գյուղացիների միմյանցից անջատված վիճակը ծայր աստիճան դժվարացնում եր նրանց ընդհանուր միաբանությունը: Այն հանգամանքը, վոր յերկարատև ժամանակի ընթացքում նրանք արդեն ընտելացել եյին սերնդից-սերունդ շարունակվող ընկճված վիճակին, վոր շատ վայրերում արդեն մոռացության եյին տվել զենքերի գործածությունը և վոր գյուղացիների շահագործումը մերթ ուժեղանում եր, մերթ մեղմանում, նայած տիրոջ անձնավորությանը, — այս ամենը նպաստում եր, վոր գյուղացիները հնազանդության մեջ մնան: Այդ իսկ պատճառով միջին դարերում մենք տեսնում ենք գյուղացիների բազմաթիվ տեղական ըմբոստացումներ, սակայն մինչև գյուղացիական պատերազմը մենք չենք գտնում, գոնե Գերմանիայում, գյուղացիա-

կան ընդհանուր համազգային ապստամբության վոչ մի դեպք: Բացի այդ, գյուղացիներն ի վիճակի չեյին մեն-մենակ հեղափոխություն կատարել, քանի դեռ նրանց դեմ ծառացած եր իշխանների, ազնվականության և քաղաքների կազմակերպված և սերտորեն միախմբված ուժը: Միմիայն դաշնակցելով մյուս դասերի հետ՝ նրանք կարող եյին հաղթության վորևե շանս ունենալ. բայց ի՞նչպես կարող եր գյուղացիությունը դաշնակցել մյուս դասերի հետ, յերբ սրանք բոլորն ել այս կամ այն չափով շահագործում եյին նրան:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր XVI դարի սկզբին կայսրության տարբեր դասերը՝ իշխանները, ազնվականությունը, պրելատները, պատրիկները, բյուրգերները, պլեբեյները և գյուղացիները կազմում եյին մի վերին աստիճանի խառնաշփոթ մասսա՝ իրենց բազմատեսակ, բոլոր ուղղություններով միմյանց խաչաձևող պահանջներով: Այդ դասերից յուրաքանչյուրը մյուսների դեմ խոչընդոտներ եր հարուցում, մյուսների դեմ անընդհատ պայքար մղում՝ մերթ բացարձակ, մերթ սքողված ձևով: Այս պայմաններում ամբողջ ազգը չեր կարող բաժանվել յերկու խոշոր բանակների, ինչպես դա տեղի ունեցավ Ֆրանսիական առաջին հեղափոխության սկզբին և ինչպես դա տեղի յե ունենում այժմ՝ զարգացման բարձր աստիճանի հասած ամենաառաջադեմ յերկրներում. դա կարող եր լոկ մոտավոր չափով իրագործվել սոսկ այն դեպքում, յեթե ապստամբվեր ժողովրդի ամենաստորին, բոլոր մյուս դասերի կողմից շահագործվող խավը—գյուղացիներն ու պլեբեյները: Այդ ժամանակ տիրող շահերի, հայացքների և ձգտումների խառնաշփոթը հեշտությամբ կարելի յե ըմբռնել, յեթե հիշենք, թե վերջին յերկու դարվա ընթացքում ինչպիսի խառնաշփոթություն առաջ բերեց գերմանական ազգի ժամանակակից շատ ավելի պարզ կազմությունը, վորը բաղկացած ե ֆեոդալական ազնվականությունից, բուրժուազիայից, մանր բուրժուազիայից, գյուղացիներից և պրոլետարիատից:

II

Այդ ժամանակաշրջանում այդքան խայտաբղետ բնույթ կրող դասերի միավորումը և ավելի խոշոր խմբավորումներ կազմելը գրեթե անհնարին եր հենց այն պատճառով, վոր այդ ժամանակ տիրում եր ապակենտրոնացում, տեղական և պրովինցիալ ինքնուրույնություն, վոր արդյունաբերական և առևտրական տնտե-

կեռից դավաններն անջատված եյին միմյանցից և վոր հաղորդակցությունը վատթար դրության մեջ էր գտնվում: Այս խըմբավորումն առաջ չեկավ միմիայն ռեֆորմացիայի շրջանում՝ կրոնական-քաղաքական հեղափոխական գաղափարների ընդհանուր ծավալման հետ միասին: Այս գաղափարներին հարող կամ դրանց դեմ ծառացող տարբեր դասերը համախմբեցին գերմանական ազգը—ճիշտ է, մեծ դժվարությամբ և լոկ մոտավոր չափով,—յերեք խոշոր բանակների մեջ՝ կաթոլիկ կամ հետադիմական, լութերական՝ բյուրգերական-բարենորոգչական և հեղափոխական բանակների մեջ: Յեթե նույնիսկ գերմանական ազգի այս խոշոր պառակտման մեջ առանձին հետևողականություն չենք հայտաբերում, յեթե առաջին յերկու բանակների մեջ մասամբ միևնույն տարրերն ենք գտնում, հապա դա բացատրվում է այն քայքայված վիճակով, վորի մեջ գտնվում էր միջին դարերից ժառանգություն մնացած պաշտոնական դասերի մեծ մասը, ինչպես և այն ապակենտրոնացմամբ, վորի հետևանքով միևնույն դասերը տարբեր վայրերում առժամանակ կարող եյին հակադիր հոսանքներին հարել: Վերջին տարիների ընթացքում այնքան հաճախ մենք առիթ ենք ունեցել Գերմանիայում համանման փաստեր տեսնելու, վոր մեզ չի կարող զարմանք պատճառել այն հանգամանքը, վոր XVI դարի շատ ավելի բարդ հարաբերությունների պայմաններում տեղի յե ունեցել դասերի և դասակարգերի այդպիսի առերևույթ խայտաբղետ խառնահյուսում:

Այն պայքարների մեջ, վորոնք տապալեցին միջնադարը, գերմանական իդեոլոգիան, չնայած վերջին ժամանակների փորձերին, տակավին այլ բան չի տեսնում, քան աստվածաբանական կատաղի կռվշտոցներ: Մեր հայրենի պատմագետների և պետական իմաստունների կարծիքով՝ այն ժամանակ մարդիկ յեթե միայն կարողանային ընդհանուր լեզու գտնել յերկնային խնդիրների վերաբերմամբ, հապա նրանք հիմք չեյին ունենալ աշխարհիկ հարցերի շուրջը կռիվ մղելու: Այս գաղափարախոսները բավական դյուրահավատ են, վորպեսզի հալած յուղի տեղ ընդունեն այն բոլոր մտապատրանքները, վոր դարաշրջանն ինքը կամ այդ ժամանակի իդեոլոգներն ստեղծում են այդ նույն ժամանակաշրջանի վերաբերմամբ: Այդ նույն տեսակի մարդիկ 1789 թվի հեղափոխության մեջ, որինակի համար, տեսնում են սոսկ մոլեգին բանակռիվներ այն հարցի շուրջը, թե ինչպիսի առավելություններ ունի սահմանադրական միապետությունը միահե-

ծան-միապետության հանդեպ, հուլիսյան հեղափոխության մեջ տեսնում են մի պրակտիկ վեճ այն մասին, վոր որենքը չի կարելի բղխեցնել «աստծու վողորմածությունից», փետրվարյան հեղափոխության մեջ—մի փորձ, վորի նպատակն էր լուծել՝ հանրապետությո՞ւն, թե միապետություն հարցը և այլն: Այն դասակարգային պայքարի մասին, վոր ծավալվում է այս ցընցումների ժամանակ, և այն մասին, վոր դրոշի վրա գրված քաղաքական ֆրազն այդ պայքարի պարզ արտահայտությունն է միայն հանդիսանում,—այս ամենի մասին մինչև իսկ այսոր դեռ գաղափար չունեն մեր իդեոլոգները, չնայած այդ մասին բավական բարձրաձայն վկայում են վոչ միայն արտասահմանից հասնող տեղեկությունները, այլև գերմանական բազմահազար պրոլետարների զայրագին տրտունջները:

XVI դարի այսպես կոչված կրոնական պատերազմների ժամանակ էլ ամենից առաջ խնդիրը վերաբերում էր դասակարգային միանգամայն դրական նյութական շահերին: Այս պատերազմների հիմքն էլ կազմում էր դասակարգերի պայքարը, ինչպես նաև Անգլիայում և Ֆրանսիայում հետագայում տեղի ունեցած ներքին ճգնաժամերի մեջ: Յեթե դասակարգային այս պայքարն այն ժամանակ կրոնական կնիք էր կրում, յեթե առանձին դասակարգերի շահերը, կարիքներն ու պահանջները կրոնական շղարշով եյին քողարկված, դա ամենևին չի փոխում գործի էությունը և հեշտությամբ բացատրվում է իր ժամանակի պայմաններով:

Միջնադարը զարգացել էր միանգամայն պրիմիտիվ վիճակից: Նա ջնջեց յերկրի յերեսից հին քաղաքակրթությունը, հին փիլիսոփայությունը, քաղաքականությունը և իրավագիտությունը և ամեն ինչ սկսեց սկզբից: Միակ բանը, վոր միջնադարը վերցրեց կործանված հին աշխարհից, դա քրիստոնեությունն էր և մի քանի կիսաքայքայված, իրենց յերբեմնի քաղաքակրթությունից զրկված քաղաքները: Դա այն հետևանքն ունեցավ, վոր հոգևորականներն իրենց ձեռքն առան մտավոր կրթության մենաշնորհը, և դրանով իսկ կրթությունը գերազանցապես աստվածաբանական բնույթ ստացավ, ինչպես դա տեղի յե ունենում զարգացման բոլոր սկզբնական աստիճանների վրա: Քաղաքականությունն ու իրավագիտությունը, ինչպես և մնացած բոլոր գիտությունները, հոգևորականների ձեռքում աստվածաբանության հասարակ ճյուղեր դարձան և նրանց հիմքում դրվեցին նույն սկզբունքները, վորոնք տիրում եյին աստվածաբանության մեջ:

Եկեղեցու դոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմաներ էին, իսկ աստվածաշնչի խոսքերն ամեն մի դատարանում օրենքի ուժ ունեին։ Նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն կազմվել էր իրավաբանների առանձին դասը, իրավագիտությունը դեռ երկար ժամանակ մնում էր աստվածաբանության խնամակալության տակ։ Մտավոր գործունեության բոլոր բնագավառների վրա տարածվող աստվածաբանության գերիշխանությունը միաժամանակ այն հանգամանքի անհրաժեշտ հետևանքն էր, որ եկեղեցին գոյություն ունեցող ֆեոդալական հասարակակարգի ամենից ընդհանուր սինթեզն ու սանկցիան էր հանդիսանում։

Պարզ է, որ այդ պայմաններում այն բոլոր ընդհանուր բնույթ կրող հարձակումները, որ կատարվում էին ֆեոդալիզմի և ամենից առաջ եկեղեցու դեմ, ինչպես նաև հեղափոխական, հասարակական և քաղաքական բոլոր ուսմունքները, միաժամանակ նաև աստվածաբանական հերետիկոսություններ պիտի լինեին։ Տիրող հասարակական հարաբերությունների վրա հարձակումը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ էր հետացնել սրբության այն շղարշը, որով սքողված էին այդ հարաբերությունները։

Ֆեոդալիզմի դեմ ուղղված հեղափոխական օպոզիցիան նկատվում է ամբողջ միջնադարի ընթացքում։ Նայած ժամանակի պայմաններին, նա հանդես է գալիս մերթ իբրև միստիկա, մերթ որպես բացորոշ հերետիկոսություն, մերթ որպես զինված ապստամբություն։ Ինչ վերաբերում է միստիկային, արդեն շատ լավ հայտնի է, թե դրանից ինչպիսի կախումն ունեին XVI դարի բարենորոգիչները. միստիկայից շատ բան է վերցրել նաև Մյունցերը։ Հերետիկոսությունները մասամբ այն ռեակցիայի արտահայտությունն էին ներկայացնում, որով համակված էին ալպիական նահապետական հովիվներն ընդդեմ ֆեոդալիզմի, որը ներթափանցում էր նրանց մոտ (վալդենսները), մասամբ նրանք քաղաքների օպոզիցիան էին ներկայացնում ընդդեմ ֆեոդալիզմի, քաղաքների, որոնք գերաճել էին հենց այդ ֆեոդալիզմի շրջանակներից (ալբիգոյցիները, Առնոլդ Բրեշիացին և այլն), մասամբ էլ գյուղացիների բացահայտ ապստամբություններ էին հանդիսանում (Պիկարդիայում գործող հունգարացի քարոզիչը, Ջոն Բոլլը և այլն)։ Ինչպես վալդենսների նահապետական հերետիկոսությունը, ճիշտ այնպես էլ

շվեյցարացիների ըմբոստացումները կարող ենք մի կողմը թողնել, իբրև պատմական զարգացումից անջրպետվելու մի փորձ, որն ըստ իր ձևի և բովանդակության հետադեմ բնույթ էր կրում և, բացի այդ, միայն տեղական նշանակություն ուներ։ Միջնադարյան հերետիկոսության մյուս երկու ձևերի մեջ դեռևս XII դարում մենք արդեն տեսնում ենք բյուրգերական և գյուղացիական պլեբեյական օպոզիցիայի միջև եղած այն մեծ ներհակության վաղ ներկայացուցիչներին, որի հետևանքով գյուղացիական պատերազմը կորստի մատնվեց։ Այս ներհակությունը շարունակվում է ամբողջ հետնադույն միջնադարի ընթացքում։

Քաղաքների հերետիկոսությունը, իսկ նա իսկապես ներկայացնում է միջին դարերի պաշտոնական հերետիկոսությունը, գլխավորապես ուղղված էր հոգևորականների դեմ, որոնց հարստությունների և քաղաքական դիրքի դեմ մաքառում էր այդ հերետիկոսությունը։ Ինչպես այժմ բուրժուազիան պահանջում է էժան կառավարություն, gouvernement á bon marché, հենց այդպես էլ միջնադարյան բյուրգերները նախ և առաջ պահանջում էին էժան եկեղեցի, églse á bon marché։ Բյուրգերական հերետիկոսությունը, որն, ամեն մի հերետիկոսության նման, ըստ իր ձևի հետադիմական էր, և՛ եկեղեցու և՛ դոգմաների հետագա զարգացման մեջ կարող էր սոսկ այլասերում տեսնել, պահանջում էր վերականգնել եկեղեցու վաղնջադույն քրիստոնեական պարզ կառուցվածքը և վերացնել հոգևորականների հատուկ դասը։ Այս էժանագին կազմակերպության շնորհիվ վերացվում էին վարդապետները, պրելատները, հռոմեական կուրիան, մի խոսքով՝ այն ամենը, ինչ եկեղեցուն թանկ էր նստում։ Թեև միապետների պաշտպանության ներքո գտնվող, բայց իրենցից հանրապետություններ ներկայացնող քաղաքները պապականության դեմ ուղղված իրենց հարձակումներով առաջին անգամ ընդհանուր ձևով ազդարարեցին, որ բուրժուազիայի տիրապետության նորմալ ձևը հանրապետությունն է հանդիսանում։ Մի շարք դոգմաների և եկեղեցական օրենքների հանդեպ նրանց ունեցած թշնամական վերաբերմունքը մասամբ բացատրվում է վերևը հիշատակված հանգամանքներով, մասամբ էլ նրանց կյանքի մյուս պայմաններով։ Թե ինչո՛ւ, օրինակի համար, կուսակրոնության դեմ այնքան կատաղի հարձակումներ էին արվում, այդ առթիվ ոչ ոք ավելի լավ մեկնություն չի տալիս, քան Բոկկաչիոն։ Այս ուղղության գըլ-

խավոր ներկայացուցիչներն եյին՝ Իտալիայում և Գերմանիայում Առնոլդ Բրեշիացին, Հարավային Ֆրանսիայում—ալբիգոյցիները, Անգլիայում—Ջոն Վիկլեֆը, Չեխիայում—Հուսը և կալիքստինականները (չաշնիկները): Վոր ֆեոդալական հասարակակարգի դեմ յեղած ոպոզիցիան այստեղ հանդես է գալիս իբրև սոսկ յեկեղեցական ֆեոդալիզմի դեմ ուղղված մի ոպոզիցիա, դա պարզապես բացատրվում է նրանով, վոր քաղաքներն արդեն ամենուրեք ճանաչված դաս եյին ներկայացնում և վոր իրենց արտոնությունների, զենքերի և իրենց դասի ժողովների միջոցով նրանք հնարավորություն ունեյին գոհացուցիչ չափով կռիվ մղել աշխարհական ֆեոդալիզմի դեմ:

Ինչպես Հարավային Ֆրանսիայում, այնպես և Անգլիայում ու Չեխիայում, մենք արդեն տեսնում ենք, վոր ստորին ազնվականության խոշորագույն մասը հարում եր քաղաքներին հոգևորականների դեմ մղվող պայքարում և հերձվածներին, մի յերևույթ, վոր բացատրվում է այն հանգամանքով, վոր ստորին ազնվականությունը կախման մեջ եր գտնվում քաղաքներից և վոր այդ յերկուսն էլ իշխանների և պրելատների հանդեպ ընդհանուր շահեր ունեյին: Այս յերևույթին մենք կրկին հանդիպում ենք գյուղացիական պատերազմի ժամանակ:

Միանգամայն այլ բնույթ եր կրում այն հերետիկոսությունը, վորը գյուղացիական և պլեբեյական պահանջմունքների արտահայտությունն եր ներկայացնում և վորը գրեթե միշտ էլ միանում եր ապստամբությանը: Թեև նա համամիտ եր բյուրգերական հերետիկոսության այն բոլոր պահանջներին, վորոնք ուղղված եյին հոգևորականների ու պապականության դեմ և նպատակ ունեյին վերականգնել յեկեղեցու վաղ-քրիստոնեական կառուցվածքը, սակայն նա միաժամանակ անհամեմատ հեռավոր ձգտումներ ուներ: Նա պահանջում եր վերականգնել այն հավասարությունը, վոր գոյություն ուներ նախնական քրիստոնեական համայնքի անդամների միջև, և այդ հավասարությունն ընդհանուր կանոն ճանաչել նաև քաղաքացիական աշխարհի համար: «Աստծու զավակների հավասարությունից» նա հետևցնում եր, վոր գոյություն պիտի ունենա քաղաքացիական հավասարություն և մինչև իսկ մասամբ գույքի հավասարություն: Ազնվականության հավասարեցում գյուղացիների հետ, պատրիկների ու արտոնյալ քաղաքացիների հավասարեցում պլեբեյների հետ, կոռային սիստեմի, հողային տուրքերի, հարկերի, արտոնությունների վերացում և կայքային գոնե աղաղակող տարբե-

րությունների վոչնչացում,—ահա այն պահանջները, վորոնք առաջադրվում եյին առավել կամ նվազ պարզորոշությամբ, վորպես նախնական քրիստոնեական ուսմունքի անհրաժեշտ հետևություններ: Գյուղացիական-պլեբեյական այս հերետիկոսությունը, վորը ֆեոդալիզմի ծաղկման շրջանում, ինչպես, որինակ, ալբիգոյցիների մոտ, հազիվ թե կարելի լիներ տարբերել բյուրգերականից, XIV և XV դարերում զարգանալով դառնում է խիստ առանձնացած կուսակցական հայեցողություն, յերբ նա բյուրգերականի կողքին սովորաբար հանդես է գալիս իբրև մի ինքնուրույն հերետիկոսություն: Այսպես, որինակ, Անգլիայում Ուոտ Թայլերի ապստամբության քարոզիչ Ջոն Բոլլը հանդես է գալիս Վիկլեֆի կողմնակիցների կողքին, և Չեխիայում տաբորիտները յերևան են գալիս կալիքստինականների կողքին: Աստվածպետական քողի տակ տաբորիտները մինչև անգամ հանրապետական ձգտումներ են յերևան բերում, վորոնք XV դարի վերջին և XVI դարի սկզբին պլեբեյների ներկայացուցիչների մոտ հետագա զարգացում են ստանում Գերմանիայում:

Հերետիկոսության այս ձևին է հարում միստիկ աղանդների՝ ֆլագելլանտների, լոլլարդների և այլ աղանդների եքզալտացիան, վորոնք ռեակցիայի ժամանակներում շարունակում են հեղափոխական տրադիցիաները:

Պլեբեյներն այդ ժամանակ այն միակ դասակարգն եյին, վորը պաշտոնական հասարակության շրջանակներից միանգամայն դուրս եր գտնվում: Նրանք չեյին մտնում ֆեոդալական և բյուրգերական կապակցությունների մեջ: Նրանք վոչ արտոնություններ ունեյին և վոչ էլ սեփականություն. նույնիսկ՝ դժնդակ պարտավորություններով ծանրաբեռնված գույք, ինչպիսին գյուղացիները և մանր քաղաքացիներն ունեյին: Ամեն մի տեսակետից նրանք ընչազուրկ եյին և իրավազուրկ, նրանց կյանքի պայմանները մինչև անգամ անմիջական շփումն չունեյին այն ժամանակ գոյություն ունեցող հաստատությունների հետ, վորոնց կողմից նրանք միանգամայն անտեսվում եյին: Ֆեոդալական և համքարային քաղաքային հասարակության քայքայման կենդանի սիմպտոմն եյին նրանք և միաժամանակ ներկա բուրժուական հասարակության առաջին նախակարապետները:

Պլեբեյների այս դրությամբ է բացատրվում, թե ինչու հասարակության այս խավն արդեն իսկ այն ժամանակ չեր կարող սահմանափակվել ֆեոդալիզմի և արտոնյալ քաղաքացիների դեմ

մղվող պայքարով, թե ինչու նա պիտի դուրս գար, գոնե յերազանքներում, հազիվ ծնունդ առնող ժամանակակից բուրժուական հասարակության շրջանակներից, թե ինչու նա, հասարակության միանգամայն ընչազուրկ այդ մասը, արդեն կասկածի տակ պիտի առներ այն հաստատությունները, հայացքները և պատկերացումները, վորոնք դասակարգային ներհակությունների վրա հենվող հասարակական բոլոր ձևերի համար ընդհանուր են: Վաղ քրիստոնեյության քիլիաստիկական անուրջներն այդ տեսակետից հարմար յելակետ եյին ներկայացնում: Այսուհանդերձ այն հեռավոր թռիչքը, վոր նա կատարում եր վոչ միայն ներկայիս, այլև նույնիսկ ապագայի սահմանների վրայով, կարող եր միմիայն բռնազբոսիկ և ցնորական բնույթ կրել, և գործնական կիրառման հենց առաջին փորձի դեպքում վերստին պիտի ընկներ այն անձուկ սահմանների մեջ, վոր դնում եյին այն ժամանակվա պայմանները: Մասնավոր սեփականության դեմ ուղղված հարձակումները, գույքերի համայնատիրության պահանջը պիտի վերասերվեր բարեգործության բիրտ կազմակերպության. քրիստոնեյական անորոշ հավասարությունը լավագույն դեպքում կարող եր քաղաքացիական «օրենքի առաջ հավասարության» ձևի վերածվել. ամեն մի իշխանության վերացումը վերջիվերջո փոխարկվում ե՝ ժողովրդի կողմից ընտրվող հանրապետական կառավարությունների: Ֆանտազիայի ոգնությամբ կոմունիզմի կանխագուշակումը ժամանակակից բուրժուական հարաբերությունների կանխագուշակում դարձավ:

Հետագա պատմության այս բռնազբոսիկ, բայց պլեբեյների կյանքի պայմաններով միանգամայն բացատրելի կանխագուշակումը առաջին անգամ մենք գտնում ենք Գերմանիայում՝ Թոմաս Մյունցերի և նրա կուսակցության մոտ: Ճիշտ ե, տաբորիտների մոտ գոյություն ե ունեցել գույքի մի տեսակ քիլիաստիկ համայնատիրություն, սակայն դա սոսկ ռազմական միջոցառման բնույթ ե կրել: Կոմունիստական իդեաների այս նշույլներն առաջին անգամ Մյունցերի մոտ են ստանում իրական հասարակական խմբակի ձգտումների արտահայտություն, այդ նշույլներն առաջին անգամ քիչ թե շատ պարզորոշ կերպով նրա մոտ են ձևակերպվում, և նրանից սկսած մենք կրկին հանդիպում ենք այդ նշույլներին ժողովրդական ամեն մի խոշոր ցնցման ժամանակ, մինչև վոր հետզհետե դրանք միախառնվում են ժամանակակից պրոլետարական շարժման հետ, ճիշտ այնպես, ինչպես

միջին դարերում ազատ գյուղացիների պայքարն ընդդեմ նրանց ավելի ու ավելի շրջափակող ֆեոդալական իշխանության միախառնվում ե այն պայքարի հետ, վոր ճորտերը և կախյալ գյուղացիները վարում եյին՝ ֆեոդալիզմը հիմնովին տապալելու նպատակով:

Մինչդեռ յերեք խոշոր բանակներից առաջինի՝ պահպանողական կաթոլիկական բանակի մեջ համախմբվել եյին այն բոլոր տարրերը, վորոնք շահագրգռված եյին գոյություն ունեցող կարգերի պահպանման մեջ, այսինքն կայսերական իշխանությունը, հոգևորական և մասամբ աշխարհական իշխանները, ավելի հարուստ ազնվականությունը, պրելատները և քաղաքային պատրիկները, — լութերական բյուրգերականորեն չափավոր, ռեֆորմի դրոշի տակ խմբվել եյին ոպոզիցիայի բոլոր սեփականատեր տարրերը, ստորին ազնվականության մասսան, բյուրգերությունը և նույնիսկ աշխարհական իշխանների մի մասը, վորը հույս ուներ յեկեղեցապատկան կալվածքների գրավման միջոցով հարստանալ և ձգտում եր ոգտվել առիթից, վորպեսզի ավելի մեծ անկախություն ձեռք բերի կայսրության հանդեպ: Վերջապես, գյուղացիներն ու պլեբեյները համախմբվեցին հեղափոխական կուսակցության մեջ, վորի պահանջները և ուսմունքն ամենացայտուն ձևով Մյունցերն ե ձևակերպել:

Լութերը և Մյունցերն իրենց ուսմունքներով և թե իրենց բնավորությամբ ու յելույթներով յուրաքանչյուրն իր կուսակցության լիակատար մարմնացումն ե:

1517 թվից մինչև 1525 թիվը Լութերը ճիշտ նույն եվոլյուցիան ե արել, ինչ արին արդի գերմանական սահմանադրականները՝ սկսած 1846-ից մինչև 1849 թիվը և վորն անում ե ամեն մի բուրժուական կուսակցություն, վորը միաժամանակ գլխավորում ե շարժումը և վորն այնուհետև տեղի յե տալիս՝ հենց այդ շարժման ընթացքում իր հետևը կանգնած պլեբեյական կամ պրոլետարական կուսակցությանը:

1517 թվին, յերբ Լութերն առաջին անգամ հանդես յեկավ կաթոլիկ յեկեղեցու դոգմաների և կառուցվածքի դեմ, նրա ոպոզիցիան տակավին զուրկ եր վորոշակի բնույթից: Նախկին բյուրգերական հերետիկոսության պահանջների սահմաններից դուրս չգալով՝ այդ ոպոզիցիան իրենից չվանեց և չեր ել կարող վանել վոչ մի արմատական ուղղություն: Առաջին պահին բոլոր ոպոզիցիոն տարրերը պիտի համախմբվեյին, անհրաժեշտ եր

գործադրել ամենավճռական հեղափոխական յեռանդ, մինչդեռ մյուս հերետիկոսությունների ամբողջ մասսան պետք է հակադրվեր կաթոլիկ ուղղափառությանը: Հենց ճիշտ այդպես էլ մեր պատմական բուրժուաները դեռ 1847 թվին հեղափոխական էյին, իրենց սոցիալիստներ և կոմունիստներ էյին անվանում և բանվոր դասակարգի ազատագրման մասին ճառում: Իր գործունեյության այդ առաջին շրջանում Լութերի գյուղացիական ուժեղ բնավորությունը յերևան յեկավ ամենաբուռն և ուժգին ձևով: «Յեթե նրանց (այսինքն հռոմեական հոգևորականների) մոլեգին կատաղությունը դեռ ելի շարունակվի, ապա, ինձ թվում է, որ նրանց վերջ տալու համար ավելի լավ միջոց չի մնում, քան այն, որ թագավորները և իշխանները ուժի օգնությանը դիմեն ու հարձակվեն բովանդակ աշխարհը թունավորող այդ վնասակար մարդկանց վրա և մի անգամ ընդմիշտ վերջ դնեն նրանց խաղին վոչ թե խոսքերով, այլ զենքով: Յեթե գողերին պատժում ենք սրով, մարդասպաններին՝ կախաղանով, հերետիկոսներին՝ կրակով, ապա ինչո՞ւ չհարձակվենք ապականության այս վնասակար ուսուցիչների—պապի, կարդինալների, յեպիսկոպոսների և հռոմեական Սոդոմի մնացած ամբողջ վոհմակի վրա, ամեն տեսակի զենքերով և մեր ձեռքերը չլվանանք նրանց արյունով»:

Սակայն այս առաջին հեղափոխական ավյունը յերկար չտևեց: Լութերի նետած կայծակն իր ներգործությունն ունեցավ: Վողջ գերմանական ժողովուրդը շարժվեց: Հոգևորականների դեմ ուղղված նրա կոչերի մեջ, քրիստոնեյական ազատության մասին նրա քարոզի մեջ մի կողմից գյուղացիները և պլեբեյներն ապստամբության ազդանշան էյին տեսնում, իսկ մյուս կողմից այդ շարժմանը միացան ավելի չափավոր բյուրգերները և ստորին ազնվականության զգալի մասը, ընդհանուր հոսանքն իր հետ անգամ իշխաններին տարավ: Վոմանք կարծում էյին, թե հասել է այն օրը, յերբ արդեն կարող են հաշիվ տեսնել իրենց բոլոր ճնշողների հետ, մյուսները ցանկանում էյին տապալել միմիայն հոգևորականների հզորությունը, վերջ դնել Հռոմի գերիշխանությանն ու կաթոլիկական հիերարխիային և հարստանալ յեկեղեցապատկան կալվածքների գրավման միջոցով: Կուսակցությունները շերտավորվեցին և իրենց ներկայացուցիչներին գտան: Դրանց միջև Լութերն ընտրություն պիտի աներ: Նա, Սաքսոնիայի կուրֆյուրստի կողմից հովանավորություն վայելողը, Վիտտենբերգի համալսարանի հարգելի պրոֆեսորը, վորը մի

գիշերվա ընթացքում հզոր ու նշանավոր եր դարձել, այդ մեծ մարդը, վորը շրջապատված եր իրենից կախումն ունեցող կրեատուրայով և շողոքորթներով, մի վայրկյան անգամ չվարանեց: Նա դավաճանեց շարժման ժողովրդական տարրերին և հարեց բյուրգերական, ազնվականական և իշխանական բանակին: Հռոմը բնաջինջ անելու, մահվան և կյանքի պատերազմ մղելու կոչերը դադարեցին, այժմ արդեն Լութերն սկսեց քարոզել խաղաղ զարգացման և պասսիվ դիմադրության մասին (որինակ, համեմ., «An den Adel teutscher Nation» («Դիմում գերմանական ազնվականությանը») 1520 թ. և այլն: Հուտտենի այն հրավերին, վոր Լութերը գա Եբերնբուրգ՝ հոգևորականների և իշխանների դեմ ազնվականների դավադրության կենտրոնը՝ իր և Զիկկինգենի մոտ, Լութերը պատասխանեց. «Յես չեյի ցանկանա, վոր ավետարանը քարոզվեր բռնությամբ ու արյունհեղությամբ: Խոսքը հաղթահարեց աշխարհին, խոսքի շնորհիվ է պահպանվել յեկեղեցին, խոսքի միջոցով էլ նա կվերածնվի, և ինչպես վոր նեռն առանց բռնության իր նպատակին է հասել, այնպես էլ նա առանց բռնության կտապալվի»:

Այս շրջադարձից կամ ավելի ճիշտ՝ Լութերի ուղղության այս ճշտորոշումից հետո սկսվեց այն սակարկությունը, թե վո՞ր հաստատությունները ու դոգմաները պիտի պահպանվեն և վորոնք պիտի բարենորոգվեն, սկիզբն առավ այն զարշելի դիվանագիտությունը, զիջողությունները, մեքենայությունները և համաձայնությունները, վորոնց հետևանքը Աուգսբուրգյան դավանությունը, բյուրգերական բարենորոգված յեկեղեցու այդ սակարկված սահմանադրությունը յեղավ: Սա ճիշտ այն փերեզակությունն է, վոր վերջերս քաղաքական ձևով զզվանք պատճառելու չափ ճշգրիտ կրկնվում է գերմանական ազգային ժողովներում, համաձայնեցուցիչ ժողովներում, սահմանադրությունը վերաքննող պալատներում և Երֆուրտի պառլամենտում: Այս բանակցությունների ընթացքում ամենաբացահայտ ձևով դրսևորվեց պաշտոնական ռեֆորմացիայի քաղքենի բնույթը:

Այն հանգամանքը, վոր այս մոմենտից սկսած բյուրգերական բարենորոգչության պաշտոնական ներկայացուցիչ դարձած Լութերը խաղաղ պրոգրեսի քարոզիչ դարձավ, ուներ իր խիստ լուրջ պատճառները: Քաղաքների մեծ մասը չափավոր ռեֆորմի կողմնակիցն եր դարձել. ստորին ազնվականությունն ավելի ու ավելի հարում եր այդ նույն ուղղությանը. դրան միանում եր

նաև իշխանների մի մասը, իսկ մյուս մասը տատանվում էր: Այդ ուղղության հաջողությունը, գոնե Գերմանիայի խոշոր մասում, կարելի չէր ապահով համարել: Անընդհատ խաղաղ զարգացման պայմաններում մյուս մարդերը չէին կարող յերկարատև դիմադրություն ցույց տալ չափավոր օպոզիցիայի ճնշմանը: Իսկ ամեն մի բռնի ցնցման հետևանքն այն կլիներ, վոր ընդհարում կառաջանար չափավոր կուսակցության և ծայրահեղ, պլեբեյական և գյուղացիական կուսակցության միջև, վոր շարժումից կվաներ իշխաններին, ազնվականությանը և քաղաքներից շատերին, և վոր միմիայն յերկու հնարավոր յելքից մեկը կմընար.—կամ բյուրգերական կուսակցությունը տեղի կտար գյուղացիներին և պլեբեյներին, կամ թե կաթոլիկական ռեստավրացիան կճնշեր շարժմանը մասնակցող բոլոր պրոգրեսիվ կուսակցություններին: Վերջին ժամանակներս մենք բավական օրինակներ ենք ունեցել, թե ինչպես ամենահամեստ հաղթանակից հետո բուրժուական կուսակցությունները պրոգրեսի միջոցով օրինականության սահմաններում փորձեր են կատարում խուսանավելու՝ հեղափոխության Սցիլլայի և ռեստավրացիայի Խարիբդայի միջև:

Քանի վոր այն ժամանակաշրջանի հասարակական և քաղաքական ընդհանուր պայմանների շնորհիվ ամեն մի փոփոխության արդյունքներն անհրաժեշտաբեն շահեկան պիտի լինեյին իշխանների համար և նրանց հզորությունն ավելացնեյին, ապա բյուրգերական ռեֆորմն էլ, վորքան վոր դա ավելի ուժեղ չափով անջատվեր պլեբեյական և գյուղացիական տարրերից, նույնքան ավելի ու ավելի պիտի ընկներ բարենորոգչության կողմը բռնած իշխանների կոնտրոլի տակ: Հենց ինքը Լութերը հետզհետե իշխանների ստրուկն էր դառնում, և ժողովուրդը պարզ գիտակցում էր իր անելիքը, յերբ ասում էր, վոր մյուսների նման Լութերը նույնպես մի իշխանական սպասարկու յե դարձել, և յերբ Որլամյունդում նրան քարե կարկուտով հանդիպեց:

Յերբ գյուղացիական պատերազմը բռնկվեց, այդ էլ այն վայրերում, վորտեղ իշխաններն ու ազնվականներն ըստ մեծի մասին կաթոլիկներ եյին, Լութերը փորձեց հաշտեցնողի դերում հանդես գալ: Նա վճռականորեն հարձակվեց կառավարությունների վրա: Կառավարություններն են մեղավոր, վոր նրանց ճընշումների հետևանքով ապստամբություն է առաջացել. նրանց դեմ վոչ թե գյուղացիներն են ծառացել, այլ աստված ինքը:

Բայց մյուս կողմից ապստամբությունն էլ աստվածահաճո բան չէ և դեմ է ավետարանին: Վերջիվերջո յերկու կուսակցություններին էլ նա փոխադարձ զիջողությունների կոչ էր անում և առաջարկում էր գործը հաշտությամբ վերջացնել:

Սակայն չնայած միջնորդության այս բարյացակամ առաջարկներին, ապստամբությունն սկսեց արագորեն ծավալվել, ընդգրկեց նույնիսկ բողոքական, լութերական իշխանների, ավատների և քաղաքների տիրապետության տակ գտնվող մարզերը և շատ շուտով դերանցեց բյուրգերական «խոհեմ» բարենորոգչության սահմաններից: Ապստամբների ամենավճռական տարրերը Մյունցերի առաջնորդությամբ իրենց համար գլխավոր բանակատեղ ընտրեցին Թյուրինգիան, վորը Լութերին ամենից մոտ գտնվող շրջանն էր: Յեվս միքանի հաջողություններ, և վողջ Գերմանիան բոցերով կբռնկվեր, Լութերը կշրջապատվեր և վորպես դավաճան թերևս նրան զորաշարքի միջով վազեցնեյին, իսկ բյուրգերական ամբողջ ռեֆորմը կքշեր ու կտաներ գյուղացիական-պլեբեյական հեղափոխության մրրկահույզ հոսանքը: Տատանումների ժամանակ չկար այլևս: Հեղափոխության հանդեպ ատելության առվեցին բոլոր նախկին յերկչոտությունները. գյուղացիների ամբոխների համեմատությամբ հռոմեյական Սոդոմի ապաշավորներն անմեղ գառնուկներ եյին, աստծու հեզ մանուկներ. բյուրգերները և իշխանները, ազնվականներն ու հոգևորականները, Լութերն ու պապը միանում են «գյուղացիների արյունարբու և ավազակաբարո խմբերի դեմ»: «Դրանց պիտի ջախջախել, խեղդել ու խոցոտել գաղտնի թե հրապարակորեն, ով ինչպես կարողանա, ինչպես սատկացնում են կատաղած շանը, բացականչում է Լութերը: Այդ իսկ պատճառով, պարոններ, փրկեցեք, ազատացեք, խոցեք, զարկեցեք և ճզմեցեք ով ինչպես կարող է, իսկ յեթե այս գործը կատարելիս մահ. ընդունեք, յերանի՜ ձեզ, քանի վոր դրանից ավելի յերջանիկ մահ յերբեք չեք գտնի»: Միայն թե գյուղացիների նկատմամբ կեղծ գթասրտության վոչ մի վերաբերմունք չլինի: Ովքեր վողորմածությամբ են վերաբերվում նրանց, ում ինքն աստված չի վողորմում, այլ ուզում է պատժել ու կործանել, այդպիսի մարդիկ հենց իրենք խռովարարներին են միանում: Հետագայում իրենք գյուղացիները շնորհակալ կլինեն աստծուն, յերբ նրանք զրկված կլինեն իրենց մեկ կովը տալու, վորպեսզի խաղաղ ու հանգիստ վայելեն մյուս կովի բարիքները. իսկ իշխաններն ապստամբու-

թյան շնորհիվ կըմբռնեն, թե ինչպիսի վոգի ունի ամբոխը, վորին միմիայն ուժի միջոցով կարելի յե կառավարել: «Իմաստունն ասում ե՝ cibum, onus et virgam asino (եշին հարկավոր ե կեր, բեռ և մտրակ)․ գյուղացիները կարող են բավականանալ վարսակի հացով․ նրանք անմիտ են ու խոսք չեն լսում, հետևապես նրանք պիտի լսեն մտրակին և հրացանին․ և դա նրանց արժանի յե: Նրանց համար մենք պիտի աղոթենք, վոր նրանք հնազանդ լինեն, իսկ յեթե դա ել չոգնի, գթառատությունն արդեն ավելորդ ե: Այն ժամանակ թող իրենց խոսքն ասեն հրացանները, հակառակ դեպքում հազար անգամ ավելի վատթար կլինի»:

Ճիշտ այսպես ել մեր յերջանկահիշատակ սոցիալիստ և բարեգործ բուրժուաներն եյին խոսում, յերբ մարտյան որերից հետո պրոլետարիատն իր բաժինն եր պահանջում հաղթության պտուղներից:

Աստվածաշնչի թարգմանությամբ Լութերը մի զորեղ զենք ավեց պլեբեյական շարժման ձեռքը: Աստվածաշնչում իր դարաշրջանի ֆեոդալացած քրիստոնեյությանը հակադրեց առաջին դարերի համեստ քրիստոնեյությունը, քայքայվող ֆեոդալական հասարակությանը—մի հասարակության պատկեր, վորին անծանոթ եր ֆեոդալական բարդ ու բազմաշերտ, արհեստական հիերարխիան: Գյուղացիները բազմակողմանիորեն ոգտագործեցին այդ զենքն իշխանների, ազնվականության և հոգևորականների դեմ: Իսկ այժմ Լութերն այդ զենքը դարձրեց գյուղացիների դեմ և աստվածաշնչի հիման վրա մի այնպիսի փառաբանություն շարադրեց աստծու կողմից սահմանված իշխանության մասին, վորպիսին չեր կարող կազմել միահեծան միապետության վոչ մի պնակալեզ: Աստծու վողորմածությամբ հաստատված իշխանական իշխանությունը, պասիվ հնազանդությունը, մինչև անգամ ճորտատիրությունը սրբագործվեցին աստվածաշնչի ոգնությամբ: Դա հրաժարումն եր վո՛չ միայն գյուղացիական ապստամբությունից, այլև հենց իր՝ Լութերի ըմբոստացումից ընդդեմ հոգևոր և աշխարհական իշխանության: Լութերն այսպիսով վոչ միայն ժողովրդական, այլև բյուրգերական շարժումը մատնեց իշխաններին:

Մի՞թե կարիք կա այն բուրժուաների անունները տալու, վորոնք վերջերս մեզ նորից նույնպիսի որինակներ ավին իրենց սեփական անցյալն ուրանալու վերաբերմամբ:

Բյուրգերական բարենորոգիչ Լութերին այժմ հակադրենք պլեբեյական հեղափոխական Մյունցերին:

Թոմաս Մյունցերը ծնվել ե Շտոլբերգում, Հարցում, մոտավորապես 1498 թվին: Նրա հայրը, Շտոլբերգի կոմսի կամայականության զոհը, պետք ե վոր իր մահկանացուն կախաղանի վրա կնքած լինի: Դեռևս տասնհինգ տարեկան հասակում Հալլե քաղաքում Մյունցերը դպրոցում հիմնեց մի գաղտնի միություն, վորն ուղղված եր Մագդեբուրգի արքեպիսկոպոսի և ընդհանրապես հռոմեյական յեկեղեցու դեմ: Իր ժամանակի աստվածաբանության խոր ուսումնասիրությունը նրան հնարավորություն ավեց յերիտասարդ հասակում դոկտորական աստիճան ստանալու, ինչպես և կապելլանի պաշտոն՝ Հալլեյի կուսանոց վանքում: Արդեն այստեղ նա մեծ արհամարհանքով եր վերաբերվում յեկեղեցական դոգմաներին և ծեսերին, պատարագի ժամանակ ամբողջովին բաց եր թողնում գոյափոխության մասին յեղած բառերը և, ինչպես նրա մասին Լութերը պատմում եր, նա ճաշակում եր աստծու մարմինն առանց որհնության: Նրա ուսումնասիրության գլխավոր առարկան միջնադարյան միստիկներն եյին, մանավանդ Յոախիմ Կալաբրիացու քիլիաստիկ գըրվածքները: Ռեֆորմացիայի վրա հասնելու և այն ժամանակի ընդհանուր հուզմունքների պայմաններում Մյունցերին շատ մոտ եր թվում այդ հեղինակի ավետած և նկարագրած հազարամյա արքայություն, ինչպես և այլասերված յեկեղեցու և ապականված աշխարհի Ահեղ դատաստանի գալուստը: Շրջակա գյուղերում նա քարոզում եր մեծ հաջողությամբ: 1520 թվին, իբրև առաջին ավետարանական քարոզիչ, նա մեկնեց Ցվիկաու: Այստեղ նա հանդիպեց այն մոլեռանդ քիլիաստիկ աղանդներից մեկին, վորոնք շատ վայրերում դեռ շարունակում եյին իրենց գոյությունը: Նրանք ժամանակավորապես հնազանդվել ու ծպտվել եյին, բայց նրանց մեջ թաքնվում եր հասարակության ստորին խավերի հարաճուն ոպոզիցիան ընդդեմ տիրող կարգերի, և անընդհատ զորեղացող ագիտացիայի հետևանքով այդ աղանդները հանդես եյին գալիս ավելի ու ավելի բացահայտ և համառորեն: Դա անաբապտիստների աղանդն եր, վորի առաջնորդը Նիկոլաուս Շտորխն եր: Նրանք քարոզում եյին Ահեղ դատաստանի և հազարամյա արքայության մոտալուտ գալուստը․ «տեսիլքներ ու եքստազներ և մարգարեական հոգի» ունեյին նրանք: Շուտով նրանք ընդհարվեցին Ցվիկաուի խորհրդի հետ․ Մյունցերը պաշտպանում եր նրանց, թեև նա յերբեք անվերապահորեն չեր հարում այդ աղանդին, այլ ավելի շուտ իր ազդեցությանն եր յենթար-

կում նրան։ Ցվիկաու քաղաքի խորհուրդը վճռական միջոցներ ձեռք առավ անաբապտիստների դեմ, և նրանք հարկադրված եյին քաղաքը թողնել—հեռանալ, իսկ դրանց հետ միասին նաև Մյունցերը։ Այս պատահեց 1521 թվի վերջում։

Մյունցերը գնաց Պրագա և կապ հաստատելով հուսիտական շարժման մնացորդների հետ, փորձեց այդտեղ մնալ։ Սակայն նրա կոչերը լոկ այն հետևանքն ունեցան, վոր նա ստիպված եր նաև Չեխիայից փախչել։ 1522 թվին Թյուրինգիայի Ալշտեդտ քաղաքում նա քարոզիչ դարձավ։ Իր գործունեությունը նա այստեղ սկսեց պաշտամունքի բարեփոխությունից։ Նա բոլորովին



ԹՈՎՄԱՍ ՄՅՈՒՆՑԵՐ

Ապստամբած գյուղացիների և քաղաքի չքավորության առաջնորդը։

վերացրեց լատինական լեզուն, նախքան Լութերը կխիզախեր այս քայլն անել, և սկսեց կարդալ ժողովրդին վոչ միայն սահմանված կիրակնօրյա ավետարաններն ու առաքելական թղթերը, այլև ամբողջ աստվածաշունչը։ Միաժամանակ նա պրոպագանդ կազմակերպեց նաև շրջակա գյուղերում։ Բոլոր կողմերից ժողովուրդը նրա մոտ եր գալիս և շատ շուտով Ալշտեդտը դարձավ ամբողջ Թյուրինգիայի հակահոգևորական ժողովրդական շարժման կենտրոնը։

Մյունցերը տակավին նախ և առաջ աստվածաբան եր. նա դեռևս իր հարձակումները գրեթե բացառապես ուղղում եր հոգևորականների դեմ։ Բայց նա անվրդով դատողություն և խաղաղ առաջադիմություն չեր քարոզում, ինչպես այդ ժամանակ արդեն սկսել եր անել Լութերը, այլ շարունակում եր Լութերի նախկին շանթահարող քարոզները և հորդորում սաքսոնական իշխաններին և ժողովրդին՝ զինված ելույթ կազմակերպել հռոմեական հոգևորականների դեմ։ «Չե՞ վոր Քրիստոսն ասում ե. «Ես եկել եմ վոչ թե խաղաղություն բերելու, այլ սուր»։ Բայց դուք (սաքսոնական իշխաններ) ի՞նչ պիտի անեք դրա օգնությամբ։ Եթե ուզում եք աստծու ծառաները լինել, պիտի մեկուսացնեք և հեռացնեք այն չար արարածներին, վորոնք արգելքներ են հարուցում ավետարանի առաջ։ Քրիստոսը հրամայեց (Ղուկ. 19, 27)—«Թշնամիներիս այստեղ բերեք և իմ առաջ ծեծեք...» Թողեք դատարկախոսությունները, իբր դա պիտի կատարվի աստվածային ուժի միջոցով՝ առանց ձեր սրի մասնակցության, քանի վոր հակառակ դեպքում սուրը կժանգոտի պատյանի մեջ։ Նրանք, վորոնք հակառակում են աստծու հայտնությանը, պիտի սպանվեն առանց խղճահարության, ինչպես Եզեկիան, Կյուրոսը, Հովսիան, Դանիելն ու Եղիան ցրեցին Բահաղի քրմերին. այլապես քրիստոնեական եկեղեցին յերբեք չի վերածնվի։ Բերքահավաքի ժամանակ արմատախիլ պիտի արվեն աստծու այգում բուսած վորոմները։ Աստված ասել ե Մովսեսին (5, 7). «Մի գթաք անաստվածներին. ջարդեցեք նրանց սեղանները, ջախջախեցեք, կրակի մատնեցեք նրանց կուռքերը, վորպեսզի իմ բարկությունը ձեզ վրա չթափեմ»։

Սակայն իշխաններին ուղղված այս հորդորներն անհետևանք մնացին, մինչդեռ հեղափոխական հուզմունքը ժողովրդի մեջ օրըստօրե աճում եր։ Մյունցերը, վորի գաղափարները շարունակ ավելի համարձակ, խիստ ու վորոշակի բնույթ եյին ստանում,

աժմ վճռականորեն անջատվում է բյուրգերական ռեֆորմացիայից և այնուհետև հրապարակ է ելնում միաժամանակ ուղղակի իբրև քաղաքական ագիտատոր:

Նրա աստվածաբանական-փիլիսոփայական ուսմունքը վոչ միայն հարվածում է կաթոլիկության բոլոր հիմնական կետերը, այլև ընդհանրապես քրիստոնեությունը: Քրիստոնեական արտաքինի տակ նա քարոզում է մի պանթեիզմ, վորը զարմանալի նմանություն ունի ժամանակակից սպեկուլյատիվ մտահայեցողությունների հետ և տեղ-տեղ մերձենում է նույնիսկ աթեիզմին: Նա մերժում էր աստվածաշնչի բացառիկ և անսխալական հայտնություն լինելը: Նրա կարծիքով իսկական և կենդանի հայտնությունը բանականությունն է, մի հայտնություն, վորը բոլոր ժամանակներում, բոլոր ժողովուրդների մեջ գոյություն է ունեցել և տակավին գոյություն ունի: Աստվածաշունչը բանականությանը հակադրել կնշանակի մեռյալ տառերով սպանել հոգին, քանի վոր սուրբ հոգին, վորի մասին խոսում է աստվածաշունչը, մի ինչ-վոր մեզանից դուրս ապրող բան չէ. սուրբ հոգին հենց մեր բանականությունն է: Հավատը վոչ այլ ինչ է, յեթե վոչ բանականության զարթնումը մարդու մեջ, ուստի և հեթանոսներն էլ կարող են հավատ ունենալ: Այս հավատի միջոցով, արթնացած բանականության շնորհիվ, մարդը դառնում է աստվածանման և յերանելի: Ուստի յերկինքը վոչ թե հայնկուսային մի յերևույթ է, այլ նա պիտի փնտրվի այս կյանքում, և հավատացյալների կոչումն այն է, վոր այդ յերկինքը, այսինքն՝ աստծու արքայությունը, հաստատեն այստեղ՝ յերկրի վրա: Ինչպես վոր գոյություն չունի հայնկուսային յերկինք, այնպես էլ գոյություն չունի հայնկուսային դժոխք կամ հավիտենական դատապարտություն: Նույնպես գոյություն չունի մի այլ սատանա, բացի մարդու չար կրքերից և տենչանքներից: Քրիստոսը մեզ նման մարդ է յեղել, մարգարե և ուսուցիչ, իսկ նրա խորհրդավոր ընթրիքը սոսկ հասարակ հիշատակի սեղան է, վորի ժամանակ հացն ու գինին ճաշակում են առանց վորևէ միստիկ հավելումների:

Այս ուսմունքները Մյունցերը քարոզում էր մեծ մասամբ քողարկելով քրիստոնեական նույնպիսի ֆրազեոլոգիայով, վորոնց տակ յերկար ժամանակ ստիպված էր թաքնվել նաև նորագույն փիլիսոփայությունը: Սակայն նրա գրվածքներում ամենուրեք պարզ հանդես է գալիս ծայրահեղ հերետիկոսական հիմ-

նական միտքը և մենք պարզորեն տեսնում ենք, վոր բիբլիական քղամիդին նա շատ ավելի նվազ նշանակություն էր տալիս, քան նորագույն ժամանակաշրջանում Հեգելի աշակերտներից շատերը, մինչդեռ Մյունցերից մինչև նորագույն փիլիսոփայությունը յերեք հարյուրամյակ է անցել:

Նրա քաղաքական ուսմունքը սերտորեն հարում էր այս կրոնական հեղափոխական մտահայեցողություններին և նույնքան հեռու յեր անցնում այն ժամանակ գոյություն ունեցող հասարակական և քաղաքական հարաբերությունների սահմաններից, վորքան նրա աստվածաբանությունը՝ նրա ժամանակաշրջանում տիրապետող պատկերացումների շրջանակներից: Յեվ յեթե Մյունցերի կրոնական փիլիսոփայությունը մերձենում էր աթեիզմին, ապա նրա քաղաքական ծրագիրը շատ մոտիկ էր կոմունիզմին և արդի շատ կոմունիստական աղանդներ փետրվարյան հեղափոխության նախօրյակին ավելի հարուստ տեսական պաշար չունեին, քան XVI դարում Մյունցերին հետևողները: Այս ծրագիրը, վորն այնքան իր ժամանակի պլեբեյների պահանջների ամփոփումը չէր, վորքան այդ պլեբեյների միջից հազիվ ծնունդ առնող պրոլետարական տարրերի ազատագրման պայմանների հանճարեղ կանխարկումը, այդ ծրագիրը պահանջում էր անմիջապես հիմնել յերկրի վրա աստծու թագավորությունը, մարգարեների գուշակած հազարամյա արքայությունը՝ յեկեղեցին իր նախնական վիճակին վերադարձնելու և այն բոլոր հաստատությունները վերացնելու միջոցով, վորոնք հակասում էին այս իբր թե նախնական քրիստոնեական յեկեղեցուն, իսկ փաստորեն միանգամայն նոր յեկեղեցուն: Բայց աստծու թագավորություն ասելով Մյունցերն հասկանում էր ուղղակի այնպիսի հասարակակարգ, վորտեղ այլևս գոյություն չունեն վո՛չ դասակարգային տարբերություններ, վո՛չ մասնավոր սեփականություն և վո՛չ էլ այնպիսի պետական իշխանություն, վորն անկախ է հասարակության անդամներից և անհարազատ է նրանց համար: Գոյություն ունեցող բոլոր իշխանությունները, վորքան վոր նրանք չեն յենթարկվի և չեն հարի հեղափոխությանը, պիտի տապալվեն, բոլոր աշխատանքներն ու գույքերն ընդհանուրի սեփականությունը պիտի դառնան և հավասարությունը լիովին պիտի կենսագործվի: Այս խնդիրներն իրականացնելու համար պիտի միություն հիմնվի վոչ միայն ամբողջ Գերմանիայում, այլև ամբողջ քրիստոնեական աշխարհում. բոլոր իշխաններին և տերերին պետք է առաջարկվի մտնել այս միության մեջ, իսկ յեթե նրանք չցանկանան միանալ,

ապա հենց առաջին հարմար դեպքում միությունը պիտի զենքը ձեռքին հարձակվի նրանց վրա և ջարդի նրանց բոլորին։

Մյունցերն անմիջապես ձեռնամուխ յեղավ այդ միության կազմակերպման գործին։ Նրա քարոզներն առավել ևս ուժեղ հեղափոխական բնույթ ստացան։ Հոգևորականների վրա հարձակումով չսահմանափակվելով, նա միևնույն կրքոտությամբ շանթահարում էր նաև իշխաններին, ազնվականությանը, պատրիկներին, վառվռուն գույներով նկարագրում էր գոյություն ունեցող ճնշումները և դրանց հակադրում էր սոցիալ-հանրապետական հավասարության հազարամյա թագավորության իր ֆանտաստիկ պատկերը։ Միաժամանակ մեկը մյուսի հետևից նա լույս էր ընծայում հեղափոխական պամֆլետներ և էմիսարներ ուղարկում բոլոր կողմերը, իսկ ինքը շարունակում էր միություն կազմակերպել Ալտշտեդտում և սրա շրջակայքում։

Այս պրոպագանդի առաջին պտուղը Մելլերբախում (Ալտշտեդտի մոտ) ս. Մարիամի մատուռի կործանումն էր, այն պատգամի համաձայն, վորն ասում էր. «Դուք պիտի կործանեք նրանց սեղանները, խորտակեք նրանց արձանները և կրակով այրեք նրանց կուռքերը, վորովհետև դուք սուրբ ժողովուրդ եք» (Երկրորդ օրինաց 7,5)։ Հուզմունքը խաղաղացնելու համար իրենք սաքսոնական իշխաններն Ալտշտեդտ քաղաքը յեկան և հրամայեցին Մյունցերին դղյակը կանչել։ Այստեղ նա մի քարոզ խոսեց, վորպիսին այդ իշխանները սովոր չէյին լսել Լութերից, Վիտտենբերգի այդ անհոգ կյանք վարող հաստավորից, ինչպես անվանում էր նրան Մյունցերը։ Հենվելով նոր կտակարանի վրա, նա պնդում էր, վոր պիտի ջարդվեն անաստված կառավարողները և մանավանդ քահանաներն ու աբեղաները, վորոնք ավետարանը հերետիկոսություն են համարում։ Անաստվածներն իրավունք չունեն ապրելու, յեթե միայն ընտրյալները վողորմածությամբ չվերաբերվեն։ Յեթե իշխանները չվոչնչացնեն այդ անաստվածներին, աստված կխլի նրանց սուրը, քանի վոր սրի ուժն ամբողջ համայնքին է պատկանում։ Վաշխառության, գողության և ավազակության գլխավոր մեղավորը իշխաններն ու պարոններն են. նրանք իրենց սեփականությունն են դարձնում բոլոր արարածներին, ջրի ձկները, օդի թռչունները, դաշտի բույսերը։ Յեվ այդ ամենից հետո դեռ համարձակություն ունեն աղքատներին քարոզելու այն պատգամը, վորն ասում է՝ մի գողանար,—այնինչ իրենք հափշտակում են այն ամենը, ինչ գտնում են, քերթում ու

կեղեքում են գյուղացուն և արհեստավորին. իսկ յեթե նրանցից վորևէ մեկը մի փոքրիկ օրինազանցություն է կատարում, կախաղան են բարձրացնում, և այս ամենի առթիվ դոկտոր Ստախոսն ասում է.—ամե՛ն։ «Իրենք պարոններն են պատճառը, վոր չքավորը թշնամանում է նրանց հետ։ Նրանք չեն ցանկանում վերացնել հուզմունքի պատճառները, ապա ի՞նչպես կարող է վերջիվերջո խաղաղություն հաստատվել։ Ե՜հ, սիրելի պարոններ, տերն ինչպե՜ս կփշրեր հին կճուճները յերկաթե գավազանով։ Ճշմարիտն եմ ասում, կապստամբեցնեմ ժողովրդին։ Մնաք բարով»։ (Համեմատել Zimmermann, Bauernkrieg II, էջ 75)։

Մյունցերը տպագրել տվեց իր քարոզը. Սաքսոնիայի հերցոգ Յոհանի հրամանով վորպես պատիժ Ալտշտեդտում ապրող տպագրիչը պետք է հեռանար յերկրի սահմաններից, իսկ Մյունցերի բոլոր գրվածքների վրա Վայմարի հերցոգության կառավարության կողմից գրաքննություն նշանակվեց։ Սակայն Մյունցերը վոչ մի ուշադրություն չդարձրեց այս հրամանի վրա։ Դրանից անմիջապես հետո Մյուլհաուզեն կայսերական քաղաքում նա տպագրեց մի վերին աստիճանի խռովահույզ աշխատություն, վորով կոչ էր անում ժողովրդին «ճեղքվածքը լայնացնել, վորպեսզի համայն աշխարհը կարողանա տեսնել և ըմբռնել, թե ովքեր են մեր վեհ պարոնները, վորոնք աստծուն պղծորեն ներկված մարդուկ են շինել», և վորը նա վերջացնում էր հետևյալ խոսքերով. «Ամբողջ աշխարհը մի ուժգին հարված պիտի կրի, տեղի կունենա այնպիսի բան, վոր անաստվածները կտապալվեն, իսկ ստորադրյալները կբարձրանան»։ Գրքի ճակատին՝ «Թոմաս Մյունցերը մուրճը ձեռքին» հետևյալ բնաբանն էր գրել. «Լսի՛ր, իմ խոսքերը քո բերանն եմ դրել, մարդկանցից և թագավորություններից այսօր քեզ բարձր եմ դասել, վորպեսզի դու արմատախիլ անես, ջարդես, փշրես ու խորտակես, և վորպեսզի կառուցես ու հիմնես։ Յերկաթե պատ է բարձրացել թագավորների, իշխանների, քահանաների դեմ, ինչպես և ժողովրդի դեմ։ Նրանք կսկսեն պայքարը և հաղթությունը զարմանահրաշ ձևով կտապալի ամեհի անաստված բռնակալներին»։

Մյունցերի խզումը Լութերից և նրա կուսակցության հետ վաղուց արդեն հասունացել էր։ Ինքը Լութերն ստիպված էր ընդունել մի շարք յեկեղեցական բարեփոխություններ, վորոնք Մյունցերն առանց նրան հարցնելու արդեն մտցրել էր։ Նա հետևվում էր Մյունցերի գործունեությանը այնպիսի մանրախնդիր

անվստահությամբ, վորպիսին կարող է առաջ չափավոր բարենորոգիչը դեպի ավելի յեռանդուն և ռադիկալ կուսակցությունը: Դեռևս 1524 թվի գարնանը Մյունցերը գրել եր Մելանխտոնին, Ֆիլիստերական կաբինետային թոքախտավոր իմաստասերի այս նախատիպին, թե նա և Լութերը բնավ չեն ըմբռնում շարժումը: Նրանք աշխատում են խեղդել այդ շարժումը աստվածաշնչի տառերի հավատով և վոր նրանց ամբողջ ուսմունքը մի վորդնակեր վարդապետություն է: «Սիրելի յեղբայրներ, թողեք ձեր սպասումն ու վարանումը, արդեն ժամանակն է, ամառը հասնում է: Անաստվածների հետ բարեկամություն մի պահպանեք, նրանք արգելում են, վոր խոսքն իր ամբողջ ուժով ներգործի: Մի շողոքորթեք ձեր իշխաններին, այլապես դուք կվոչնչանաք նրանց հետ միասին: Դուք, սուրբ գրոց հեզ գիտուններ, մի դժկամեք, վոր յես չեմ կարող այլ կերպ վարվել»:

Լութերը քանիցս անգամ Մյունցերին բանավեճի հրավիրեց. բայց վերջինս, վորն ամեն մի վայրկյան պատրաստ եր մարտի մեջ մտնել ժողովրդի ներկայությամբ, բնավ տրամադիր չեր աստվածաբանական վեճի բռնվել Վիտտենբերգի համալսարանի նախապաշարված հասարակության առաջ: Նա չեր ցանկանում «հոգու վկայությունը բարձրագույն դպրոցի արտոնություն» դարձնել: Յեթե Լութերն անկեղծ է, թող նա գործադրի իր ազդեցությունը, վորպեսզի դադարեցվեն տպագրիչ Մյունցերի դեմ հալածանքները և գրաքննության արգելքները. վորպեսզի վեճը անարգել կերպով լուծվի մամուլում:

Մյունցերի վերոհիշյալ հեղափոխական բրոշյուրը լույս տեսնելուց հետո Լութերը հրապարակորեն հանդես յեկավ Մյունցերի դեմ իբրև ամբաստանող: Իր «Նամակ սաքսոնական իշխաններին ընդդեմ խռովարար վոգու» տպագրված թղթի մեջ Լութերը հռչակելով Մյունցերին սատանայի գործիք, հորդորում եր իշխաններին՝ միջամուխ լինել և խռովարարության հեղինակներին արտաքսել յերկրի սահմաններից, քանի վոր սրանք չեն բավականանում իրենց վտանգավոր ուսմունքի քարոզչությամբ, այլ հորդորում են ժողովրդին՝ ապստամբվել և բռնի դիմադրություն ցույց տալ իշխանությանը:

Վայմարի դղյակում ոգոստոսի 1-ին Մյունցերը պատասխան պիտի տար իշխանների առաջ՝ խռովարար գործողությունների մեջ մեղադրվելու առթիվ: Նրան վարկաբեկող շատ փաստեր կային. նրա գաղտնի միության հետքերը գտնվել եյին, նրա մա-

նակցությունը հանքագործների և գյուղացիների միությունների մեջ հայտաբերվել եր: Սպառնում եյին նրան արտաքսել: Մյունցերը հենց նոր եր վերադարձել Ալշտեդտ, յերբ տեղեկացավ, վոր Սաքսոնիայի հերցոգ Գեորգը պահանջում է՝ նրան իր ձեռքը հանձնել. բռնվել եյին միության մասին նրա ձեռքով գրված նամակները, վորոնցով Գեորգի հպատակներին նա առաջարկում եր՝ զինված դիմադրություն ցույց տալ ավետարանի թշնամիներին: Յեթե նա չհեռանար քաղաքից, քաղաքային խորհուրդը նրան կհանձներ Գեորգի ձեռքը:

Մինչդեռ գյուղացիների և պլեբեյների մեջ ավելի ու ավելի աճող հուզմունքը խիստ դյուրացնում եր Մյունցերի պրոպագանդը: Այս պրոպագանդի համար նա անգնահատելի գործակալներ գտավ հանձին անաբապտիստների աղանդի: Այս աղանդը, խիստ ասկետական կենցաղ վարող, մոլեռանդ և ագիտացիայի գործում անվախ աղանդը, վորը դրական վորոշ դոգմաներ չուներ և կապված եր միայն կրկնակնունքի ընդհանուր սիմվոլի և այն ընդհանուր ոպոզիցիայի շնորհիվ, վոր նրանք ներկայացնում եյին բոլոր իշխող դասակարգերի դեմ,—հետզհետե ավելի ու ավելի համախմբվեց Մյունցերի շուրջը: Հալածանքների հետևանքով զրկված լինելով վորևէ մշտական բնակավայրից, նրա անդամները թափառում եյին ամբողջ Գերմանիայում և ամենուրեք ավետում նոր ուսմունքը, վորով Մյունցերը նրանց պարզաբանել եր իրենց անձնական կարիքներն ու ցանկությունները: Նրանցից շատ շատերը տանջանքների եյին յենթարկվել, խարույկ եյին բարձրացվել կամ զրկվել եյին կյանքից այլ միջոցներով, սակայն այս եմիսարների քաջությունը և դիմացկունությունն անդրդվելի յեր և նրանց գործունեյության հաջողությունը, արագորեն աճող ժողովրդական հուզմունքի պայմաններում, անսահման եր: Այդ իսկ պատճառով, Թյուրինգիայից փախչելուց հետո, Մյունցերն ամեն տեղ պատրաստի հող գտավ և նա կարող եր դիմել, ուր ուզեր:

Մյունցերը նախ մեկնեց Նյուրնբերգ, վորի մերձակայքում հազիվ մի ամիս առաջ ճնշվել եր գյուղացիական ապստամբությունն իր սաղմային վիճակում: Այստեղ Մյունցերն սկսեց գաղտնի ագիտացիա մղել, շուտով սկսեցին յերևան գալ մարդիկ, վորոնք պաշտպանում եյին նրա աստվածաբանական ամենահամարձակ դրույթները աստվածաշնչի անպարտադրության, սրբազան խորհուրդների անզորության մասին, Քրիստոսը սովորական մարդ եր ճանաչվում և աշխարհական իշխանությունը հակաստ-

վածայլին ուժ եր հռչակվում։ «Այդտեղ սատանան է շրջում, Ալշտեդտից յեկած վոգին»,—բացականչում եր Լութերը։ Այստեղ Նյուրնբերգում Մյունցերը տպագրել տվեց Լութերին ուղղված իր պատասխանը։ Նա մեղադրում եր Լութերին, վոր վերջինս քծնում է իշխանների առաջ և իր թերատությամբ աջակցում է ռեակցիոն կուսակցությանը։ Բայց և այնպես ժողովուրդը կազատագրվի, և դոկտոր Լութերն այն ժամանակ բռնված աղվեսի դրության մեջ կընկնի։—Խորհրդի կողմից արգելք դրվեց այդ գրվածքի վրա, և Մյունցերը հարկադրված եր հեռանալ Նյուրնբերգից։

Այստեղից Շվաբիայի վրայով Մյունցերը մեկնեց Ելզաս, Շվեյցարիա և այդտեղից էլ վերադարձավ վերին Շվարցվալդ, վորտեղ մի քանի ամսից ի վեր արդեն ապստամբություն եր բորբոքվում, վոր թափ եր առել և արագացել գլխավորապես Մյունցերի [illegible] եմիսարների շնորհիվ։ Մյունցերի պրոպագանդիստական այս ճանապարհորդությունն անշուշտ նշանակալի ազդեցություն եր ունեցել ժողովրդական կուսակցության կազմակերպման, նրա պահանջների ճշտորոշման և, վերջապես, 1525 թվի ապրիլին ընդհանուր ապստամբության բռնկման վրա։ Այստեղ առանձնապես պարզորեն յերևան են գալիս Մյունցերի գործունեության յերկու կողմերն էլ՝ մի կողմից նրա ազդեցությունը ժողովրդի վրա, վորին դիմում եր նա այն ժամանակ միակ հասկանալի կրոնական մարգարեության լեզվով, իսկ մյուս կողմից նրա ազդեցությունը իրազեկ մարդկանց վրա, վորոնց հետ նա կարող եր բացահայտ խոսել իր վերջնական ձգտումների մասին։ Յեթե դեռ առաջ Թյուրինգիայում նա իր շուրջը ժողովել և գաղտնի միության գլուխ եր կարգել մի խումբ ամենավճռական մարդկանց, վորոնք վոչ միայն ժողովրդից եյին ծագում, այլև ստորին հոգևորականությունից, ապա այժմ նա դարձել եր հարավ-արևմտյան Գերմանիայի ամբողջ հեղափոխական շարժման կենտրոնը, կազմակերպելով և համախմբելով Սաքսոնիայից և Թյուրինգիայից սկսած Ֆրանկոնիայի և Շվաբիայի վրայով մինչև Ելզաս և շվեյցարական սահմանը։ Նրա աշակերտների և այդ միության մի շարք առաջնորդների թվի մեջ եյին մտնում հարավ-գերմանական մի շարք ագիտատորներ, ինչպես, որինակ, Հուբմայերը՝ Վալդսհուտում, ցյուրիխեցի Կոնրադ Գրեբելը, Ֆրանց Ռաբմանը՝ Գրիսենում, Շապպելերը՝ Մեմմինգենում, Յակոբ Վեհեն՝ Լայպհայմում, դոկտոր Մանտելը՝ Շտուտգարտում, վորոնց մեծ մասը հեղափոխական քահանաներ եյին։ Ինքը Մյունցերը գլխավորապես մնում եր Շաֆհաուզենի սահմանի մոտ՝ Գրիսսեն քաղաքում, վորտեղից նա շրջում եր Հեգաու, Կլետգաու և այլ վայրեր։ Այս նոր խլլերեյական հերետիկոսության դեմ վրդովված իշխանների և պարոնների կողմից ամենուրեք ձեռնարկված արյունահեղ հալածանքները քիչ չնպաստեցին ըմբոստության վոգին բորբոքելուն և միության ավելի սերտ համախմբմանը։ Այսպես ահա մոտ հինգ ամիս վերին Գերմանիայում ագիտացիա մղելուց հետո, յերբ դավադրության բռնկման ժամը մոտենում եր, Մյունցերը կրկին վերադարձավ Թյուրինգիա, վորտեղ նա ցանկանում եր հենց իր ձեռքը վերցնել ապստամբության ղեկավարությունը։ Այստեղ մենք կրկին նրան կհանդիպենք։

Մենք կտեսնենք, թե ինչպիսի ճշտությամբ այդ յերկու կուսակցական առաջնորդների բնավորությունն ու վարած գիծը արտացոլում եյին իրենց հենց կուսակցությունների վարքագիծը, թե ինչպես Լութերի անվճռականությունը, ավելի ու ավելի լուրջ բնույթ ընդունող շարժման հանդեպ նրա հայտաբերած յերկչոտությունը, իշխանների հանդեպ Լութերի վախկոտ հաճկատարությունը համապատասխանում եյին բյուրգերության տատանվող, յերկդիմի քաղաքականությանը, և թե ինչպես Մյունցերի հեղափոխական յեռանդն ու վճռականությունը պլեբեյների և գյուղացիների ամենազարգացած հատվածում աջակցություն եր գտնում։ Տարբերությունը կայանում է միայն նրանում, վոր մինչդեռ Լութերը բավականանում եր իր դասակարգի մեծամասնության գաղափարներն ու ցանկություններն արտահայտելով և այդպիսով ձեռք բերեց չափազանց եժան ժողովրդականություն, Մյունցերն, ընդհակառակը, շատ ավելի հեռու յեր անցնում պլեբեյների և գյուղացիների անմիջական պատկերացումներից ու պահանջներից և գոյություն ունեցող հեղափոխական տարրերի ավանգարդից մի կուսակցություն ստեղծեց, վորը, սակայն, միշտ էլ ապստամբած ամբողջ մասսայի չնչին փոքրամասնությունն եր ներկայացնում, վորքան վոր այդ կուսակցությունը կանգնած եր Մյունցերի գաղափարների բարձրության վրա և տոգորված եր նրա յեռանդով։

III

Գերմանական գյուղացիների մեջ ծնունդ առնող հեղափոխական վոգու առաջին նշանները յերևացին հուսիտական շարժումը ճնշելուց մոտ հիսուն տարի անց։

Առաջին գյուղացիական դավադրությունը ծագեց 1476 թվին Վյուրցբուրգի յեպիսկոպոսության մեջ, մի յերկրում, վորը հուսիտների պատերազմների հետևանքով, ինչպես և «վատթար կառավարման, մեծամեծ հարկերի, տուրքերի, ֆեոդալական դըժտությունների, թշնամությունների, պատերազմի, հրդեհների, սպանությունների, բանտերի և այլն» շնորհիվ դեռ դրանից առաջ քայքայվել էր և շարունակ յեպիսկոպոսների, քահանաների և ազնվականության կողմից անամոթ կողոպուտի յենթարկվել: Տաուբերգրունդում հանկարծ մարգարեի դերում հանդես է գալիս Ծիկլասհաուզենցի յերիտասարդ հովիվ և յերաժիշտ Հանս Բյոհայմը, վորը նաև Թմբկահար ու Սրնգահար Հանս էր անվանվում: Նա պատմում էր, վոր իբր թե նրան յերևացել է սուրբ կույս Մարիամը և պատվիրել է նրան՝ այրել իր թմբուկը և այսուհետև չծառայել պարերին ու մեղսալից կրքերին, այլ հորդորել ժողովրդին, վոր նա ապաշխարի իր մեղքերը: Այսպիսով ուրեմն, թո՛ղ յուրաքանչյուր վոք հրաժարվի իր մեղքերից և այս աշխարհի ունայն հաճույքներից, թող մի կողմը նետի բոլոր զարդերն ու պաճուճանքը և ուխտի գնա Նիկլասհաուզենի աստվածամոր մոտ՝ իր մեղքերի համար թողություն հայցելու:

Արդեն այստեղ, շարժման այս առաջին նախորդի մոտ մենք գտնում ենք այն ասկետիզմը, վորին հանդիպում ենք՝ կրոնական գունավորում կրող բոլոր միջնադարյան ապստամբությունների ժամանակ, ինչպես և նորագույն ժամանակների ամեն մի պրոլետարական շարժման սկզբում: Բարքերի այս ասկետական խստությունը, կյանքի բոլոր վայելքներից և հաճույքներից հրաժարվելու այս պահանջը մի կողմից իշխող դասակարգերի հանդեպ առաջադրում է սպարտական հավասարության սկզբունքը, իսկ մյուս կողմից ներկայացնում այն փոխանցիկ աստիճանը, առանց վորի հասարակության ստորին խավը յերբեք չի կարող շարժման մեջ մտնել: Վորպեսզի զարգացնի իր հեղափոխական յեռանդը, գիտակցի՝ հասարակության մյուս բոլոր տարրերի հանդեպ իր ունեցած թշնամական դիրքը և համախմբվի իբրև դասակարգ, այդ ստորին խավը նախ պիտի հրաժարվի այն ամենից, ինչ տակավին նրան կարող է հաշտեցնել գոյություն ունեցող հասարակարգի հետ, այն սակավաթիվ վայելքներից, վորոնք դեռ միառժամանակ տանելի յեն դարձնում նրա ընկճված գոյությունը և վորից նրան չի կարող զրկել նույնիսկ ամենադաժան ճնշումը: Թե՛ իր վայրագ ֆանտաստիկ ձևով և թե՛ իր բովանդակությամբ այս պլեբեյական և պրոլետարական ասկետիզմը միանգամայն տարբերվում է այն բյուրգերական ասկետիզմից, վորը քարոզվում էր լյութերական բյուրգերական բարոյագիտության և անգլիական պուրիտանների կողմից (ի տարբերություն ինդեպենդենտներից և ավելի ծայրահեղ աղանդներից) և վորոնց ամբողջ գաղտնիքը բուրժուական խնայողության մեջ է կայանում: Սակայն ինքնըստինքյան հասկանալի յե, վոր պլեբեյական-պրոլետարական այս ասկետիզմը նույն չափով կորցնում է իր հեղափոխական բնույթը, ինչ չափով մի կողմից ժամանակակից արտադրողական ուժերի զարգացումն անսահմանորեն բազմացնում է սպառման համար ծառայող նյութական միջոցները և հենց դրանով էլ ավելորդ դարձնում սպարտական հավասարությունը, իսկ մյուս կողմից ավելի ու ավելի հեղափոխականանում են պրոլետարիատի կյանքի պայմանները և դրա հետ միասին նաև ինքը պրոլետարիատը: Այնուհետև ասկետիզմը մասսայի միջից հետզհետե չքանում է, իսկ ասկետորեն նրա մեջ սառած աղանդավորների մոտ նա կամ ուղղակի բուրժուական ժլատության, կամ թե սնապարծ առաքինության բնույթ ստանում, վորը գործնականի մեջ ևս քաղքենի կամ համքարական-արհեստավորական ժլատության է վերածվում: Յերկրային վայելքներից հրաժարվելու քարոզի կարիքը պրոլետարիատի մասսան այնքան քիչ է զգում, վորքան նա այլևս գրեթե վոչինչ չունի, վորից դեռ ելի կարողանար հրաժարվել:

Սրնգահար Հանսի ապաշխարանքի քարոզը աշխույժ արձագանք գտավ. դրանով էլ սկսում էին ըմբոստության բոլոր մարգարեները. և իրոք, միայն բուռն լարվածությունը, սովորական կենցաղի բոլոր ձևերից հանկարծակի հրաժարվելը միայն կարող էր շարժման մեջ դնել այս մանրատված, ցիրուցան և կույր հնազանդության մեջ բուսած ու սնված գյուղացիական սերունդը: Շուտով մեծ չափերի հասավ ուխտագնացությունը դեպի Նիկլասհաուզեն, և վորքան ավելի մասսայական էր դառնում ուխտավորների հոսանքը, նույնքան ավելի համարձակ կերպով էր բացահայտում իր ծրագիրները յերիտասարդ խռովարարը: Նիկլասհաուզենի աստվածամայրը,—քարոզում էր նա,—նրան հայտնել է, վոր այսուհետև այլևս չպիտի լինի վո՛չ կայսր, վո՛չ էլ իշխան, վո՛չ պապ և վո՛չ էլ հոգևորական կամ աշխարհական վորևէ իշխանություն. բոլոր մարդիկ միմյանց յեղբայր պիտի լինեն, յուրաքանչյուր մարդ իր ձեռքերով պիտի վաստակի իր

հայը և վոչ վոք չպիտի ունենա ավելի, քան մյուսներն ունեն։ Մի անգամ ընդմիշտ պիտի վերանան բոլոր վճարումները, բահրան, կոռային աշխատանքները, մաքսերը, հարկերը և մյուս տուրքերն ու պարտադիր ծառայությունները․ ամենուրեք ազատ պիտի լինեն անտառները, ջրերն ու արոտավայրերը։

Ժողովուրդը ցնծությամբ ընդունեց այս նոր ավետարանը։ Այս մարգարեյի՝ «մեր տիրուհու պատգամաբերի» համբավն արագությամբ տարածվեց, Օդենվալդից, Մայնից, Կոխերից, Յագստից և մինչև իսկ Բավարիայից, Շվաբիայից և Հռենոսի շրջանից սկսեցին նրա մոտ գալ ուխտավորների ամբողջ խմբեր։ Միմյանց պատմում էին, նրա իբր թե գործած հրաշքների մասին։ Նրա առաջ ծունկ էին չոքում և աղոթում, վորպես սրբի առաջ, պոկում էին նրա թասակի մանրիկները, վորպես թե դրանք մասունքներ և կախարդական պահպանակներ լինեյին։ Նրա դեմ հոգևորականներն ապարդյուն ելույթներ էին ունենում, նրա ամբողջ պատմությունը սատանայի գայթակղություն համարում, նրա հրաշքները դժոխային խաբեբայություններ հռչակում։ Հավատացյալների մասսան աճում էր սոսկալի արագությամբ, սկսեց հերետիկոսական աղանդ կազմվել, ամեն անգամ Նիկլասհաուզենում քառասուն հազար և դեռ ավելի ժողովուրդ էր հավաքվում՝ լսելու խռովարար հովվի կիրակնօրյա քարոզները։

Սրնգահար Հանսը միքանի ամիս քարոզում էր մասսաներին։ Բայց նա մտադիր չէր լոկ քարոզներով բավականանալ։ Նա գաղտնի հարաբերությունների մեջ էր Նիկլասհաուզենի քահանայի և յերկու ասպետների հետ—Կունց Ֆոն-Թունֆելդի և նրա վորդու հետ, վորոնք հարել էին նոր ուսմունքին և ծրագրվող ապստամբության ռազմական ղեկավարները պիտի լինեյին։ Վերջապես մի կիրակի օր, սուրբ Կիլիանի տոնի նախօրյակին, յերբ նրան թվում էր, թե արդեն բավական մեծ ուժ է ձեռք բերել, նա ապստամբության ազդանշանը տվեց․ «Դեհ, այժմ գնացեք ձեր տները,—այսպես վերջացրեց նա իր քարոզը,—և կշռադատեցեք, թե ձեզ ինչ է ավետել ամենասուրբ տիրամայրը․ հաջորդ շաբաթ օրը ձեր կանանց, յերեխաներին և ծերերին տանը թողեք, իսկ դուք տղամարդիկդ հաջորդ շաբաթ՝ սուրբ Մարգարիտի օրը կրկին յեկեք Նիկլասհաուզեն, բերելով ձեզ հետ ձեր յեղբայրներին ու բարեկամներին, վորքան էլ վոր նրանք լինեն։ Բայց յեկեք վոչ թե ուխտավորի գավազաններով, այլ զրահներով ու զենքերով, մի ձեռքում ուխտավորի մոմը բռնած, իսկ մյուսում—սու-

րը և նիզակը կամ տեգը․ և սուրբ կույսն այն ժամանակ ձեզ կհայտնի իր կամքը, վորը և դուք պիտի կատարեք»։

Սակայն դեռ գյուղացիների հոծ զանգվածների ժամանելուց առաջ յեպիսկոպոսի ձիավորները գիշերվա պահին բռնել էին խռովարար մարգարեյին և Վյուրցբուրգի դղյակը տարել։ Նշանակված օրը մոտ 34·000 զինված գյուղացիներ հավաքվեցին, բայց Հանսի ձերբակալման լուրը նրանց վրա ճնշող ազդեցություն ունեցավ։ Գյուղացիների մեծ մասը ցրվեց, իսկ ավելի նվիրվածներին հաջողվեց հետ պահել մոտ 16·000 հոգի և Կունց Ֆոն-Թունֆելդի և նրա վորդու՝ Միքայելի առաջնորդությամբ շարժվեցին դեպի դղյակը։ Յեպիսկոպոսը խոստումներ տալով համոզեց նրանց հեռանալ, բայց հենց վոր ժողովուրդն սկսեց ցրվել, յեպիսկոպոսի ձիավորները հարձակում գործեցին և շատերին գերի վերցրին։ Յերկու հոգու գլխատեցին, իսկ Սրնգահար Հանսին խարույկ բարձրացրին։ Կունց Ֆոն-Թունֆելդը պետք է փախուստի դիմեր և ներումն ստացավ միմիայն այն հանգամանքի շնորհիվ, վոր իր բոլոր կալվածքները զիջեց յեպիսկոպոսին։ Դեպի Նիկլասհաուզեն կատարվող ուխտագնացությունները միառժամանակ դեռ շարունակվեցին, բայց վերջիվերջո դրանք էլ արգելվեցին։

Այս առաջին փորձից հետո Գերմանիայում յերկար ժամանակ դարձյալ հանգստություն տիրեց։ Գյուղացիական նոր դավադրություններն ու ապստամբությունները միմիայն իննսունական թվերի վերջին սկսվեցին։

Մենք կանգ չենք առնի 1491 և 1492 թվերի հոլանդական գյուղացիական ապստամբության վրա, վորը ճնշվեց Հեեմսկերկի ճակատամարտում՝ Սաքսոնիայի հերցոգ Ալբրեխտի կողմից, ինչպես և մի կողմն ենք թողնում միևնույն ժամանակաշրջանում վերին Շվաբիայի Կեմպտեն աբբայության մեջ առաջացած գյուղացիական ապստամբությունը և 1497 թվին Սիարդ Այլվայի ղեկավարությամբ տեղի ունեցած Ֆրիզական ապստամբությունը, վորը նույնպես Ալբրեխտ Սաքսոնացին ճնշեց։ Այս ապստամբությունները մասամբ շատ հեռու յեն ընկած իսկական գյուղացիական պատերազմի թատերաբեմից, մասամբ էլ դրանք ներկայացնում են՝ մինչ այդ ազատ գյուղացիների պայքարն ընդդեմ նրանց վզին ֆեոդալիզմ փաթաթելու փորձին։ Մենք ուղղակի կանցնենք այն յերկու խոշոր դավադրություններին, վորոնք նախապատ-

րաստեցին գյուղացիական պատերազմը,—Կոշկի և Աղքատ Կոնրադի դավադրությունների։

Միևնույն թանկությունը, վորը Նիդերլանդներում գյուղացիների ըմբոստացման պատճառը դարձավ, 1493 թվին Էլզասում առաջ բերեց գյուղացիների և պլեբեյների մի գաղտնի միություն, վորին մասնակցում եյին նաև բյուրգերական օպոզիցիային պատկանող մարդիկ և վորին մինչև իսկ ստորին ազնվականության մի մասն առավել կամ նվազ չափով համակրում եր։ Միության կենտրոնական վայրը Շլետշտադտի, Զուլցի, Դամբախի, Ռոսհայմի, Շերվայլերի և այլ շրջաններն եյին։ Դավադիրները պահանջում եյին կողոպտել և բնաջինջ անել վաշխառուներին, վորոնք դեռ այն ժամանակ, ինչպես և հիմա, ծծում եյին Էլզասի գյուղացիների բոլոր հյութերը, սահմանել հոբելյանական տարի, վորի գալով բոլոր պարտքերի ուժը կորած համարել, վերացնել մաքսերը, անուղղակի հարկերը և բոլոր այլ ծանրությունները, վոչնչացնել հոգևոր և ռոտվեյլյան (կայսերական) դատարանները, հարկեր հաստատելու իրավունք տալ, հոգևորականների յեկամուտները սահմանափակել յուրաքանչյուրին 50—60 գուլդենով, վերացնել գաղտնի խոստովանությունը և յուրաքանչյուր համայնքի համար սահմանել սեփական, ինքնուրույն ընտրովի դատարան։ Դավադիրները մտադիր եյին, հենց վոր իրենց բավականաչափ ուժեղ զգային, հանկարծակի հարձակում գործել Շլետշտադտի ամրությունների վրա, գրավել վանքի և քաղաքի դանձարկղները և այնտեղից արդեն ապստամբեցնել վողջ Էլզասը։ Ապստամբության մոմենտին պիտի ծածաներ միության դրոշակը, վորի վրա նկարված եր գյուղացու յերկար կապիչավոր կոշիկ, այսպես կոչված Bundschuh, վորն այդ ժամանակից սկսած՝ մերձակա քսան տարիների գյուղացիական դավադրությունների խորհրդանշանը և անունը դարձավ։

Դավադիրների հավաքույթները տեղի եյին ունենում սովորաբար գիշերները՝ ամայի Հունգերբերգի վրա։ Միության անդամների ընդունելությունը կապված եր ամենախորհրդավոր ծեսերի հետ, դավաճաններին խստագույն պատիժներ եյին նախատեսված։ Բայց և այնպես դավադրությունը բացվեց հենց այն մոմենտին, յերբ հարձակում պիտի գործվեր Շլետշտադտի վրա, այն է՝ 1493 թվի Չարչարանքի շաբթին։ Կառավարական մարմինները վճռական միջոցներ ձեռք առան, դավադիրներից շատերը ձերբակալվեցին և տանջանքների յենթարկվեցին. դրանց մի մասին քառատեցին կամ գլխատեցին, մյուս մասի ձեռքերն ու մատները կտրեցին և յերկրից արտաքսեցին։ Մի խոշոր մասը փախավ Շվեյցարիա։

Սակայն այս առաջին ջախջախումով Կոշկի միությունն ամենևին չվոչնչացավ։ Ընդհակառակը, նա շարունակեց իր գաղտնի գոյությունը։ Շվեյցարիայում և Հարավային Գերմանիայում ցրված բազմաթիվ փախստականները նրա եմիսարները դարձան և ամենուրեք հանդիպելով նույն ճնշմանը և ապստամբության միևնույն պատրաստակամությանը, տարածեցին Կոշկի միությունը Բադենի ներկայիս ամբողջ տերիտորիայում։ 1493 թվից սկսած յերեսուն տարի շարունակ վերին-գերմանական գյուղացիներն աջակցում եյին գաղտնի կազմակերպություններին։ Համառությամբ և մեծ տոկունությամբ նրանք հաղթահարում եյին ավելի խոշոր ու կենտրոնացած միություն կազմելու ճանապարհին յեղած այն բոլոր խոչընդոտները, վորոնք առաջ եյին գալիս այն հանգամանքի շնորհիվ, վոր գյուղացիությունը ցրիվ եր ապրում յերկրում։ Անվերջ ու անհամար ջախջախումներից, պարտություններից, իրենց առաջնորդների մահվան պատիժներից հետո էլ գյուղացիները շարունակում եյին նորանոր դավադրություններ կազմակերպել, մինչև վոր վերջապես հարմար առիթ եր լինում մասսայական ապստամբության դիմելու։ Այս համառությունն ու տոկունությունն իրոք վոր արժանի յեն հիացմունքի։

Շպայերի յեպիսկոպոսության մեջ, վորն այն ժամանակ նաև Բրուխզալի մարզն եր ընդգրկում, 1502 թվին գյուղացիական գաղտնի շարժման առաջին նշանները յերևացին։ Այստեղ Կոշկի միությունն իսկապես զգալի հաջողությամբ վերակազմվել եր։ Մոտ 7000 մարդ կար միության մեջ, վորի կենտրոնը Ունտերգրոմբախումն եր գտնվում՝ Բրուխզալի և Վայնգարտենի միջև, իսկ ճյուղավորությունները Հռենոսի հոսանքով տարածվում եյին դեպի ներքև մինչև Մայն և դեպի վեր մինչև Բադենի մարկգրաֆությունը։ Նրա ծրագրի հոդվածները հետևյալ պահանջներն եյին պարունակում. իշխաններին, ազնվականներին և հոգևորականներին այլևս չպիտի վճարվեն վո՛չ չինշ, վո՛չ էլ տասանորդ, վո՛չ հարկեր և վո՛չ էլ մաքսեր. ճորտատիրական կախումը պիտի վերանա, վանքապատկան և այլ յեկեղեցապատկան կալվածքները պիտի գրավվեն և բաժանվեն ժողովրդի միջև, այլևս վոչ մի տեր ու տիրական չպիտի ճանաչվի, բացի կայսրից։

Այստեղ գյուղացիների մոտ առաջին անգամ մենք հանդիպում ենք յեկեղեցապատկան կալվածները հոգուտ ժողովրդի սեկուլարիզացիայի, և՛ միասնական և՛ անբաժանելի գերմանական միապետության պահանջներին։ Այդ ժամանակվանից սկսած այս յերկու պահանջները կանոնավոր ձևով կրկին ու կրկին յերևան են գալիս գյուղացիների և պլեբեյների ավելի զարգացած մասի մեջ, մինչև վոր, վերջապես, յեկեղեցապատկան կալվածքների բաժանման փոխարեն Թոմաս Մյունցերն առաջադրում է այդ հողերի գրավման խնդիրը՝ կայքերի հանրության հաստատելու համար, իսկ միասնական գերմանական կայսրությունը նա փոխարկում է միասնական և անբաժանելի հանրապետության։

Կոչկի վերականգնած միությունը, ինչպես և հինը, ուներ իր գաղտնի ժողովատեղին, գաղտնապահության իր յերդումը, անդամների ընդունելության ծեսերը և իր միութենական դրոշակը, վորի վրա գրված եր․ «Վոչի՛նչ, բացի աստծու արդարությունից»։ Նրա գործունեության ծրագիրը նման եր ելզասցիների ծրագրին։ Բրուխզալը, վորի բնակիչների մեծ մասը միության անդամ եր, հանկարծակի պետք գրավվեր և այնտեղ միութենական մի բանակ կազմվեր, վորն իբրև փոխադրիչ հավաքակենտրոն՝ մերձակա իշխանությունների յերկրները պետք ուղարկվեր։

Մի հոգևորական, վորին դավադիրներից մեկը խոստովանության ժամանակ հաղորդել եր իրենց մտադրության մասին, մատնեց այդ ծրագիրը։ Կառավարությունները անմիջապես միջոցներ ձեռք առան դավադրության դեմ։ Թե վորքան լայնատարած ճյուղավորություն ուներ միությունը, դա յերևում է այն սարսափից, վոր տիրել եր Ելզասի կայսերական դասերին և շվաբական միությանը։ Ամեն կողմից զորամասեր կանչվեցին և մասսայական ձերբակալություններ կատարվեցին։ Մաքսիմիլիան կայսրը, այդ «վերջին ասպետը», գյուղացիների անլուր յելույթի դեմ արյունռուշտ պատժիչ վորոշումներ արձակեց։ Տեղ-տեղ ջոկատներ կազմվեցին և զինված դիմադրություններ յեղան։ Սակայն գյուղացիների ցիրուցան խմբերը չկարողացան յերկար դիմանալ։ Դավադիրներից վոմանք մահապատիժ կրեցին, մյուսները փախան․ այնուամենայնիվ գաղտնիքն այնքան լավ պահպանվեց, վոր դավադիրների և նույնիսկ առաջնորդների մեծամասնությունը հնարավորություն ունեցան անվնաս մնալ կամ իրենց

հայրենի բնակավայրերում, կամ թե հարևան իշխանների յերկրներում։

Այս նոր պարտությունից հետո դասակարգային պայքարի մեջ դարձյալ մի յերկարատև առերևույթ դադար տիրեց։ Սակայն գաղտնի աշխատանքը շարունակվում եր։ Արդեն XVI դարի առաջին տարիներում Շվաբիայում առաջ յեկավ «Աղքատ Կոնրադը», վորն ակներև կապ ուներ Կոշկի միության ցիրուցան յեղած անդամների գործունեության հետ. Կոշկի միությունը Շվարցվալդում շարունակում եր իր գոյությունը, առանձին փոքր խմբակներով, մինչև վոր տասը տարուց հետո գյուղացիական յեռանդուն մի առաջնորդի հաջողվեց կրկին կապել այդ առանձին թելերը մի խոշոր դավադրության մեջ։ Յերկու դավադրություններն ել մեկը մյուսի հետևից հանդես են գալիս 1513—1515 թվականներին, յերբ միաժամանակ մի շարք կարևոր աչքի ընկնող ապստամբություններ են բարձրացնում շվեյցարական, հունգարական և սլովենական գյուղացիները։

Վերին Հռենոսում Կոշկի միությունը վերականգնեց ունտերգրոմբախեցի Յոսս Ֆրիցը, 1502 թվի դավադրությունից հետո փախստի դիմած մի նախկին զինվոր, վորը բոլոր տեսակետներից աչքի ընկնող անձնավորություն եր։ Իր փախստից հետո նա ապրում եր զանազան վայրերում՝ Բոդենի լճի և Շվարցվալդի միջև, վերջիվերջո բնակություն հաստատեց Լեհենում Ֆրայբուրգի մոտերքում, Բրայզգաույում, վորտեղ նա նույնիսկ անտառապահի պաշտոն ստացավ։ Թե ինչպիսի վարպետությամբ կարողացավ նա վերակազմել միությունը բազմազան տեսակի մարդիկ գրավելով միության մեջ, այդ մասին վերին աստիճանի հետաքրքիր մանրամասնություններ են պարունակում հետաքննական ակտերը։ Իր դիվանագիտական տաղանդի և անխոնջ տոկունության շնորհիվ այս որինակելի դավադրին հաջողվեց ներգրավել միության մեջ մեծ քանակությամբ ամենատարբեր դասակարգերի պատկանող մարդիկ—ասպետներ, քահանաներ, բյուրգերներ, պլեբեյներ ու գյուղացիներ․ շատ հավանական է, վոր նա կազմակերպել եր դավադրության միքանի աստիճաններ, վորոնք առավել կամ պակաս չափով խիստ սահմանապահված եյին միմյանցից։ Բոլոր պիտանի տարրերն ոգտագործվում եյին մեծ շրջահայեցողությամբ և հմտությամբ։ Բացի գործին իրազեկ եմիսարներից, վորոնք զանազան տեսակի հագուստներով շրջում եյին ամբողջ յերկիրը, յերկրորդական հանձնարարություն—

ների համար օգտագործվում եյին թափառաշրջիկներն ու մուրացկանները։ Անմիջական կապ ունենալով մուրացկանների գլխավորների հետ, վերջիններիս միջոցով Յոսսն իր ձեռքումն եր պահում թափառաշրջիկների ամբողջ բազմաթիվ մասսան։ Մուրացկանների այս գլխավորները նրա դավադրության մեջ կարևոր դեր եյին խաղում։ Դրանք վերին աստիճանի յուրահատուկ դեմքեր եյին։ Դրանցից մեկը շրջում եր ինչ-վոր աղջկա ուղեկցությամբ, վորն իբր թե տառապում եր վոտքերի ցավով, և նրա համար վողորմություն հավաքում։ Իր գլխարկի վրա նա կրում եր ավելի քան ութ եմբլեմա («տասնչորս սուրբ հովանավորներ», սուրբ Ոտտիլիա, սուրբ կուզս և այլն)։ Բացի այդ, նա յերկար շիկակարմիր մորուք ուներ և մի մեծ կոստղնտ ձեռնափայտ՝ դաշույնով և խթանով։ Մեկ ուրիշը վողորմություն եր խնդրում հանուն սուրբ Վալենտինի և միաժամանակ համեմունք և ոչինդրի սերմեր վաճառում․ նա հագին ուներ յերկար պողպատագույն բաճկոն, գլխին մի կարմիր բերետ, վորի վրա տրիենտական մանուկ եր նկարված, կողքից սուսեր եր կախված, իսկ գոտու մեջ բազմաթիվ դանակներ և մեկ դաշույն եր կրում։ Մյուսները ցույց եյին տալիս իրենց արհեստականորեն բացված վերքերը և համապատասխան արտառոց հագուստներ կրում։ Դրանք առնվազը տասը հոգի եյին և 2000 գուլդենի վարձատրությամբ հրկիզումներ պիտի կատարեյին միաժամանակ Ելզասում, Բադենի մարկգրաֆության մեջ և Բրայզգաույում ու առնվազն 2000 հոգի իրենց մարդկանցով Ցաբերնի յեկեղեցու ոծման տոնին պիտի գային Ռոզեն և քաղաքը գրավեյին Գեորգ Շնայդերի հրամանատարությամբ, վորը մի ժամանակ լանդսկնեխտների հրամանատար եր յեղել։ Միության բուն անդամների միջև կայան առ կայան կապի կանոնավոր ծառայություն եր կազմակերպված, իսկ Յոսս Ֆրիցն ու նրա գլխավոր եմիսար Շտոֆֆել Ֆրայբուրգցին շարունակ մի վայրից մյուս վայրը գնալով նոր անդամների գիշերային զորատեսեր եյին կատարում։ Հետաքննական ակտերը բավական տվյալներ են բերում, թե միությունն ինչ չափով եր տարածված վերին Հռենոսյան շրջանում և Շվարցվալդում․ այդ ակտերը պարունակում են՝ այս մարզի զանազան վայրերից բազմաթիվ անդամների անուններ, ընդվորում ակտերում նշված են նաև այդ անդամների հատկանիշները։ Դրանց մեծ մասն արհեստավոր յենթավարպետներ են, այնուհետև գյուղացիներ ու պանդոկապետներ են, միքա-

նի ազնվականներ, և հոգևորականներ (օրինակ՝ հենց Լեհենի քաղաքի քահանան) և անգործ լանդսկնեխտներ։ Այս կողմից արդեն յերևում ե, վոր Յոսս Ֆրիցի ղեկավարության ներքո Կոշկի միությունը շատ ավելի զարգացած բնույթ եր ստացել․ քաղաքների պլեբեյական տարրերն արդեն սկսել եյին նրա մեջ ավելի ու ավելի մեծ դեր խաղալ։ Դավադրության ճյուղավորությունները տարածվում եյին ամբողջ Ելզասում, այժմյան Բադենում, մինչև Վյուրտեմբերգ և Մայն։ Առանձին ընկած լեռների վրա, օրինակ՝ Կնիբիսի վրա և այլն, յերբեմն բազմամարդ հավաքույթներ եյին լինում, վորտեղ քննարկվում եյին միության խնդիրները։ Ղեկավարների համագումարները, վորոնց հաճախ մասնակցում եյին նաև միության տեղական անդամները, ինչպես և հեռու վայրերից յեկած պատվիրակները, տեղի եյին ունենում Հարտմատի մարգագետնի վրա Լեհենի մոտ․ հենց այստեղ ել ընդունվեցին միության ծրագրի տասնչորս թեզիսները․—բոլոր իշխանությունների վերացում բացի կայսերականից և (միքանի տվյալների համաձայն) պապականից․ ռոմեյական դատարանի վերացում, յեկեղեցական դատարանների սահմանափակում հոգևոր գործերով․ բոլոր տոկոսների վերացում, վոր պիտի վճարվեն միայն մինչև այն ժամանակ, քանի դեռ տոկոսների գումարը չեր հավասարվել պարտք վերցրած կապիտալի գումարին․ տոկոսի առավելագույն նորման չպիտի անցնի հինգ տոկոսից․ վորսորդության, ձկնորսության, արոտավայրերի և անտառահատման ազատություն․ յուրաքանչյուր հոգևորականի յեկամուտը պիտի սահմանափակվի մեկ բենեֆիցիայով, յեկեղեցապատկան կալվածքները և վանական գանձերը պիտի գրավվեն հոգուտ միության ռազմական գանձարանի․ բոլոր անարդար հարկերի և մաքսերի վերացում․ հավիտենական խաղաղություն վողջ քրիստոնեական աշխարհում․ յեռանդուն ելույթ միության բոլոր հակառակորդների դեմ․ տուրքի վճարում հոգուտ միության․ ամրակուռ Ֆրայբուրգ քաղաքի գրավում, վորպեսզի դա կենտրոն ծառայի միության համար․ հենց վոր միության բանակները համախմբվեն, բանակցություններ սկսել կայսեր հետ, իսկ յեթե կայսրը մերժի—Շվեյցարիայի հետ։ Ահա սրանք եյին ընդհանուրի կողմից ընդունված ծրագրի կետերը։ Այդ կետերից յերևում ե, վոր գյուղացիների և պլեբեյների պահանջները մի կողմից ավելի ու ավելի վորոշակի և ամուր ձևավորում են ստանում, իսկ մյուս կողմից միևնույն չափով զիջումներ են արվում չափավոր և անվճռական տարրերին։

Ապստամբությունը պետք է բռնկվեր 1513 թվի աշնանը։ Միայն պակասում էր միության դրոշակը, որը նկարել տալու համար Յոսս Ֆրիցը մեկնեց Հայլբրոնն։ Զանազան էմբլեմաների և պատկերների հետ դրոշի վրա նկարված էր նաև կոշիկը, որի տակ գրված էր. «Տեր, օգնի՛ր քո աստվածային արդարության վերականգնմանը»։ Սակայն Յոսսի բացակայության ժամանակ Ֆրայբուրգը հանկարծակի գրավելու պլանը փորձ էր կատարվել և հայտաբերվել. պրոպագանդի ընթացքում թույլ տված անզգուշությունը հնարավորություն էր տվել Ֆրայբուրգի խորհրդին և Բադենի մարկգրաֆին դավադրության հետքերը գտնել, իսկ դավադրությանը մասնակցող յերկու անձնավորությունների դավաճանությունը լրացրել էր մերկացումների ամբողջ շարքը։ Մարկգրաֆը, Ֆրայբուրգի խորհուրդը և Ենզիսհայմի կայսերական կառավարությունն անմիջապես ուղարկում են իրենց լրտեսներին և զինվորներին. Կոշկի միության անդամներից շատերը կալանավորվում են, տանջանքների և մահվան յենթարկվում. սակայն այս անգամ էլ մեծամասնությանը հաջողվում է փախչել, դրանց թվում՝ նաև Յոսս Ֆրիցին։ Շվեյցարիայի կառավարական մարմիններն այս անգամ կատաղի հալածանքներ սկսեցին փախստականների դեմ և շատերին անգամ մահապատժի յենթարկեցին. բայց իրենց հարևանների նման նրանք էլ չկարողացան խանգարել, որ փախստականները մեծ մասամբ մնան իրենց մինչայժմյան բնակատեղիներին մերձակա վայրերում և նույնիսկ հետզհետե վերադառնան իրենց նախկին տեղերը։ Ամենից շատ զայրացել եյին Ենզիսհայմում գտնվող Էլզասյան կառավարական մարմինները. Նրանց հրամանով շատ շատերը գլխատվեցին, անիվահար յեղան և քառատվեցին։ Ինքը Յոսս Ֆրիցը գլխավորապես գտնվում էր Հռենոսի շվեյցարական ափին, որտեղից նա հաճախ անցնում էր Շվարցվալդ, բայց յերբեք չեյին կարողանում նրան ձերբակալել։

Թե ինչո՞ւ Կոշկի միության դեմ մաքառելու համար շվեյցարական կառավարություններն այս անգամ միացան հարևան կառավարությունների հետ, դա ցույց է տալիս գյուղացիական այն ապստամբությունը, որը բռնկվեց հաջորդ 1514 թվին Բեռնում, Զոլոթուրնում և Լյուցեռնում, և որի հետևանքով զտման յենթարկվեցին արիստոկրատիկ կառավարություններն ու ընդհանրապես պատրիկությունը։ Բացի դրանից, գյուղացիներին հաջողվեց միքանի արտոնություններ և իրավունքներ

ձեռք բերել։ Շվեյցարական տեղական ապստամբությունների հաջողությունը բացատրվում է նրանով, որ կենտրոնացումը Շվեյցարիայում շատ ավելի թույլ էր, քան Գերմանիայում։ 1525 թվին ևս գյուղացիներն արագորեն ամենուրեք հաշիվ տեսան իրենց տեղական տերերի հետ, բայց նրանք պարտություն կրեցին իշխանների կազմակերպված զորաբանակների կողմից, իսկ հենց այս զորաբանակները Շվեյցարիայում գոյություն չունեյին։

Բադենում և, պարզ է, դրա հետ անմիջական առնչությամբ, Վյուրտեմբերգում կազմվեց մի յերկրորդ դավադրություն։ Ինչպես յերևում է վավերագրերից, այդ դավադրությունը գոյություն ուներ արդեն իսկ 1503 թվից և քանի որ Ունտերգրոմբախի դավադրության ջախջախումից հետո Կոշկի միության անունը չափազանց վտանգավոր էր դարձել, այդ պատճառով էլ նա ընդունեց Աղքատ Կոնրադի անունը։ Նրա գլխավոր կենտրոնը գտնվում էր Ռեմսի հովտում՝ Հոհենշտաուֆենբերգի մոտ։ Գոնե ժողովրդի շրջանում նրա գոյությունը վաղուց արդեն գաղտնիք չէր։ Հերցոգ Ուլրիխի կառավարության անամոթ ճնշումը, ինչպես և սովի մի շարք տարիները, որ մեծապես նպաստեցին 1513 և 1514 թվերի շարժումների բռնկման, ավելացրին միության անդամների թիվը. բուն շարժումը բռնկվեց գինու, մսի և հացի վրա դրված նոր հարկերի, ինչպես նաև կապիտալների վրա դրված այն հարկի հետևանքով, որի համաձայն ամեն մի գուլդենի դիմաց տարեկան մեկ պֆենիգ էր պահանջվում։ Նախ պետք է գրավվեր Շորնդորֆ քաղաքը, որտեղ դավադրության առաջնորդների հավաքույթները տեղի եյին ունենում դանակագործ Կասպար Պրեգիցերի տանը։ Ապստամբությունը բռնկվեց 1514 թ. գարնանը։ 3000, իսկ այլ տվյալներով 5000 գյուղացիներ մոտեցան քաղաքին, սակայն հերցոգի պաշտոնյաների քաղցր խոստումների շնորհիվ գյուղացիները կրկին հետ քաշվեցին. Հերցոգ Ուլրիխը, որը խոստացել էր վերացնել նոր հարկերը, 80 ձիավորներով շտապեց դեպի քաղաք, բայց այստեղ նա տեսավ, որ այդ խոստման հետևանքով քաղաքում լիակատար անդորրություն է տիրում։ Նա խոստացավ գումարել լանդտագ, այդտեղ քննության առնելու բոլոր գանգատները։ Սակայն միության առաջնորդները շատ լավ գիտեյին, որ Ուլրիխի դիտավորությունը ոչ այլ ինչ է, յեթե ոչ պահպանել ժողովրդի հանգստությունը, մինչև որ բավականաչափ զորք

հավաքելով և կենտրոնացնելով՝ նա հնարավորություն կունենա իր խոստումը խախտել և հարկերը բռնի միջոցներով գանձել: Ուստի Կասպար Պրեգլիցերի անից՝ «Աղքատ Կոնրադի դրասենյակից» նրանք կոչեր ուղղեցին միության համագումար հրավիրելու մասին և այս նպատակի համար եմիսարներ ուղարկեցին բոլոր կողմերը: Ռեմսի հովտում տեղի ունեցած առաջին ըմբոստացման հաջողության շնորհիվ շարժումը, ժողովրդականացավ մասսայի մեջ, միության գրությունները ու եմիսարներն ամեն տեղ նպաստավոր հող գտան, և այսպիսով մայիսի 28-ին Ունտերտյուրկհայմում կայացած համագումար եկան մեծ թվով պատվիրակներ Վյուրտեմբերգի բոլոր մասերից: Համագումարում վորոշվեց ուժեղ թափով շարունակել ագիտացիան և հենց առաջին հարմար դեպքում Ռեմսի հովտում գործողություններ սկսել և այդտեղից ծավալել ապստամբական շարժումը: Յերբ Դյոտտինգենցի նախկին զինվոր Բանտելհանսը և Վյուրտինգենցի մեծ հարգանք վայելող գյուղացի Զինգերհանսը միության մեջ մտցրին Շվաբիայի լեռնային մասը, բոլոր կողմերից բորբոքվեց ապստամբությունը: Թեև Զինգերհանսը հանկարծակի հարձակման յենթարկվելով ձերբակալվեց, բայց Բակնանգ, Վիննենդեն և Մարկգրոնինգեն քաղաքներն ընկան պլեբեյների հետ միացած գյուղացիների ձեռքը, և ամբողջ յերկրում, սկսած Վայնսբերգից մինչև Բլաուբեյրեն և այդտեղից մինչև Բադենի սահմանը բացահայտ ապստամբություն բռնկվեց: Ուլրիխն ստիպված եր զիջել: Հունիսի 25-ին հրավիրելով լանդտագի նիստը, միաժամանակ նա գրություններ ուղղեց մերձակա իշխաններին և ազատ քաղաքներին՝ օգնություն խնդրելով ապստամբությունը ճնշելու համար, մի ապստամբություն, վորը վտանգում է կայսրության բոլոր իշխաններին, իշխանություններին և պատվավոր անձնավորություններին և վորը «զարմանալի կերպով նման է Կոշկի միությանը»:

Մինչ այդ հունիսի 18-ին Շտուտգարտում արդեն հավաքվեց լանդտագը, այսինքն քաղաքների պատգամավորները և գյուղացիների բազմաթիվ պատվիրակները, վորոնք նույնպես պահանջում եյին լանդտագում տեղեր հատկացնել իրենց: Պրելատները դեռ չեյին յեկել, իսկ ասպետներն ամենևին չեյին հրավիրվել: Գյուղացիների պահանջները պաշտպանվում եյին Շտուտգարտի քաղաքային ոպոզիցիայի, ինչպես և մերձակա վայրերում,—Լեոնբերգում և Ռեմսի հովտում,—գտնվող և

յերկյուղ ներշնչող գյուղացիական յերկու բանակների կողմից: Գյուղացիական պատվիրակներին թույլատրվեց մտնել լանդտագի կազմի մեջ. վորոշվեց պաշտոնանկ անել և պատժել հերցոգի յերեք ատելի խորհրդատուներին՝ Լամպարտերին, Թումբին և Լորխերին. նաև վորոշվեց մի խորհուրդ կազմել հերցոգին կից և այդ խորհրդի կազմի մեջ մտցնել չորս ասպետներ, չորս բյուրգերներ և չորս գյուղացիներ. միաժամանակ վորոշվեց հերցոգին վորոշ ռոճիկ սահմանել, ինչպես և գրավել վանքերի և աստվածահաճո հիմնարկների գույքը հօգուտ պետական գանձարանի:

Հեղափոխական այս վորոշումներին հերցոգ Ուլրիխը պատասխանեց պետական հեղաշրջմամբ: Իր ասպետների և խորհրդականների հետ միասին հունիսի 21-ին նա մեկնեց Տյուբինգեն. նրան հետևեցին նաև պրելատները, հրամայեց ներկայանալ նաև բյուրգերներին, վոր և նրանք կատարեցին, և այստեղ նա շարունակեց լանդտագի նիստն առանց գյուղացիների մասնակցության: Ռազմական ահաբեկման պայմաններում բյուրգերներն այստեղ դավաճանեցին իրենց դաշնակիցներին՝ գյուղացիներին: Հուլիսի 8-ին կնքվեց Տյուբինգենի դաշնագիրը, վորը հերցոգի մոտ մի միլիոնի հասնող պարտքը յերկրի վրա բարդեց, հերցոգի առաջ վորոշ սահմանափակումներ դրեց, վորպիսի սահմանափակումներին հերցոգը յերբեք չենթարկվեց, իսկ գյուղացիները պետք է բավարարվեյին միքանի աղոտ և անորոշ ընդհանուր բառերով ու մի վերին աստիճանի հաստատուն քրեական օրենքով, վորով պատժվում եյին խռովությունները ու միությունները: Լանդտագում գյուղացիական ներկայացուցիչների մասին բնականաբար այլևս խոսք չկար: Գյուղացիությունն աղաղակ բարձրացրեց այդ դավաճանության առթիվ, բայց հերցոգը, վորը՝ դասերն իրենց վրա նրա պարտքերն ընդունելուց հետո՝ նոր վարկ եր ստացել, շուտով զորք հավաքեց: Նրա հարևաններն էլ, մանավանդ Պֆալցի կուրֆյուրստը, օգնական զորամասեր ուղարկեցին: Այսպիսով դեռ հուլիսի վերջին բովանդակ յերկիրն ընդունեց Տյուբինգենի դաշնագիրը և հավատարմության նոր յերդում տվեց: Միմիայն Ռեմսի հովտում Աղքատ Կոնրադը դիմադրություն ցույց տվեց. նորից այստեղ յեկած հերցոգը հազիվհազ ազատվեց սպանվելուց, իսկ Կապպելբերգի լեռներում գյուղացիական բանակ կազմվեց: Բայց յերբ գործը ձգձգվեց, ապստամբների մեծ մասը կենսամթերք-

ների պակասության պատճառով ցրվեց, իսկ մնացած ապստամբները լանդտագի մի քանի պատգամավորների հետ կայացրած յերկդիմի համաձայնագրի հետևանքով նույնպես իրենց տները վերադարձան: Ուլրիխը, որի բանակը մինչ այդ ավելի ևս ուժեղացել էր քաղաքների ինքնակամ ուղարկած զումարտակներով, քաղաքներ, որոնք իրենց պահանջների բավարարությունն ստանալով՝ այժմ արդեն գյուղացիների մոլեռանդ հակառակորդներն էին դարձել,—չնայած կնքված դաշնագրին, հարձակվեց Ռեմսի հովտի վրա, որի քաղաքներն ու գյուղերը կողոպուտի յենթարկվեցին: Գյուղացիներից 1·600 հոգի ձերբակալվեց, որոնցից 16 մարդ անմիջապես գլխատվեց, իսկ մնացածներն ըստ մեծի մասին դատապարտվեցին ծանր դրամական տուգանքների՝ հօգուտ Ուլրիխի գանձարանի: Շատերը յերկար ժամանակ բանտերում մնացին: Միությունը վերականգնելու դեմ, ինչպես և գյուղացիական բոլոր ժողովների դեմ խիստ օրենքներ հրատարակվեցին, իսկ խռովության ամեն մի փորձը ճնշելու նպատակով շվաբական ազնվականությունը հատուկ միություն կազմեց:—Բայց թե Աղքատ Կոնրադի գլխավոր ղեկավարներին հաջողվեց անվնաս փախչել Շվեյցարիա, որտեղից մի քանի տարի անց դրանց մեծ մասը մեկիկ-մեկիկ իրենց տները վերադարձան:

Վյուրտեմբերգի շարժման հետ միաժամանակ Բրայզգաու գավառում և Բադենի մարկգրաֆության մեջ Կոշկի միության աշխուժացման նշաններ յերևացին: Հունիսին Բյուլի մոտ ապստամբության փորձ յեղավ, բայց դա անմիջապես ճնշվեց մարկգրաֆ Ֆիլիպի կողմից, շարժման առաջնորդ Գուգել-Բաստիանը Ֆրայբուրգում կալանավորվեց և գլխատվեց:

Նույն 1514 թվին, նույնպես գարնանը, Հունգարիայում ընդհանուր գյուղացիական պատերազմ բռնկվեց: Այդտեղ քարոզում էին՝ թյուրքերի դեմ խաչակրաց արշավանք կազմակերպել և, ըստ սովորականի, այդ շարժմանը հարող բոլոր ճորտերին և անազատ գյուղացիներին ազատություն էին խոստանում: Մոտ 60·000 հոգի հավաքվեցին և Գեորգ Դոժայի հրամանատարության տակ մտան, որը դեռ թյուրքական նախկին պատերազմների ժամանակ աչքի յեր ընկել և ազնվականություն ստացել: Սակայն հունգարական ասպետներն ու մագնատները դժկամակությամբ էին վերաբերվում այս խաչակրաց արշավանքին, որը սպառնում էր զրկել նրանց սեփականությունից, ճորտերից: Նրանք հարձակվեցին գյուղացիների առանձին խմբերի վրա և բռնությամբ, անգութ միջոցներով հետ բերին իրենց ճորտերին: Յերբ դա հայտնի դարձավ խաչակրաց զորաբանակում, ճնշված գյուղացիների կատաղությունը պայթեց: Խաչակրաց արշավանքի ամենամոլեռանդ քարոզիչներից յերկուսը՝ Լավրենտիուսը և Բառնաբասն իրենց հեղափոխական ճառերով զորքի մեջ ավելի ևս բորբոքեցին դեպի ազնվականությունը յեղած ատելությունը: Հենց ինքը Դոժան հավանություն էր տալիս իր զորքերի վրդովմանն ընդդեմ դավաճան-ազնվականների: Խաչակիր զորքը հեղափոխական բանակ դարձավ, և Դոժան այս նոր շարժման գլուխ անցավ:

Իր գյուղացիների հետ միասին Դոժան բանակ դրեց Ռակոշի դաշտում՝ Բուդապեշտի մոտ: Թշնամական գործողությունները սկսվեցին՝ ազնվականական կուսակցության պաշտպանների հետ մերձակա գյուղերում և Բուդապեշտի արվարձաններում: Շուտով բանը հասավ զինված ընդհարումների և, վերջապես, սիցիլիական իրիկնաժամի՝ ազնվականների վերաբերմամբ. գյուղացիների ձեռքն ընկած բոլոր ազնվականները կոտորվեցին և շրջակա բոլոր դղյակները կրակի մատնվեցին: Արքունիքն սպառնաց, բայց դա ապարդյուն անցավ: Յերբ մայրաքաղաքի պատերի տակ ազնվականներն անդրանիկ ժողովրդական դատարանին հանձնվեցին, Դոժան դիմեց հետագա գործողություններին: Իր բանակը նա բաժանեց հինգ զորասյուների: Դրանցից յերկուսն ուղարկվեցին վերին-հունգարական լեռները, որպեսզի այնտեղ ընդհանուր ըմբոստացում առաջ բերեն և ազնվականությունը բնաջինջ անեն: Մայրաքաղաքի անցուդարձին հետևելու համար յերրորդ զորասյունը մնաց Ռակոշի դաշտում բուդապեշտցի Ամբրոսիուս Սալեվեչի հրամանատարության տակ. չորրորդ և հինգերորդ զորասյուները Դոժայի և իր յեղբոր՝ Գրիգորի առաջնորդությամբ շարժվեցին Սեգեդինի դեմ:

Այդ նույն ժամանակամիջոցում ազնվականությունը համախմբվեց Պեշտում և օգնության կանչեց Սեմիգրադի կուսակալ Յան Զապոլյային: Յերբ Սալեվեչը գյուղացիական զորաբանակի բյուրգերական տարրերի հետ միասին թշնամու կողմն անցավ, ազնվականությունը Բուդապեշտի բյուրգերների հետ հարձակվեց և փոշիացրեց Ռակոշի դաշտում գտնվող բանակը: Հըսկայական թվով գերիներ ամենադաժան յեղանակով մահվան յենթարկվեցին, իսկ մյուսներն իրենց տներն ուղարկվեցին կտրած քթերով ու ականջներով:

Սեգեդինի մոտ Դոժան անհաջողություն կրելով՝ շարժվեց Չանդի դեմ, վորը նա գրավեց, նախապես ջարդելով Ստեֆան Բատորիի և յեպիսկոպոս Չակիի հրամանատարության տակ գտնվող ազնվական զորքը և, ի վրեժ Բակոչի դաշտում կատարված անգթությունների, արյունահեղ խստություններ կիրառեց գերիների վերաբերմամբ, վորոնց թվումն էյին նաև՝ յեպիսկոպոսը և արքայական գանձապետ Տելեկին։ Չանադում նա հանրապետություն հռչակեց, ինչպես և ազդարարեց ազնվականության վերացում, ընդհանուր հավասարություն ու ժողովրդի գերիշխանություն, և այնուհետև շարժվեց Տեմեշվարի դեմ, վորտեղ Բատորին ապաստան էր գտել։ Բայց մինչդեռ նա Անտոն Հոսսայի հրամանատարությամբ նոր զորքի օժանդակություն ստանալով այս ամրոցը յերկու ամիս շարունակ պաշարված դրության մեջ էր պահում, և մի շարք ճակատամարտերում ազնվականությունը պարտության մատնեց վերին-հունգարական յերկու բանակներն էլ, և Յան Զապոլյան Սեմիգրադյան բանակի գլուխ անցած շարժվեց Դոժայի դեմ։ Զապոլյան հարձակվեց գյուղացիների վրա և ցիրուցան արեց։ Իսկ իրեն Դոժային գերի վերցրին և շիկացած գահի վրա խորովեցին, նրա միսը կերցրին հենց իր մարդկանց, վորոնց կյանքն այս պայմանով միայն խնայվեց։ Լավրենտիուսը և Հոսսան դարձյալ ժողովեցին ցրված գյուղացիներին, բայց դարձյալ պարտվեցին, և թշնամու ձեռքն ընկած բոլոր գյուղացիները ցից հանվեցին կամ կախվեցին։ Գյուղացիների դիակները հազարներով կախված էյին փողոցների յերկարությամբ կամ այրված գյուղերի մուտքերի առաջ։ Ասում են, վոր ճակատամարտում սպանվածների, ռեպրեսիաների ժամանակ սրախողխող յեղածների թիվը հասնում էր 60.000 հոգու։ Ազնվականությունը հոգ տարավ, վոր գյուղացիների ստրկացումը հաջորդ լանդտագի կողմից օրենք ճանաչվի վողջ յերկրի համար։

«Վինդյան Մարկի» մեջ, այսինքն Կարինտիայում, Կրայնում և Շտիրիայում մոտավորապես այդ ժամանակ բռնկված գյուղացիական ապստամբությունը հենվում էր Կոշկի միության նման մի դավադրության վրա, վորն ազնվականության և կայսերական պաշտոնյաների հարկահանությունից քայքայված, թյուրքական ասպատակություններից ավերված և սովի հետևանքով հյուծված այս մարզում կազմվել էր դեռ 1503 թվին և ապստամբություն առաջ բերել։ Այս շրջանի թե՛ սլովենական և թե գերմանական գյուղացիությունն արդեն 1513 թվին կրկին

գլուխ բարձրացրեց հանուն «հին իրավունքների» (stara prawa), և յեթե այս տարի էլ նրանց դարձյալ հաջողվեց հանդարտացնել, յեթե 1514 թվին էլ, յերբ նրանք ավելի մեծ մասսաներով էյին համախմբվել, Մաքսիմիլիան կայսրին հաջողվեց համոզել, վոր ցրվեն, «հին իրավունքների» վերականգնման միանգամայն վորոշակի խոստում տալով նրանց, ապա 1515 թվի գարնանն ավելի ուժեղ պայթեց շարունակ խարվող ժողովրդի վրեժը։ Ինչպես Հունգարիայում, այնպես և այստեղ դավադրությանը մասնակցող գյուղացիներն ամենուրեք ավերում էյին դղյակներն ու վանքերը, դատում ու գլխատում էյին գերի ընկած ազնվականներին։ Շտիրիայում և Կարինտիայում կայսերական զորավար Դիտրիխշտայնին շուտով հաջողվեց ապստամբությունը խեղդել, բայց Կրայնում ապստամբությունը ճնշվեց միմիայն շնորհիվ այն հանգամանքի, վոր (1516 թվի աշնանը) ավստրիական իշխանությունը հարձակում գործեց Բայնի վրա և՝ այնուհետև բազմաթիվ դաժանություններ գործեց, վորոնք արժանի յեն հունգարական ազնվականության գարշելի արարքների շարքը դասվելու։

Ըստ ինքյան հասկանալի յե, վոր մի շարք այսքան վճռական պարտություններից և ազնվականության կողմից կատարված այսպիսի մասսայական դաժանություններից հետո գերմանական գյուղացիները բավական յերկար ժամանակ հանգիստ մնացին։ Այնուամենայնիվ թե՛ դավադրությունները և թե՛ տեղական ընդվզումները վերջնականապես չդադարեցին։ Կոշկի միության և Աղքատ Կոնրադի փախստական անդամների մեծագույն մասն արդեն 1516 թվին վերադարձավ Շվաբիա և վերին-Հռենոսյան շրջանը, իսկ 1517 թվին Կոշկի միությունը Շվարցվալդում վերածնվեց նոր ուժով։ Ինքը Յոսս Ֆրիցը, վորը Կոշկի միության 1513 թվի հին դրոշակն իր կրծքի վրա միշտ պահում էր թաքցրած, վերստին սկսեց շրջագայել ամբողջ Շվարցվալդում և յեռանդուն աշխատանք ծավալել։ Դավադրությունը նորից կազմակերպվեց։ Ինչպես չորս տարի առաջ, այնպես և այժմ հավաքույթները դարձյալ տեղի էին ունենում Կնիբիս լեռան վրա։ Սակայն գաղտնիքը չպահպանվեց, և կառավարական մարմինները տեղեկանալով դավադրության մասին, հատու միջոցների դիմեցին։ Շատերը ձերբակալվեցին և գլխատվեցին. միության ամենագործունյա ու ինտելիգենտ անդամներն ստիպված էյին ճողոպրել․ դրանց թվումն էր նաև Յոսս Ֆրիցը, վորին այս ան-

դամ էլ չկարողացան ձերբակալել, բայց վորն ըստ յերևույթին քիչ հետո մեռավ Շվեյցարիայում, քանի վոր այդ ժամանակից ի վեր նրա անունն այլևս վոչ մի տեղ չի հիշատակվում:

IV

Այդ նույն ժամանակը, յերբ Կոշկի միության չորրորդ դավադրությունը Շվարցվալդում ճնշվեց, Լութերը Վիտտենբերգում ազդանշան տվեց այն շարժման համար, վորը հորձանքի ջրապտույտի մեջ պիտի գցեր բոլոր դասերը և ցնցեր պետական ամբողջ շենքը: Թյուրինգիական ավգուստինյան կրոնավորի թեզերը նույնպիսի հրաբորբոք ազդեցություն ունեցան, ինչպիսի ներգործություն ունենում է կայծակը վառոդի տակառի վրա: Թե՛ ասպետների և բյուրգերների, թե՛ գյուղացիների և պլեբեյների, թե՛ գերիշխանության ձգտող իշխանների, ստորին հոգևորականության, թե՛ գաղտնի միստիկ աղանդների և գրականագետների ուսումնական ու սատիրիկ ոպոզիցիայի բազմազան, միմյանց խաչաձևող տենչանքները զարմանալի արագությամբ համախմբվեցին այդ թեզերի շուրջը և սկզբում ընդհանուր արտահայտություն ստացան դրանց մեջ: Վորքան էլ կարճատև լինէր մի գիշերվա ընթացքում կազմված այդ բոլոր ընդդիմադիր տարրերի միությունը, բայց և այնպես նա միանգամից հայտաբերեց այդ շարժման ահռելի ուժը և նրան ուժեղ խթան տվեց:

Սակայն շարժման հենց այս արագ զարգացումը պետք է շատ շուտով յերևան բերեր դրա մեջ ներփակված յերկպառակության սաղմերը, համենայն դեպս նա պիտի խզում առաջ բերեր հուզված մասսայի բաղկացուցիչ մասերի միջև, վորոնք այդ մասսայի կյանքի բոլոր պայմանների շնորհիվ միմյանց հանդեպ անմիջական հակադրության մեջ եյին գտնվում, այդ մասերը նա պիտի հասցներ իրենց բնական, թշնամական դիրքին: Դեռ ռեֆորմացիայի առաջին տարիներում յերևան յեկավ խայտաբղետ ընդդիմադիր մասսայի այս համախմբումը ձգման յերկու կենտրոնի շուրջը. ազնվականությունն ու բյուրգերներն անպայմանորեն համախմբվեցին Լութերի շուրջը, գյուղացիներն ու պլեբեյները դեռևս Լութերին անմիջական թշնամի չհամարելով, առաջվա նման մի առանձին հեղափոխական ընդդիմադիր կուսակցություն կազմեցին: Տարբերությունն այն եր միայն, վոր այժմ շարժումը շատ ավելի ընդհանուր և խորաթափանց բնույթ եր ստացել, քան Լութերից առաջ, և վոր այս հանգամանքը պիտի անհրաժեշտորեն այդ յերկու կուսակցությունների միջև պարզորոշ արտահայտված ներհակություն և բացահայտ պայքար առաջ բերեր: Այս անմիջական ներհակությունը շուտով յերևան յեկավ. Լութերն ու Մյունցերը մամուլի եջերում, թե ամբիոնի վրա նույնպիսի պայքար եյին մղում միմյանց դեմ, ինչպես վոր իշխանների, ասպետների և քաղաքացիների զորքերը, վորոնք մեծ մասամբ լութերական կամ առնվազը լութերականության կողմը հակված ուժերից եյին կազմված, ցրում եյին գյուղացիների և պլեբեյների խմբերը:

Թե ռեֆորմացիային հարած տարբեր տարրերի շահերն ու պահանջմունքները վորքան տարբեր եյին միմյանցից, դա ցույց է տալիս այն հանգամանքը, վոր դեռ գյուղացիական պատերազմից առաջ ազնվականությունը փորձում եր իրականացնել՝ իշխանների և հոգևորականների դեմ ուղղված իր պահանջները:

Վերևում մենք արդեն տեսանք, թե ինչպիսի դիրք եր գրավում գերմանական ազնվականությունը XV դարի սկզբին: Նրան սպառնում եր անկախության կորուստը և ավելի ու ավելի զորեղացող աշխարհական և յեկեղեցական իշխաններին յենթարկվելը: Միաժամանակ նա տեսնում եր, վոր իր անկման չափով թուլանում եր նաև կայսերական իշխանությունը և վոր կայսրությունն ավելի ու ավելի բաժանվում եր մի շարք սուվերեն իշխանությունների: Ազնվականության տեսակետից նրա սեփական կործանումը պիտի նույնացվեր գերմանացիների, իբրև ազգության, կործանման հետ: Դրան ավելանում եր նաև այն հանգամանքը, վոր ազնվականությունը, մանավանդ կայսերական ազնվականությունը, այն դասն եր, վորն իր ռազմական կոչումով, ինչպես նաև իշխանների հանդեպ իր գրաված դիրքով, հանդիսանում եր կայսրության և մասնավորապես կայսերական իշխանության գլխավոր ներկայացուցիչը: Նա ամենից ազգայնական դասն եր, և վորքան ավելի ուժեղ եր կայսերական իշխանությունը, վորքան թույլ և վորքան սակավաթիվ եյին իշխանները, վորքան Գերմանիան ավելի միասնական եր, նույնքան էլ նա զորեղ եր: Դրանով է բացատրվում, թե ինչու ասպետների շրջանում ընդհանուր դժգոհություն եր տիրում, վոր քաղաքական տեսակետից Գերմանիան վողորմելի դրության մեջ է գտնվում, վոր արտաքին գործերում պետությունն անզոր է և վոր կայսրության այդ անզորությունն ավելանում է այն չափով, ինչ չափով վոր կայսերական տունը ժառանգման միջոցով

կայսրությանը նորանոր պրովինցիաներ է միացնում, որ օտար պետությունները Գերմանիայի ներսում ինտրիգներ են լարում և որ գերմանական իշխաններն արտասահմանյան տերությունների հետ դավեր են նյութում կայսերական իշխանության դեմ: Այսպիսով, ազնվականության պահանջներն ամենից առաջ պիտի հանգեցնեին պետական ռեֆորմի պահանջին, որպիսի ռեֆորմի զոհերն իշխանները և բարձրաստիճան հոգևորականները պիտի լինեյին: Այս պահանջների ամփոփումն ստանձնեց գերմանական ազնվականության թեորետիկ ներկայացուցիչը՝ Ուլրիխ ֆոն-Հուտտենը, նրա ռազմական և քաղաքական ներկայացուցչի՝ Ֆրանց ֆոն-Զիկկինգենի հետ միասին:

Ազնվականության անունից իր առաջադրած համապետական ռեֆորմի ծրագրին Հուտտենը միանգամայն պարզորոշ և արմատական ձևակերպում տվեց: Դա ոչ այլ ինչ էր, քան այն, որ բոլոր իշխաններն ասպարեզից պիտի հեռացվեն, բոլոր հոգևոր իշխանությունների ու կալվածքները սեկուլարիզացիայի յենթարկվեն և որ պիտի ստեղծվի ազնվականական դեմոկրատիա միապետի գլխավորությամբ, մոտավորապես այնպես, ինչպես դա գոյություն ուներ յերբեմնի Լեհական Հանրապետության լավագույն օրերում: Ստեղծելով ազնվականության գերիշխանությունը, այն ազնվականության, որը գերազանցապես ռազմական դասակարգ էր հանդիսանում, հեռացնելով իշխաններին, քաղաքական մանրատման այդ ներկայացուցիչներին, ոչնչացնելով հոգևորականների հզորությունը և ազատագրելով Գերմանիան Հռոմի հոգևոր գերիշխանությունից, Հուտտենը և Զիկկինգենը կարծում էյին, թե այդ միջոցներով նրանց կհաջողվի կայսրությունը կրկին միասնական, ազատ ու հզոր դարձնել:

Ճորտատիրության վրա հենվող ազնվականական դեմոկրատիան,—ինչպես դա գոյություն ուներ Լեհաստանում և փոքրինչ փոփոխված ձևով—առաջին դարերում գերմանացիների կողմից Հռոմեական կայսրությունը նվաճելուց հետո կազմված թագավորություններում,—հասարակական ամենապարզ ձևերից մեկն է հանդիսանում և այնուհետև միանգամայն բնական յեղանակով զարգանալով, հասնում է ֆեոդալական կատարելագործված հիերարխիային, որն արդեն բավական բարձր աստիճան է ներկայացնում: Հետևապես, XVI դարում այս զուտ ազնվականական դեմոկրատիայի գոյությունը Գերմանիայում արդեն անհնարին էր: Դա արդեն անկարելի յեր հենց այն պատճառով, որ Գերմանիայում այն ժամանակ գոյություն ունեյին մեծ և ուժեղ քաղաքներ: Մյուս կողմից հնարավոր չէր նաև ստորին ազնվականության և քաղաքների այն դաշնակցությունը, որը ֆեոդալ-դասային մոնարխիան Անգլիայում փոխարկեց բուրժուական-սահմանադրական միապետության: Գերմանիայում պահպանվել էր հին ազնվականությունը, իսկ Անգլիայում Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմի հետևանքով այդ ազնվականությունը, բացի 28 ընտանիքներից, բնաջնջված էր յեղել, ընդվորում նա փոխարինվել էր մի նոր ազնվականությամբ, բուրժուական ծագում և բուրժուական տենդենցներ ունեցող ազնվականությամբ: Գերմանիայում շարունակվում էյին ճորտատիրական հարաբերությունները, և ազնվականության յեկամտի աղբյուրները ֆեոդալական էյին, այնինչ Անգլիայում դա գրեթե բոլորովին վոչնչացվել էր, և ազնվականները սոսկ բուրժուական հողատերեր էյին, վորոնց յեկամտի աղբյուրը, հողային ռենտան բուրժուական էր: Վերջապես բացարձակ միապետության կենտրոնացումը, վորն ազնվականության և բուրժուազիայի միջև յեղած ներհակության շնորհիվ Լուդովիկոս XI-ից սկսած հաստատվել էր Ֆրանսիայում և շարունակ ավելի ու ավելի զարգանում էր, Գերմանիայում անկարելի յեր հենց այն պատճառով, վոր ազգային կենտրոնացման համար անհրաժեշտ նախադրյալներն այստեղ բոլորովին բացակայում էյին կամ սաղմային դրության մեջ էյին գտնվում:

Այս հանգամանքներում վորքան Հուտտենն ավելի յեր մոտենում իր իդեալի պրակտիկ իրագործմանը, այնքան նա ստիպված էր ավելի մեծ զիջողություններ անել և այնքան էլ անորոշ էյին դառնում նրա կայսերական ռեֆորմի ուրվագծերը: Թե այս ձեռնարկությունը կենսագործելու համար ազնվականությունը բավականաչափ ուժ չուներ, դա ցույց է տալիս այն հանգամանքը, վոր իշխանների հանդեպ նա շարունակ անզոր էր դառնում: Դաշնակիցներ էյին պահանջվում, իսկ միակ հնարավոր դաշնակիցները քաղաքներն էյին, գյուղացիները և բարենորոգչական շարժման ազդեցիկ տեսաբանները: Սակայն քաղաքներն ազնվականներին լավ էյին ճանաչում, վորպեսզի նրանց հավատ չընծայեն և նրանց հետ վորևէ դաշինք կնքելուց հրաժարվեն: Գյուղացիներն ամենայն իրավամբ ազնվականներին իրենց ամենավոխերիմ թշնամին էյին համարում, վորոնք շահագործել և անգութ էյին վարվել իրենց հետ: Իսկ ռեֆորմացիայի տեսա-

բաններն էլ կամ բյուրգերների, կամ իշխանների, կամ գյուղացիների կողմնակիցն էին: Եվ ի՞նչ դրական բան կարող էր տալ բյուրգերներին և գյուղացիներին ազնվականների առաջարկած կայսրության ռեֆորմը, որը գլխավորապես ազնվականության ուժեղացման և բարձրացման նպատակն էր հետապնդում: Այս հանգամանքներում Հուտտենին այլևս ոչինչ չէր մնում, քան այն, որ իր պրոպագանդիստական գրվածքներում շատ քիչ բան ասելով, կամ բնավ ոչինչ չխոսելով ազնվականության, քաղաքների և գյուղացիների ապագա փոխհարաբերության մասին, ամբողջ չարիքը վերագրել իշխաններին, հոգևորականներին ու Հռոմի գերիշխանությանը, և ապացուցել քաղաքացիներին, որ հենց իրենց շահերի տեսակետից սրանք առնվազը չեզոք դիրք պիտի բռնեն՝ իշխանների և ազնվականների միջև տեղի ունենալիք առաջիկա պայքարի ընթացքում: Ճորտատիրական հարաբերությունների, ինչպես և գյուղացիների կողմից ազնվականությանը մատուցվող ծառայությունների վերացման մասին Հուտտենի գրվածքներում ոչ մի տեղ ոչինչ չի ասված:

Այն ժամանակ գերմանական ազնվականությունը ճիշտ այնպիսի դիրք էր բռնել գյուղացիների նկատմամբ, ինչ լեհական ազնվականությունն իր գյուղացիների հանդեպ՝ 1830—1846 թ. թ. ապստամբությունների ժամանակ: Ինչպես արդի լեհական ապստամբություններում, այնպես էլ այն ժամանակ Գերմանիայում շարժումը կարող էր իր նպատակին հասնել միմիայն բոլոր ոպոզիցիոն կուսակցությունների, մասնավորապես ազնվականության և գյուղացիների, դաշինքի շնորհիվ: Բայց հենց այս դաշինքը երկու դեպքում էլ անհնարին էր: Ազնվականությունն այնպիսի հարկադրական վիճակում չէր գտնվում, որպեսզի հրաժարվեր այն քաղաքական արտոնություններից և ֆեոդալական իրավունքներից, որ նա ուներ գյուղացիների վերաբերմամբ, և ոչ էլ հեղափոխականորեն տրամադրված գյուղացիությունը կարող էր հրապուրվել ընդհանուր, անորոշ հեռանկարներով, որպեսզի դաշնակցեր ազնվականության հետ, այսինքն այն դասի հետ, որը գյուղացիներին ամենից շատ էր ճնշում: Ինչպես 1830 թվին Լեհաստանում, այնպես էլ 1522 թվին Գերմանիայում ազնվականությունն այլևս չէր կարող գյուղացիներին իր կողմը գրավել: Գյուղական բնակչությունը կարող էր դաշնակցել ազնվականության հետ սոսկ այն դեպքում, եթե լիովին վերաց-

վեյին ճորտատիրությունը և կախյալ հարաբերությունները և ազնվականության արտոնությունները. սակայն, ամեն մի արտոնյալ դասի նման, ազնվականությունը բնավ տրամադիր չէր հոժարակամ հրաժարվել իր վայելած իրավունքներից, իր բացառիկ դիրքից և իր եկամուտի աղբյուրների մեծագույն մասից:

Այսպես ուրեմն, երբ վերջապես ազնվականության և իշխանների միջև պայքարն սկսվեց, նա բոլորովին մենակ մնաց: Առաջուց արդեն կարելի էր նախատեսել, որ իշխանները, որոնք երկու դար շարունակ մեկը մյուսի հետևից խլում էին ազնվականության դիրքերը, այս անգամ էլ առանց դժվարության կճնշեն ազնվականներին:

Պայքարի ընթացքն ինքնին հայտնի է: Հուտտենը և Զիկկինգենը, որն արդեն Միջին Գերմանիայի ազնվականության քաղաքական-ռազմական առաջնորդն էր ճանաչվել, 1522 թվին Լանդաու քաղաքում ինքնապաշտպանության պատրվակով կազմեցին հռենոսյան, շվաբական և ֆրանկոնյան ազնվականության միությունը վեց տարի ժամանակով. մասամբ իր սեփական միջոցներով, մասամբ էլ հարևան ասպետների աջակցությամբ Զիկկինգենը մի զորաբանակ կազմեց, այնուհետև նա զորահավաք կազմակերպեց և օժանդակ ուժեր ժողովեց Ֆրանկոնիայում, ներքին Հռենոսի շրջանում, Նիդերլանդիայում ու Վեստֆալիայում, և 1522 թվի սեպտեմբերին թշնամական գործողություններ սկսելով՝ կռիվ հայտարարեց Տրիրի կուրֆյուրստ արքեպիսկոպոսին: Բայց մինչդեռ նա պաշարում էր Տրիրը, իշխանների արագ ու վճռական հարձակման հետևանքով նա կտրվեց իրեն օգնության եկող զորամասերից. Հեսսենի լանդգրաֆը և Պֆալցի կուրֆյուրստն օգնության հասան տրիրցիներին, և Զիկկինգենը հարկադրված եղավ ապաստանել իր Լանդշտուլ դղյակում: Չնայած Հուտտենի և Զիկկինգենի մյուս բարեկամների բոլոր ջանքերին, դաշնակից ազնվականներն ահաբեկվելով իշխանների համախմբված և արագ գործողություններից, լքեցին նրան: Ինքը Զիկկինգենը մահացու վերք ստանալով հանձնեց Լանդշտուլը թշնամիներին և դրանից հետո շուտով վախճանվեց: Հուտտենն ստիպված էր Շվեյցարիա փախչել և մի քանի ամսից հետո մեռավ Ցյուրիխի լճի Ուֆնաու կղզում:

Այս պարտությամբ և երկու առաջնորդների մահվամբ փշրվեց ազնվականության, իբրև իշխաններից անկախ մի կազ-

մակերպության, ուժը: Այնուհետև ազնվականությունը յերևան է գալիս սոսկ վորպես իշխանների մոտ ծառայող և իշխանների ղեկավարության տակ գտնվող մի դաս: Դրանից հետո բռնկված գյուղացիական պատերազմն առավել ևս հարկադրեց, վոր ազնվականությունն ուղղակի թե անուղղակի ձևով իշխանների պաշտպանության ապավինի: Միաժամանակ այդ պատերազմն ապացուցեց, վոր գերմանական ազնվականությունն ավելի շուտ գերադասում եր շարունակել գյուղացիների շահագործումն իշխանների գերագույն հովանու տակ, քան թե տապալել իշխաններին և հոգևորականներին բացահայտորեն՝ դաշնակցելով ազատագրված գյուղացիների հետ:

V

Այն մոմենտից, յերբ կաթոլիկության հիերարխիայի դեմ Լութերի կողմից պատերազմ հայտարարելը շարժման մեջ դրեց Գերմանիայի բոլոր ոպոզիցիոն տարրերը, չեր անցնում և վոչ մի տարի, վոր գյուղացիները ևս հանդես չգային իրենց պահանջներով: 1518 թվից մինչև 1523 թիվը Շվարցվալդում և վերին Շվաբիայում մեկը մյուսին հաջորդում եյին գյուղացիական տեղական ապստամբությունները: 1524 թվի գարնանից այս ապստամբությունները սիստեմատիկ բնույթ ստացան: Այդ նույն տարվա ապրիլին Մարխթալ աբբայության գյուղացիները հրաժարվեցին կոռային ծառայությունից և այլ պարտավորություններից. մայիսին Սանկտ-Բլազիյի գյուղացիները հրաժարվեցին ճորտատիրական տուրքերից. հունիսին Շտայնհայմի, Մեմմինգենի մոտ, գյուղացիները հայտարարեցին, վոր չեն կամենում վճարել տասանորդ և այլ տուրքեր. հուլիսին և օգոստոսին Թուրգաու շրջանի գյուղացիներն ըմբոստացան, վորոնք հնազանդվեցին մասամբ ցյուրիխցիների միջամտության շնորհիվ, մասամբ էլ միութենական շվեյցարական կառավարության դաժան միջոցներով, վորը կարգադրեց միքանիսին կախաղան հանել: Վերջապես Շտյուլինգենի լանդգրաֆության մեջ տեղի ունեցավ մի վճռական ապստամբություն, վորը կարող է գյուղացիական պատերազմի անմիջական սկիզբը համարվել:

Շտյուլինգենի գյուղացիները հանկարծ հրաժարվելով լանդգրաֆի հանդեպ իրենց ունեցած պարտավորությունները կատարելուց, խոշոր խմբեր կազմեցին և 1524 թվի հոկտեմբերի 24-ին բուլգենբախցի Հանս Մյուլլերի առաջնորդությամբ դեպի Վալդսհուտ շարժվեցին: Քաղաքացիների հետ միասին այստեղ նրանք



Աստղագուշակը և Մյունցերը

ավետարանական յեղբայրություն հիմնեցին: Քաղաքացիներն առավել ևս հաճույքով եյին մտնում այս միության մեջ, քանի վոր այդ ժամանակ նրանք ընդհարվել եյին Առաջավոր Ավստրիայի կառավարության հետ՝ իրենց քարոզիչ Բալթազար Հուբմայերին, Թոմաս Մյունցերի բարեկամներից և աշակերտներից մեկին, կրոնական հողի վրա հալածելու պատճառով: Միության ոգտին հարկ սահմանվեց՝ շաբաթական յերեք կրեյցերի չափով,—վորը չափազանց մեծ գումար եր այդ ժամանակ գոյություն ունեցող դրամական արժեքի համեմատությամբ,—ամենուրեք գյուղացիներին միության մեջ առնելու համար եմիսարներ ուղարկվեցին Ելզաս, Մոզել, ամբողջ վերին Հռենոս և Ֆրանկոնիա: Իբրև միության նպատակ հետևյալ պահանջները հռչակվեցին.—Ֆեոդալական տիրապետության վոչնչացումը, բոլոր դղյակների և վանքերի կործանումը և բոլոր տերերի վերացումը, բացի կայսրից: Միության նշանը գերմանական յեռագույն դրոշն եր:

Ապստամբությունն արագորեն տարածվեց այժմյան ամբողջ բադենական Ոբերլանդում: Ահ ու սարսափ տիրեց վերին-շվաբական ազնվականությանը, վորի մարտական ուժերը գրեթե ամբողջապես զբաղված եյին Ֆրանսիայի Ֆրանցիսկ I թագավորի դեմ Իտալիայում մղվող պատերազմում: Ազնվականությանն ուրիշ վոչինչ չեր մնում, բացի բանակցությունների միջոցով գործը ձգձգելուց, իսկ այդ ժամանակամիջոցում դրամ հավաքել ու զորքեր ժողովել, մինչև վոր բավականաչափ ուժ ձեռք բերելով հնարավորություն ունենա՝ գյուղացիների հանդգնությունը «ենգելուցիաներով, հրդեհներով, ավարառությամբ ու կոտորածներով» խպատժելու: Այդ ժամանակից ծայր առավ այն սիստեմատիկ դավաճանությունը, այն հետևողական ուխտանենգությունն ու խարդավանքը, վոր կազմում եյին ազնվականների և իշխանների բնորոշ գիծը գյուղացիական ամբողջ պատերազմի ընթացքում և վորոնք նրանց համար ամենազորեղ զենքն եյին ծառայում՝ մանրատված և դժվարությամբ կազմակերպվող գյուղացիների դեմ: Շվաբական միությունը, վորն ընդգրկում եր իշխաններին, ազնվականներին և հարավ-արևմտյան Գերմանիայի կայսերական քաղաքները, հանդես յեկավ միջնորդի դերում, սակայն առանց գյուղացիներին իրական զիջումներ յերաշխավորելու: Գյուղացիները չհանդարտվեցին: Բուդգենբախցի Հանս Մյուլլերը սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի կեսը շարժվելով Շվարցվալդի միջով մինչև Ուրախ և Ֆուրտվանգեն,

իր զորախումբը հասցրեց մինչև 3.500 հոգու և դրանցով դիրք բռնեց Երատինգենի մոտ (ոչ հեռու Շտյուլինգենից)։ Ազնվականության տրամադրության տակ եղած մարդկանց թիվը չէր անցնում 1.700 հոգուց, այն էլ ցրված դրությամբ։ Նա հարկադրված էր զինադադարի համաձայնել, որն իրոք տեղի ունեցավ Երատինգենի բանակատեղում։ Ազնվականությունը գյուղացիներին խոստացավ, որ բարենպաստ համաձայնություն կկնքվի՝ կամ անմիջականորեն ազնվականության և գյուղացիների միջև, կամ թե միջնորդ դատավորների միջոցով, և որ գյուղացիների գանգատները կքննվեն Շտոկկախի մարզային դատարանում։ Ինչպես ազնվականության զորամասերը, այնպես և գյուղացիները ցրվեցին։

Գյուղացիները համաձայնության գալով՝ իրենց պահանջները ամփոփեցին 16 թեզիսների մեջ, որոնք պիտի հաստատվեին Շտոկկախի դատարանի կողմից։ Պահանջները վերին աստիճանի չափավոր էին։ Նրանք պահանջում էին վերացնել որսորդության իրավունքը, կոռությունը, ծանր հարկերը և ընդհանրապես տերերի արտոնությունները, ինչպես և պաշտպանություն էին պահանջում՝ կամայական ձերբակալությունների և դատարանների կողմնակալ ու քմահաճ վճիռների դեմ — դրանից ավելի նրանք ոչինչ չէին պահանջում։

Իսկ ազնվականությունը, ընդհակառակը, հենց որ գյուղացիներն իրենց տները ցրվեցին, անհապաղ սկսեց նորից պահանջել, որ մինչև դատարանի վերջնական վճիռը գյուղացիները դարձյալ կատարեն իրենց բոլոր վիճելի պարտավորությունները։ Բնականաբար գյուղացիները հրաժարվելով այդ պահանջը կատարելուց, իրենց տերերին առաջարկում էին դատարան դիմել։ Պայքարը նորից բորբոքվեց. գյուղացիները վերստին սկսեցին համախմբվել, իսկ իշխաններն ու ազնվականներն սկսեցին իրենց զորքերը կենտրոնացնել։ Այս անգամ շարժումն ավելի հեռու ծավալվեց՝ մինչև Բրայզգաու և դրանից էլ այն կողմ— դեպի Վյուրտեմբերգի խորքերը։ Ազնվականության զորքերը Գեորգ Տրուխզեսս ֆոն-Վալդբուրգի, գյուղացիական պատերազմի այդ Ալբայի, հրամանատարությամբ հետևում էին գյուղացիների շարժումներին, հարվածում առանձին օժանդակ խմբերին, սակայն չէին խիզախում հարձակվել գլխավոր ուժերի վրա։ Գեորգ Տրուխզեսսը բանակցություններ էր վարում գյուղացիների առաջնորդների հետ և որոշ դեպքերում համաձայնություն կնքում նրանց հետ։

Դեկտեմբերի վերջին Շտոկկախի դատարանում բանակցությունները սկսվեցին։ Գյուղացիները բողոքում էին, որ դատարանը բացառապես ազնվականներից է կազմված։ Ի պատասխան դրա՝ գյուղացիների առաջ կարդացվեց կայսեր հրամանագիրը։ Բանակցությունները ձգձգվում էին, իսկ այդ ժամանակամիջոցում ազնվականությունը, իշխանները և շվաբական միությունն սպառազինվում էին։ Էրցհերցոգ Ֆերդինանդը, որը բացի այժմյան ավստրիական ժառանգական երկրամասերից տիրում էր նաև Վյուրտեմբերգի, բադենական Շվարցվալդի և հարավային Էլզասի վրա, հրամայեց խստագույն միջոցներ ձեռնարկել խռովարար գյուղացիների դեմ՝ բռնել, տանջել և առանց խղճահարության սպանել, ոչնչացնել բոլոր հնարավոր միջոցներով, նրանց գույքն ու տնտեսությունն այրել և կրակի ճարակ դարձնել, նրանց կանանց ու երեխաներին երկրի սահմաններից դուրս քշել։ Այստեղից պարզապես երևում է, թե իշխաններն ու կալվածատերերն ինչպես էին պահպանում զինադադարը, թե նրանք ի՛նչ էին հասկանում՝ բարեհաճ միջնորդություն և գանգատները քննության առնել ասելով։ Էրցհերցոգ Ֆերդինանդը, որին Աուգսբուրգի Վելզերների տունը դրամական փոխառություն տվեց, զինվում էր ամենամեծ արագությամբ. շվաբական միության կարգադրությամբ երեք նվազ դրամ և զորք պիտի մատակարարվեր։

Մինչև այժմ տեղի ունեցած ապստամբությունները զուգադիպում են այն հնգամյա ժամանակաշրջանին, երբ Թոմաս Մյունցերը գտնվում էր Օբերլանդում։ Թեև անմիջական ապացույցներ չկան, թե նա ինչպիսի ազդեցություն է ունեցել շարժման բռնկման և դրա ընթացքի վրա, սակայն այս ազդեցությունն անուղղակի ձևով միանգամայն հաստատված է։ Գյուղացիների մեջ ավելի վճռական հեղափոխականները մեծ մասամբ նրա աշակերտներն էին և նրա գաղափարների հետևորդները։ Բոլոր ժամանակակիցները նրան էին վերագրում թե՛ «Տասներկու թեզիսները» և թե՛ Օբերլանդի գյուղացիների «Ըստհոդվածային նամակը» (Artikelbrief), թեև կասկածից դուրս է, որ թեզիսները համենայն դեպս նա չի կազմել։ Դեռ Թյուրինգիայից վերադառնալու ժամանակ նա մի կտրուկ հեղափոխական գրություն ուղղեց ապստամբ գյուղացիներին։

Այդ նույն ժամանակ ինտրիգներ էր վարում հերցոգ Ուլրիխը, որը 1519 թվին աքսորվել էր Վյուրտեմբերգից և որը

գյուղացիների օգնությամբ ձգտում էր վերստին գրավել իր յերկիրը: Հաստատված փաստ էր, վոր իր արտաքսումից ի վեր նա աշխատում էր օգտագործել հեղափոխական կուսակցությունը, վորին նա շարունակ աջակցում էր: Նրա անունը խառն է տեղական խռովությունների մեծ մասի մեջ, վորոնք 1520—1524 թվերին տեղի յեն ունեցել Շվարցվալդում և Վյուրտեմբերգում, իսկ այժմ նա ուղղակի պատրաստվում էր հարձակում գործել Վյուրտեմբերգի վրա իր Հոհենտվիլ ամրոցից: Սակայն գյուղացիները նրան միմիայն օգտագործում եյին. գյուղացիների վրա նա յերբեք ազդեցություն չուներ և մանավանդ նրանց վստահությունը չէր վայելում:

Այսպես ձմեռն անցավ և յերկու կողմից էլ վճռական քայլեր չեղան: Իշխանական պարոնները թաքնվում եյին, իսկ գյուղացիական ապստամբությունը ծավալվում էր: Դանուբի, Հռենոսի և Լեխի միջև ընկած ամբողջ յերկիրը 1525 թվի հունվարին լիակատար հուզմունքի մեջ էր գտնվում, իսկ փետրվարին փոթորիկն արդեն սկսվեց:

Մինչդեռ բուլգենբախցի Հանս Մյուլլերի հրամանատարության տակ գտնվող Շվարցվալդ–Հեգաույի զորախումբը գաղտնի հարաբերության մեջ էր մտել Ուլրիխ Վյուրտեմբերգցու հետ և վորոշ չափով մասնակցում էր Շտուտգարտի դեմ նրա ձեռնարկած ապարդյուն արշավին (1525 թվի փետրվարին և մարտին), փետրվարի 9-ին Ռիդում, Ուլմից վերև, գյուղացիները վոտքի յելան և հավաքվելով Բալտրինգենի մերձակայքում, ճահիճներով պաշտպանված մի վայրում, կարմիր դրոշ բարձրացրին և Ուլրիխ Շմիդտի ղեկավարությամբ Բալտրինգենի զորախումբը կազմեցին: Նրանց թիվը 10—12 հազար հոգու յեր հասնում:

Օբերալլգաուի զորախումբը, վորը կազմված էր 7.000 հոգուց, փետրվարի 25-ին համախմբվեց Շուսսերի մոտ. դա հետևանք էր այն լուրերի, վոր այստեղ ևս յերևան յեկած անրավական տարրերի դեմ իբր թե զորքեր են գալիս: Կեմպտենի բնակիչները, վորոնք ամբողջ ձմեռվա ընթացքում գժտված եյին իրենց արքեպիսկոպոսի հետ, ամսի 26-ին խմբվեցին և գյուղացիներին միացան: Մեմմինգեն և Կաուֆբոյրեն քաղաքները վորոշ պայմաններով հարեցին շարժմանը. սակայն այստեղ արդեն յերևան յեկավ այն դիրքի յերկդիմությունը, վոր քաղաքները բռնել եյին այս պայքարի ընթացքում: Օբերալլգաուի շրջանի բոլոր գյուղացիների համար մարտի 7-ին Մեմմինգենում ընդունվեցին մեմմինգենյան տասներկու թեզիսները:

Ալլգաուի գյուղացիներից տեղեկություններ ստանալով Բոդեն լճի ավազանում Այտել Հանսի գլխավորությամբ կազմվեց լճի զորախումբը: Այս խումբը նույնպես արագ թափով ուժեղացավ: Նրա գլխավոր բանակատեղին Բերմատինգենն էր:

Մարտի սկզբներին արդեն գյուղացիներն ապստամբեցին նաև ներքին Ալլգաույում, Օքսենհաուզենի և Շելենբերգի շրջակայքում, ինչպես և Ցայլում ու Վալդբուրգում—Տրուխզեսսին պատկանող յերկրամասում: Ներքին ալլգաուցիների այս զորախումբը, վորը կազմված էր 7000 հոգուց, բանակ դրեց Վուրցախում:

Այս բոլոր չորս խմբերն ընդունեցին մեմմինգենյան թեզիսները, վորոնք իմիջիայլոց շատ ավելի չափավոր եյին, քան Հեգաուի թեզիսները և զարմանալի անվճռականություն եյին դրսևորում այն կետերում, վորոնք շոշափում եյին զինված խմբերի վերաբերմունքը դեպի ազնվականությունը և կառավարությունները: Վճռականությունը հանդես յեկավ միայն պատերազմի ընթացքում, յերբ գյուղացիները փորձով ծանոթացան իրենց թշնամիների գործելակերպի հետ:

Այս խմբերի հետ միաժամանակ մի վեցերորդ զորախումբ կազմվեց Դանուբի ափերին: Ուլմի և Դոնաուվյորտի միջև գտնվող շրջաններից, Իլլերի, Ռոթի և Բիբերի հովիտներից գյուղացիները հավաքվեցին Լայպհայմ և այդտեղ բանակ դրեցին: 15 վայրերից հավաքվեցին զենքի ընդունակ բոլոր տղամարդիկ, իսկ 117 վայրերից օժանդակ ուժեր յեկան: Լայպհայմի զորախմբի առաջնորդը Ուլրիխ Շյոնն էր, իսկ քարոզիչը—Լայպհայմի պաստոր Յակոբ Վեհեն:

Այսպիսով մարտի սկզբին վեց զորախմբերում 30 հազարից մինչև 40 հազար վերին-շվաբացի զինված գյուղացիներ կային: Այս գյուղացիական զորախմբերը վերին աստիճանի խառնիճաղանճ բնույթ եյին կրում: Հեղափոխական, մյունցերական կուսակցությունն ամեն տեղ փոքրամասնություն էր կազմում: Բայց և այնպես, ամենուրեք նա կազմում էր գյուղացիական բանակատեղերի կորիզն ու նեցուկը: Գյուղացիական մասսան միշտ էլ պատրաստ էր իր տերերի հետ համաձայնության գալու, հենց վոր նրան յերաշխավորեյին վորոշ զիջումներ, վոր նա հույս ուներ կորզել իր սպառնալից վարքով: Բացի դրանից, յերբ գործը ձգձգվեց և իշխանական զորքերն սկսեցին առաջ խաղալ, պատերազմը գյուղացիներին ծանր թվաց, և նրանք, վորոնք տակավին կորցնելու վորևէ բան ունեյին, մեծ մասամբ իրենց տները

վերադարձան: Պիտի նկատել, վոր գյուղացիական խմբերին մեծ քանակությամբ թափառաշրջիկ լումպեն-պրոլետարիատ եր միացել, վորը շատ եր խանգարում կարգապահությունը, բարոյալքում եր գյուղացիներին և հաճախ մերթ փախչում եր, մերթ վերադառնում: Արդեն միայն սրանով ել բացատրվում ե այն հանգամանքը, վոր սկզբում գյուղացիական խմբերն ամեն տեղ պաշտպանողական դիրք եյին բռնում, բանակատեղերում բարոյալքվում եյին և վոր իշխանների զորքերի հետ նրանք բնավ չեյին կարող չափվել, յեթե նույնիսկ մի կողմ թողնենք նրանց տակտիկական թերությունները և լավ առաջնորդների քչությունը:

Յերբ գյուղացիական խմբերը դեռևս համախմբվում եյին, հերցոգ Ուլրիխն իր հավաքած զորքերով և Հեգաու շրջանի գյուղացիներով Հոհենտվիլից խուժեց Վյուրտեմբերգի վրա: Յեթե այժմ գյուղացիները մյուս կողմից շարժվեյին Տրուխզես ֆոն-Վալդբուրգի զորամասերի դեմ, շվաբական միության կործանումն անխուսափելի յեր: Բայց քանի վոր գյուղացիական խմբերը սոսկ պաշտպանողական դիրք եյին բռնել, Տրուխզեսին շուտով հաջողվեց զինադադար կնքել Բալտրինգենի, Ալլգաուի և Բոդեն լճի գյուղացիների հետ, ինչպես և նրանց հետ բանակցություններ սկսել և հարցի վերջնական լուծման համար ժամկետ ընդունել Judica կիրակին՝ ապրիլի 2-ը, այսինքն մեծ պասի հինգերորդ կիրակին: Այդ ժամանակամիջոցում նա հնարավորություն ունեցավ շարժվել հերցոգ Ուլրիխի դեմ, Շտուտգարտը գրավեց և արդեն մարտի 17-ին Ուլրիխին հարկադրեց՝ Վյուրտեմբերգը կրկին թողնել ու հեռանալ: Այնուհետև նա շարժվեց գյուղացիների դեմ, բայց հենց իր բանակի մեջ լանդսկնեխտներն ըմբոստացան և հրաժարվեցին գյուղացիների դեմ գնալ: Տրուխզեսին հաջողվեց սակայն լռեցնել խռովարարներին, վորից հետո՝ նա շարժվեց դեպի Ուլմ, վորտեղ ոգնական նոր ուժեր եյին հավաքվում: Կիրխհայմում Տեկկի մոտ նա մի դիտող բանակ թողեց:

Շվաբական միությունը, վորի ձեռքերը վերջապես ազատվել եյին և վորն արդեն հավաքել եր իր առաջին կոնտինգենտները, այժմ մի կողմ նետելով դիմակը, հայտարարեց, վոր «վճռել ե զենքի ուժով և աստծու ոգնությամբ վերջ դնել գյուղացիների բոլոր կամայական գործողություններին»:

Զինադադարի պայմանները գյուղացիները մինչ այն ճշտությամբ պահպանում եյին: Բանակցությունների համար Judica

կիրակի որը գյուղացիներն առաջադրեցին իրենց պահանջները՝ նշանավոր «Տասներկու թեզիսները»: Նրանք պահանջում եյին, վոր հոգևորականների ընտրությունն ու փոխարինումը համայնքին վերապահվի, վոր վոչնչացվի փոքր տասանորդը, իսկ մեծ տասանորդը գործադրվի հասարակական կարիքների համար, հանելով դրանից պաստորի ռոճիկը, վոր վերացվեն ճորտատիրական հարաբերությունները, ձկնորսության ու վորսորդության իրավունքը, ժառանգությունից գանձվող տուրքերը, վոր սահմանափակվեն չափն անցած կոռը, հարկերն ու տուրքերը, վոր վերադարձվեն՝ համայնքներից և առանձին անհատներից բռնի միջոցներով խլված անտառները, արոտավայրերն ու արտոնությունները, և վոր վերացվի դատական ու վարչական հաստատություններում տիրող կամայականությունը: Ինչպես տեսնում ենք, գյուղացիական խմբերի մեջ դեռևս զգալի չափով գերակշռում եր չափավոր համաձայնողական կուսակցությունը: Դեռ դրանից առաջ հեղափոխական կուսակցությունն առաջադրեց իր ծրագիրը «Ըստհոդվածային նամակում» (Aptikelbrief): Գյուղացիության բոլոր համայնքներին ուղղված այս նամակը հորդորում եր, վոր նրանք «քրիստոնեյական միության և յեղբայրության» մեջ մտնեն, վորպեսզի հնարավոր լինի վոչնչացնել բոլոր ծանրությունները,—լինի դա բարեհոժար ճանապարհով, «վորը սակայն, հնարավոր չե», թե բռնի միջոցներով, ընդվորում բոլոր համառողներին սպառնում եր «աշխարհական բանադրանքի» յենթարկել, այսինքն արտաքսել հասարակությունից և թույլ չտալ, վոր միության անդամների հետ վորևե հարաբերություն ունենան: Աշխարհական բանադրանքի պիտի յենթարկվեն նույնպես բոլոր դղյակները, վանքերն ու յեկեղեցիները, յեթե միայն ազնվականները, քահանաներն ու աբեղաները չհեռանան այդ շենքերից, մյուս մարդկանց նման չապրեն սովորական տներում և չհարեն քրիստոնեական միությանը:

Այս արմատական մանիֆեստի մեջ, վորն, ինչպես յերևում ե, կազմվել եր 1525 թվի գարնան ապստամբությունից առաջ, ամենից առաջ շոշափվում ե հեղափոխության խնդիրը, տակավին իշխող դասակարգերի լիակատար հաղթահարման հարցը, իսկ «աշխարհական բանադրանքը» մատնանշում ե լոկ այն ճնշողներին ու դավաճաններին, վորոնք պիտի կոտորվեն, այն դղյակները, վորոնք կրակի պիտի մատնվեն, այն վանքերն ու յեկեղեցիները, վորոնք պիտի բռնագրավվեն և վորոնց գանձերը դրամի վերածվեն:

Բայց, նախքան գյուղացիները հնարավորություն ունեցան իրենց տասներկու թեզիսներն առաջադրել հրավիրված միջնորդ դատավորներին, նրանք լուր առացան, վոր շվաբական միությունը պայմանադրուժ է յեղել և վոր նրա զորքերն արդեն մոտենում են։ Անմիջապես նրանք համապատասխան միջոցների դիմեցին։ Գայսբոյրենում գումարվեց ալգաուցիների, բալտրինգենցիների և լճամերձ գյուղացիների ժողովը։ Չորս զորախմբերը ձուլվեցին միմյանց հետ և դրանցից չորս նոր զորասյուներ կազմվեցին. վորոշվեց գրավել յեկեղեցական կալվածքները, վաճառել դրանց թանկարժեք իրերը և ստացված գումարը ռազմական գանձարկղին հատկացնել, ինչպես և վորոշվեց հրկիզել դղյակները։ Այսպիսով պաշտոնական տասներկու թեզիսների կողքին, «Ընդհոդվածային նամակը» նրանց ռազմավարության կանոնը դարձավ և Judica կիրակին, հաշտություն կնքելու համար վորոշված օրը, ընդհանուր ապստամբության օրաթիվը յեղավ։

Ամենուրեք զարգացող հուզմունքը, գյուղացիների և ազնվականության միջև անընդհատ շարունակվող տեղական բախումները, այն լուրերը, թե վեց ամիս՝ շարունակ Շվարցվալդում ապստամբությունն աճում է և մինչև Դանուբ ու Լեխ գետերը ծավալվում,—այս բոլորը հիրավի բավական է, իհարկե, վորպեսզի բացատրվի, թե ինչու մեկը մյուսի հետևից արագորեն բռնկվող գյուղացիական ապստամբություններն ընդգրկեցին Գերմանիայի յերկու-յերրորդ մասը։ Այն փաստը, վոր բոլոր մասնակի ապստամբությունները տեղի եյին ունենում միաժամանակ, ապացուցում է, վոր շարժումը գլխավորվում եր այն անձնավորությունների կողմից, վորոնք անաբապտիստների և այլ էմիսարների միջոցով կազմակերպել եյին այդ շարժումը։ Մարտի յերկրորդ կեսում արդեն անկարգություններ եյին ծագել Վյուրտեմբերգում, Ներքին Նեկկարում, Օդենվալդում, Ներքին և Միջին Ֆրանկոնիայում։ Սակայն ընդհանուր ապստամբություն սկսելու օրը նախորոք արդեն ամենուրեք նշանակված եր ապրիլի 2-ը՝ Judica կիրակին, և ապրիլի առաջին շաբաթում ամեն տեղ վճռական հարված հասցվեց՝ բռնկվեց մասսայական ապստամբությունը։ Ահազանգ տալով և մասսայական հավաքույթներ կազմակերպելով՝ ալգաուցիները, հեգաուցիները և լճամերձ գյուղացիները ևս բանակ համախմբեցին բոլոր ռազմունակ տղամարդկանց և բալտրինգենցիների հետ թշնամական գործողություններ սկսեցին դղյակների և վանքերի դեմ։

Ֆրանկոնիայում, վորտեղ շարժումը խմբվել եր վեց կենտրոնների շուրջը, ամենուրեք ապստամբությունը բռնկվեց ապրիլի առաջին օրերին։ Մոտավորապես այդ ժամանակ Նյորդլինգենի մոտ յերկու գյուղացիական բանակներ կազմվեցին, վորոնց օգնությամբ հեղափոխական կուսակցությունը, վորի առաջնորդն Անտոն Ֆորներն եր, քաղաքի ղեկն իր ձեռքն առավ։ Այս կուսակցությունը Ֆորներին քաղաքագլուխ անցկացրեց և համաձայնեցրեց, վոր քաղաքը միանա գյուղացիների հետ։ Անշպախի շրջանի բոլոր վայրերում ապրիլի 1-ից մինչև 7-ը գյուղացիներն ապստամբություն բարձրացրին, վորն այստեղից ծավալվեց մինչև Բավարիա։ Դեռ մարտի 22-ից Ռոտենբուրգի շրջանում գյուղացիները զենքի տակ եյին, իսկ Ռոտենբուրգ քաղաքում մանր բյուրգերներն ու պլեբեյները Ստեֆան ֆոն-Մենցինգենի առաջնորդությամբ մարտի 27-ին տապալեցին պատրիկների իշխանությունը, բայց քանի վոր քաղաքի գլխավոր յեկամուտներն այստեղ գյուղացիներից գանձվող տուրքերն եյին կազմում, ապա նոր կառավարությունն էլ խիստ տատանվող և յերկդիմի վերաբերմունք ուներ դեպի գյուղացիները։ Վյուրցբուրգի կապիտուլի շրջանում գյուղացիները և մանր քաղաքները ապրիլի սկզբին ընդհանուր ապստամբություն բարձրացրին, իսկ Բամբերգի յեպիսկոպոսության մեջ ընդհանուր ապստամբությունը հինգ օրվա ընթացքում հարկադրեց յեպիսկոպոսին զիջումների գնալ։ Վերջապես հյուսիսում՝ Թյուրինգիական սահմանի վրա կազմվեց բիլդհաուզցիների գյուղացիական բազմամարդ բանակը։

Օդենվալդում, վորտեղ հեղափոխական կուսակցությունը գլխավորում եյին՝ կոմս ֆոն Հոհենլոհեի նախկին կանցլեր և ադմիրալ Վենդել Հիպլերը և Բոլենբերգի, Կրաուտհայմի մոտ, պանդոկապետ Գեորգ Մեցլերը, մարտի 26-ին փոթորիկն արդեն սկսվեց։ Բոլոր կողմերից գյուղացիները սլացան դեպի Տաուբեր։ Ռոտենբուրգի բանակից նրանց միացան ևս 2000 հոգի։ Գեորգ Մեցլերը ստանձնեց հրամանատարությունը և ապրիլի 4-ին, օգնական ուժերը ժամանելուց հետո, շարժվեց դեպի Շյոնթալի վանքը, Յագստի ափին, վորտեղ միացան նրա հետ Նեկարցիք։ Վերջիններս Judica կիրակի օրը Յեկլայն Ռորբախի առաջնորդությամբ, վորը Բյոկինգենում, Հայլբրոննի մոտ, պանդոկապետ եր, ապստամբություն հայտարարեցին Ֆլայնում, Զոնտհայմում և այլ վայրերում, իսկ այդ միևնույն ժամանակ Վենդել Հիպլերը մի խումբ դավադիրների հետ հանկարծակի հարձակմամբ գրավեց Երինգենը, և շրջակայքի գյուղացիներին շարժման մեջ

գրավեց: Այդ յերկու զորասյուները, վորոնք միաձուլվելով կազմել եյին Լուսավոր զորախումբը, Շվաբիայում ընդունեցին տասներկու թեզիսները և հարձակումներ կազմակերպեցին դղյակների և վանքերի դեմ: Լուսավոր զորախումբը բաղկացած եր 8000 հոգուց, ուներ թնդանոթներ և 3000 հրացան: Այս զորախմբին միացավ նաև ֆրանկոնյան ասպետ Ֆլորիան Գեյերը, վորը մի զորասյուն՝ Սև գումարտակ եր կազմել գլխավորապես Ռոտենբուրգի և Երինգենի պահեստի յերկրապահ գնդերից:

Ռազմական գործողությունները սկսեց կոմս Լուդվիգ Ֆոն-Հելֆենշտայնը, Նեկկարսուլմի վյուրտեմբերգյան ֆոխտը: Նա կարգադրեց առանց այլևայլության կոտորել իր ձեռքն ընկած բոլոր գյուղացիներին: Լուսավոր զորախումբը դուրս յեկավ նրա դեմ: Այս սպանդը, ինչպես և այն հենց նոր ստացված լուրերը Լայպհայմի զորախմբի պարտության, Յակոբ Վեհեյի գլխատման և Տրուխզեսսի դաժանությունների մասին, գյուղացիներին կատաղության հասցրին: Հելֆենշտայնը, վորը Վայնսբերգ եր պաշտպանել, այստեղ հարձակման յենթարկվեց: Ֆլորիան Գեյերը գրոհով գրավեց ամրոցը, յերկարատև կռվից հետո վերցրեց նաև քաղաքը: Կոմս Լուդվիգը բազմաթիվ ասպետների հետ գերի ընկավ: Հաջորդ որը, ապրիլի 17-ին, Յեկլայն Ռորբախը զորախմբի միքանի ամենավճռական մարդկանց հետ դատեց գերիներին և դրանցից 14 հոգու, ի թիվս վորոնց առաջին հերթին Հելֆենշտայնին, դատապարտեց ամենաանարգ մահվան, վոր կարելի յեր յերևակայել. նրանց զորաշարքի միջով վազեցնելով՝ նիզակների հարվածներով սպանեցին: Վայնսբերգի առումը և Հելֆենշտայնի նկատմամբ Յեկլայն Ռորբախի գործադրած ահաբեկիչ վրեժխնդրությունը հարկ յեղած ազդեցությունն ունեցան ազնվականության վրա: Լյովենշտայն կոմսերը հարեցին գյուղացիական միությանը, իսկ Հոհենլոհե կոմսերը, վորոնք դեռ դրանից առաջ միացել եյին գյուղացիներին, բայց տակավին վոչ մի ոժանդակություն չեյին ցույց տվել, անհապաղ ուղարկեցին պահանջվող զենքերն ու վառոդը:

Շարժման ղեկավարներն սկսեցին խորհրդակցել, թե արդյոք լավ չե՞ր լինի Գյոց Ֆոն-Բեռլիխինգենին հրամանատար հրավիրել, «քանի վոր սա կարող եր ազնվականությունը գյուղացիների կողմը գրավել»: Այս առաջարկը հավանություն գտավ, բայց Ֆլորիան Գեյերը՝ գյուղացիների և ղեկավարների այս տրամադրությունը ռեակցիայի սկիզբը համարելով՝ իր Սև գու-

մարտակի հետ միասին անջատվեց զորախմբից և իր անձնական պատասխանատվությամբ արշավեց նախ Նեկկարի, իսկ ապա Վյուրցբուրգի շրջանների վրա և ամենուրեք կործանեց դղյակներն ու հոգևորականների վորջերը:

Զորախմբի մնացած մասը նախ շարժվեց Հայլբրոնի վրա: Կայսերական այս ուժեղ ազատ քաղաքում, ինչպես համարյա ամեն տեղ, պատրիկության դեմ ճակատ առ ճակատ կանգնած եր բյուրգերական և հեղափոխական ոպոզիցիան: Վերջինս գաղտնի համաձայնությամբ գործելով գյուղացիների հետ, դեռ ապրիլի 17-ին, խռարանցման պահին, բացեց քաղաքի դարպասները Գեորգ Մեցլերի և Յեկլայն Ռորբախի առաջ: Իրենց մարդկանց հետ միասին գյուղացիների առաջնորդները տիրեցին քաղաքին, վորն ընդունվեց յեղբայրության մեջ, ընդվորում նա տվեց 1200 գուլդեն և կամավորների մի փոքր խումբ: Թալանի յենթարկվեցին միմիայն հոգևորականությունը և Տևտոնական որդենի կալքերը՝ ապրիլի 22-ին գյուղացիները դուրս յեկան քաղաքից, թողնելով այդտեղ փոքրիկ կայազոր: Հայլբրոնը զանազան զորախմբերի կենտրոն պիտի դառնար: Յեվ իրոք, այդ զորախմբերն այստեղ ուղարկեցին իրենց պատվիրակներին, իրենց ձեռնարկելիք միահամուռ գործողությունները և գյուղացիների պահանջները քննարկելու համար: Սակայն բյուրգերական ոպոզիցիան և գյուղացիների ներխուժումից հետո այդ ոպոզիցիայի հետ դաշնակցած պատրիկությունը կրկին իրենց ձեռքը գցելով քաղաքի ղեկավարությունը և խոչընդոտներ հարուցելով բոլոր յեռանդուն քայլերի դեմ, սպասում եյին իշխանական զորքերի մոտենալուն միայն, վորպեսզի վերջնականապես դավաճանեն գյուղացիներին:

Գյուղացիները շարժվեցին դեպի Ոդենվալդ: Գյոց Ֆոն-Բեռլիխինգենը, վորը միքանի որ առաջ իր ծառայություններն եր առաջարկում նախ Պֆալցի կուրֆյուրստին, ապա գյուղացիներին և դրանից հետո էլի կուրֆյուրստին, ապրիլի 24-ին ստիպված եր մտնել ավետարանական յեղբայրության մեջ և ստանձնել Լուսավոր զորախմբի (ի հակադրություն Ֆլորիան Գեյերի Սև զորախմբի) գլխավոր հրամանատարությունը: Բայց միաժամանակ նա գերի յեր գյուղացիների ձեռքում, վորոնք կասկածամտությամբ հսկում եյին նրա վրա և նրան կապում իրենց ղեկավարների խորհրդով, առանց վորի նա վոչինչ չեր կարող անել: Գյոցը և Մեցլերը այժմ գյուղացիների մասսայի հետ Բուխենի վրայով շարժվեցին դեպի Ամորբախ, վորտեղ մնալով ապ-

րիլի 30-ից մինչև մայիսի 5-ը, ապստամբեցրին Մայնցի ամբողջ շրջանը: Ամենուրեք ազնվականությունը հարկադրված էր միանալ գյուղացիներին, և դա փրկեց նրանց դղյակները: Կրակի և ավարի մատնվեցին միմիայն վանքերը: Զորախումբը բացահայտ կերպով ավելի ու ավելի բարոյալքվում էր, ամենայեռանդուն անձնավորությունները գնացել էին Ֆլորիան Գեյերի և Յեկլայն Ռորբախի հետ, վորովհետև Հայլբրոննի ասամբլեից հետո Ռորբախն էլ էր անջատվել, պարզապես այն պատճառով, վոր նա, կոմս Հելֆենշտայնի դատավորը, այլևս չէր կարող մնալ այն զորախմբում, վորն ուզում էր համաձայնության գալ ազնվականության հետ: Ազնվականության հետ համաձայնություն կայացնելու այս համառ ձգտումն արդեն բարոյալքման նշան էր: Դրանից քիչ հետո Վենդել Հիպլերը զորախմբը վերակառուցելու խիստ գործնական ծրագիր առաջարկեց. նա առաջարկում էր ծառայության վերցնել լանդսկնեխտներին, վորոնք ամենայն որ այս մասին դիմումներ էին անում, և ամեն ամիս բանակի կազմը պետք չէր նորոգել, ինչպես մինչև հիմա կատարվում էր՝ նորերին ընդունելով և հներին արձակելով, այլ արդեն զենքի տակ գտնվող և վորոշ չափով վարժված կազմը պիտի պահպանել: Սակայն այս յերկու առաջարկն էլ մերժվեց համայնքի ժողովի կողմից. գյուղացիներն արդեն ամբարտավան էին դարձել և ամբողջ պատերազմի վրա նայում էին, իբրև ավարառության մի արշավի վրա. այսպիսի պարագաներում լանդսկնեխտների մրցակցությունը չէր համապատասխանում նրանց շահերին, իսկ մյուս կողմից նրանք ուզում էին, վոր իրենց տուն վերադառնալու հնարավորություն տրվեր, հենց վոր իրենց գրպանները լցված կլինեին: Ամորբախում խնդիրը նույնիսկ այնտեղ հասավ, վոր հայլբրոնցի խորհրդական Հանս Բեռլինը զորախմբի ղեկավարներին և խորհրդականներին ստիպեց ընդունել «Տասներկու թեզիսների դեկլարացիան», մի գրավոր ակտ, վորով միանգամայն մեղմացվում էին տասներկու թեզիսների մեջ մնացած վերջին սուր կետերը և գյուղացիների պահանջներն արտահայտվում էին ստորացուցիչ-աղերսագին ձևով: Սակայն սա գյուղացիներին չափազանց թվաց, և նրանք սաստիկ աղմուկ բարձրացնելով մերժեցին դեկլարացիան և համառորեն պնդեցին սկզբնական թեզիսների վրա:

Մինչ այդ Վյուրցբուրգի յեպիսկոպոսության մեջ վճռական շրջադարձ էր կատարվել: Յեպիսկոպոսը, վորն ապրիլի սկզբին,

գյուղացիների առաջին ապստամբության ժամանակ, ապաստանելով Ֆրաուենբերգի ամրոցը, Վյուրցբուրգի մոտ, ոգնության համար դիմել էր բոլորին, բայց ապարդյուն, վերջիվերջո հարկադրված էր ժամանակավորապես զիջել: Մայիսի 2-ին բացվեց լանդտագը, վորտեղ գյուղացիները ևս իրենց ներկայացուցիչներն ունեին: Բայց նախքան վորևէ արդյունքի հասնելը բռնվեցին այնպիսի նամակներ, վորոնք հավաստում էին յեպիսկոպոսի դավաճանական մեքենայությունները: Լանդտագն անմիջապես ցրվեց, և թշնամական գործողություններ սկսվեցին մի կողմից ըմբոստացած քաղաքացիների և գյուղացիների, իսկ մյուս կողմից յեպիսկոպոսի կողմնակիցների միջև: Ինքը յեպիսկոպոսը մայիսի 5-ին Հայդելբերգ փախավ, իսկ հաջորդ օրն արդեն Վյուրցբուրգ ժամանեց Ֆլորիան Գեյերն իր Սև զումարտակի և Ֆրանկոնյան տաուբերյան զորախմբի հետ միասին, վորը կազմված էր Մերգենթայմի, Ռոտենբուրգի և Անշպախի գյուղացիներից: Մայիսի 7-ին լուսավոր զորախմբի հետ միասին յեկավ նաև Գյոց ֆոն-Բեռլիխինգենը, և սկսվեց Ֆրաուենբերգի պաշարումը:

Լիմպուրգի, Էլվանգենի և Հալլի շրջանում դեռ մարտի վերջին և ապրիլի սկզբին կազմվել էր մի այլ խումբ՝ Հայլդորֆյան կամ Հասարակ լուսավոր զորախումբը: Նա հանդես յեկավ բուռն ուժգնությամբ, ըմբոստացրեց ամբողջ շրջանը, բազմաթիվ վանքեր և դղյակներ հրդեհեց, վորոնց թվում նաև Հոհենշտաուֆեն դղյակը, բոլոր գյուղացիներին ստիպեց միանալ զորաբանակին, իսկ բոլոր ազնվականներին և մինչև իսկ Լիմպուրգի կոմսերի կայսերական մատռվակներին հարկադրեց քրիստոնեական յեղբայրության մեջ մտնել: Մայիսի սկզբին նա ներս խուժեց Վյուրտեմբերգ, սակայն ստիպված էր հետ նահանջել: Գերմանական մանր պետությունների պարտիկուլարիզմը՝ տարբեր պետությունների հեղափոխականներին այն ժամանակ նույնքան նվազ չափով միահամուռ գործողությունների հնարավորություն էր ընձեռում, ինչպես և 1848 թվին: Հայլդորֆցիները, վորոնք սահմանափակված էին մի փոքրիկ յերկրամասով, այդ յերկրի շրջանակներում նրանց ցույց տրված ամեն մի դիմադրությունը հաղթահարելուց հետո, անխուսափելիորեն պիտի անջատվեին: Համաձայնության գալով Գմյունդ քաղաքի հետ, նրանք թողեցին միմիայն 500 զինված մարդ, իսկ մյուսները ցրվեցին:

Պֆալցում, Հռենոսի յերկու ափերին, ապրիլի վերջերին

գյուղացիական զորախմբեր կազմվեցին: Նրանք կործանեցին բազմաթիվ դղյակներ ու վանքեր և մայիսի 1-ին, երբ մյուս ափից անցած բրուխռայնցիները դեռ մի օր առաջ արդեն ստիպել էին Շպայեր քաղաքին դաշնագիր կնքել, գրավեցին Նոյշտադտը Հարդտի վրա: Իր տրամադրության տակ յեղած կուրֆյուրստական սակավաթիվ զորքերով Ցաբերնի մարշալը չկարողացավ նրանց դեմ որևէ բան անել, դրա համար էլ մայիսի 10-ին կուրֆյուրստը հարկադրված էր ըմբոստացած գյուղացիների հետ դաշնագիր կնքել, որով նա պարտավորվում էր գյուղացիների նեղությունները թեթևացնել լանդտագի միջոցով:

Վերջապես, Վյուրտեմբերգի առանձին վայրերում վաղուց արդեն ապստամբություն էր ծագել: Ուրախի լեռնային մասում դեռևս փետրվարին գյուղացիները միություն էին կազմել հոգևորականների և կալվածատերերի դեմ, իսկ մարտի վերջին ոտքի յելան [redacted], Ուրախի, Մյունզինգի, Բալինգի և Ռոզենֆելդի գյուղացիները: Հայլդորֆցիները ներս խուժեցին Վյուրտեմբերգի շրջանը Գյոպինգենի մոտ, Յեկլայն Ռորբախը—Բրակկենհայմի մոտ և Լայպհայմի պարտված զորախմբի մնացորդները—Պֆուլլինգենի մոտ ու ոտքի հանեցին գյուղական ազգաբնակչությունը: Մյուս շրջաններում ևս լուրջ խռովություններ ծագեցին: Արդեն ապրիլի 6-ին Պֆուլլինգենը հարկադրված էր անձնատուր լինել գյուղացիներին: Ավստրիական էրցհերցոգի կառավարությունը չափազանց դժվարին կացության մեջ էր: Նա բոլորովին դրամ չուներ, իսկ զորքն էլ շատ քիչ էր: Քաղաքները և ամրոցները վատթարագույն դրության մեջ էին, նրանք ո՛չ կայազոր ունեյին և ո՛չ էլ պաշտպանություն: Նույնիսկ Ասպերգը համարյա անպաշտպան էր:

Քաղաքների զորամասերը գյուղացիների դեմ հանելու փորձն անհաջող տարավ դեպի կառավարության պարտությունը: Բոտտվար քաղաքի զորամասն ապրիլի 16-ին հրաժարվեց առաջ շարժվել և փոխանակ Շտուտգարտ գնալու, շարժվեց դեպի Վուննենշտայն, Բոտտվարի մոտ, որտեղ նա կազմելով գյուղացիների և քաղաքացիների բանակի կորիզը, սկսեց արագորեն աճել: Այդ միևնույն օրն ապստամբություն ծագեց Ցաբերգաույում: Մաուլբրոննի վանքը կողոպտվեց, իսկ մի շարք վանքեր ու դղյակներ լիովին ավերվեցին: Հարևան Բրուխռայնից գյուղացիներն օգնական ուժեր ստացան:

Վուննենշտայնի զորախմբին գլուխ անցավ Մատերն Ֆոյերբախերը, որը Բոտտվարի խորհրդի անդամ էր և բյուրգերական օպոզիցիայի առաջնորդներից մեկը, սակայն նա այնքան վարկաբեկված էր, որ ստիպված էր գյուղացիներին միանալ: Բայց և այնպես նա միշտ էլ շատ չափավոր հայացքների տեր մնաց, արգելք էր հանդիսանում «Բռնահափշտակային նամակի» պահանջները դղյակների նկատմամբ գործադրելուն և աշխատում էր ամեն տեղ գյուղացիների և չափավոր բյուրգերների միջև համաձայնություն կայացնել: Նա խանգարեց վյուրտեմբերգցիներին Լուսավոր զորախմբին միանալ, իսկ հետագայում հայլդորֆցիներին էլ համոզեց հեռանալ Վյուրտեմբերգից: Իր բյուրգերական հակումների պատճառով դեռ ապրիլի 19-ին նա պաշտոնանկ յեղավ, բայց հենց դրա հաջորդ օրը նա վերստին հրամանատար նշանակվեց: Նա անհրաժեշտ մարդ էր, և նույնիսկ Յեկլայն Ռորբախին, երբ վերջինս իր 200 կորիճներով ամսի 22-ին Վյուրտեմբերգ յեկավ, ոչինչ չէր մնում անելու, քան Ֆոյերբախերին թողնել իր պաշտոնի մեջ՝ սահմանափակվելով նրա վրա ուշադիր հսկողությամբ:

Ապրիլի 18-ին կառավարությունը փորձեց բանակցությունների մեջ մտնել Վուննենշտայնում բանակ դրած գյուղացիների հետ: Գյուղացիները պնդում էին, որ կառավարությունն ընդունի տասներկու թեզիսները, որ կառավարության լիազորները բնականաբար չէին կարող անել: Այն ժամանակ զորախումբն առաջ շարժվեց: Ամսի 20-ին զորախումբն արդեն Լաուֆենում էր, որտեղ կառավարության պատգամավորները վերջին անգամ ներկայացան նրան, բայց մերժում ստացան: Ամսի 22-ին զորախումբն իր 6000 մարդկանցով Բիտիգհայմում էր և այդտեղից Շտուտգարտին էր սպառնում: Շտուտգարտի խորհրդի անդամների մեծ մասը փախել էր, իսկ քաղաքային վարչության ղեկավարությունը հանձնվել էր քաղաքացիներից ընտրված հանձնաժողովին: Ինչպես ամեն տեղ, այստեղ էլ միևնույն կուսակցությունները կային՝ պատրիկներ, բյուրգերական օպոզիցիա և հեղափոխական պլեբեյներ: Վերջիններս ապրիլի 25-ին բացեցին քաղաքի դռները գյուղացիների առաջ, և Շտուտգարտն անմիջապես գրավվեց: Այստեղ վերջնականապես կազմակերպվեց Քրիստոնեական Լուսավոր զորախումբ, ինչպես այժմ իրենց անվանում էին վյուրտեմբերգյան ապստամբները, և հաստատուն կերպով կարգավորվեցին վարձատրության, ավարի բաշխման և մատակարարման հարցերը: Շտուտգարտցիներից կազմված

մի փոքր զորախումբ Թեուս Գերբերի առաջնորդությամբ միացավ գյուղացիների հետ:

Ապրիլի 29-ին Ֆոյերբախերն ամբողջ բանակը շարժեց Հայլդորֆցիների դեմ, վորոնք Շորնդորֆի մոտ նորից եյին խուժել Վյուրտեմբերգյան յերկրամասը, այդ ամբողջ շրջանը մխության մեջ մացրեց և դրանով իսկ հարկադրեց Հայլդորֆցիներին հետ նահանջել: Այսպիսով նա չթողեց, վոր իր բանակի հեղափոխական տարրերը, վորոնց գլուխ Ռորբախն եր կանգնած, ուժեղանան, վոր անխուսափելի կլիներ, յեթե խառնվեյին վոչ մի բանի առաջ կանգ չառնող Հայլդորֆցիների հետ: Լուր ստանալով Տրուխզեսի մերձենալու մասին, Շորնդորֆից նա շարժվեց Տրուխզեսի դեմ և մայիսի 1-ին բանակ դրեց Կիրխհայմի մոտ Տեկկի տակ:

Այսպիսով մենք նկարագրեցինք ապստամբության ծագումն ու զարգացումը Գերմանիայի այն մասում, վորը պիտի դիտենք վորպես գյուղացիական զորասյուների առաջին խմբի գործունեյության դաշտը: Նախքան մյուս խմբերին (Թյուրինգիայի և Հեսսենի, Ելզասի, Ավստրիայի և Ալպերի) անցնելը, մենք պիտի տանք Տրուխզեսի զորարշավի պատմությունը, վորի ընթացքում նա վոչնչացրեց ապստամբների այդ առաջին խումբը՝ սկզբում միմիայն իր սեփական ուժերով, իսկ ապա արդեն զանազան իշխանների և քաղաքների ոգնությամբ:

Տրուխզեսին մենք թողինք Ուլմի մոտ, վորի վրա նա արշավեց մարտի վերջին, թողնելով Կիրխհայմի մոտ, Տեկկի տակ, դիտող բանակ Դիտրիխ Շպետի գլխավորությամբ: Տրուխզեսի զորաբանակը, վորը Ուլմում կենտրոնացած դաշնակից ուժերի ներառումից հետո մոտ 10·000 հոգու յեր հասնում, վորոնցից 7200 հոգի հետևազորի մեջ եյին մտնում, միակ բանակն եր, վորը կարելի յեր ոգտագործել՝ գյուղացիների դեմ հարձակողական պատերազմ վարելու համար: Ոգնական ուժերը չափազանց դանդաղորեն եյին կենտրոնանում Ուլմում, մասամբ այն պատճառով, վոր ապստամբությամբ բռնված յերկրամասերում դժվար եր զորահավաք կատարել, մասամբ՝ կառավարությունները դրամական նեղության մեջ եյին և մասամբ ել՝ այս և այլ վայրերում գտնվող սակավաթիվ զորամասերն ավելի քան անհրաժեշտ եյին քաղաքներն ու ամրոցները պաշտպանելու համար: Մենք արդեն տեսանք, թե վորքան սակավաթիվ եյին իշխանների և քաղաքների տրամադրության տակ յեղած այն զորքերը, վորոնք շվաբական միությանը չեյին պատկանում: Հետևապես,

ամեն ինչ կախված եր Գեորգ Տրուխզեսից և նրա դաշնակից բանակի հաջողություններից:

Տրուխզեսը նախ շարժվեց բալտրինգենյան զորախմբի դեմ, վորն այդ ժամանակ Ռիդլի շրջակայքում արդեն սկսել եր դղյակների և վանքերի ավերածությունը: Հենց վոր դաշնակից զորամասերը Ռիդլին մոտեցան, գյուղացիները նահանջեցին դեպի ճահիճները, սակայն շուրջանցով դուրս մղվեցին ճահիճներից, վորից հետո անցան Դանուբը և ապաստանեցին Շվաբական Ալպերի կիրճերում և անտառներում: Տրուխզեսն այլևս նրանց չհետապնդեց, քանի վոր դաշնակից զորաբանակի գլխավոր ուժը հանդիսացող հեծելազորն ու հրետանին այստեղ արդեն անզոր եյին վորևե բան անելու: Տրուխզեսը շարժվեց լայպհայմցիների դեմ, վորոնցից 5000 հոգի Լայպհայմի մոտ եյին գտնվում, 4000 հոգի, Մինդելտալում և 6000 հոգի Իլլերտիսսենում, ամբողջ շրջանն ապստամբեցրել եյին, վանքերն ու դղյակներն ավերել և պատրաստվում եյին՝ բոլոր յերեք զորասյուներով Ուլմի դեմ արշավել: Ինչպես յերևում ե, այստեղ ևս գյուղացիների մեջ արդեն վորոշ քայքայում եր առաջացել և զորաբանակի ռազմական մարտունակությունը խախտվել եր, վորովհետև առաջուց արդեն Յակոբ Վեհեն փորձում եր բանակցություններ սկսել Տրուխզեսի հետ: Սակայն վերջինս իր տրամադրության տակ բավականաչափ զորամասեր ունենալով, հրաժարվեց բանակցություններից և ապրիլի 4-ին Լայպհայմի մոտ հարձակվեց զորախմբի հիմնական կորիզի վրա ու գլխովին ջարդեց նրան: Յակոբ Վեհեն և Ուլրիխ Շյոնը, ինչպես նաև գյուղացիական յերկու այլ առաջնորդներ, գերի ընկան և գլխատվեցին: Լայպհայմն անձնատուր յեղավ, և դեպի շրջակայքը կատարված մի քանի արշավանքների միջոցով ամբողջ շրջանը նվաճվեց:

Լանդսկնեխտների նոր խռովությունը, վորի առիթը կողոպուտով գրավվելու հատուցումից բարձր ռոճիկ ստանալու ձգտումն եր, մինչև ապրիլի 10-ը Տրուխզեսին դարձյալ հետ պահեց: Այնուհետև նա արշավեց դեպի հարավ-արևմուտք՝ բալտրինգենցիների դեմ, վորոնք այդ ժամանակ հարձակվել եյին նրա սեփական հողերի Վալդբուրգի, Ցայլի և Վոլֆեգի վրա և նրա դղյակները պաշարել: Այստեղ ևս գյուղացիների խմբերն անջատ ու ցրված եյին, և նա ջարդեց դրանց ապրիլի 11-ին և 12-ին՝ մեկը մյուսին հաջորդող առանձին մարտերում, վորոնց հետևանքով բալտրինգենցիների զորախումբն ել բոլորովին ցրվեց: Դրա մնացորդները Ֆլորիան քահանայի առաջնորդությամբ

նահանջեցին և միացան Լճամերձ զորախմբին: Այժմ արդեն Տրուխզեսը վերջիններիս դեմ արշավեց: Լճամերձ զորախումբը, վորն այդ ժամանակամիջոցում վոչ միայն մի շարք արշավանքներ էր կատարել, այլև Բուխհորն (Ֆրիդրիխսհաֆեն) և Վոլֆատինգեն քաղաքներին ստիպել էր չեզոքության մեջ մնալ, ապրիլի 13-ին Սալեմ վանքում պատերազմական մեծ խորհուրդ գումարեց, վորը վորոշեց Տրուխզեսին դիմադրություն ցույց տալ: Անմիջապես ամեն տեղ ահազանգ հնչեցրին, և Բերմատինգենի բանակատեղում 10.000 մարդ հավաքվեց, վորոնց միացան նաև պարտված բալտրինգենցիները: Ապրիլի 15-ին նրանք հաջող ճակատամարտ ունեցան Տրուխզեսի հետ, վորը չէր ցանկանում այստեղ վճռական կռվի մեջ վտանգի յենթարկել իր բանակը, այլ գերադասում էր բանակցությունների մեջ մտնել, մանավանդ վոր տեղեկացել էր ալգաուցիների և հեգաուցիների զորամասերի մոտալուտ գալստի մասին: Այսպիսով լճամերձ և բալտրինգենցի գյուղացիների հետ ապրիլի 17-ին Վայնգարտենում նա մի դաշնագիր կնքեց, վորը գյուղացիների համար առերևույթ բավական նպաստավոր էր և վորը գյուղացիներն ընդունեցին առանց վորևէ տարակուսանքի: Այնուհետև նա նույնիսկ հաջողեցրեց, վոր այդ պայմանագիրը վերին ու ներքին ալգաուցիների պատգամավորներն էլ ընդունեցին, վորից հետո նա դեպի Վյուրտեմբերգ հետ քաշվեց:

Այստեղ Տրուխզեսի խորամանկությունը փրկեց նրան անխուսափելի կործանումից: Յեթե նա չկարողանար հիմարացնել թույլ, սահմանափակ և մեծ մասամբ արդեն բարոյալքված գյուղացիներին, ինչպես և վերջիններիս՝ բան մեծի մասին անընդունակ, յերկչոտ և կաշառվող առաջնորդներին, ապա իր փոքրիկ բանակի հետ միասին նա կշրջապատվեր չորս զորասյուներով, վորոնք բաղկացած էին առնվազն 25—30 հազար հոգուց, և անպայման կջախջախվեր: Սակայն նրա թշնամիների, գյուղացիական մասսաների, միշտ էլ անխուսափելի սահմանափակությունը նրան հնարավորություն տվեց ազատվել այդ մասսաներից հենց այն մոմենտին, յերբ սրանք սոսկ մի հարվածով կարող էին վերջ դնել ամբողջ պատերազմին, գեթ Շվաբիայում և Ֆրանկոնիայում: Բնականաբար այդ դաշնագրով լճամերձ գյուղացիները վերջիվերջո խաբվեցին, բայց սրանք այնպիսի ճշտությամբ էին պահպանում դաշնագիրը, վոր հետագայում զենք բարձրացրին իրենց սեփական դաշնակիցների, հեգաուցի-

ների վրա. իրենց առաջնորդների շնորհիվ դավաճանության ծուղակն ընկած ալգաուցիները թեև անմիջապես հրաժարվեցին դաշնագրից, բայց և այնպես այդ ժամանակամիջոցում Տրուխզեսին հաջողվեց փրկվել վտանգից:

Թեև Վայնգարտենի դաշնագրին հեգաուցիները չմասնակցեցին, բայց դրանից անմիջապես հետո նրանք տվեցին՝ տեղական շահերով սահմանափակված ամենաանձուկ հորիզոնի և համառ պրովինցիալիզմի մի այնպիսի ապացույց, վորը հիմնովին խորտակեց գյուղացիական պատերազմը: Յերբ Տրուխզեսը նրանց հետ ապարդյուն բանակցություններ վարելուց հետո դեպի Վյուրտեմբերգ հետ քաշվեց, հեգաուցիները շարժվեցին նրա հետևից, միշտ էլ նրա թևերում մնալով, սակայն նրանց մտքով անգամ չանցավ, վոր միանան Վյուրտեմբերգի Քրիստոնեական Լուսավոր զորախմբի հետ, այդ էլ այն պատճառով, վոր վյուրտեմբերգցիներն ու նեկկարցիները մի անգամ հրաժարվել էին նրանց օգնության գալու: Այդ պատճառով էլ յերբ Տրուխզեսը բավական հեռացավ նրանց հայրենիքից, նրանք ամենայն հանգստությամբ կրկին հետ դարձան և արշավեցին Ֆրայբուրգի վրա:

Մատերն Ֆոյերբախերի հրամանատարության տակ գտնվող վյուրտեմբերգցիներին մենք թողինք Կիրխհայմում, Տեկկի մոտ, վորտեղից Տրուխզեսի թողած դիտող բանակը Դիտրիխ Շպետի առաջնորդությամբ նահանջեց դեպի Ուրախ: Դա գրավելու ապարդյուն փորձից հետո Ֆոյերբախերը շարժվեց դեպի Նյուրտինգեն և նամակներով դիմեց բոլոր հարևան ապստամբ զորախմբերին, խնդրելով օգնության գալ՝ վճռական ճակատամարտ տալու համար: Յեվ իրոք, զգալի չափով օժանդակ ուժեր յեկան ինչպես Վյուրտեմբերգի հարթավայրից, այնպես և Գոյից: Գոյի գյուղացիները, վորոնք հարել էին՝ մինչև արևմտյան Վյուրտեմբերգ նահանջած լայպհայմցիների մնացորդներին և վերին Նեկկարի ու Նագոլդի հովիտներում ընդհուպ մինչև Բյոբլինգեն և Լեոնբերգ ապստամբություն էին առաջացրել, յերկու ուժեղ զորախմբերով առաջ խաղացին և մայիսի 5-ին Նյուրտինգենում միացան Ֆոյերբախերի հետ: Բյոբլինգենի մոտ Տրուխզեսն ընդհարվեց միացյալ զորախմբերի հետ: Այդ խմբերի քանակը, նրանց հրետանին, նրանց դիրքը շփոթեցրեց Տրուխզեսին. գործողությունների իր սովորական մեթոդի համաձայն նա անմիջապես բանակցություններ սկսեց և գյուղացիների հետ զինադա-

դար կնքեց: Այս միջոցներով գյուղացիների զգոնությունը թմրեցնելով, մայիսի 12-ին, զինադադարի ժամանակ, նա հանկարծ հարձակվեց գյուղացիների վրա և ստիպեց նրանց վճռական ճակատամարտ ընդունել: Գյուղացիները յերկար դիմացան և քաջարի դիմադրություն ցույց տվին, մինչև վոր, վերջապես, բյուրգերների դավաճանության հետևանքով Բյոբլինգենը հանձնվեց Տրուխզեսին: Գյուղացիների ձախ թևը զրկվելով իր հենակետից, ճզմվեց, և թշնամին նրա թիկունքն անցավ: Սրանով էլ ճակատամարտի բախտը վորոշվեց: Կարգապահության անսովոր գյուղացիները շփոթության մեջ ընկան և շուտով վայրի փախուստի դիմեցին: Նրանք, վորոնց դաշնակիցների հեծելազորը չկոտորեց կամ գերի չվերցրեց, մի կողմը նետելով զենքերը՝ հեւ-հեւ իրենց տները փախան: Քրիստոնեական Լուսավոր զորախումբը բոլորովին ցրիվ յեկավ, և դրա հետ միասին վյուրտեմբերգյան վողջ ապստամբությունը ճնշվեց: Թեուս Գերբերը ճողոպրեց Եսլինգեն, Ֆոյերբախերը փախավ Շվեյցարիա, իսկ Յեկլայն Ռորբախը գերի վերցվեց, շղթայվեց և տարվեց Նեկկարգարտախ: Այստեղ Տրուխզեսի կարգադրությամբ նրան ձողի կապեցին և շուրջը փայտեր դարսելով՝ դանդաղ կրակով վողջ-վողջ խորովեցին: Այս գործողության ընթացքում ինքը Տրուխզեսն իր ասպետների հետ միասին խրախճանքի նստած զմայլվում եր այս ասպետական տեսարանով:

Նեկկարգարտախից Տրուխզեսը ներխուժելով Կրայխգաու, աջակցեց Պֆալցի կուրֆյուրստի ձեռնարկած գործողություններին: Վերջինս, վորը մինչ այդ կարողացել եր զորքեր հավաքել, տեղեկանալով Տրուխզեսի ունեցած հաջողությունների մասին՝ իսկույն խախտեց գյուղացիների հետ կնքած դաշնագիրը, մայիսի 23-ին հարձակում գործեց Բրուխռայնի վրա, կատաղի դիմադրությունից հետո վերցրեց և այրեց Մալշը, կողոպտեց մի շարք գյուղեր և գրավեց Բրուխզալը: Այդ միևնույն ժամանակ Տրուխզեսը գրավեց Եպպինգենը և գերի վերցրեց շարժման տեղական առաջնորդին՝ Անտոն Այզենհուտին, վորը տասներկու գյուղացիական այլ առաջնորդների հետ միասին կուրֆյուրստի կարգադրությամբ անմիջապես մահվան յենթարկվեց: Այսպիսով Բրուխռայնն ու Կրայխգաուն ստիպված եյին հնազանդվել և 40·000 գուլդեն պատերազմական տուգանք վճարել: Այս յերկու բանակները,—Տրուխզեսի բանակը, վորը մինչայժմյան մարտերի հետևանքով նվազելով հասել եր 6000 հոգու, և կուրֆյուրս-

տի բանակը (6500 հոգի)—այժմ արդեն միացան և արշավեցին ոդենվալդցիների դեմ:

Բյոբլինգենում կրած պարտության լուրն ամենուրեք սարսափ եր տարածել ապստամբների շրջանում: Գյուղացիների ծանր ձեռքի տակ ընկած կայսերական ազատ քաղաքները հանկարծ կրկին ազատ շունչ քաշեցին: Հայլբրոնն առաջինն եր, վորը Շվաբական միության հետ հաշտվելու քայլեր ձեռնարկեց: Հայլբրոննում եյին գտնվում գյուղացիական դիվանը և զանազան զորախմբերի ներկայացուցիչները, վորպեսզի քննարկեն այն առաջարկները, վորոնք բոլոր ապստամբ գյուղացիների անունից պիտի առաջադրվեյին կայսրին և կայսրությանը: Այս խորհրդակցությունները, վորոնք ընդհանուր, համայն Գերմանիայի համար ուժ ունեցող նշանակություն պիտի ունենային, նորից ցույց տվին, վոր վոչ մի դաս, այս թվում նաև գյուղացիական դասը, բավականաչափ դեռ չեր զարգացել, վորպեսզի կարողանար իր տեսակետից ձևափոխել գերմանական բոլոր կարգերը: Անմիջապես պարզվեց, վոր այդ նպատակի համար անհրաժեշտ է գրավել ազնվականությանը և մանավանդ քաղաքացիներին: Դրա շնորհիվ էլ այս հարցերի քննարկման ղեկավար դերն անցավ Վենդել Հիպլերի ձեռքը: Շարժման բոլոր առաջնորդներից Հիպլերն ամենից ճիշտ եր ըմբռնում իրադրությունը: Նա այնպիսի լայն հայացքների տեր հեղափոխական չեր, ինչպես Մյունցերը, կամ գյուղացիների այնպիսի ներկայացուցիչ չեր, ինչպես Մեցլերը կամ Ռորբախը: Նրա բազմակողմանի փորձառությունը, ինչպես և այն հանգամանքը, վոր գործնականապես նա ծանոթ եր առանձին դասերի դիրքին և փոխհարաբերություններին, նրան թույլ չեյին տալիս շարժմանը մասնակցող դասերից բացառապես մեկի ներկայացուցիչը լինել: Ինչպես Մյունցերը, վորպես պրոլետարիատի սաղմնավորումների ներկայացուցիչ,—դասակարգ, վորը բնավ չեր մտնում այդ ժամանակ գոյություն ունեցող հասարակության պաշտոնական միության մեջ,—հասավ կոմունիզմի նախազգացումին, ճիշտ այդպես էլ Վենդել Հիպլերը, ազգի բոլոր առաջադեմ տարրերի այսպես ասած միջին հավասարազորի ներկայացուցիչը, հասավ ժամանակակից բուրժուական հասարակության նախազգացումին: Թեև նրա պաշտպանած սկզբունքների և նրա առաջադրած պահանջների կենսագործումն անմիջականորեն հնարավոր չեր, բայց և այնպես այդ սկզբունքներն ու պահանջները ֆեոդալական հասարակության

քայքայման պրոցեսի վորոշ չափով իդեալականացրած անհրաժեշտ արդյունքն եյին ներկայացնում: Գյուղացիները պիտի հանդեյին այդ հայացքներին, վորքան վոր նրանք ձեռնամուխ եյին յեղել ամբողջ կայսրության համար որենքներ մշակելու գործին: Այսպիսով գյուղացիների պահանջած կենտրոնացումն այստեղ Հայլբրոննում ավելի դրական ձև ստացավ, սակայն այս ձևն անսահմանորեն տարբերվում եր այն պատկերացումից, վոր գյուղացիներն ունեյին այդ մասին: Այսպես, որինակ, դա ավելի պարզորոշ արտահայտություն ստացավ միասնական դրամ, չափ ու կշիռ ստեղծելու, ներքին մաքսերը վերացնելու և այլ պահանջների մեջ, վորոնք ավելի շուտ քաղաքացիների շահերին եյին համապատասխանում, քան՝ գյուղացիների: Որինակ, ազնվականության այնպիսի զիջումներ արվեցին, վորոնք զգալի չափով մերձենում են ժամանակակից փրկագնմանը և վորոնք վերջիվերջո ֆեոդալական հողատիրությունը բուրժուական հողատիրության փոխարկելուն են հանգում: Մի խոսքով, հենց վոր գյուղացիների պահանջները հանգեցին «կայսերական ռեֆորմին», դրանք պիտի յենթարկվեյին վոչ թե ընթացիկ պահանջներին, այլ բյուրգերների վերջնական շահերին:

Մինչդեռ Հայլբրոննում քննարկվում եր կայսերական այս ռեֆորմը, Հանս Բեռլինը, «Տասներկու թեզիսների դեկլարացիայի» հեղինակը, արդեն ընդառաջեց Տրուխզեսսին, վորպեսզի պատրիկության և բյուրգերության անունից բանակցություններ վարի քաղաքը հանձնելու մասին: Քաղաքում ծայր առած ռեակցիոն շարժումներն ուժ եյին ներշնչում այս դավաճանությանը, և Վենդել Հիպլերը հարկադրված եր փախուստի դիմել գյուղացիների հետ միասին: Նա մեկնեց Վայնսբերգ, վորտեղ փորձեց համախմբել վյուրտեմբերգցիների մնացորդները և հայլբրոնցիների սակավաթիվ զինված ուժերը: Սակայն Պֆալցի կուրֆյուրստի և Տրուխզեսսի մոտենալու հետևանքով նա ստիպված եր այստեղից ևս փախչել և Վյուրցբուրգ գնալ, վորպեսզի Լուսավոր զորախմբի ուժերը շարժման մեջ դնի: Այդ ժամանակամիջոցում դաշնակիցների և կուրֆյուրստի զորքերը նվաճեցին Նեկկարի ամբողջ շրջանը, ստիպեցին գյուղացիներին նորից հավատարմության յերդում տալ, բազմաթիվ գյուղեր հրդեհեցին, սրախողխող արին կամ կախեցին իրենց ձեռքն ընկած բոլոր փախստական գյուղացիներին: Հելֆենշտայնի սպանության վրեժը լուծելու համար Վայնսբերգը հիմնովին կրակի մատնվեց:

Մինչ այդ Վյուրցբուրգի մոտ միացած գյուղացիական զո–

րախմբերը պաշարեցին Ֆրաունենբերգը և մայիսի 15-ին, դեռ քաղաքի պարիսպը ճեղքելուց առաջ, ամրոցը գրոհով գրավելու մի հերոսական, բայց անհաջող փորձ արին: Մեծ մասամբ Ֆլորիան Գեյերի զումարտակին պատկանող 400 լավագույն մարտիկները մնացել եյին խրամատներում՝ սպանված կամ վիրավոր: Յերկու որ անց, մայիսի 17-ին, այդտեղ ժամանեց Վենդել Հիպլերը և կարգադրեց ռազմական խորհուրդ գումարել: Նա առաջարկեց Ֆրաունենբերգի մոտ թողնել միմիայն 4000 հոգի, իսկ ամբողջ գլխավոր ուժերով, վորոնց թիվը 20 հազարի յեր հասնում, բանակ դնել Տրուխզեսսի աչքերի առաջ՝ Կրաուտհայմի մերձակայքում Յաքստի ափին, վորտեղ կարելի լիներ կենտրոնացնել բոլոր ոգնական ուժերը: Ծրագիրը հրաշալի յեր. միմիայն համախմբելով մասսաները և թվական գերակշռություն ունենալով, կարելի յեր իշխանական զորքերը ջարդելու հույս ունենալ, վորոնց թիվն այժմ հասնում եր 13·000 հոգու: Սակայն բարոյալքումը և վհատությունը գյուղացիների մեջ այնպիսի խոշոր չափի յեր հասել, վոր այլևս անկարելի յեր վորևե վճռական գործողություն ձեռնարկել: Նաև Գյոց ֆոն-Բեռլիխինգենը, վորը քիչ հետո բացեիբաց հրապարակ յեկավ վորպես դավաճան, թերևս նպաստած լիներ, վոր զորախումբն իր տեղից չշարժվի: Այսպիսով Հիպլերի ծրագիրը յերբեք չիրագործվեց: Սրա փոխարեն զորախմբերն առաջվա նման մանրատված մնացին: Լուսավոր բանակը շարժվեց միմիայն մայիսի 23-ին, յերբ ֆրանկոնցիները խոստացան շուտով նրանց հետևել: Ամսի 26-ին այն լուրը, թե մարկգրաֆը թշնամական գործողություններ է սկսել գյուղացիների դեմ, ստիպեց տուն վերադառնալ Վյուրցբուրգում բանակ դրած անշպախյան զորախումբը: Պաշարող բանակի մնացորդը Ֆլորիան Գեյերի Սև զումարտակի հետ միասին դիրք բռնեց Վյուրցբուրգից վոչ հեռու՝ Հայդինգսֆելդի մոտ:

Լուսավոր զորախումբը Կրաուտհայմ ժամանեց մայիսի 24-ին թույլ ռազմունակությամբ: Շատերն այստեղ լսելով, վոր իրենց գյուղերը մինչ այդ արդեն յերդում են տվել Տրուխզեսսին, այս պատրվակով իրենց տները ցրվեցին: Զորախումբն առաջ շարժվեց դեպի Նեկկարսուլմ և մայիսի 28-ին բանակցությունների մեջ մտավ Տրուխզեսսի հետ: Միաժամանակ սուրհանդակներ ուղարկվեցին ֆրանկոնցիների, էլզասցիների և շվարցվալդ-հեգաուցիների մոտ, վորպեսզի շուտափույթ կարգով ոգ–

նական ուժեր ուղարկեն: Նեկկարսուլմից Գյոցը հետ դարձավ դեպի Երլինգեն: Զորախումբն օրեցօր հալվում էր. այս տեղաշարժման ժամանակ չքացավ նաև ինքը՝ Գյոց ֆոն-Բեռլիխինգենը. նա տուն վերադարձավ, քանի վոր դեռ դրանից առաջ իր հին զինակից Դիտրիխ Շպետի միջոցով նա արդեն բանակցել էր Տրուխզեսսի հետ՝ վերջինիս կողմն անցնելու վերաբերմամբ: Թշնամու վերահաս մերձեցման մասին տարածված կեղծ լուրերի հետևանքով Երլինգենում սարսափ տիրեց անողնական և հուսաբեկ մասսայի վրա. զորախումբը ցրվում էր անկարգ ու խառնաշփոթ ձևով, և Մեցլերին ու Վենդել Հիպլերին մեծ դժվարությամբ հաջողվեց միմիայն 2000 մարդ համախմբել և կրկին դեպի Կրաուտհայմ տանել: Այդ ժամանակամիջոցում յեկավ ֆրանկոնյան յերկրապահ զորքերի խումբը՝ թվով 5000 հոգի, բայց, ինչպես յերևում է, դավաճանական գլխավորությամբ Գյոցի տված ցուցմունքների համաձայն նրանք անցան շուրջանակի ճանապարհով՝ Լյովենշտայնի վրայով դեպի Երլինգեն և առանց հանդիպելու Լուսավոր զորախմբին՝ շարժվեցին դեպի Նեկկարսուլմ: Այս փոքրիկ քաղաքը, վորը գրավված էր Լուսավոր զորախմբի միքանի ջոկատներով, պաշարվել էր Տրուխզեսսի կողմից: Ֆրանկոնցիները գիշերվա պահին այդտեղ հասնելով նկատեցին դաշնակիցների բանակի կրակները, բայց դրանց առաջնորդները քաջություն չունեցան հարձակում գործելու և հետ նահանջեցին դեպի Կրաուտհայմ, վորտեղ վերջապես նրանք գտան Լուսավոր զորախմբի մնացորդները: Նեկկարսուլմն օգնություն չստանալով, ստիպված յեղավ մայիսի 29-ին անձնատուր լինել դաշնակիցների զորքերին: Տրուխզեսսը կարգադրեց անմիջապես տասներեք գյուղացիների գլխատել և այնուհետև հրով ու սրով, ավերածությամբ ու կոտորածով նա առաջ շարժվեց դեպի Լուսավոր զորախումբը: Նեկկարի, Կոխերի և Յագստի հովիտներում նրա անցած ուղին ցույց եյին տալիս մոխիր դարձած շեները և ծառերից կախված գյուղացիները:

Կրաուտհայմի մոտ դաշնակիցների զորքերը բախվեցին գյուղացիների հետ, վորոնք Տրուխզեսսի ֆլանգային շարժման հետևանքով հարկադրված եյին նահանջել դեպի Կյոնիգսհոֆեն, Տաուբերի ափին: Գյուղացիներն այստեղ դիրք բռնեցին, ունենալով 8000 հոգի և 32 թնդանոթ: Տրուխզեսսը բլուրների և անտառների հետևով մոտեցավ գյուղացիների ուժերին, միքանի զորասյուներ ուղարկեց նրանց թիկունքը և հունիսի 2-ին հար-

ձակվեց այնպիսի թվական գերակշռությամբ և այնպիսի յեռանդով, վոր չնայած գյուղացիների համառ կռվին և նրանց միքանի զորասյուների կողմից մինչև գիշերը ցույց տված ամենակատաղի դիմադրությանը, գյուղացիները կատարելապես ջարդվեցին և ցրվեցին: Ինչպես միշտ, այնպես և այժմ ապստամբների զորքերի ջախջախման գործում գլխավոր դեր կատարեց դաշնակիցների հեծելազորը, «գյուղացիների մահը», վորը հարձակվելով՝ հրետանու, հրացանների կրակի և նիզակակռվի հարվածներից քայքայված գյուղացիների վրա, վերջիններիս լիովին ցրում էր և առանձին-առանձին վոչնչացնում: Թե ինչ յեղանակով էր կռվում Տրուխզեսսը և նրա հեծելազորը, դա ցույց է տալիս՝ գյուղացիական զորքի մեջ յեղած Կյոնիգսհոֆենի 300 քաղաքացիներին վիճակված բախտը: Ճակատամարտի ընթացքում նրանք բոլորը սրախողխող արվեցին, բացի տասնհինգ հոգուց, իսկ այնուհետև դրանցից էլ չորսին գլխատեցին:

Օդենվալդցիների, նեկկարցիների և ներքին-ֆրանկոնցիների հետ այսպիսով գործը վերջացնելուց հետո Տրուխզեսսը մի շարք ասպատակություններ կատարելով, ամբողջ գյուղեր այրելով և անթիվ-անհամար գյուղացիների մահվան յենթարկելով՝ նվաճեց ամբողջ շրջակայքը և այնուհետև արշավեց Վյուրցբուրգի վրա: Ճանապարհին տեղեկանալով, վոր ֆրանկոնյան յերկրորդ զորախումբը Ֆլորիան Գեյերի և Գրեգոր ֆոն-Բուրգ-Բերնհայմի հրամանատարությամբ կանգնած է Զուլցդորֆի մոտ, նա անմիջապես շարժվեց այդ զորախմբի դեմ:

Ֆլորիան Գեյերը Ֆրաուենբերգի վրա կատարած անհաջող գրոհից հետո գլխավորապես բանակցություններ էր վարում իշխանների և քաղաքների, մանավանդ Ռոտենբուրգ քաղաքի և Անշպախի մարկգրաֆ Կազիմիրի հետ, վորպեսզի դրանց մտցնի գյուղացիական յեղբայրության մեջ: Լուր առնելով Կյոնիգսհոֆենի մոտ կրած պարտության մասին, նա հանկարծակի հեռացավ: Նրա զորախմբին միացավ նոր հենց կազմված անշպախյան զորախումբը Գրեգոր ֆոն-Բուրգ-Բերնհայմի հրամանատարությամբ: Զուտ հոհենցոլլերնյան յեղանակով,—մասամբ խոստումների միջոցով, մասամբ էլ զինվորական ուժով սպառնալով,—մարկգրաֆ Կազիմիրը կարողացել էր կասեցնել գյուղացիական ապստամբությունն իր յերկրի սահմաններում: Նա կատարյալ չեզոքություն էր պահպանում բոլոր օտար զորախմբերի հանդեպ, քանի դեռ վերջիններս Անշպախի հպատակներին իրենց կողմը չեյին գրավում: Գյուղացիների ատելությունը նա

աշխատում եր հոգևոր հաստատությունների դեմ ուղղել՝ հույս ունենալով վերջիններիս գույքերի բռնագրավման շնորհիվ հարստանալ, ընդվորում նա շարունակ սպառնալիքով եր և սպասում դեպքերի ընթացքին: Բյոբլինգենի մոտ տեղի ունեցած ճակատամարտի լուրը հասնելուն պես նա թշնամական գործողություններ սկսեց իր ըմբոստ գյուղացիների դեմ, ավարի ու կրակի մատնեց նրանց գյուղերը և նրանցից շատերին հրամայեց կախել ու կոտորել: Սակայն գյուղացիներն արագորեն ի մի խմբվեցին և Գրեգոր ֆոն-Բուրգ-Բերնսհայմի ղեկավարությամբ մայիսի 29-ին ջարդեցին նրան Վինդսհայմի մոտ: Գյուղացիները դեռ նրան հալածում եյին, յերբ ծանր կացության մեջ ընկած ոդենվալդցիների կոչն ստանալով՝ նրանք անմիջապես ուղղվեցին դեպի Հայդինգսֆելդ և այդտեղից Ֆլորիան Գեյերի հետ միասին կրկին շարժվեցին դեպի Վյուրցբուրգ (հունիսի 2-ին): Ոդենվալդցիներից լուր չունենալով, այստեղ նրանք թողեցին 5000 հոգի և 4000 մարդկանցով,—մնացածները ցրվել եյին,—հետևեցին մյուսներին: Կյոնիգսհոֆենի մոտ տեղի ունեցած ճակատամարտի յելքի մասին նրանց հասած կեղծ լուրերի հիման վրա իրենց հանգիստ և ապահով զգալով՝ Զուլցդորֆի մոտ հանկարծ նրանք հարձակման յենթարկվեցին Տրուխզեսի կողմից և գլխովին ջարդվեցին: Տրուխզեսի ձիավորներն ու լանդսկնեխտներն ըստ սովորականի սոսկալի արյան բաղնիք սարքեցին: Ֆլորիան Գեյերը հավաքեց իր Սև գումարտակի մնացորդը,—ընդամենը 600 հոգի,—և ճեղքելով թշնամու շղթան, անցավ դեպի Ինգոլշտադտ գյուղը: 200 հոգին գրավեցին յեկեղեցին և գերեզմանատունը, իսկ 400 հոգին—դղյակը: Պֆալցի զինվորները հետամտեցին նրանց, և 1200 հոգուց բաղկացած զորասյունը վերցնելով գյուղը՝ հրդեհեց յեկեղեցին. Նրանք, ովքեր բոցերին զոհ չգնացին, սրախողխող յեղան: Այնուհետև Պֆալցի զորամասերը թնդանոթներով ճեղքեցին դղյակի խարխուլ պարիսպները և փորձեցին գրոհով վերցնել այն: Ներքին պարսպի հետևը թաքնված գյուղացիները յերկու անգամ հետ մղեցին հարձակվողներին, բայց վերջիններս թնդանոթների ռումբերով տապալեցին նաև այս յերկրորդ պարիսպը, վորից հետո նրանց յերրորդ գրոհը հաջողությամբ պսակվեց: Ֆլորիան Գեյերի մարդկանց կեսը սրախողխող յեղավ, իսկ վերջին յերկու հարյուր հոգու հետ միասին նրան հաջողվեց ազատվել: Բայց հենց հաջորդ օրը (հոգեգալստի յերկուշաբթի օրը) նրա ապաստանած վայրը

հայտարարվեց. Պֆալցի զորամասերը շրջապատելով այն անտառը, վորտեղ թաքնվել եր Գեյերը, սրի քաշեցին ամբողջ զորախումբը: Այդ յերկու օրվա ընթացքում միմիայն 17 հոգի գերի ընկան: Ֆլորիան Գեյերին կրկին հաջողվեց մի քանի ամենաքաջ մարտիկների հետ միասին ճեղքել թշնամու շղթան և անցնել հայլդորֆցիների մոտ, վորոնք կրկին 7000 հոգուց բաղկացած մի զորախումբ եյին կազմել: Սակայն սրանց մոտ գալով նա տեսավ, վոր ամեն կողմից յեկող վհատեցուցիչ լուրերի ազդեցության տակ սրանց մեծ մասը քայքայման վիճակում և գտնվում: Նա կրկին փորձեց ժողովել անտառներում ցրված իր մարտիկներին, սակայն հունիսի 9-ին Հալլի շրջակայքում հարձակման յենթարկվեց թշնամու զորամասերի կողմից և ընկավ կռվի մեջ:

Կյոնիգսհոֆենում իր տարած հաղթանակի մասին Տրուխզեսը լուր տալով Ֆրանկենբերգում պաշարվածներին, շարժվեց Վյուրցբուրգի վրա: Քաղաքի խորհուրդը գաղտնի համաձայնության յեկավ նրա հետ, այնպես վոր դաշնակիցների զորքը հունիսի 7-ի գիշերը հնարավորություն ունեցավ շրջապատել քաղաքն ու այդտեղ յեղած 5000 գյուղացիներին, իսկ հետևյալ առավոտը, առանց վորևե դիմադրության, ներս խուժել քաղաքը, վորի դռները խորհրդի կարգադրությամբ բացվել եյին նրա առաջ: Վյուրցբուրգի պատրիկների այս դավաճանության շնորհիվ Ֆրանկոնյան գյուղացիների վերջին զորախումբը զինաթափ յեղավ և նրա բոլոր առաջնորդները գերի ընկան: Տրուխզեսը կարգադրեց անմիջապես 81 հոգու գլխատել: Մեկը մյուսի հետևից Վյուրցբուրգ յեկան Ֆրանկոնյան իշխանները, ինքը՝ Վյուրցբուրգի յեպիսկոպոսը, Բամբերգի յեպիսկոպոսը և Բրանդենբուրգ-Անշպախի մարկգրաֆը: Այդ գթառատ պարոններն իրենց միջև դերերը բաժանեցին: Տրուխզեսը մեկնեց Բամբերգի յեպիսկոպոսի հետ, վորն անմիջապես խախտեց իր գյուղացիների հետ կնքած դաշնագիրը և իր յերկիրը դաշնակիցների զորքի մոլեգնած մարդասպանների և հրձիգների քմահաճույքին մատնեց: Մարկգրաֆ Կազիմիրն ավերածության յենթարկեց իր սեփական յերկիրը: Թայնինգենը հրկիզվեց. բազմաթիվ գյուղեր կողոպտվեցին կամ բոցերի ճարակ դարձան, ընդվորում ամեն մի քաղաքում մարկգրաֆն արյունռուշտ դատավարություններ կազմակերպեց: Նրա կարգադրությամբ Նոյշտադտում Այշի վրա 18 ապստամբներ գլխատվեցին, իսկ Մարկ-Բյուրգել-

լում—43 ապստամբներ: Այդտեղից նա մեկնեց Ռոտենբուրգ, վորտեղ պատրիկներն արդեն կարողացել եյին հակահեղափոխություն նյութել և Ստեֆան ֆոն-Մենցինգենին կալանավորել: Ռոտենբուրգի մանր բյուրգերներն ու պլեբեյներն այժմ ծանր քավության պիտի յենթարկվեյին իրենց այն մեղքերի համար, վոր գյուղացիների հանդեպ նրանք յերկդիմի վերաբերմունք եյին ունեցել, վոր մինչև վերջը նրանք հրաժարվել եյին գյուղացիներին վորևէ ձևով օգնություն ցույց տալուց, վոր իրենց սեփական գծուծ տեղական շահերից յելնելով՝ աշխատել եյին ճնշել գյուղական արհեստները հօգուտ քաղաքի համքարությունների և իրենց կամքի հակառակ միայն հրաժարվել եյին այն յեկամուտներից, վոր քաղաքն ստանում եր գյուղացիների ֆեոդալական պարտավորություններից: Նրանցից 16 հոգու մարկգրաֆը հրամայեց գլխատել, և ամենից առաջ, բնականաբար, Մենցինգենին: Վյուրցբուրգի յեպիսկոպոսը միևնույն յեղանակով հրջագայեց իր յերկրամասում,—ամենուրեք կողոպտելով և սրով ու հրով ավերելով: Իր հաղթական յերթի ընթացքում 256 ապստամբների մահվան յենթարկեց, իսկ Վյուրցբուրգ վերադառնալիս իր գործն ավարտեց նրանով, վոր նորից 13 վյուրցբուրգցիների գլխատեց:

Մայնցի կուսակալ՝ յեպիսկոպոս Վիլհելմ Ստրասբուրգցին իր շրջանում վերականգնեց խաղաղությունն առանց վորևէ դիմադրության: Նա միմիայն չորս հոգու մահվան յենթարկեց: Ռայնգաուն, վորտեղ նույնպես խռովություններ եյին յեղել, բայց վաղուց արդեն բոլորն իրենց տներն եյին ցրվել, հետագայում հարձակման յենթարկվեց Ֆրովեն ֆոն-Հուտտենի՝ Ուլրիխի յեղբորորդու՝ կողմից և 12 դավադիր-պարագլուխների մահվամբ վերջնականապես «խաղաղացվեց»: Ֆրանկֆուրտում, վորտեղ նույնպես խոշոր հեղափոխական շարժումներ եյին տեղի ունեցել, կարգ ու կանոնը պահպանվեց՝ սկզբում քաղաքային խորհրդի գիջողականության շնորհիվ, իսկ հետագայում՝ զումարված զորամասերի օգնությամբ: Հռենոսյան Պֆալցում, յերբ կուրֆյուրստը խախտեց իր կնքած դաշնագիրը, կրկին հավաքվեցին մոտ 8000 գյուղացիներ և նորից սկսեցին վանքեր ու դղյակներ հրկիզել, սակայն Տրիրի արքեպիսկոպոսն օգնության հասավ Ցաբերնի մարշալին և մայիսի 23-ին ջարդեց գյուղացիներին Պֆեդերսհայմի մոտ: Մի շարք դաժանությունները (միմիայն Պֆեդերսհայմում 82 հոգի մահվան յենթարկվեցին) և

Վայսենբուրգի առումը, հուլիսի 7-ին, վերջ դրին և այստեղի ապստամբությանը:

Բոլոր զորախմբերից այժմ միմիայն յերկուսն եյին մնացել, վորոնք տակավին չեյին հաղթահարվել—հեգաու-շվարցվալդցիների և ալլգաուցիների զորախմբերը: Այդ յերկուսի հետ էլ ինտրիգներ եր վարում երցհերցոգ Ֆերդինանդը: Մարկգրաֆ Կազիմիրի և մյուս իշխանների նման, վորոնք աշխատում եյին օգտագործել ապստամբությունը յեկեղեցապատկան կալքերն ու յերկրամասերը յուրացնելու համար, երցհերցոգն ուզում եր դա օգտագործել ավստրիական տան հզորությունն ուժեղացնելու համար: Նա բանակցում եր ալլգաուցիների առաջնորդի՝ Վալտեր Բախի և հեգաուցիների ղեկավարի՝ բուրգենրախցի Հանս Մյուլլերի հետ, վորպեսզի սրանք համոզեն գյուղացիներին, վոր վերջիններս արտահայտվեն հօգուտ Ավստրիային միանալուն: Բայց թեև այդ յերկու առաջնորդներն էլ կաշառվող դուրս յեկան, այնուամենայնիվ իրենց զորախմբերի շրջանում նրանց չհաջողվեց վորևէ բան անել, բացի այն, վոր ալլգաուցիները երցհերցոգի հետ զինադադար կնքեցին և Ավստրիայի հանդեպ չեզոքություն պահպանեցին:

Վյուրտեմբերգից նահանջելու ժամանակ հեգաուցիները մի շարք դղյակներ կործանեցին և Բադենի մարկգրաֆությունից լրացուցիչ ուժեր ներգրավեցին: Մայիսի 13-ին նրանք շարժվեցին Ֆրայբուրգի դեմ, վորն սկսեցին գնդակոծել մայիսի 18-ին, իսկ ամսի 23-ին, յերբ քաղաքն արդեն անձնատուր յեղավ, նրանք ներս մտան ծածանվող դրոշակներով: Այդտեղից նրանք արշավեցին Շտոկկախի և Ռադոլֆցելի վրա, վորոնց կայազորների դեմ յերկար ժամանակ ապարդյուն մանր կռիվներ մղեցին: Այս յերկու քաղաքներն էլ, ինչպես և ազնվականությունն ու մերձակա քաղաքները, Վայնգարտենում կնքած դաշնագրի համաձայն օգնության կանչեցին լճամերձ գյուղացիներին, ընդվորում Լճի զորախմբի յերբեմնի ապստամբներից 5000 հոգի վոտքի յելան ու շարժվեցին իրենց դաշնակիցների դեմ: Ահա՛ թե վորքան եր տեղական շահերով սահմանափակված այս գյուղացիների շրջահայեցողությունը: Միմիայն 600 հոգի հրաժարվելով գյուղացիների դեմ գնալուց, ցանկացան միանալ հեգաուցիներին, բայց դրանք սրի քաշվեցին: Մինչ այդ կաշառված բուրգենրախցի Հանս Մյուլլերի աջակցությամբ հեգաուցիներն արդեն թողել եյին պաշարումը և Հանս Մյուլլերի փախուստից հե-

գում—43 ապստամբներ: Այդտեղից նա մեկնեց Ռոտենբուրգ, վորտեղ պատրիկներն արդեն կարողացել եյին հակահեղափոխություն նյութել և Ստեֆան ֆոն-Մենցինգենին կալանավորել: Ռոտենբուրգի մանր բյուրգերներն ու պլեբեյներն այժմ ծանր քավության պետի յենթարկվեցին իրենց այն մեղքերի համար, վոր գյուղացիների հանդեպ նրանք յերկդիմի վերաբերմունք եյին ունեցել, վոր մինչև վերջը նրանք հրաժարվել եյին գյուղացիներին վորևէ ձևով ոգնություն ցույց տալուց, վոր իրենց սեփական գծուծ տեղական շահերից յելնելով՝ աշխատել եյին ճնշել գյուղական արհեստները հոգուտ քաղաքի համքարությունների և իրենց կամքի հակառակ միայն հրաժարվել եյին այն յեկամուտներից, վոր քաղաքն ստանում եր գյուղացիների ֆեոդալական պարտավորություններից: Նրանցից 16 հոգու մարկգրաֆը հրամայեց գլխատել, և ամենից առաջ, բնականաբար, Մենցինգենին: Վյուրցբուրգի յեպիսկոպոսը միևնույն յեղանակով շրջագայեց իր յերկրամասում,—ամենուրեք կողոպտելով և սրով ու հրով ավերելով: Իր հաղթական յերթի ընթացքում 256 ապստամբների մահվան յենթարկեց, իսկ Վյուրցբուրգ վերադառնալիս իր գործն ավարտեց նրանով, վոր նորից 13 վյուրցբուրգցիների գլխատեց:

Մայնցի կուսակալ՝ յեպիսկոպոս Վիլհելմ Ստրասբուրգցին իր շրջանում վերականգնեց խաղաղությունն առանց վորևէ դիմադրության: Նա միմիայն չորս հոգու մահվան յենթարկեց: Ռայնգաուն, վորտեղ նույնպես խռովություններ եյին յեղել, բայց վաղուց արդեն բոլորն իրենց տներն եյին ցրվել, հետագայում հարձակման յենթարկվեց Ֆրովեն ֆոն-Հուտտենի՝ Ուլրիխի յեղբորորդու՝ կողմից և 12 դավադիր-պարագլուխների մահվամբ վերջնականապես «խաղաղացվեց»: Ֆրանկֆուրտում, վորտեղ նույնպես խոշոր հեղափոխական շարժումներ եյին տեղի ունեցել, կարգ ու կանոնը պահպանվեց՝ սկզբում քաղաքային խորհրդի զիջողականության շնորհիվ, իսկ հետագայում՝ գումարված զորամասերի ոգնությամբ: Հռենոսյան Պֆալցում, յերբ կուրֆյուրստը խախտեց իր կնքած դաշնագիրը, կրկին հավաքվեցին մոտ 8000 գյուղացիներ և նորից սկսեցին վանքեր ու դղյակներ հրկիզել, սակայն Տրիրի արքեպիսկոպոսն ոգնության հասավ Ցաբերնի մարշալին և մայիսի 23-ին ջարդեց գյուղացիներին Պֆեդերսհայմի մոտ: Մի շարք դաժանությունները (միմիայն Պֆեդերսհայմում 82 հոգի մահվան յենթարկվեցին) և

Վայսենբուրգի առումը, հուլիսի 7-ին, վերջ դրին և այստեղի ապստամբությանը:

Բոլոր զորախմբերից այժմ միմիայն յերկուսն եյին մնացել, վորոնք տակավին չեյին հաղթահարվել—հեգաու-շվարցվալդցիների և ալգաուցիների զորախմբերը: Այդ յերկուսի հետ էլ ինտրիգներ եր վարում երցհերցոգ Ֆերդինանդը: Մարկգրաֆ Կազիմիրի և մյուս իշխանների նման, վորոնք աշխատում եյին ոգտագործել ապստամբությունը յեկեղեցապատկան կալքերն ու յերկրամասերը յուրացնելու համար, երցհերցոգն ուզում եր դա ոգտագործել ավստրիական տան հզորությունն ուժեղացնելու համար: Նա բանակցում եր ալգաուցիների առաջնորդի՝ Վալտեր Բախի և հեգաուցիների ղեկավարի՝ բուլգենբախցի Հանս Մյուլլերի հետ, վորպեսզի սրանք համոզեն գյուղացիներին, վոր վերջիններս արտահայտվեն հոգուտ Ավստրիային միանալուն: Բայց թեև այդ յերկու առաջնորդներն էլ կաշառվող դուրս յեկան, այնուամենայնիվ իրենց զորախմբերի շրջանում նրանց չհաջողվեց վորևէ բան անել, բացի այն, վոր ալգաուցիները երցհերցոգի հետ զինադադար կնքեցին և Ավստրիայի հանդեպ չեզոքություն պահպանեցին:

Վյուրտեմբերգից նահանջելու ժամանակ հեգաուցիները մի շարք դղյակներ կործանեցին և Բադենի մարկգրաֆությունից լրացուցիչ ուժեր ներգրավեցին: Մայիսի 13-ին նրանք շարժվեցին Ֆրայբուրգի դեմ, վորն սկսեցին գնդակոծել մայիսի 18-ին, իսկ ամսի 23-ին, յերբ քաղաքն արդեն անձնատուր յեղավ, նրանք ներս մտան ծածանվող դրոշակներով: Այդտեղից նրանք արշավեցին Շտոկկախի և Ռադոլֆցելլի վրա, վորոնց կայազորների դեմ յերկար ժամանակ ապարդյուն մանր կռիվներ մղեցին: Այս յերկու քաղաքներն էլ, ինչպես և ազնվականությունն ու մերձակա քաղաքները, Վայնգարտենում կնքած դաշնագրի համաձայն ոգնության կանչեցին լճամերձ գյուղացիներին, ընդվորում Լճի զորախմբի յերբեմնի ապստամբներից 5000 հոգի վոտքի յելան ու շարժվեցին իրենց դաշնակիցների դեմ: Ահա՛ թե վորքան եր տեղական շահերով սահմանափակված այս գյուղացիների շրջահայեցողությունը: Միմիայն 600 հոգի հրաժարվելով գյուղացիների դեմ գնալուց, ցանկացան միանալ հեգաուցիներին, բայց դրանք սրի քաշվեցին: Մինչ այդ կաշառված բուլգենբախցի Հանս Մյուլլերի ազդեցությամբ հեգաուցիներն արդեն թողել եյին պաշարումը և Հանս Մյուլլերի փախուստից հե-

տո անմիջապես մեծ մասամբ ցրվել եյին: Մնացորդ մասն ամրացել եր Հիլցինգի լեռնալանջում, վորտեղ և ջարդվեց ու վոչընչացավ վերահաս զորամասերի կողմից: Շվեյցարական քաղաքների միջնորդությամբ դաշնագիր կնքվեց հեգաուցիների հետ, բայց այդ պայմանագիրը չխանգարեց, վոր Հանս Մյուլլերը, չնայած իր կատարած դավաճանությանը, Լաուֆենբուրգում կալանավորվի և գլխատվի: Բրայսգաուի շրջանում գյուղացիական միությունից անջատվեց նաև Ֆրայբուրգ քաղաքը (հուլիսի 17-ին), վորը գյուղացիների դեմ ուղարկեց իր զորամասերը, սակայն այս դեպքում ևս, իշխանական մարտական ուժերի թուլության հետևանքով, սեպտեմբերի 18-ին Ոֆֆենբուրգում դաշնագիր կնքվեց, վոր տարածվեց նաև Զունդգաուի վրա: Շվարցվալդի ութ միությունները և կլետգաուցիները, վորոնք դեռևս զինաթափ չեյին յեղել, Զուլցի կոմսի բռնակալ ռեժիմի հետևանքով դարձյալ ապստամբեցին, սակայն հոկտեմբերին արդեն նրանք ջախջախվեցին: Նոյեմբերի 13-ին շվարցվալդցիները հարկադրված եյին դաշնագիր կնքել, իսկ դեկտեմբերի 6-ին ընկավ Վալդսհուտը՝ վերին Հռենոսի շրջանի ապստամբության վերջին պատվարը:

Տրուխզեսսի հեռանալուց հետո ալլգաուցի գյուղացիները վերսկսեցին իրենց հարձակումները վանքերի ու դղյակների դեմ և յեռանդուն վրիժառություններ սկսեցին այն ավերածությունների համար, վոր կատարել եյին դաշնակիցների զորքերը: Նրանց դեմ գործող զորամասերը սակավաթիվ լինելով՝ կարող եյին մասնակի մանր հարձակումներ գործել միայն, բայց վոչ թե անտառներում նրանց հետամուտ լինել: Մեմմինգենում, վորը բավական չեզոք դիրք եր բռնել, հունիսին շարժում սկսվեց պատրիկության դեմ, այդ շարժումը ճնշվեց միմիայն շնորհիվ այն հանգամանքի, վոր պատահաբար մերձակա վայրում վորոշ քանակությամբ դաշնակիցների զորամասեր եյին գտնվում, վորոնք ժամանակին ոգնության հասան պատրիկներին: Այս պլեբեյական շարժման քարոզիչ և առաջնորդ Շապպելերը փախավ Սանկտ-Գալլեն: Գյուղացիները մոտեցան Մեմմինգենին և յերբ արդեն ուզում եյին ճեղքել քաղաքի պարիսպը, լուր առան, վոր Տրուխզեսսը Վյուրցբուրգից շարժվում ե իրենց վրա: Հուլիսի 27-ին գյուղացիները յերկու զորասյուների բաժանված՝ Բաբենհաուզենի և Ոբերգյունցբուրգի վրայով շարժվեցին Տրուխզեսսի դեմ: Երցհերցոգ Ֆերդինանդը կրկին ևս փորձեց՝ գյուղացիների

ավստրիական իշխանական տան կողմը գրավել: Հիմնվելով գյուղացիների հետ կնքված զինադադարի վրա, նա պահանջեց, վոր Տրուխզեսսը դադարեցնի նրանց դեմ ձեռնարկած առաջխաղացումը: Սակայն Շվաբական միությունը հրամայեց Տրուխզեսսին՝ հարձակվել գյուղացիների վրա, դադարեցնելով ավերածությունների ու հրկիզումները միայն: Սակայն Տրուխզեսսը չափազանց խելոք եր, վորպեսզի հրաժարվեր կռվի իր գլխավոր և վճռական միջոցից, յեթե նույնիսկ նա կարողանար սանձահարել իր լանդսկնեխտներին, վորոնք սովորել եյին ամեն ինչ սրի և հրի մատնել Մայնից մինչև Բոդենյան լիճը: Գյուղացիները 23.000 հոգով դիրքեր բռնեցին Իլլերի և Լուբասի հետևը: Տրուխզեսսը գյուղացիների դեմ ուներ 11.000 մարդ: Յերկու բանակների դիրքերն էլ ամուր եյին. տեղի պայմաններում հեծելազորը չեր կարող գործել, և յեթե Տրուխզեսսի լանդսկնեխտներն իրենց կազմակերպության, ռազմական միջոցների և կարգապահության տեսակետից գերազանցում եյին գյուղացիներին, ապա ալլգաուցիներն իրենց շարքերում բավականաչափ հին, հմուտ զինվորներ և փորձված հրամանատարներ ունեյին, ինչպես և բազմաթիվ թնդանոթներ, վորոնց սպասարկումը լավ հիմքերի վրա յեր դրված: Հուլիսի 19-ին դաշնակիցների հրետանին սկսեց ռմբակոծությունը, վորը յերկու կողմից շարունակվեց մինչև ամսի 20-ը, առանց վորևե արդյունք տալու: 300 լանդսկնեխտներով ամսի 21-ին Տրուխզեսսին միացավ Գեորգ Ֆոն-Ֆրունդսբերգը, վորը ճանաչում եր գյուղացիների հրամանատարներից շատերին, վորոնք նրա հրամանատարությամբ մասնակցել եյին իտալական արշավանքներին: Սա բանակցությունների մեջ մտավ այդ հրամանատարների հետ: Այնտեղ, վորտեղ ռազմական միջոցներն ոգնել չեյին կարող, դավաճանությունն ոգնության հասավ: Վալտեր Բախը, ինչպես և հրամանատարներից և հրետավորներից վոմանք, կաշառվեցին: Նրանք հրդեհեցին գյուղացիների վառոդի ամբողջ պաշարը և հորդորեցին զորախմբերին՝ շուրջանց անել: Հենց վոր գյուղացիները հեռացան իրենց ամուր դիրքերից, նրանք ծուղակի մեջ ընկան, վոր լարել եր Տրուխզեսսը՝ Բախի և մյուս դավաճանների նախնական համաձայնությամբ: Գյուղացիներն առավել ևս չեյին կարող պաշտպանվել, քանի վոր նրանց դավաճան հրամանատարները հետախուզություններ կատարելու պատրվակով հեռացել եյին և արդեն դեպի Շվեյցարիա մեկնել: Այսպիսով յերկու գյուղացիական զորասյուները կատա-

ընլապես ցրվեցին, իսկ չերրորդ զորասյունը Կնոպֆ Լուերսացու առաջնորդությամբ մի կերպ կարողացավ կարգապահությամբ նահանջել: Այս զորասյունը վերստին դիրք բռնեց Կեմպտենի մոտ՝ Իլլենբերգ լեռան վրա, վորտեղ և շրջապատվեց Տրուխզեսի կողմից: Այստեղ էլ Տրուխզեսը չհիմնվեց հարձակում գործել, այլ կտրեց մատակարարման բոլոր ուղիները և հրդեհելով շրջակայքում գտնվող մոտ 200 գյուղերը, աշխատեց բարոյալքել գյուղացիական զորամասերը: Քաղցը և իրենց բոցավառված բնակատեղիների տեսարանը վերջապես ստիպեց գյուղացիներին անձնատուր լինել (հուլիսի 25-ին): Ավելի քան հազարը անմիջապես գլխատվեցին: Կնոպֆ Լուերսացին, այս զորախմբի այդ միակ առաջնորդը, վորը չդավաճանեց իր դրոշին, փախավ Բրեգենց. բայց այստեղ նա կալանավորվեց և երկար ժամանակ բանտարկված մնալուց հետո կախաղան բարձրացվեց:

Սրանով էլ ավարտվեց գյուղացիական պատերազմը Շվաբիայում և Ֆրանկոնիայում:

VI

Հենց վոր Շվաբիայում բռնկվեց առաջին շարժումը, Թոմաս Մյունցերը կրկին շտապ մեկնեց դեպի Թյուրինգիա և փետրվարի վերջերը կամ մարտի սկզբները բնակություն հաստատեց Մյուլհաուզենում, կայսրության այդ ազատ քաղաքում, վորտեղ նրա կուսակցությունն ամենաուժեղն էր: Շարժման բոլոր թելերը նրա ձեռքումն էին կենտրոնացած. նա գիտեր, թե ինչպիսի համատարած փոթորիկ էր խմորվում հարավային Գերմանիայում, և վորոշեց Թյուրինգիան հյուսիսային Գերմանիայի շարժման կենտրոնը դարձնել: Այստեղ նա վերին աստիճանի պարարտ հող գտավ: Ինքը Թյուրինգիան, բարենորոգչական շարժման այդ գլխավոր վայրը, վերին աստիճանի հուզումնալից վիճակում էր գտնվում. ճնշված գյուղացիների նյութական նեղ դրությունը վոչ պակաս չափով, քան ծավալված հեղափոխական, կրոնական և քաղաքական ուսմունքները, ընդհանուր ապստամբության համար նպաստավոր հող էր պատրաստել նաև հարևան երկրներում—Հեսսենում, Սաքսոնիայում և Հարցի շրջանում: Հենց Մյուլհաուզենում մանր բյուրգերականության հոծ զանգվածը հակվեց ծայրահեղ մյունցերական ուղղության կողմը և սրտատրոփ սպասում էր այն մոմենտին, երբ հնարավորություն կունենա ցույց տալու ամբարտավան պատրիկության իր թվական

գերակշռության ուժը: Վորպեսզի մինչև բարենպաստ մոմենտի հասնելը վաղաժամ պայթյուն չլինի, ինքը Մյունցերն ստիպված էր հանդես գալ հանգստացուցիչ կոչերով, սակայն նրա աշակերտ Պֆայֆերը, վորը ղեկավարում էր այստեղի շարժումը, արդեն իրեն այնքան էր վարկաբեկել, վոր այլևս անկարող էր բռնկման առաջն առնել, և, նախքան հարավային Գերմանիայում ընդհանուր ապստամբություն պայթեր, Մյուլհաուզենն արդեն 1525 թվի մարտի 17-ին իր հեղափոխությունը կատարեց: Պատրիկական հին խորհուրդը տապալվեց և կառավարության ղեկը նորընտիր «մշտնջենական խորհրդի» ձեռքն անցավ, վորի նախագահը Մյունցերը դարձավ:

Վատթարագույնը, վոր կարող է սպասել ծայրահեղ կուսակցության առաջնորդին, դա իշխանությունն այն ժամանակ իր ձեռքը վերցնելու հարկադրական անհրաժեշտությունն է, երբ շարժումը տակավին չի հասունացել այն դասակարգի գերիշխանության համար, վորի ներկայացուցիչն է նա հանդիսանում, և այն միջոցառումների կենսագործման համար, վոր այս դասակարգի գերիշխանությունն են ապահովում: Այն, ինչ վոր նա կարող է անել, կախված է վոչ թե նրա կամքից, այլ այն մակարդակից, վորին հասել է տարբեր դասակարգերի շահերի ներհակությունը, ինչպես և գոյության նյութական պայմանների, արտադրության և հաղորդակցության հարաբերությունների զարգացման այն աստիճանից, վորոնք միշտ դասակարգային ներհակությունների զարգացման հիմքն են կազմում: Այն, ինչ վոր նա պիտի անի, ինչ նրանից պահանջում է իր սեփական կուսակցությունը, դարձյալ նրանից չի կախված, վոչ էլ դասակարգային պայքարի զարգացման աստիճանից կամ այդ պայքարի պայմաններից է կախված. նա կապված է իր մինչայժմյան ուսմունքների և պահանջների հետ, վորոնք դարձյալ չեն բխում հասարակական դասակարգերի և վոչ էլ արտադրության պայմանների ու հաղորդակցության միջոցների տվյալ, ավելի կամ պակաս պատահական, տվյալ հարաբերակցությունից, այլ հասարակական ու քաղաքական շարժման ընդհանուր արդյունքների այն ավելի կամ պակաս խորն ըմբռնումից, վոր ունի նա: Իվերջո անհրաժեշտորեն նա կանգնում է մի անլուծելի երկընտրանքի առաջ. այն, ինչ վոր նա կարող է անել, հակասում է իր մինչայժմյան ամբողջ վարքագծին, իր սկզբունքներին և իր կուսակցության անմիջական շահերին. իսկ այն, վոր նա պիտի անի,

անիրագործելի չե։ Մի խոսքով՝ նա հարկադրված ե պաշտպանել վոչ թե իր կուսակցությունը, իր դասակարգը, այլ այն դասակարգը, վորի գերիշխանության համար շարժումն արդեն բավականաչափ հասունացել ե։ Հենց շարժման շահի տեսակետից նա ստիպված ե իրեն անհարազատ դասակարգի շահերը պաշտպանել, իսկ իր սեփական դասակարգից մի կերպ ազատվել այնպիսի ֆրազներով ու խոստումներով, այնպիսի հավաստիացումով, թե այլ դասակարգի շահերն իբր թե իր սեփական դասակարգի շահերն են։ Ով մի անգամ այսպիսի կեղծ դրության մեջ ե ընկնում, նրան փրկություն չկա։ Նորագույն ժամանակներումս էլ մենք այդպիսի որինակների ականատես ենք յեղել։ Հիշենք միայն այն դիրքը, վոր ֆրանսական վերջին ժամանակավոր կառավարության մեջ բռնել եյին պրոլետարիատի ներկայացուցիչները, թեև հենց դրանք չափազանց ցածր աստիճանի զարգացում ունեցող պրոլետարիատի ներկայացուցիչներ եյին։ Նա, ով փետրվարյան կառավարության փորձից հետո,—չխոսելով արդեն մեր գերմանական ժամանակավոր ազնիվ կառավարությունների և կայսրության ռեգենտությունների մասին,—դեռևս կարող ե հավակնել պաշտոնական դիրքերի, նա կամ չափազանց սահմանափակ մարդ ե, կամ թե լոկ ֆրազներով ե կապված ծայրահեղ-հեղափոխական կուսակցության հետ։

Սակայն Մյունցերի դիրքը, իբրև Մյուլհաուզենի «մշտնջենական խորհրդի» նախագահի, շատ ավելի վտանգավոր եր, քան վորևե ժամանակակից հեղափոխական իշխանակալի դիրքը։ Վոչ միայն այն ժամանակվա շարժումը, այլև նրա ամբողջ եպոխան չեր հասունացել այն գաղափարների կենսագործման համար, վոր նա ինքը դեռ աղոտ ձևով եր նախազգում։ Այն դասակարգը, վորի ներկայացուցիչն եր նա հանդիսանում, վոչ միայն շատ հեռու չեր լիակատար զարգացման դրությունից, վորը թույլ տար նրան իրեն յենթարկել հասարակությունը և ձևափոխել նրանց, այլև դեռ նոր-նոր եր ծնունդ առնում։ Նրա յերևակայության մեջ ուրվագծվող հասարակական հեղաշրջումը դեռ այնքան քիչ հիմունքներ ուներ նյութական առկա հարաբերությունների մեջ, վոր ընդհակառակը, վերջիններս նույնիսկ մի այնպիսի հասարակարգ եյին նախապատրաստում, վորը նրա յերազած հասարակարգի ուղղակի հակադրությունն եր ներկայացնում։ Բայց և այնպես նա շարունակում եր կապված մնալ՝ քրիստոնեական հավասարության և ավետարանական ընդհանուր գույքատիրության

մասին իր քարոզած նախկին գաղափարների հետ նա գոնե պետք ե փորձեր իրականացնել դրանք։ Ազդարարվեց, վոր բոլոր գույքերը հանրային սեփականություն պետք ե լինեն, վոր ամեն վոք պարտավոր ե հավասարապես աշխատել և վոր ամեն մի բարձրագույն իշխանություն իսպառ պետք ե վերանա։ Սակայն իրականության մեջ Մյուլհաուզենը հանրապետական կայսերական քաղաք մնաց, վորոշ չափով դեմոկրատացված սահմանադրությամբ, ընդհանուր ձայնատվությամբ ընտրված սենատով, վորը ժողովրդական ժողովի վերահսկողության տակ եր գտնվում, և շտապ կարգով հորինված մի կազմակերպությամբ, վորը նյութական հոգացողություն պետք ե ունենար աղքատների նկատմամբ։ Հասարակական հեղաշրջումը, վորը բուրժուական բողոքական ժամանակակիցներին այնքան սոսկալի յեր թվում, փաստորեն յերբեք չեր անցնում այն թույլ և անգիտակցական փորձի շրջանակներից, վորը վաղաժամ կարգով ձգտում եր ստեղծել հետագա բուրժուական հասարակությունը։

Թվում ե, թե ինքը Մյունցերն զգում եր, վոր իր թեորիաների և անմիջականորեն տվյալ իրականության միջև մի խոր վիհ ե ընկած, վորը նրա համար նույնքան նկատելի պետք ե լիներ, վորքան նրա հանճարեղ հայեցողությունները խեղաթյուրվում եյին նրա կողմնակից մասսայի բիրտ ուղեղներում։ Նույնիսկ նրա համար արտասովոր մոլեռանդությամբ, նա նվիրվեց շարժման ծավալման և կազմակերպման գործին. նա նամակներ եր գրում և սուրհանդակներ ու եմիսարներ ուղարկում բոլոր ուղղություններով։ Նրա գրություններն ու քարոզները այնպիսի հեղափոխական մոլեռանդությամբ են շնչում, վորը մինչև իսկ նրա նախկին գրվածքների համեմատությամբ զարմանք ե պատճառում։ Մյունցերի նախկին հեղափոխական պամֆլետների պատանեկան պարզամիտ հումորն իսպառ չքացել եր. իմաստասերի հանդարտ, զարգացնող լեզուն, վորը նրա համար առաջ ոտարոտի չեր, նույնպես այլևս չկար։ Այժմ արդեն Մյունցերն ամբողջովին հեղափոխության մարգարեն եր դարձել։ Իշխող դասակարգերի դեմ նա անդադար բորբոքում ե ատելությունը, գրգռում ամենավայրագ կրքերը և գործածում ե միմիայն այն հուժկու դարձվածքները, վոր կրոնական և ազգային եքստազը հին ուխտի մարգարեների բերանն եր դրել։ Այն վոճը, վոր այժմ նա ստիպված եր իր համար մշակել, պարզ ցույց ե տալիս, թե զարգացման ինչ աստիճանի վրա յեր կանգնած այն հասարակությունը, վորի վրա նա ներգործություն պետք ե ունենար։

Մյուլհաուզենի օրինակը և Մյունցերի ագիտացիան նպաստեցին շարժման լայն տարածմանը: Թյուրինգիայում, Այխսֆելդում, Հարցում, սաքսոնական հերցոգություններում, Հեսսենում, Ֆուլդայում, վերին Ֆրանկոնիայում և Ֆոգտլանդում ամենուրեք գյուղացիներն ապստամբեցին, զորախմբեր կազմեցին և սկսեցին դղյակներն ու վանքերը հրդեհել: Մյունցերն եր ամբողջ շարժման քիչ թե շատ ճանաչված առաջնորդը, իսկ Մյուլհաուզենը այդ շարժման կենտրոնն եր մնում, մինչդեռ Երֆուրտում հաղթանակեց զուտ բյուրգերական շարժումը, և այնտեղ իշխող կուսակցությունը շարունակ յերկդիմի դիրք եր բռնում գյուղացիների հանդեպ:

Թյուրինգիայում իշխաններն սկզբում նույնպես իրենց գլուխը կորցրին և նույնպես անզոր եյին գյուղացիների հանդեպ, ինչպես և Ֆրանկոնիայում ու Շվաբիայում: Միմիայն ապրիլի վերջերին Հեսսենի լանդգրաֆին հաջողվեց մի բանակ կազմել, այն նույն լանդգրաֆ Ֆիլիպպին, վորի բարեպաշտությունն այնպես փառաբանում են ռեֆորմացիայի բողոքական ու բուրժուական պատմաբանները և վորի՝ գյուղացիների դեմ ձեռնարկած գարշելի արարքների մասին այժմ միքանի խոսք կլսենք: Միշարք արագ արշավների և հատու միջոցառումների շնորհիվ լանդգրաֆ Ֆիլիպպը շուտով յենթարկեց իրեն իր յերկրի խոշորագույն մասը, այնուհետև, նոր ուժեր ժողովելով, նա շարժվեց դեպի Ֆուլդայի աբբայի, իր ավատատիրոջ, յերկրամասը: Մայիսի 3-ին Ֆրաուենբերգի մոտ ջարդելով Ֆուլդայի գյուղացիների զորախումբը, նա նվաճեց այդ ամբողջ շրջանը և օգտագործեց այս առիթը՝ վոչ միայն աբբայի գերիշխանությունը դեն գցելու համար, այլև Ֆուլդայի աբբայությունը Հեսսենի ավատառու դարձնելու համար, նկատի ունենալով, իհարկե, այդ հողերի ապագա սեկուլարիզացիան: Այնուհետև նա վերցրեց Այզենախն ու Լանգենզալցը և միանալով սաքսոնական հերցոգի զորամասերի հետ, արշավեց ապստամբության կենտրոնի՝ Մյուլհաուզենի վրա: Իր մարտական ուժերը, վորոնք բաղկացած եյին 8000 հոգուց և միքանի թնդանոթներից, Մյունցերը կենտրոնացրեց Ֆրանկենհաուզենի մոտ: Թյուրինգիական զորախումբը չուներ այն մարտունակությունը, վոր վերին-շվաբական և ֆրանկոնյան զորախմբերի մի մասն ի հայտ բերեց Տրուխզեսսի դեմ վարած կռիվներում. նա վատ եր զինված ու թույլ կարգապահություն ուներ, նրա շարքերում շատ քիչ թվով ծառայության մեջ յեղած



Ապստամբության ճնշումից հետո դատաստան. կտտանքները և մահապատիժները:

զինվորներ կային, իսկ ղեկավարներ բնավ չկային: Ինքը Մյունցերը ռազմական գործի մասին ըստ յերևույթին վոչ մի հասկացողություն չուներ: Սակայն այստեղ ել իշխանները հարմար գտան այն նույն տակտիկան կիրառել, վորն այնքան հաճախ օգնել եր Տրուխզեսսի հաղթանակներին, այն է՝ ուխտադրժության տակտիկան: Մայիսի 16-ին բանակցություններ սկսելով՝ նրանք զինադադար կնքեցին, բայց մինչև զինադադարի ժամկետի լրանալը նրանք անսպասելի կերպով հարձակվեցին գյուղացիների վրա:

Յուրայինների հետ Մյունցերը գտնվում եր այն լեռան վրա, վորը մինչև հիմա ել Schlachtberg (Մարտալյառ) է կոչվում. իր կանգնած տեղը նա շրջապատել, ամրացրել եր սայլերի և կառքերի մի ահագին կույտով: Զորախմբի բարոյալքումն արդեն բավականաչափ ուժեղացել եր: Իշխանները գյուղացիներին խոստանում եյին ներում շնորհել, յեթե Մյունցերին նրանք կենդանի իրենց ձեռքը հանձնեն: Մյունցերը կարգադրեց ժողով գումարել՝ իշխանների առաջարկը քննելու համար: Մեկ ասպետ և մեկ քահանա արտահայտվեցին հօգուտ անձնատուր լինելուն: Մյունցե-

րը հրամայեց՝ այդ յերկուսին ել ժողովի շրջագծի մեջ բերել և անմիջապես գլխատել: Անձնվեր հեղափոխականների կողմից ցնծությամբ ընդունված այս յեռանդուն տեռորիստական գործողությունը դարձյալ վորոշ դիմացկունություն մտցրեց զորախմբի մեջ, բայց վերջիվերջո զորախմբի խոշորագույն մասն առանց դիմադրության կցրվեր, յեթե գյուղացիները չնկատեյին, վոր չնայած դինադադարին, իշխանական լանդսկնեխտները շրջապատելով ամբողջ լյառը՝ գոց զորասյուներով առաջ են շարժվում: Կառակույտերի հետևը գյուղացիներն արագորեն ռազմական ճակատ կազմեցին, բայց թշնամու թնդանոթներն ու հրացաններն արդեն գնդակոծում եյին գրեթե անզեն, կռվի անսովոր գյուղացիներին, իսկ լանդսկնեխտներն արդեն մոտեցել եյին կառակույտին: Կարճատև դիմադրությունից հետո կառակույտերի գիծը ճեղքվեց, գյուղացիների թնդանոթները գրավվեցին, իսկ իրենք գյուղացիները ցիրուցան յեղան: Նրանք փախչում եյին մի վայրի անկարգությամբ, ավելի ևս ապահովապես ընկնելով շրջափակող զորասյուների և հեծելազորի ձեռքը, վորոնք մի չլսված արյան բաղնիք սարքեցին գյուղացիների համար: Ութ հազար գյուղացիներից ավելի քան հինգ հազարը կոտորվեց: Կենդանի մնացածները Ֆրանկենհաուզեն փախան, վորոնց հետևից անմիջապես քաղաք մտավ նաև իշխանական հեծելազորը: Քաղաքը գրավվեց: Գլխից վիրավոր Մյունցերը, վոր թաքնվել եր մի տան մեջ, հայտաբերվեց և գերի ընկավ: Մայիսի 25-ին անձնատուր յեղավ նաև Մյուլհաուզենը: Պֆայֆերը, վորը դեռ այնտեղ եր մնացել, փախուստի դիմեց, սակայն Այզենախի շրջանում կալանավորվեց:

Իշխանների ներկայությամբ Մյունցերը տանջանքների յենթարկվեց և այնուհետև գլխատվեց: Նա կառափնատեղի գնաց միևնույն քաջասրտությամբ, վորպիսի արիությամբ ապրել եր իր ամբողջ կյանքում: Իր գլխատման ժամանակ նա ամենաշատը քսանութ տարեկան եր: Պֆայֆերն ել գլխատվեց, և այդ յերկուսից զատ նաև շատ-շատերը: «Քրիստոսասեր» Ֆիլիպպ Հեսսենցին Ֆուլդայում սկսել եր իր արյունարբու դատաստանը: Նրա և սաքսոնական իշխանների կարգադրությամբ Այզենախում գլխատվեցին ապստամբության մասնակիցներից 24 հոգի, Լանգենզալցում—41, Ֆրանկենհաուզենի կռվից հետո 300 հոգի, Մյուլհաուզենում ավելի քան 100 մարդ, Գերմի մոտ—26, Տունգեդայի մոտ—50, Զանգերհաուզենի մոտ—12 և Լայպցիգում 8 հոգի, չխոսելով արդեն խեղումների և այլ ավելի մեղմ պատիժների մասին, ինչպես և մի շարք գյուղերի ու քաղաքների ավերածությունների, կողոպուտների և հրկիզումների մասին:

Մյուլհաուզենը կորցրեց կայսերական քաղաքի ազատությունները և կցվեց սաքսոնական յերկրամասերին, ինչպես նաև Ֆուլդայի աբբայությունը կցվեց Հեսսենի լանդգրաֆությանը:

Այժմ արդեն իշխաններն արշավեցին Թյուրինգյան անտառի վրա, վորտեղ Բիլդհաուզենի բանակի գյուղացիները՝ միանալով Թյուրինգիացիների հետ՝ բազմաթիվ դղյակներ եյին այրել: Ճակատամարտը տեղի ունեցավ Մայնինգենի մոտ, վորտեղ գյուղացիները ջարդվելով նահանջեցին քաղաքի ուղղությամբ: Սակայն վերջինս անսպասելի կերպով դռները փակեց նրանց դեմ և սպառնաց՝ թիկունքի կողմից հարձակում գործել: Իր դաշնակցի այս դավաճանության հետևանքով գյուղացիական զորախումբն անելանելի կացության մեջ ընկնելով՝ բանակցություններ սկսեց իշխանների հետ, բայց դեռ բանակցությունների ընթացքում ցիրուցան յեղավ: Բիլդհաուզենի բանակը վաղուց արդեն ցրվել եր: Այսպիսով այս զորախմբի քայքայմամբ վոչնչացան Սաքսոնիայի, Հեսսենի, Թյուրինգիայի և վերին Ֆրանկոնիայի ապստամբների վերջին մնացորդները:

Ելզասում ապստամբությունն ավելի ուշ բռնկեց, քան Հռենոսի աջ ափում: Միմիայն ապրիլի կեսերին վոտքի յելան Ստրասբուրգի յեպիսկոպոսության գյուղացիները, վորոնցից քիչ հետո ապստամբեցին նաև վերին Ելզասի և Զունդգաուի գյուղացիները: Ներքին Ելզասի գյուղացիական-մի զորախումբ ապրիլի 18-ին կողոպտեց Ալտդորֆ վանքը. մյուս զորախմբերը կազմվեցին Եբերսհայմի և Բարրի շրջակայքում, ինչպես նաև Վիլլերի և Ուրբիսի հովիտներում: Շուտով դրանք համախմբվելով ներքին Ելզասի խոշոր զորախմբի մեջ, ձեռնամուխ յեղան քաղաքների և ավանների գրավման, ինչպես և վանքերի կործանման գործին: Ամեն տեղ կանչվում եր զենք կրելու ընդունակ տղամարդկանց մեկյերրորդական մասը: Այս զորախմբի տասներկու թեզիսները շատ ավելի արմատական բնույթ են կրում, քան շվաբական-ֆրանկոնյան գյուղացիների թեզիսները:

Մինչդեռ Ներքին-ելզասցիների մի զորասյունը մայիսի սկզբին կենտրոնանալով Սանկտ-Հիպպոլիտի մոտ, ապարդյուն փորձ արեց այս քաղաքն իր կողմը գրավելու և համաձայնության գալով մյուս քաղաքների բնակիչների հետ՝ իր իշխանությանը յենթարկեց Բարկեն քաղաքը մայիսի 10-ին, Ռապպոլտսվայլերը՝ մայիսի 13-ին և Ռայխենվայերը՝ մայիսի 14-ին, յերկրորդ զո-

բասյունն Երազմուս Գերբերի առաջնորդությամբ արշավեց Ստրասբուրգի վրա՝ վերջինս հանկարծակի հարձակմամբ գրավելու նպատակով: Այս փորձն անհաջող անցավ, որից հետո զորասյունը շարժվեց դեպի Վոգեզները, ավերեց Մաուրմյունստեր վանքը և պաշարեց Ցաբերնը, որը մայիսի 13-ին անձնատուր յեղավ: Այստեղից նա շարժվեց դեպի Լոթարինգիայի սահմանը, ապստամբություն բարձրացրեց հերցոգության մերձակա մասերում և միաժամանակ գրավեց լեռնանցքերը: Հերբոլցհայմի մոտ, Սաարի ափին, և Նոյբուրգում խոշոր բանակներ կազմվեցին. 4000 գերմանական-լոթարինգիական գյուղացիներ ամրացան Սաարգեմյունդի մոտ. վերջապես յերկու առաջքաշված զորախմբեր,—կոլբենյան զորախումբը Վոգեզներում՝ Շտյուրցելբրոնի մոտ և կլեբուրգյան զորախումբը՝ Վայսենբուրգի մոտ,—պաշտպանում եյին զորաճակատը և աջ թևը, մինչդեռ ձախ թևը հենվում եր վերին-ելզասցիների ուժերի վրա:

Վերին-ելզասցիներն ապրիլի 20-ին ապստամբելով, հարկադրեցին գյուղացիական յեղբայրությանը հարել Զուլցին մայիսի 10-ին, Գեբվայլերին՝ մայիսի 12-ին և Զենհայմին և դրա շրջակայքին՝ մայիսի 15-ին: Թեև ավստրիական կառավարությունը և շրջակա կայսերական քաղաքներն անմիջապես դրանց դեմ միություն կազմեցին, սակայն նրանք չափազանց թույլ եյին որևէ լուրջ դիմադրություն ցույց տալու, ուր մնաց թե հարձակում գործելու համար: Այսպիսով, միքանի քաղաքների բացառությամբ, ամբողջ Ելզասը մինչև մայիսի կեսերն ապստամբների ձեռքն անցավ:

Սակայն արդեն մոտենում եր այն զորքը, որը պիտի խորտակեր Ելզասի գյուղացիների անզուսպ քաջությունը: Դրանք ֆրանսացիներն եյին, որոնք այստեղ կրկին վերականգնեցին ազնվականության գերիշխանությունը: Դեռ մայիսի 6-ին առաջ շարժվեց Լոթարինգիայի հերցոգ Անտոնն իր՝ 30·000-անոց բանակով, որի շարքերի մեջ եր գտնվում ֆրանսական ազնվականության ծաղիկը, ինչպես նաև սպանական, պիեմոնտական, լոմբարդական, հունական և ալբանական ոժանդակ զորամասերը: Մայիսի 16-ին Լյուցելշտայնի մոտ բախվելով 4000 գյուղացիների հետ, նա առանց դժվարության ջարդեց վերջիններիս և արդեն մայիսի 17-ին հարկադրեց՝ գյուղացիների կողմից գրավված Ցաբերն քաղաքին անձնատուր լինել: Սակայն քաղաքը հանձնելու պայմանադիրը խախտվեց հենց այն ժամանակ, յերբ

լոթարինգիացիները դեռ նոր եյին քաղաք մտել և գյուղացիների զինաթափությունն սկսել. լանդսկնեխտները հարձակվելով անպաշտպան գյուղացիների վրա, դրանց մեծ մասին կոտորեցին: Ներքին-ելզասցիների մյուս զորասյուները ցրվեցին, և այժմ արդեն հերցոգ Անտոնը շարժվեց վերին-ելզասցիների դեմ: Վերջիններս, որոնք հրաժարվել եյին ներքին—ելզասցիներին ոգնելու համար Ցաբերն մեկնել, այժմ արդեն Շերվայլերի մոտ յենթարկվեցին լոթարինգիացիների բոլոր ուժերի հարձակմանը: Նրանք պաշտպանվում եյին մեծ քաջությամբ, բայց թշնամու թվական հսկայական գերակշռությունը,—30·000 հոգի 7000-ի դեմ,—և միքանի ասպետների, մանավանդ Ռայխենվայերի ֆոխտի դավաճանությունը, ի դերև հանեց ամեն մի արիություն: Նրանք միանգամայն ջախջախվեցին և ցիրուցան յեղան, որից հետո սովորական դաժանությամբ հերցոգը հնազանդեցրեց ամբողջ Ելզասը: Նրա ապստամբությունից միմիայն Զունդգաուն խնայվեց: Հունիսի սկզբին այստեղ ավստրիական կառավարությունն ստիպեց իր գյուղացիներին կնքել Ենզիսհայմի դաշնագիրը, սպառնալով հակառակ դեպքում հերցոգին այդտեղ կանչել: Բայց հենց ինքն անմիջապես նորից խախտելով այդ դաշնագիրը, հրամայեց՝ շարժման քարոզիչներին և ղեկավարներին մասսայապես կախել: Դրանից հետո գյուղացիները մի նոր ապստամբություն բարձրացրին, որը վերջիվերջո այն վախճանն ունեցավ, որ Ոֆֆենբուրգի դաշնագիրը (սեպտեմբերի 18) տարածվեց Զունդգաուի գյուղացիների վրա:

Այժմ մեզ մնում ե շարադրել Ավստրիայի ալպիական յերկրամասերում տեղի ունեցած գյուղացիական պատերազմի ընթացքը: Այս յերկրները, ինչպես և դրանց կից գտնվող Զալցբուրգի արքեպիսկոպոսական շրջանը, «հին իրավունքների» վերականգնման շարժումից ի վեր շարունակ ոպոզիցիա եյին կազմում կառավարության և ազնվականության դեմ, ընդվորում բարենորոգչական ուսմունքներն այստեղ ել նպաստավոր հող գտան իրենց համար: Կրոնական հալածանքները և կամայական հարկման կամայականությունները նպաստեցին ապստամբության բռնկմանը:

Զալցբուրգ քաղաքը, պաշտպանություն գտնելով գյուղացիների և հանքագործների կողմից, իր քաղաքային արտոնությունների և պաշտամունքի հարցերի պատճառով դեռևս 1522 թվից գժտված եր արքեպիսկոպոսի հետ: 1524 թվի վերջին վարձկան

յանդուգն ելույթներով արքեպիսկոպոսը հարձակվեց քաղաքի վրա,
ահաբեկեց քաղաքացիներին ամբողջ թնդանոթներով և սկսեց
հալածել հերետիկոս քարոզիչներին: Միաժամանակ նա նոր ու
չափազանց ծանր հարկեր նշանակեց և դրանով ծայր աստիճան գրգռեց
վողջ ազգաբնակչությունը: 1525 թվի գարնանը շվաբական,
ֆրանկոնյան և թյուրինգիական ապստամբության հետ միաժա-
մանակ հանկարծ վոտքի յելան ամբողջ շրջանի գյուղացիներն ու
հանքագործները, Պրոսլերի և Վայտմոզերի ղեկավարությամբ
խմբեր կազմեցին, ապառեցին քաղաքը և պաշարեցին Զալցբուրգ
ամրոցը: Արևմտյան Գերմանիայի գյուղացիների նման նրանք
քրիստոնեական միություն կազմեցին և իրենց պահանջներն ամ-
փոփեցին թեզիսների մեջ, վորոնք բաղկացած եյին տասնչորս
հոդվածներից:
Նաև Շտայերմարկում, Վերին Ավստրիայում, Կարինտիա-
յում և Կրայնում, վորտեղ նոր սահմանված ապրինի հարկերը,
մաքսերն ու վորոշումները խիստ վնասներ եյին հասցնում ժո-
ղովրդի կենսական շահերին, 1525 թվի գարնանը գյուղացիները
վոտքի յելան: Նրանք գրավեցին մի շարք դղյակներ և Գրիսսի
շրջակայքում ջախջախեցին «հին իրավունքների» վերականգնման
շարժումը հաղթահարողին՝ հին զորահրամանատար Դիտրիխ-
շտայնին: Չնայած իր խարեպատիր գործելակերպով կառավա-
րությունը կարողացավ հանդստացնել ապստամբների մի մասին,
այնուամենայնիվ ժողովրդի մասսան համախմբված մնալով՝
միացավ զալցբուրգցիների հետ, այնպես վոր ամբողջ Զալցբուր-
գի արքեպիսկոպոսությունը, ինչպես և Վերին Ավստրիայի,
Շտայերմարկի, Կարինտիայի և Կրայնի խոշորագույն մասը,
մնաց գյուղացիների և հանքագործների ձեռքում:
Բարենորոգչական ուսմունքները Տիրոլում ևս մեծ քանակու-
թյամբ կողմնակիցներ գտան. Մյունցերի եմիսարների գործու-
նեյությունն այստեղ առավել ևս մեծ հաջողություն ունեցավ,
քան Ավստրիայի մերձալպյան մյուս յերկրամասերում: Այստեղ
ևս Երցհերցոգ Ֆերդինանդը հալածում եր նոր հավատի քարո-
զիչներին և նույնպես ֆինանսական կամայական նոր միջոցա-
ռումների շնորհիվ խախտում եր ժողովրդի իրավունքները: Ինչ-
պես ամեն տեղ, այնպես և այստեղ դրա հետևանքն այն յեղավ,
վոր միենույն 1525 թվի գարնանը ժողովուրդն ապստամբու-
թյան դրոշ պարզեց: Ապստամբները, Մյունցերի հետևողներից
մեկի՝ Հայսմայերի գլխավորությամբ, վորը բոլոր գյուղացիա-
կան առաջնորդների մեջ միակ խոշոր զորահրամանատարն եր,

բազմաթիվ ամրոցներ գրավեցին և չափազանց յեռանդուն մի-
ջոցներ ձեռք առան հոգևորականների դեմ, մանավանդ հարա-
վում՝ Եչի շրջանում: Նույնպես Փորարլբերգցիներն ապստամբե-
ցին և ալգաուցիների հետ միացան:
Ամեն կողմից նեղն ընկած երցհերցոգը, վորը քիչ առաջ
սրով ու հրով ուզում եր բնաջինջ անել ապստամբներին, այժմ
սկսեց մեկը մյուսի հետևից մի շարք զիջումներ անել: Նա հրա-
վիրեց իր ժառանգական յերկրամասերի լանդտագները և մինչև
դրանց գումարումը զինադադար կնքեց գյուղացիների հետ: Այդ
ժամանակամիջոցում նա ուժեղ սպառազինման պատրաստու-
թյուն տեսավ, վորպեսզի ըստ կարելույն շուտով կարողանա այլ
լեզվով խոսել այդ «վոճրագործների» հետ:
Իհարկե, զինադադարը յերկար չպահպանվեց: Դիտրիխ-
շտայնը, վորի դրամը բոլորովին սպառվել եր, սկսեց հերցոգու-
թյունների մեջ ռազմական տուգանքներ նշանակել: Դրանից
զատ, նրա սլավոնական և մաջարական զորամասերն ամենաանա-
մոթ դաժանություններ եյին թույլ տալիս ժողովրդի նկատ-
մամբ: Այդ իսկ պատճառով Շտայերմարկի ժողովուրդը կրկին
ծառացավ և Շլադմինգում հուլիսի 2 լույս 3-ի գիշերը հարձակ-
վելով Դիտրիխշտայնի վրա, կոտորեց այն բոլորին, վորոնք գեր-
մաներեն չեյին խոսում: Ինքը Դիտրիխշտայնը գերի ընկավ.
հուլիսի 3-ի առավոտը գյուղացիները յերդվյալ ատենակալների
դատարան կազմեցին և գերի ընկածներից քառասուն չեխական և
խորվաթական ազնվականների մահվան դատապարտեցին: Դրանք
անմիջապես գլխատվեցին: Այս հանգամանքն իր ազդեցությունն
ունեցավ. երցհերցոգն անմիջապես համաձայնեց բավարարել
հինգ հերցոգությունների (Վերին և Ներքին Ավստրիայի, Շտա-
յերմարկի, Կարինտիայի և Կրայնի) դասերի բոլոր պահանջները:
Լանդտագի պահանջները Տիրոլում ևս բավարարվեցին, և
դրանով հյուսիսը խաղաղվեց: Իսկ հարավը զենքը ցած չդրեց,
քանի վոր հրաժարվելով լանդտագի մեղմացրած վորոշումնե-
րով, պնդում եր իր նախնական պահանջների վրա: Միմիայն
դեկտեմբերին երցհերցոգը զենքի ուժով կարողացավ կարգ ու
կանոնն այստեղ վերականգնել: Նա չկլացավ, իհարկե, մահվան
պատժի յենթարկել իր ձեռքն ընկած՝ խռովության բազմաթիվ
դրդիչներին և առաջնորդներին:
Տաս հազար բավարացիներ Գեորգ Ֆոն-Ֆրունդսբերգի հրա-

մանատարությամբ օգոստոսին արշավեցին Զալցբուրգի վրա։ Այս պատկառելի զինվորական ուժը, ինչպես և գյուղացիների մեջ ծայր առած յերկպառակությունները, հարկադրեցին զալցբուրգցիներին՝ դաշնագիր կնքել արքեպիսկոպոսի հետ, դա ստորագրվեց սեպտեմբերի 1-ին և ընդունվեց նաև երցհերցոգի կողմից։ Սակայն այս յերկու իշխաններն էլ, վորոնք այդ ժամանակամիջոցում իրենց զորամասերը բավականաչափ ուժեղացրել էյին, շուտով խախտեցին հիշյալ դաշնագիրը և դրանով իսկ հարկադրեցին գյուղացիներին՝ վերսկսել ապստամբությունը։ Ապստամբներն ամբողջ ձմեռը դիմացան, իսկ գարնանը նրանց մոտ յեկավ Հայսմայերը, վորը փայլուն ռազմական կամպանիա սկսեց՝ ամեն կողմերից նրանց վրա շարժվող զորամասերի դեմ։ 1526 թվի մայիսին և հունիսին մի շարք փայլուն ճակատամարտերում մեկը մյուսի հետևից նա ջախջախեց բավարացիներին, ավստրիացիներին, դաշնակիցների շվաբական զորամասերը և Զալցբուրգի արքեպիսկոպոսի լանդսկնեխտներին, և յերկար ժամանակ նա թույլ չտվեց, վոր թշնամու զանազան բանակները միանան միմյանց հետ։ Դրանից զատ նա նույնիսկ ժամանակ գտավ Ռադշտադտը պաշարելու։ Վերջապես, ամեն կողմից շրջապատված լինելով թշնամու գերազանց ուժերով՝ նա հարկադրված էր նահանջել․ ճեղքելով թշնամու շղթան՝ իր բանակի մնացորդներն ավստրիական Ալպերի միջով նա տարավ Վենետիկյան յերկիրը։ Վենետիկի հանրապետությունը և Շվեյցարիան նոր խնդիրների հենակետեր տվին գյուղացիական այս անխոնջ առաջնորդին, վորը դեռ մի ամբողջ տարի փորձեր արեց՝ այդ յերկրների և Ավստրիայի միջև պատերազմ յառաջացնել, վորպեսզի հնարավորություն ունենա վերստին գյուղացիական ապստամբություն բարձրացնելու։ Սակայն այս բանակցությունների ժամանակ նրա վրա բարձրացավ մարդասպանի ձեռքը։ Քանի դեռ Հայսմայերը կենդանի յեր, երցհերցոգ Ֆերդինանդը և Զալցբուրգի արքեպիսկոպոսն իրենց հանգիստ չէյին կարող զգալ, ուստի և նրանք կաշառեցին մի բանդիտի, վորին հաջողվեց 1527 թվին սպանել այս վտանգավոր հեղափոխականին։

VII

Դեպի Վենետիկյան յերկիրը Հայսմայերի կատարած նահանջով ավարտվեց գյուղացիական պատերազմի վերջին դրվագը։ Գյուղացիներն ամեն տեղ կրկին իրենց հոգևոր, ազնվական կամ պատրիկական տերերի իշխանությանը յենթարկվեցին․ գյուղա-

ցիների հետ տեղ-տեղ կնքված դաշնագրերը խախտվեցին, նրանց մինչայժմյան բեռն ավելի ևս ծանրացավ շնորհիվ այն սոսկալի պատերազմական տուգանքների, վոր հաղթողները դնում էյին պարտվածների վրա։ Գերմանական ժողովրդի ամենափառահեղ հեղափոխական փորձը վերջացավ ամենախայտառակ պարտությամբ և միառժամանակ տարավ դեպի ճնշման կրկնապատկումը։ Սակայն ապստամբության ճնշումը գյուղացիության դրությունը վոչ յերկար ժամանակով վատթարացրեց։ Այն ամենը, ինչ վոր ազնվականությունը, իշխանները և հոգևորականները տարեցտարի կարող էյին քամել գյուղացիներից, դեռ մինչև պատերազմն էլ անկասկած քամվում էր։ Այն ժամանակաշրջանի գերմանացի գյուղացին նմանվում էր արդի պրոլետարին նրանով, վոր աշխատանքի պրոդուկտների մեջ նրա ունեցած բաժինը սահմանափակվում էր նրա գոյության միջոցների այն նվազագույն չափով, վորն անհրաժեշտ էր նրա գոյությունը պահպանելու և նրա սերունդը շարունակելու համար։ Այսպիսով ուրեմն միջին հաշվով այստեղ այլևս վերցնելու վոչինչ չէր մնում։ Բարեկեցիկ միջակ գյուղացիներից շատերն, իհարկե, քայքայվեցին, կախյալ գյուղացիներից շատերը հարկադրված յեղան ճորտ դառնալ, համայնապատկան հողամասերից ահագին տարածություններ գրավվեցին․ իրենց բնակարանների կործանման, դաշտերի ավերածության և ընդհանուր անարխիայի հետևանքով գյուղացիների խոշոր բազմությունը մատնվեց թափառաշրջիկության կամ քաղաքային պլեբեյ դարձավ։ Սակայն պատերազմները և ավերածություններն այն դարաշրջանի սովորական յերևույթների կարգին էյին պատկանում, և գյուղացիական դասակարգի ընդհանուր վիճակն այնքան ցածր էր, վոր հարկերի բարձրացումը հազիվ թե յերկարատև վատթարացում մտցներ նրա դրության մեջ։ Դրան հաջորդող կրոնական կռիվները և վերջապես Յերեսնամյա պատերազմն իրենց բազմիցս կրկնվող ավերածություններով և ազգաբնակության վոչնչացումով շատ ավելի ծանր հետևանքներ ունեցան գյուղացիների համար, քան գյուղացիական պատերազմը․ մանավանդ Յերեսնամյա պատերազմը վոչնչացրեց յերկրագործության մեջ ներդրված արտադրողական ուժերի խոշորագույն մասը, և դա, այլև միաժամանակ բազմաթիվ քաղաքների կործանումը, յերկար ժամանակով այնպիսի վիճակի մեջ դցեց գյուղացիներին, պլեբեյներին և քայքայված բյուրգերներին, վոր նմանվում էր իռլանդական ժողովրդի թշվառության ամենավատթար ձևին։

Գյուղացիական պատերազմի հետևանքներից ամենից շատ տուժեց հոգևորականությունը: Նրա վանքերն ու հաստատությունններն այրվել եյին, նրա թանկարժեք իրերը կողոպտվել, արտասահմանում վաճառվել կամ իբրև մետաղ հալվել, իսկ նրա պաշարները կերվել, սպառվել եյին: Ամեն տեղ ամենից թույլ դիմադրությունը հոգևորականները կարող եյին ցույց տալ, բայց միաժամանակ ժողովրդական ատելության ամբողջ ուժը նրանց դեմ եր ուղղված: Ատելի պրելատների ծանր կացությունը նույնիսկ գաղտնի ուրախություն եր պատճառում մյուս դասերին՝ իշխաններին, ազնվականությանն ու քաղաքացիներին: Գյուղացիական պատերազմը ժողովրդականացրեց հոգևորական կալվածքները հօգուտ գյուղացիության սեկուլարիզացիայի գաղափարը: Աշխարհական իշխանները և մասամբ քաղաքները ձըգտում եյին այդ աշխարհականացումը կատարել իրենց օգտին, և բողոքական յերկրներում պրելատների կալվածքները շուտով անցան իշխանների կամ քաղաքային պատրիկների ձեռքը: Սակայն հոգևոր իշխանների տիրապետությանն ել դժվար վնաս հասավ. աշխարհական իշխաններին հաջողվեց ոգտագործել ժողովրդական ատելությունը նաև այս ուղղությամբ: Այսպես, մենք տեսանք, թե ինչպես Ֆուլդայի աբբան Ֆիլիպպ Հեսսենցու սենյորից նրա վասալը դարձավ: Այսպես, Կեմպտեն քաղաքը հարկադրեց իր իշխան-աբբային այդ քաղաքում իր ունեցած մի շարք արժեքավոր արտոնությունները վաճառել վերին աստիճանի եժան գնով:

Զգալի չափով տուժեց նաև ազնվականությունը: Նրա դղյակների մեծ մասը վոչնչացվել եր, ամենաազդեցիկ տոհմերի մի մասը քայքայվեց և իր գոյությունը պահպանելու համար պիտի իշխանների մոտ ծառայության մտներ: Պատերազմը ցույց տվեց ազնվականության անզորությունը գյուղացիների հանդեպ. նա ամենուրեք պարտություն կրեց, և ստիպված եր անձնատուր լինել: Նրան միայն իշխանների զորքերը փրկեցին: Հետզհետե նա կորցնում ե իր նշանակությունն իբրև կայսրության անմիջականորեն յենթակա դաս, և ավելի ու ավելի իշխաններին յենթարկվում:

Ընդհանուր առմամբ քաղաքները ել վոչ մի ոգուտ չունեցան գյուղացիական պատերազմից: Գրեթե ամեն տեղ նորից ամրապնդվեց քաղաքային պատրիկության իշխանությունը, իսկ բյուրգերական ոպոզիցիան յերկար ժամանակով ընկճվեց: Այսպիսով հին պատրիկական ռուտինան, ամեն կողմից կաշկանդելով առևտուրը և արդյունաբերությունը, քարշ տվեց իր գոյությունը մինչև Ֆրանսիական հեղափոխությունը: Սրանից զատ, իշխանները քաղաքներին պատասխանատու եյին համարում այն ժամանակավոր հաջողությունների համար, վոր բյուրգերական և պլեբեյական կուսակցությունը պայքարի ընթացքում ձեռք եր բերել հենց այդ քաղաքների ծոցում: Այն քաղաքները, վորոնք դեռ դրանից առաջ իշխաններին պատկանող յերկրամասերի սահմանների մեջ եյին մտնում, ծանր տուգանքների յենթարկվեցին, իրենց արտոնություններից զրկվեցին և իշխանների ընչաքաղց կամայականությանը յենթարկվեցին (Ֆրանկենհաուզեն, Արնշտադտ, Շմալկալդեն, Վյուրցբուրգ և այլն). կայսերական ազատ քաղաքներն իշխանական յերկրամասերին կցվեցին (որինակ, Մյուլհաուզենը) կամ թե բարոյական կախման մեջ ընկան հարևան իշխաններից, ինչպես Ֆրանկոնյան կայսերական քաղաքներից շատերը:

Այս պայմաններում գյուղացիական պատերազմից միակ ոգուտ քաղողներն իշխանները եյին: Մեր շարադրանքի հենց սկզբում արդեն տեսանք, թե ինչպես Գերմանիայի արդյունաբերական, առևտրական և գյուղատնտեսական թերի զարգացումն անհնարին եր դարձնում գերմանացիների վորևե միավորումն ու միասնական ազգություն կազմելը. հնարավոր եր միայն տեղական ու պրովինցիալ կենտրոնացումը, և թե դրա համար ել ընդհանուր մասնատվածության պայմաններում այս կենտրոնացման կրողները, իշխանները, այն միակ դասն եյին, վորը պետք ե ոգտվեր գոյություն ունեցող հասարակական ու քաղաքական հարաբերությունների ամեն մի փոփոխությունից: Այն ժամանակվա Գերմանիայի զարգացման աստիճանն այնքան ցածր եր և միաժամանակ այնքան անհավասարաչափ եր տարբեր գավառներում, վոր աշխարհական իշխանությունների կողքին կարողանում եյին իրենց գոյությունը պահպանել նաև սուվերեն յեկեղեցական պետությունները, քաղաքային հանրապետությունները, սուվերեն կոմսերն ու բարոնները. սակայն այդ զարգացումը միաժամանակ առաջ եր մղում, թեև շատ դանդաղ ու թույլ կերպով, դեպի մարզային կենտրոնացումը, այսինքն դեպի մի այնպիսի կենտրոնացում, վորի հետևանքով բոլոր մյուս դասերն իշխաններին եյին յենթարկվում: Այդ իսկ պատճառով գյուղացիական պատերազմից վերջիվերջո միմիայն իշ-

խանները կարող եյին չահել։ Փաստորեն այդպես էլ յեղավ։ Նրանք չահեցին վոչ միայն հարաբերականորեն՝ իրենց մրցակիցների՝ հոգևորականների, ազնվականների և քաղաքների թուլացումից, այլև չահեցին բացարձակորեն՝ ստանալով ի հաչիվ մյուս բոլոր դասերի գլխավոր ավարը (spolia opima)։ Հոգևորական կալվածքները սեկուլյարիզացիայի յենթարկվեցին հոգուտ իչխանների. ազնվականության մի մասը կիսով չափ կամ ամբողջովին քայքայվելով, հարկադրված եր հետզհետե իչխանների հպատակության տակ մտնել. քաղաքների և գյուղացիական համայնքների վրա դրված ռազմական տուգանքի դրամները հոսում եյին իչխանական գանձարանը, վորը, բացի այդ, քաղաքների բազմաթիվ արտոնությունների վերացման հետևանքով՝ չատ ավելի ազատ ասպարեզ եր ձեռք բերել իր սիրած ֆինանսական գործառնությունների համար։

Գերմանիայի մանրատվածությունը, վորի սրումն ու ուժեղացումը գյուղացիական պատերազմի գլխավոր արդյունքն եր, միաժամանակ նաև այդ պատերազմի անհաջող յելքի պատճառն եր։

Մենք տեսանք, վոր Գերմանիան վոչ միայն մանրատված եր բազմաթիվ մարզերի, վորոնք միմյանցից անկախ եյին և միմյանց համար գրեթե բոլորովին ոտար եյին, այլև ժողովուրդն այդ մարզերից ամեն մեկում ստորաբաժանվում եր բազմաթիվ առանձին դասերի և դասերի մասերի։ Բացի իչխաններից և քահանաներից՝ գյուղերում մենք տեսնում ենք ազնվականներ և գյուղացիներ, իսկ քաղաքներում՝ պատրիկներ, բյուրգերներ և պլեբեյներ։—Այս բոլորն այնպիսի դասեր եյին, վորոնց չահերը միմյանց հանդեպ միանգամայն ոտար եյին, յեթե վոչ խաչաձևվող ու հակադիր։ Բացի այս բոլոր բարդ չահերից՝ դրանցից վեր գոյություն ունեյին նաև կայսեր ու պապի չահերը։ Մենք տեսանք, թե ինչպիսի դժվարությամբ, ինչպես թերի կերպով և ըստ տեղական պայմանների այս տարբեր չահերն անհավասարաչափ կերպով վերջիվերջո ձևավորվեցին յերեք խոշոր խմբերի մեջ. թե ինչպես ամեն մի դաս, չնայած այսպիսի դժվարությամբ գլուխ յեկած խմբավորմանը, ոպոզիցիոն դիրք եր բռնում՝ տվյալ հանգամանքներով պայմանավորված ազգային զարգացման ուղղության նկատմամբ, իր չարժումն ստեղծում եր իր սեփական պատասխանատվությամբ և հենց այդ պատճառով էլ բախվում եր վոչ միայն բոլոր հետադիմական դասերի, այլև

մյուս բոլոր ոպոզիցիոն դասերի հետ և վերջիվերջո անխուսափելիորեն պարտվում։ Այսպիսի դրության մեջ ընկավ ազնվականությունը Զիկկինգենի ապստամբության ժամանակ, գյուղացիները—գյուղացիական պատերազմի ընթացքում և բյուրգերները—իրենց ամբողջ «խաղաղ» ռեֆորմացիայի ժամանակ։ Ճիչտ այդպես էլ նույնիսկ գյուղացիներն ու պլեբեյները Գերմանիայի չատ վայրերում չկարողանալով միանալ ընդհանուր գործողությունների համար, միմյանց դեմ խոչընդոտներ եյին հարուցում։ Նույնպես մենք տեսանք, թե ինչ պատճառներից եր առաջանում դասակարգային պայքարի այս մանրատումը և հենց դրանով էլ պայմանավորված այն կատարյալ պարտությունը, վոր կրեց հեղափոխական չարժումը, և այն մասնակի պարտությունը, վոր վիճակվեց բյուրգերական չարժմանը։

Նախընթաց չարադրանքը, կարծում եմ, բավականաչափ պարզորեն ցույց տվեց, թե ինչպես տեղական ու պրովինցիալ մանրատվածությունը և դրանից անհրաժեչտորեն բխող տեղական ու պրովինցիալ սահմանափակությունից վեր բարձրանալու անկարողությունը կործանեց ամբողջ չարժումը,—թե ինչպես վո՛չ բյուրգերները, վո՛չ էլ գյուղացիները, վո՛չ պլեբեյներն անընդունակ դուրս յեկան միասնական համազգային յելույթ կազմակերպելու,—թե ինչպես, որինակի համար, ամեն մի պրովինցիայում գյուղացիները հանդես եյին գալիս իրենց սեփական պատասխանատվությամբ, միչտ էլ հրաժարվում եյին ոգնություն հասնել իրենց հարևան ապստամբ գյուղացիներին, և այդ պատճառով էլ առանձին մարտերում մեկը մյուսի հետևից նրանք ջախջախվում եյին թչնամու զորքերի կողմից, վորոնք առհասարակ ապստամբների ընդհանուր մասսայի մեկ տասներորդական մասն անգամ չեյին կազմում։ Զանազան զինադադարներն ու դաչնագրերը, վոր առանձին զորախմբերը կնքում եյին իրենց հակառակորդների հետ, վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ դավաճանական ակտեր ընդհանուր գործի դեմ, ըստվորում այն հանգամանքը, վոր առանձին զորախմբերի միակ հնարավոր խմբավորումը պիտի կատարվեր վոչ թե իրենց սեփական, առավել կամ նվազ չափով ընդհանուր նչանակություն ունեցող գործողությունների տեսակետից, այլ այն հիման վրա, վոր նրանք գործ ունեին հատկապես մի ընդհանուր թչնամու հետ, վորից և նրանք պարտվում եյին,—մի աչքի զարնող ապացույց է, թե տարբեր պրովինցիաների գյուղացիներն ինչ չափով ոտար եյին միմյանց նկատմամբ։

Այստեղ ևս ինքնին ակամայից անալոգիա յե նկատվում 1848—1850 թվերի շարժման հետ: Օպոզիցիոն դասակարգերի շահերը 1848 թվին նույնպես բախվում եյին միմյանց հետ, և նրանցից յուրաքանչյուրը գործում եր իր ուխկով: Բուրժուազիան այնքան զարգացել եր, վոր այլևս չեր հանդուրժում ֆեոդալական-բյուրոկրատիկ աբսոլուտիզմը, բայց և նա այնքան ուժեղ չեր, վոր մյուս դասակարգերի հավակնությունները կարողանար անմիջապես յենթարկել իր ձգտումներին: Պրոլետարիատը դեռևս չափազանց թույլ լինելով, չեր կարող հույս տածել՝ բուրժուական ժամանակաշրջանը շուտով հաղթահարելու և մոտ ապագայում իշխանությունն իր ձեռքն առնելու մասին. աբսոլուտիզմի օրերին նա արդեն բավականաչափ ճաշակել եր բուրժուական ռեժիմի քաղցրությունները և ընդհանրապես այնքան զարգացել, վոր բուրժուազիայի ազատագրման մեջ մի վայրկյան անգամ չեր կարող տեսնել իր սեփական ազատագրումը: Ազգի մասսան—մանր բուրժուազիան, արհեստավորներն ու գյուղացիները, բախտի քմահաճույքին եր թողնված իր առայժմս դեռ բնական դաշնակցի՝ բուրժուազիայի կողմից, իբրև մի չափազանց հեղափոխական զանգված. տեղ-տեղ նրան ճակատագրի կամքին եր թողել նաև պրոլետարիատը, իբրև վոչ բավականաչափ առաջադեմ տարր: Իր հերթին այդ մասսան հենց իր ներսում մանրատված լինելով, վոչինչ չկարողացավ ձեռք բերել և օպոզիցիայի մեջ մտավ թե՛ աջակողմյան և թե՛ ձախակողմյան իր հարևանների դեմ: Վերջապես գյուղացիների տեղական սահմանափակվածությունից վեր բարձրանալու անկարողությունը 1525 թվին չեր կարող ավելի ուժեղ լինել, քան այն սահմանափակվածությունը, վոր տիրում եր 1848 թվի շարժմանը մասնակցող բոլոր դասակարգերի մեջ: Դրա համար պերճախոս ապացույց կարող են ծառայել՝ հարյուրավոր տեղական հեղափոխությունները, դրանց հաջորդող և նույնպես անարգել կերպով իրականացրած հարյուրավոր տեղական ռեակցիաները, ինչպես և իր ուժի մեջ մնացած մանրապետական պարտիկուլարիզմը: Նա, ով գերմանական յերկու հեղափոխություններից էլ՝ 1525 թվի հեղափոխությունից և 1848 թվի,—և դրանց արդյունքներից հետո դեռևս կարող է բարբաջել փեդերատիվ հանրապետության մասին, նրա տեղը գժանոցն է միայն:

Սակայն չնայած այս բոլոր անալոգիաներին, այդ յերկու հեղափոխություններն էլ՝ XVI դարի հեղափոխությունը և

1848—1850 թվերի հեղափոխությունը,—եյապես խիստ տարբերվում են միմյանցից: 1848 թվի հեղափոխությունն ապացուցում է յեթե վոչ Գերմանիայի առաջադիմությունը, գոնե Յեվրոպայի առաջադիմությունը:

Ո՞վ շահեց 1525 թվի հեղափոխությունից: Իշխանները:—Ո՞վ շահեց 1848 թվի հեղափոխությունից: Խոշոր թագավորները—Ավստրիան և Պրուսիան: 1525 թվի մանր իշխանների հետևը կանգնած եր այն մանր բյուրգերությունը, վորը կապված եր նրանց հետ հարկատվությամբ, իսկ 1850 թվի խոշոր թագավորների՝ Ավստրիայի և Պրուսիայի թիկունքում կանգնած է ժամանակակից խոշոր բուրժուազիան, վոր պետական պարտքերի միջոցով արագորեն յենթարկում է իրեն այդ իշխաններին: Իսկ խոշոր բուրժուաների հետևը պրոլետարիատն է կանգնած:

1525 թվի հեղափոխությունը գերմանական տեղական գործ եր: Յերբ գերմանացիներն սկսեցին իրենց գյուղացիական պատերազմը, անգլիացիները, ֆրանսացիները, չեխերը, հունգարացիներն արդեն ավարտել եյին իրենց գյուղացիական պատերազմները: Յեթե Գերմանիան մանրատված եր, ապա Յեվրոպան առավել ևս մեծ չափով եր մանրատված: 1848 թվի հեղափոխությունը գերմանական տեղական գործ չեր, այլ յեվրոպական խոշոր դեպքի առանձին միջադեպն եր: Այդ շարժման ամբողջ ընթացքում գործող պատճառները չեն կապված վորևէ առանձնակի, վոչ էլ վորևէ աշխարհամասի նեղ տարածությամբ: Դեռ ավելին, այս հեղափոխության համար թատերաբեմ ծառայող յերկրներն ամենից քիչ մասնակցություն են ունեցել այդ հեղափոխությունն առաջ բերելու գործում: Այդ յերկրները վոչ այլ ինչ են, քան առավել կամ նվազ չափով անգիտակից և կամազուրկ հում նյութ, վորը պիտի վերամշակվի այն շարժման ընթացքում, վորին այժմ մասնակցում է բովանդակ աշխարհը, մի շարժման ընթացքում, վորը գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների պայմաններում կարող է, իհարկե, սոսկ մի տարր ուժ թվալ մեզ, թեև վերջիվերջո նա միմիայն մեր սեփական շարժումն է հանդիսանում: Ուստի և 1848—1850 թվերի հեղափոխությունը չի կարող այնպես վերջանալ, ինչպես վերջացավ 1525 թվի հեղափոխությունը:

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ալբա, Ֆերդինանդ (1507—1582) — 96:
Ալբրեխտ, Սաքսոնիայի հերցոգ (1443—1500) — 71:
Ալգենհաուտ, Անտոն (մահապատժի յենթ. 1525 թ.) — 114:
Այլվա, Սիարդ — 71:
Այտել, Հաննս (Ցիգելմյուլլեր) — 99:
Անտոն Լոթարինգիացի (1508—1544) — 134, 135:
Առնոլդ Բրեշիացի (մեռ. 1155 թ.) — 46, 48:

Բախ, Վալտեր — 123, 125:
Բակունին, Միխայիլ (1814—1870) — 22:
Բանտելհանս (Բանտել, Հանս) — 80:
Բառնաբաս — 83:
Բատորի, Ստեփան (մեռ. 1535) — 84:
Բեռլին, Հանս — 106, 116:
Բյոհայմ, Հանս (Սրնգահար Հանս) (մեռ. 1476 թ.) — 68, 69, 70, 71:
Բոլլ, Ջոն (մեռ. 1381 թ.) — 46, 49:
Բոկկաչիո, Ջովաննի (1319—1375) — 47:
Բոնապարտ, Լյուդովիկ (Նապոլեոն III, Լուի Բոնապարտ) (1808—1873) — 6, 10:
Բուրգ-Բերնսհայմ, Գրեգոր — 119, 120:
Բրայտ, Ջոն (1811—1889) — 10:

Գեյեր, Ֆլորիան (ֆոն-Հայերսբերգ) (սպանված 1525 թ.) — 104, 105, 106, 107, 117, 119, 120, 121:
Գեորգ, Սաքսոնիայի հերցոգ (1471—1539) — 65:
Գերբեր, Էրազմուս (մեռ. 1525 թ.) — 134:
Գերբեր, Թեուս — 110, 114:
Գյոց ֆոն-Բեռլիխինգեն (1480—1562) — 104, 105, 107, 117, 118:
Գուդել-Բաստիան (մահվ. յենթ. 1514 թ.) — 82:
Գրեբել, Կոնրադ — 66:

Դիտրիխշտայն, Զիգմունդ — 85, 136, 137:
Դոժա, Գեորգ (1474—1514) — 82, 83, 84:
Դոժա, Գրեգոր (մահ. յենթ. 1514) — 83:

Զապոլյա, Յան (1487—1540) — 83, 84:
Զիկկինգեն, Ֆրանց (1481—1523) — 53, 88, 91, 143:
Զինդերհանս (Զինդեր, Հանս) (մեռ. 1514 թ.) — 80:
Զուլցի կոմս (Զուլց, Ռուդոլֆ, կոմս) — 124:

Թայլըր, Ուոտ, Եսսեքսից (մեռ. 1381 թ.) — 49:

Թումբ, Կոնրադ ֆոն-Նոյբուրգ (1465—1525) — 81:
Թունֆելդ, Կունց, ֆոն — 70, 71:
Թունֆելդ, Միքայել — 71:

Լամպարտեր, Գրեգոր (1463—1523) — 81:
Լավրենտի, ինքը Մեսարոշ, Լավրենտի դը-Մեդիեզո — 83, 84:
Լյովենշտայն, Լուդվիգ և Ֆրիդրիխ, կոմսեր — 104:
Լյուդովիկ XI, Վալուա (1423—1483) — 30, 89:
Լորխեր — 81:
Լութեր, Մարտին (1483—1546) — 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 62, 63, 64, 66, 67, 86, 87, 92:

Կազիմիր (1481—1527) — 119, 121, 123:
Կարլոս V — 42:
Կյուրոս — 59:
Կնոպֆ Լուխրասցի (Գեորգ Շմիդտ) — 126:

Հայսմայեր, Միքայել (սպանված 1527 թ.) — 136, 138:
Հեգել, Գեորգ-Ֆրիդրիխ-Վիլհելմ (1770—1831) — 22, 61:
Հելֆենշտայն, Լուդվիգ, ֆոն (մահ. յենթ. 1525 թ.) — 104, 106, 116:
Հեսսենի լանդգրաֆ, տես Ֆիլիպպ:
Հիպլեր, Վենդել — 103, 106, 115, 116, 117, 118:
Հոհենլոհե, Ալբերտ և Լեոպոլդ, կոմսեր — 103, 104:
Հոսսա, Անտոն (մեռ. 1514 թ.) — 84:
Հուբմայեր, Բալթազար (XV դարի 80-ական թվականներ—1528) — 66, 95:
Հուս, Յան (մոտ. 1373—1415) — 48:
Հուտտեն, Ուլրիխ (1488—1523) — 53, 88, 89, 90, 91, 122:
Հուտտեն, Ֆրովեն, ֆոն — 122:

Մանտել, Յոհան (1468—1530) — 66:
Մարքս, Կարլ (1818—1883) — 5, 6:
Մաքսիմիլիան I, Հաբսբուրգ (1459—1519) — 74, 85:
Մելանխտոն, Ֆիլիպպ (1497—1560) — 64:
Մենցինգեն, Ստեֆան, ֆոն (մահ. յենթ. 1525 թ.) — 103, 122:
Մեցլեր, Գեորգ — 103, 105, 115, 118:
Մյուլլեր, Հանս (մահ. յենթ. 1525 թ.) — 92, 95, 98, 123, 124:
Մյունցեր, Թոմաս (մահ. յենթ. 1525 թ.) — 5, 40, 41, 46, 50, 51, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 74, 87, 95, 97, 115, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 136:

Յոախիմ Կալաբրիացի (1132—1202) — 57:
Յոհան Սաքսոնացի (1468—1532) — 63:
Յոսս, Ֆրից, Ունտերգրումբախից (մեռ. մոտ. 1517 թ.)—75, 76, 77, 78, 85:

Շապպելեր, Խրիստոֆ (1472—1551) — 66, 124:
Շմիդտ, Ուլրիխ — 98:
Շյոն, Ուլրիխ (մահ. յենթ. 1525 թ.) — 99, 111:
Շնայդեր, Գեորգ — 76:
Շպետ, Դիտրիխ ֆոն-Ցվիֆալտերն (մեռ. 1531 թ.) — 110, 113, 118:

Շտորխ, Նիկոլաուս (մեռ. 1525 թ.) — 57:
Շտոֆֆել — 76:

Ուեն, Ռոբերտ (1771—1858) — 22:
Ուլրիխ (1487—1550) — 79, 80, 81, 82, 97, 98, 100:

Ջաքյի, Նիկոլաուս (մեռ. 1514 թ.) — 84:

Պրեզիցեր, Կասպար — 79, 80:
Պրոսլեր, Կասպար — 130:
Պֆալցի, կուրֆյուրստ (Լյուդովիկ V) (1478—1544) — 81, 91, 105, 108, 114, 116, 122:
Պֆայֆեր, Հենրիխ (մահ. յենթ. 1525 թ.) — 127, 132:

Ռարման, Ֆրանց — 66:
Ռորբախ, Յեկլայն (մահ. յենթ. 1525 թ.) — 103, 104, 105, 106, 108, 109, 110, 114, 115:

Սալեվեչ, Ամբրոսիուս — 83:
Սաքսոնիայի կուրֆյուրստ (Ֆրիդրիխ III) (1463—1525) — 52:
Սեն-Սիմոն, Անրի լը-Ռուվրուա (1760—1825) — 22:

Վայսմոզեր, Երազմուս — 136:
Վասկո-դը-Գամա (1469—1524) — 28:
Վեհե, Յակոբ (մահ. յենթ. 1525 թ.) — 66, 99, 104, 111:
Վելզերներ — 97:
Վիլհելմ (Հոնշտայն) (1506—1541) — 122:
Վիկլեֆ, Ջոն (մոտ. 1320—1384) — 48, 49:

Տելեկի, Ստեֆան (մեռ. 1514 թ.) — 84:
Տրիրի արքեպիսկոպոս — Ռիխարդ Գրայֆենկլաու (1467—1531) — 91, 122:
Տրուխզես, Գեորգ ֆոն-Վալդբուրգ (1489—1531) — 96, 99, 100, 104, 110, 111, 112, 113, 114, 116, 117, 118, 119, 120, 121, 124, 125, 126, 130, 131:

Ցիմերման, Վիլհելմ (1807—1888) — 5, 63:

Ֆերդինանդ, ավստրիական երցհերցոգ (1503—1564) — 97, 123, 124, 136, 137, 138:
Ֆիլիպպ, Բադենի մարկգրաֆ (1479—1533) — 82:
Ֆիլիպպ, Հեսսենի լանդգրաֆ (1504—1567) — 91, 130, 132, 140:
Ֆլորիան, Գրայգել, «Ֆլորիան տերտեր» — 111:
Ֆոյերբախեր, Մարտին — 108, 109, 110, 113, 114:
Ֆորներ, Անտոն — 103:
Ֆուրյե, Շարլ (1772—1837) — 22:
Ֆրանցիսկ I (1494—1547) — 95:
Ֆրունդսբերգ, Գեորգ, ֆոն (1492—1526) — 125, 137:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Խմբագրի կողմից 3
Առաջաբան 5
Գյուղացիական պատերազմը Գերմանիայում 27
Անվանացանկ 147

Համեմատությունը և տեխնիկական աշխատանքը
կատարել է Հ.' Մանուկյանը
Խմբագիր Ա. Բուդումյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Դոլուխանյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր Վ. 1187, հրատ. № 822
Պատվեր № 148, տիրաժ 4000
Թղթի չափսը $60 \times 92^1/_{16}$ (38.400 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
$9^1/_2$ տպ. մամուլ, $4^3/_4$ թերթ թուղթ։
Հանձնվել է արտադրության 25/IV 1940 թ.
Ստորագրվել է տպագրելու 25/VI 1940 թ.
Գինը 1 ռ. 50 կ., կազմը՝ կալենկորից՝ 1 ռ. 50 կ., թղթից՝ 1 ռ.

Պետական գրականության պետական հրատարակչության տպարան,
Երևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0173764

I g. VII g.

Ֆ. ԷՆԳԵԼՍ • ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ